

ՀՀ ՓԱԱ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСКУССТВ НАН РА
INSTITUTE OF ARTS NAS RA

ԿԱՆԹԵՂ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

КАНТЕХ
НАУЧНЫЕ ТРУДЫ

KANTEGH
ARTICLES

2 (67)



«ԱՍՈՂԻԿ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Կ 203

Կ 203 Կանթեղ: Գիտական հոդվածներ /Գլխ. խմբ.՝ Ա.Ասատրյան. - Եր.: Ասողիկ,
282 էջ:

Գլխավոր խմբագիր՝ Աննա Գ. ԱՍԱՏՐՅԱՆ

Խմբագրական խորհուրդ

**ԱՂԱՍՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱՔԱՐՅԱՆ Անուշավան, ԽԱՌՎՏՅԱՆ Ալբերտ,
ՀԱՍՐԱԹՅԱՆ Մուրադ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հենրիկ, ՂԱԶԱՐՅԱՆ Վիգեն,
ՄԵԼԲՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (գլխավոր խմբագրի տեղակալ),
ՅՈՒՐԵՎԱ Տառյանա, ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ, ՊՈԿՐՈՎՍԿԱՅԱ Նադեժդա,
ՍԱՀԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՍՅԱՆ Լևոն, ՕՀԱՆՅԱՆ Քաջիկ**

Главный редактор Анна Г. АСАТРЯН

Редакционная коллегия

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԱՍՏՐՅԱՆ Մուրադ,
ԳԱՍՊԱՐՅԱՆ Սեդա, ԶԱԿԱՐՅԱՆ Անուշավան, ԿԱՅԱՐՅԱՆ Վիգեն, ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ,
ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (заместитель главного редактора), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՕԳԱՆԵՏՅԱՆ Գենրիկ, ՕԳԱՆՅԱՆ Կաժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Նադեժդա, ՍԱԿՅԱՆ Արմեն,
ՍԱՐԳՅԱՆ Լևոն, ԽԱՐԱՏՅԱՆ Ալբերտ, ԿՐՅԵՎԱ Կատյան**

Editor-in-Chief Anna G. ASATRYAN

International Editorial Council

**ԱԳԱՏՅԱՆ Արարատ, ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ Լիլիթ, ԱՎԵՏԻՍՅԱՆ Պավել, ԱՍՏՐՅԱՆ Սեդա,
ԿԱՅԱՐՅԱՆ Վիգեն, ԱՍՏՐՅԱՆ Մուրադ, ՆԵՐՍԻՍՅԱՆ Գենրիկ, ԽԱՐԱՏՅԱՆ Ալբերտ,
ՄԵԼԿՈՆՅԱՆ Աշոտ, ՄԿՐՏՉՅԱՆ Մանե (Deputy Editor-in-Chief), ՆԵՐՍԻՍՅԱՆ Աշոտ,
ՕԳԱՆՅԱՆ Կաժիկ, ՍԱՀԱԿՅԱՆ Նադեժդա, ՍԱԿՅԱՆ Արմեն, ՍԱՐԳՅԱՆ Լևոն,
ԿՐՅԵՎԱ Կատյան, ԶԱԿԱՐՅԱՆ Անուշավան**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

АНГЛИЙСКИЙ ЦИКЛ ЭССЕ ИОСИФА БРОДСКОГО О ПОЭТАХ И ПОЭЗИИ

АШХЕН АТАНЕСЯН, ЮЛИЯ ХОДЖОЯН

Эссе И.Бродского, посвященные исследованию различных явлений мировой литературы, ярко вскрывают культурфилософские концепции автора, его эстетические и творческие принципы. Две литературные традиции – “рациональная английская” и “рефлексивная русская” – представляют собой то цельное, единое культурное пространство, которое позволяет поэту-эссеисту свободно творить и созидать. Английский цикл эссе И.Бродского о поэтах и поэзии посвящен анализу творчества, в первую очередь, поэтов метафизического и экзистенциального сознания – “поэтов, следующих воле языка”.

К специфике синтетического по своей сути жанра эссе, не создающего жестких рамок для “творящего я” писателя, И.Бродский относил возможность широкого использования им “изобретенной в поэзии” “техники монтажа”. Так, прозаические фрагменты в творческом восприятии И.Бродского являются теми же “поэтическими строфами, имеющими форму кадра”.¹ Английский же язык, по убеждению Бродского, наиболее подходит для отражения подобной стилистической организации текста. Отметим, что из шестидесяти включенных в собрание сочинений И.Бродского в 2-х томах эссе, статей и заметок (2011) на русском языке написаны семнадцать; среди них “Муза плача”, “Об одном стихотворении”, “С миром державным я был лишь ребячески связан...” и т.д.

На фоне исследуемых разнообразнейших литературных проблем в эссе, посвященных Роберту Фросту, Константину Кавафису, Эудженио Монтале, Уистену Одену, Дереку Уолкотту и др., неизменно звучат мотивы “время”, “язык”; здесь автор развивает свои программные суждения о природе художественного языка, о поэзии как высшей степени развития литературы, о сущности искусства. Эссе насыщены культурологическими комментариями; автор

¹ **Мэрин Р.** Поэт боготворит только язык // **Бродский И.** Книга интервью (Сост. В.Полухина), М., 2008, с. 274.

с большим трепетом и благодарностью вспоминает о людях, “давших ему голос”, научивших ценить и понимать поэзию; серьезные философские размышления часто перемежаются с ироническими замечаниями, наблюдениями. Эссе И.Бродского “Поклониться тени”, “В тени Данте”, “Песнь маятника” органически сочетают в себе элементы научной статьи, литературного очерка, философского трактата, психологического этюда. Некоторые непосредственно примыкают к жанру литературного портрета (“В тени Данте” и др.) В этих работах автор последовательно приводит доводы, аргументирует свои позиции, размышляет о творческом процессе и переживаниях исследуемых авторов, раскрывает разнообразный мир их душевных движений, страстей.

Анализируя поэтические стратегии античных авторов, а также К.Каватифа, У.Одена, Э.Монтале, Д.Уолкотта, И.Бродский одновременно раскрывает свои собственные эстетические и мировоззренческие подходы. В цикле эссе Бродского о поэтах и поэзии видное место занимает “Письмо Горацию”. Эссе ярко демонстрирует, что художественный мир античности для И.Бродского – это модель вполне реального мира, куда, преодолевая пространственные и временные границы, без особых усилий проникает сознание автора. Стремясь найти ответы на “конечные” вопросы, эссеист вступает в живой диалог с любимым античным автором – Горацием; в статье преобладают эмоционально окрашенные размышления о “вечном и сиюминутном бытии”. В мировоззренческой системе И.Бродского “время” – не самостоятельная, автономная категория: оно “соотносимо с вечностью”: “земной вечностью”. Актуализация так называемой “генетической памяти искусства”–“прапамяти”², помогает И.Бродскому как в реконструкции мироощущения и мировоззрения античных авторов (Горация, Вергилия, Овидия), так и в поиске точек соприкосновения между участниками представленного увлекательного, виртуального диалога.

В эссе “Письмо Горацию” нашли также отражение позиции и взгляды И.Бродского, связанные с восприятием целого ряда мифологических героев, исторических событий, фактов. К примеру, анализируя сюжет о Дидоне и Энее в интерпретации Вергилия и Овидия, И.Бродский скрупулезно рассматривает версии двух писателей, следит за логикой поступков выведенных ими героев. По признанию И.Бродского, “назоновская версия звучит для него

² См. интервью И.Бродского от 1983 г. П.Вайлю и А.Генису // **Бродский И.** Книга интервью (Сост. В. Полухина), М., 2008, с. 246.

убедительнее”³. За этим утверждением – глубокие философские, литературные, человеческие пристрастия, послылы. И.Бродскому скорее всего близко само стремление Овидия приблизить своих персонажей к живым, реальным людям, лишить их “героического ореола”; придать древним мифам новое философское звучание, подчеркнув смелые дерзания человека – отстоять свое счастье в борьбе с богами. И.Бродский чутко фиксирует, сколь важны для автора достоверные психологические штрихи в описании истории любви мифологических героев.

Очевидно: Бродского менее привлекает “обобщенность вергилиевского Энея, выработанная традицией и стоической философией идеала”.⁴ “Энеида” Вергилия, в первую очередь, обеспечивала нужды политической системы, созданной Августом после смерти Цезаря (произведение писалось между 25-19 гг. до н.э.). Именно Вергилию было доверено написание самого важного “идеологического произведения”, выявляющего мифо-историческую базу древнеримского самосознания.

Примечательно: в интервью Анн-Мари Брумм (1974г.) И.Бродский отмечал, что стимулом к написанию его собственного стихотворения “Дидона и Эней” явился цикл стихов А.Ахматовой о мифологических героях, написанный сразу же после расставания поэтессы с любимым. Опера же Г.Персела “Дидона и Эней”, по признанию автора, лишь укрепила его во мнении обратиться к этим известным персонажам античности и к самому драматичному событию Древнего мира – разрушению Карфагена. Ария Дидоны, по словам Бродского, поразила его прежде всего своим “проникновенным, волнующим звучанием” и “бесконечной силой отчаяния”. В истории взаимоотношений Энея и Дидоны Бродский расставляет свои акценты. В интервью А.М.Брумм автор подчеркивал, что его “Дидона и Эней” – не любовные стихи; они в первую очередь о разрушении Карфагена, которое случилось прежде реального разрушения”. Во взаимоотношениях главных героев на первый план Бродским был выдвинут мотив “предательства в любви”. “Последствия предательства обычно не видны, – говорит Бродский, – а я попытался сделать их более явны-

³ Бродский И. Письмо Горацию // Сборник эссе “Письмо Горацию”. М., 1998, с. 277. В дальнейшем при ссылках на данное издание страницы указываются в скобках.

⁴ Чистякова Н. Римская литература эпохи Империи // История античной литературы. Л., 1963, с. 260.

ми...”⁵. Все эти признания, несомненно, помогают понять и уточнить взгляды Бродского-эссеиста.

Интересно, что в некоторых работах, посвященных анализу стихотворения Бродского, проблемная ситуация, лежащая в основе сюжета, сводится к “архетипу разницы в отношениях к любви мужчины и женщины, тем более мужчины – общественной личности”... Герои оказываются заложниками первородных инстинктов – “великий человек” (Эней), бросивший Дидону, закономерно воспринимается в своем величии, основательница же Карфагена (Дидона) – “обыкновенной покинутой женщиной”, “безымянной героиней”.⁶ Однако, учитывая угол зрения самого автора, можно в полной мере прочувствовать идею о всеразрушающей силе предательства, выдвинутую на первый план стихотворения; предательства, уничтожающего великие миры, царства, династии, достижения. В финале стихотворения Бродского мы видим покинутую Дидону:

Она стояла
...перед костром, который разожгли
под городской стеной ее солдаты,
и видела, как в мареве костра,
дрожавшем между пламенем и дымом,
беззвучно рассыпался Карфаген
задолго до пророчества Катона.⁷

Образ стоической, несломленной женщины вырисовывается и в стихах Ахматовой (См. “Не пугайся, – я еще похожей...”) Несмотря на то, что мифологический материал, по сути, является “транслятором” универсальных идей и понятий, И.Бродский открывает в этом “классическом” наследии новые грани, отыскивает “иные”, “скрытые” смыслы.

В эссе “Песнь маятника”, посвященном творчеству К.Кавафиса, И.Бродский стремится наиболее полно раскрыть мировосприятие греческого поэта, определить, в чем неповторимость его почерка. Мысль И.Бродского направ-

⁵ Брумм А. Муза в изгнании // Бродский И. Книга интервью (Сост. В.Полухина), М., 2008, с. 20.

⁶ См. Крепс М. О поэзии И.Бродского, <http://www.lib.ru/BRODSKI/KREPS.txt>.

⁷ Бродский И. Новые стансы к Августе, <http://www.lib.ru/BRODSKI/Michigan.txt>.

лена к осознанию сложных взаимоотношений творческой личности с социальной средой и эпохой; к постижению внутреннего мира автора с душевными потрясениями, дилеммами... И Бродский обращается к “стихотворениям – античным маскам”, в которых описание “прошлых дней” ярко высвечивало волнующую Кавафиса современность. Автор эссе приходит к выводу: своеобразии поэтического мировидения К.Кавафиса кроется в его особом восприятии памяти – как онтологической опоры человека и человечества. “Единственное имеющееся в распоряжении человечества средство, чтобы справиться с временем, – пишет И.Бродский, – есть его память, именно исключительная, чувственно-историческая память и создает своеобразие Кавафиса” (с.27). И. Бродским особо подчеркивается “ретроспективность” стихов К.Кавафиса, что, в целом, позволяло поэту выявлять причинно-следственные связи и закономерности развития разных исторических событий.

В центре внимания И.Бродского целый ряд исторических стихов К.Кавафиса: “Прежде, чем время их изменило”, “Спрятанное”, “Дарий”, “В ожидании варваров” и т.д. В поэтике стихов, охватывающих греко-римский период (4 в.до н.э. – 3 в.н.э.), определяющей, по мнению Бродского, является “смесь архива и эпитафии”. “Этот тип дикции, – отмечает И.Бродский, – создает странный эффект подлинности, избавляя авторские прозрения и агонию от многословности, накладывая на них отпечаток сдержанности” (с.25). Всем ходом своего анализа Бродский дает возможность читателю ощутить, прочувствовать, как по-новому в исторических стихах Кавафиса высвечиваются разные категории исторического процесса – “закономерность”, “случайность”. Эссеист к тому же внимательно наблюдает, как греческому поэту удается в своих стихах организовать и систематизировать сложный и многообразный исторический материал... Характеризуя творческую манеру, стиль письма “позднего Кавафиса”, И.Бродский подчеркивает сознательный отказ автора “от красочных метафор, богатой образности, метрического блеска”, называя это “экономией зрелости”; родственной своему “тембру голоса” он считает “доверительную, сдержанную, спокойную, несколько суховатую интонацию” поэта. Эссе характеризует целая сеть ассоциативных связей и, конечно, парадокс, как своеобразный способ игры с читателем. Несомненно, И.Бродскому удается “захватить читателя” собственным прочтением, пониманием творчества К.Кавафиса.

В английской и американской поэзии И.Бродский выделяет метафизическую традицию, устремленную к исследованию первоначальной природы реальности, к трансцендентному, надэмпирическому уровню постижения сущности бытия и духовного мира. В своих многочисленных интервью И.Бродский не раз называл поэтов, чье творчество интересовало его еще с 1960-х годов: Т.С.Элиот, Дж.Линдсей, Э.Л.Мастерс. Английская метафизическая поэзия XVII века, так же как и современная американская, привлекают И.Бродского прежде всего превосходством разума над эмоциями, беспристрастной констатацией трагизма и алогизма бытия, неизбежным ироническим подтекстом в отношении к реальности, бо́льшим доверием к языку – его природной (стихийной) сущности. Тяга к “чужой традиции” и новые возможности, открываемые ею, органически сконцентрировались для И.Бродского в поэзии У.Х.Одена.

И.Бродскому близка “плоскость рассмотрения” автором многих литературных проблем, “ироническое отстранение”, использование разнообразных разговорных ритмов, “вектор его рассуждений” в прозаических работах (эссе, статья и т.д.). В интервью С.Биркертсу И.Бродский подчеркивал: “Два поэта (Оден и Ахматова) дали мне ноту, ключ к моему голосу, тональность и отношение к действительности. Я думаю, что их стихи в каком-то смысле – некоторые стихи Ахматовой и много стихов Одена – написаны мною...”⁸ Исследователь К.Соколов относит прием “отождествления автором себя с предшественником к числу механизмов культурной самоидентификации И.Бродского”.⁹ В эссе вырисовывается и психологический портрет У.Одена: эссеист стремится здесь наиболее полно выявить глубину внутреннего мира и переживаний автора, отразить во всей полноте своеобразие его личности.

Почти все размышления И.Бродского в эссе пересекаются с магистральными темами его творчества – темами Времени и Языка. Утверждение Одена: “Время... боготворит язык”(с.62), прозвучавшее в одном из оденовских стихотворений, становится для И.Бродского отправной точкой, стимулом к его собственным метафизическим по своей сути размышлениям, отражающим его сверхчувственные, интуитивные прозрения. Одновременно перед читателем раскрывается процесс “вживления”, “внедрения” этих основополагающих, по

⁸ **Биркертс С.** Искусство поэзии // **Бродский И.** Книга интервью (Сост. В.Полухина), М., 2008, с. 80.

⁹ **Соколов К.** И.Бродский и У.Х. Оден: к проблеме усвоения английской поэтической традиции. Автореферат диссертации на соискание уч. степени к.ф.н., Владимир, 2003.

Одену, бытийных и философских категорий в сознание писателя-эссеиста. В эссе читаем: “Обожествление – это отношение меньшего к большему. Если время боготворит язык, откуда тогда происходит язык? Ибо дар всегда меньше дарителя. И не является ли песня или стихотворение, и даже сама речь с ее цезурами, паузами, спондеями и т.д. игрой, в которую язык играет, чтобы реорганизовать время. И не являются ли те, кем “жив язык, теми, кем живо и время...” Поэт, по убеждению Бродского, “прослеживает не только то, что происходит с его душой”, но и то, “что язык делает со временем” (с.63)... Все переживания, прозрения, эмоциональные, исповедальные признания автора в эссе выверены, проверены личным духовным опытом писателя.

В цитируемых И.Бродским в эссе стихах с наибольшей остротой проглядывается отчаянный поиск лирическим героем Одена ответов на вечные вопросы, звучат мотивы трагической отчужденности между людьми, драматического одиночества поэтической души, вырисовывается моральная, духовная опустошенность современной цивилизации. Приведем строки У.Одена из стихотворения “Море и зеркало”, которые, по признанию И.Бродского, многое для него значили:

Но если ты не сможешь удержать свое царство
И придешь, как до тебя отец, туда,
Где мысль обвиняет и чувство высмеивает,
Верь своей боли...

(подстрочный перевод, с.72)

В эссе “Поклониться тени”, вобравшем в себя разнообразные литературные формы (статья, рассказ, исповедь, воспоминание, речь), ярко вырисовываются ценностные ориентиры И.Бродского в искусстве, культуре, жизни.

В эссе “В тени Данте” И.Бродский пишет в какой-то мере как биограф Э.Монтале: очевидно, автор изучил его жизнь до мельчайших подробностей... Вся биография Монтале рисуется яркими мазками: это броские, смелые зарисовки “с натуры”. И.Бродский показывает, сколь сложен путь автора – наследника достижений итальянской культуры, сколь ответственен его труд перед великими предками и потомками.

Несомненно, поднятые И.Бродским вопросы о жизни и творчестве известных поэтов, больших мировых величин не раз обсуждались на страницах

разных изданий, книг, публикаций, воспоминаний и т.д. Однако И.Бродский, по меткому замечанию Е.Рейна, “все пытается решить по-своему, всегда могучим образом работает его мозг”. “Проза Бродского, – заключает Е.Рейн, – движется за счет того, что он без всяких ссылок на предшественников, интеллектуально решает свою задачу”.¹⁰ Действительно, в эссе, посвященных античным писателям, Кавафису, Одну, Монтале и др., Бродский по-своему, оригинально и смело размышляет о новаторских подходах исследуемых авторов, об их творческих достижениях.

Известно отношение И.Бродского к языку как мирозданию. Я.Гордин, комментируя в интервью В.Полухиной теоретические взгляды И.Бродского о языке, подчеркивал: “С одной стороны, действительно задача поэта – это изживание экзистенциального абсурда, с другой – это все-таки стремление к абсолюту при трезвом понимании недостижимости его...” “В поэзии Иосифа Бродского в качестве абсолюта выбран сам язык и превращен в некую модель мира, очищенную, гармонизированную, живущую по более совершенным законам, чем мир как таковой”,¹¹ – заключал Я.Гордин. И.Бродский делает категорию языка доминирующей категорией не только своей поэзии, но и своей поэтики. Высшая функция языка, граничащая с выявлением (определением) правды жизни, установлением справедливости, в глобальном смысле, действительно, с гармонизацией мира, ярко проявляется и на страницах эссе автора, посвященного Дереку Уолкотту.

“Шум прибора” – эссе-зарисовка, своего рода эссе-набросок, в котором И.Бродский задается целью обратиться к истокам творчества Д.Уолкотта, показать атмосферу, сформировавшую его. Автопортрет Д.Уолкотта И.Бродский находит в следующих строках:

Я просто красный нигер, который любит море,
У меня основательное колониальное образование.
Кровь голландца, нигера и англичанина во мне
И либо я – ничто, либо я – нация.

(подстрочный перевод, с.86)

¹⁰ Рейн Е. Прозаизированный тип дарования // Бродский глазами современников (Сост. В.Полухиной), СПб., 1997, с. 21.

¹¹ Гордин Я. Трагедийность мировосприятия. // Бродский глазами современников (Сост. В.Полухина), СПб., 1997, сс. 63-64.

Действительно, многое в этих строках говорит о психологическом настрое исследуемого И.Бродским автора: Д.Уолкотт ставит вопрос перед читающей публикой ребром: или поэт – вся вселенная или же поэт, будучи “порождением вселенной”, исходя из частных интересов, стереотипов, заскоружных подходов, царящих в сознании людей, – может превратиться в “ничто”. В этом контексте известные факты биографии Д.Уолкотта приобретают особое звучание. Эссеист выражает свое отношение к заявлениям в критике о том, что Д.Уолкотт – “вест-индийский поэт” или “чернокожий поэт Карибского бассейна”. И.Бродский усматривает в этом дискриминационный подтекст. Он пишет: “Психологическую, а также духовную трусость, сквозящую в желании представить этого человека региональным поэтом, можно объяснить банальным нежеланием критиков признать, что великий англоязычный поэт – черный” (с.87). И.Бродский проникает в самые глубины творческого процесса; возникают очень интересные, своеобразные версии, связанные с психологической стороной творчества поэта: автор-эссеист пристально изучает графическую сторону стихов Уолкотта; внимание исследователя изначально приковывает в английском тексте “некая уравновешенность (равенство) в поэтической формуле между черным и белым”. Автор заключает: “Это уравнение между черным и белым управляется с расовой поляризацией успешнее, чем все его критики с их декларируемой непредвзятостью” (с. 90). Подобное графическое выражение мыслей Д.Уолкотта, его психологии, по глубокому убеждению Бродского, продиктовано “мудростью языка” – “мудростью самого письма – черного и белого” (XCII).

И.Бродский обобщенно представляет портрет лирического героя поэзии Д.Уолкотта – цельной личности, человека гордого, готового отстаивать свои жизненные позиции. В поэтических строках Д.Уолкотта И.Бродскому видится стремление к гармонизации мира.

Таким образом, значение эссеистской прозы И.Бродского о поэтах и поэзии разнопланово:

- статьи явились важным вкладом в изучение творческого наследия видных англо-американских и западноевропейских поэтов;
- в эссе нашли отражение эстетические и творческие принципы самого автора, его представления о классической и современной зарубежной поэзии;

- работы ярко высветили наличие творческого диалога И.Бродского с поэзией значимых для него авторов;
- произведения продемонстрировали перспективы использования жанра эссе, вобравшего в себя элементы разных литературных форм – аналитического очерка, рассказа, дневника, исповеди, письма.

РЕЗЮМЕ

Английский цикл эссе И.Бродского о поэтах и поэзии ярко вскрывает культурфилософские концепции автора, его эстетические и творческие принципы. В работах, посвященных анализу творчества античных писателей, а также К.Кавафиса, У.Одена, Д. Уолкотта и др., отразились перспективы использования жанра эссе, вобравшего в себя элементы разных литературных форм.

Ключевые слова – эссе о поэтах и поэзии, поэтические стратегии, эстетические и мировоззренческие подходы, метафизическая традиция.

ԻՈՍԻՖ ԲՐՈՂՅԱՆԻ ԷՍՍԵՆԵՐԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՑԻԿԼԸ ՊՈԵՏՆԵՐԻ ԵՎ ՊՈԵԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ԱՇԽԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ, ՅՈՒԼՅԱ ԽՈԶՅՈՅԱՆ

Ի. Բրոդսկու էսսեների անգլիական ցիկլը պոետների և պոեզիայի մասին վառ կերպով բացահայտում է հեղինակի մշակութափիլիսոփայական տեսակետները, նրա գեղագիտական և ստեղծագործական սկզբունքները: Անտիկ գրողների, ինչպես նաև Կ. Կավաֆիսի, Ու. Օդենի, Դ. Ուոլկոտտի և այլոց ստեղծագործությունների վերլուծությանը նվիրված աշխատանքներում արտացոլվեցին էսսեի ժանրի օգտագործման հեռանկարները, որը ներառում է զանազան գրական ձևերի տարրերը:

Բանալի բաներ – ակնարկ պոետների և պոեզիայի մասին, բանաստեղծական մարտավարություններ, գեղագիտական և աշխարհայացքային մոտեցումներ, մետաֆիզիկական ավանդույթ:

JOSEPH BRODSKY'S CYCLE OF ENGLISH ESSAYS ON POETS AND POETRY

ASHKHEN ATANESYAN, YULIA KHOJOYAN

Joseph Brodsky's cycle of English essays focused on poets and poetry reflect his cultural and philosophical concepts as well as his esthetic and creative principles. New perspectives for the use of essays are presented through Brodsky's essays inclusive of different literary elements where Brodsky analyzes the works of antique writers, as well as C. Cavafy, U. Oden, D. Walcott and others.

Key words – article on poets and poetry, poetic strategies, esthetic and ideological approaches, metaphysical tradition.

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ «ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԹՈՒՂԹԸ» ՊԱՏՄԱՎԵՊԸ

ԺԱՆՆԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Հայկ Խաչատրյանի գրչի հասունությունն առավելագույնս դրսևորվում է «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմական-սագրական վեպում, որը լույս է տեսել 1999թ.: Վեպն իր ժանրային բնույթով նորարարական երևույթ է և հայ գրականագիտության մեջ որակվել է որպես իմաստասիրական վեպ-էպոպեա: «Այս գիրքն իր խորքով, - գրում է հեղինակը,- համահունչ է մեր ժամանակներին: Ներկայումս հայ ժողովուրդն ընկել է այնպիսի ճգնաժամային վիճակի մեջ, ինչպիսի վիճակի մեջ ընկել էր առաջին հազարամյակի ավարտին»¹: Ելնելով սրանից՝ գրողը վեպի սյուժետային և գաղափարական զարգացումներն առաջ է տանում հազարամյա զուգահեռների մեջ:

Հակասական ու բարդ է «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» վեպի պատմական ժամանակաշրջանը: Նախատիպ ընտրելով Գրիգոր Պահլավունուն՝ գրողը քաջատեղյակ էր նրա մասին եղած գիտական նյութին ու նրա գրական ժառանգությանը: Պատմագիտական գրականության մեջ վիճելի է համարվել Գր. Պահլավունու քաղաքական կողմնորոշումը: Անի-Շիրակի թագավորության փոթորկուն իրադարձություններում նա դիտվել է որպես հակահայրենասեր ուժերի քաղաքական առաջնորդ, հետևաբար և մեկը պատասխանատուներից՝ Բագրատունյաց հայոց թագավորության կործանման: Սա ծանրակշիռ մեղադրանք էր՝ ներկայացված XI դարի խոշոր քաղաքական, պետական, մշակութային գործչին: Գր. Պահլավունու կյանքին և գրական գործունեությանն անդրադառնում է Մանուկ Աբեղյանը և Գր. Պահլավունուն վեր հանում որպես իր ժամանակի քաղաքական և մշակութային հզոր գործչի, վերածնության դարաշրջանի առաջին «պոետիկոսի»¹: 1987թ. Լոս Անջելեսում լույս է տեսնում Լևոն Խաչերյանի «Գրիգոր Պահլավունի Մագիստրոս: Կյանքն ու գործունեությունը» ծավալուն աշխատությունը, որտեղ Գր. Պահլավունու նամակների քննությամբ և պատմամատենագիտական փաստերի համադրմամբ նոր լույս է սփռվում Գր. Պահլավունու քաղաքական հայացքների ու

¹ Աբեղյան Մ., Երկեր, Դ., ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1970, էջ 34:

դիրքորոշման վրա, հերքվում Պահլավունու բյուզանդամետությունը²: Դիմելով Մագիստրոսի կերպարին, հերոսին դիտարկելով պատմական ժամանակաշրջանի հակասական ու բարդ իրադարձությունների մեջ՝ գրողը ստեղծում է բովանդակային խորքով և ժանրային առանձնահատկություններով հարուստ մի երկ, որը ոչ միայն նոր խոսք է գրողի ստեղծագործության մեջ, այլև նոր գույներ ու խտացումներ է բերում արդի հայ գրականության: «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմավիպասանի տարիների փորձի և գրական մեծարժեք ժառանգության ինքնատիպ ընդհանրացումն է: Վեպը կազմված է 22 թղթից: Առաջին՝ «Հազար տարին մի անգամ աշխարհն ակո՛վ է լցվում» գլխում, ներկայացվում է այն տազնապալից մթնոլորտը, որի մեջ հայտնվում է քրիստոնյա աշխարհն առաջին հազարամյակի ավարտին: Սահմկեցուցիչ մարգարեությունը, թե Քրիստոսի ծննդյան հազարամյակը կգուժի աշխարհի կործանումը, հուսահատության է մատնում նաև Հայոց աշխարհը, որտեղ թևածում է սպիտակ ագռավների առասպելը: Խուճապի դեմն առնելու մտահոգության մեջ են Բագրատունի Գագիկ արքան և կաթողիկոս Սարգիս Սևանցին: Կործանման, վերջի վախն աշխարհը լցնում է ապաշխարանքով, բարությանը, սիրով ու առաքինությամբ: Այս համապատկերում առաջ է քաշվում հայոց գոյաբանության հարցը, որ գերխնդիր է եղել պատմական բոլոր ժամանակներում: Վիպական նման մուտքը պատահական չէ, նախապայման է ստեղծվում՝ վեր հանելու հայոց Անի-Շիրակ թագավորությունում XI դարում տեղի ունեցող քաղաքական, հասարակական տեղաշարժերը: Այս դարը հայոց պատմության մեջ հայտնի է իր հզոր ձեռքբերումներով և կորուստներով: Շուրջ մեկդարյա վիպական ժամանակում խոշոր իրադարձություններ են տեղի ունենում Բագրատունյաց հարստության ներսում և նրա սահմաններից դուրս: Հայոց փոքր թագավորությունների գոյությունը, Գագիկ Առաջին արքայի մահից հետո երկրի ներքին խառնակությունները, Արևելքից սելջուկների ասպատակությունները, Հովհաննես Սմբատի և կաթողիկոս Պետրոս Արշարունու դավաճանական «հետկարը»՝ Անին Բյուզանդիայի Վասիլ կայսրին հանձնելու մասին, 1022թ. երկրաշարժը պատճառ են դառնում «նախանձի տիեզերական խայծաստղ» ու բազմազանձ Անիի կործանմանը, որով և վերջ է տրվում Հայոց Բագրատունյաց գահատիրությանը:

Գրողը կարևորում է ժամանակի պատմաքաղաքական բարդ իրադար-

² Խաչերյան Լ., Գրիգոր Պահլավունի Մագիստրոս: Կյանքն ու գործունեությունը, Լոս Անջելես, 1987, էջ 339:

ծույթությունների գեղարվեստականացումը: «Գրիգոր Մագիստրոսի վերջին թըղթում» թուղթ առ թուղթ խտանում են գրողի գաղափարական հիմնական շեշտադրումները: Պետության ամրության, անսասանության համար պետք է շահագրգիռ լինի յուրաքանչյուր ոք, հատկապես աշխարհիկ և հոգևոր իշխանությունների գլուխ կանգնածները: Հայոց միասնական տան գաղափարի բացակայությունը վեր է հանվում որպես Բագրատունյաց հարստության կործանման հիմնապատճառ: Գրողը, ակնհայտորեն մերժողական վերաբերմունք ցուցաբերելով աշխարհի կործանման կենսափիլիսոփայությանը, վեր է հանում ժամանակի քաղաքական պատկերը և այդ համապատկերում Հայոց աշխարհի անսասան հավատը վաղվա հանդեպ:

Հայոց համար դժվարին այս ժամանակաշրջանում է ապրում ու գործում «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» վեպի հերոսը՝ Գրիգոր Պահլավունի Բջնեցին, որը վիպական գործողություններ է բերվում պատանության տարիներից:

Վիպական գործողություններ բերելով գլխավոր հերոսին՝ Գրիգոր Պահլավունուն, գրողը վեր է հանում Անի-Շիրակ թագավորության մեջ Պահլավունիների անժխտելի դերը, նրանց ռազմական, ճարտարապետաշինարարական գործունեությունը: Գրիգորի՝ Կոստանդնուպոլսում ուսումնառության համապատկերում ներկայացվում է հայերի դերակատարությունը Բյուզանդիայի հասարակական կյանքում: Հայերի սթափ մասը, պահպանելով իր ազգային ինքնությունը հայրենիքից դուրս, իր համար գերնպատակ է դարձնում ազգային ընդհանուր շահին ծառայելը: Նշվածն իր մեջ տիպականացնողն իմաստասեր Խաչարն է, որի գերագույն սկզբունքն օտար հողում ազգային լեզուն, երգը, պարը, տեղանունները, անձնանունները, հանդերձները և ճաշերը չմոռանալն է: Ազգային բացարձակ առավելության գիտակցումով էլ Խաչարը համոզված է, որ, իր իմացածը Գրիգորին հաղորդելով, նրան կդարձնի աշխարհի հզորներից մեկը: Կրթություն ստանալով Կոստանդնուպոլսում, գերազանց տիրապետելով հունա-հռոմեական մշակույթին՝ Գրիգորի մեջ հայկականի առավելության գիտակցումն իր ուսուցչի՝ Խաչարի ազդեցությամբ ավելի է խտանում: Բյուզանդականի և հայկականի ներքին համադրությամբ հայկականի առավելության վերհանման հյուսվածք է վեպը, և հայկական արարող ոգու խտացում է գլխավոր հերոսը՝ Գրիգոր Պահլավունին: Հենվելով պատմական անհատի կյանքի մանրամասների գեղարվեստականացման վրա՝ Հ. Խաչատրյանը վիպական միջավայր է բերում նրա ապրած ժամանակը, հարազատներին, պետական, քաղաքական անհատներին, օտար և հայ մշակույթի գործիչներին,

ինչպես նաև հերոսի ազգանպաստ գործունեության մանրամասներ: Գրիգոր Պահլավունին հայոց հանճարի հերթական փայլատակունտ է: Իր ապրած կյանքով ամեն ինչ անում է ի նպաստ հայրենիքի, հայոց քաղաքական և մշակութային վերընթացի: Բյուզանդիայում կիսատ թողած կրթությունը Գրիգորը շարունակում է Անիում: Հեղինակը խոր իմաստ է դնում երիտասարդ Գրիգոր Պահլավունու ու ծերունագարդ Ստեփանոս Տարոնցի Ասողիկի հանդիպման մեջ: Հայ պատմագրության լավագույն ավանդների շարունակողն է Ստեփանոս Տարոնցի Ասողիկը, որը Գրիգոր Պահլավունու շնորհաշատության առաջին գնահատողներից մեկն է: Գրիգորը քանդակում է, մանրակերտում, զբաղվում քերթությամբ և իմաստասիրությամբ, նրա ականջներում անընդհատ հնչում են հորեղբոր՝ Վահրամ Գեղեցիկի բառերը. «Եթե թուրը երկար մնա պատյանում, ապա կժանգոտի և այլևս դուրս չի գա, էլ ի՞նչ զորական առանց զինախաղի, զինաշաչի և զինապարի»³: Անիում ուսումնառությունն ավարտելուց հետո Պահլավունին մշակութային գործունեություն է ծավալում Պահլավունյաց բերդաքաղաք Բջնիում, որտեղ նրա մեծագույն ձեռքբերումը «Այստեղ որոնում են» ճեմարանի բացումն է: Ժամանակի աշխարհաքաղաքական պատկերն ամբողջացնելու նպատակով Հ.Խաչատրյանը տիպականացնում է 1021թ. Բագրատունյաց թագավորության ներսում և նրա սահմաններից դուրս տեղի ունեցող իրադարձությունները: Հովհաննես Սմբատ թագավորը երկընչելով, որ հայոց սահմանին նստած Վասիլ կայսրը պատրաստվում է կործանել իր թագավորությունը և հայոց թագը հանձնել իր եղբայր Աշոտին, որոշում է եղբորն ամեն ինչից զրկելու և իր թագավորությունն ապահով դարձնելու համար հետևյալ ուղարկել Վասիլ կայսրին՝ խոստանալով իր մահից հետո երկիրը հանձնել բյուզանդական կայսրությանը: Ամոթալի հետևարի մասին գրողն իր եզրակացությունն է անում. «Անիի հետևարով կայսրության կործանման հիմնաքարը դրվեց: Ոչ նա՝ Վասիլ կայսրը, ոչ էլ նրա խորհրդականները գլխի չընկան, որ Բագրատունյաց Հայաստանի կործանումով արևելքի մարդախոշորը հրոսակախմբերի ճանապարհին է բացվում դեպի Եվրոպա, դեպի քաղաքակրթված աշխարհը, և որ այդ ճանապարհը պիտի անցնի Բյուզանդիայով: Չիմացան, որ Հայաստանը արևելյան ներխուժումների ամենահուսալի պատնեշն է, որի փլուզումից առաջին զոհը պիտի դառնա Բյուզանդիան»⁴:

Հերոսը պատմաքաղաքական իրադարձությունների պասիվ դիտորդը

³ Խաչատրյան Հ., Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը, Երևան, 1999, էջ 92:

⁴ Նույն տեղում, էջ 138:

չէ, հետևանքը դրդում է նրան որոնել երևույթների պատճառը: Ստեղծված իրավիճակի համար որոշակի մեղավորներ չի փնտրում: Ժամանակի մեջ նույնարժեք են դառնում հանցանքն ու պատիժը: Սխալը խորացել է դարեդար, որովհետև հայերի մեծամոլությունը թույլ չի տվել հաղորդակցվել բարձրագույն գիտություններին, և հայոց թագավորները հեռու են մնացել երկիրը գիտությանը կառավարելու հմտությունից:

Պահլավունին վեր է հանվում որպես մի երկրորդ Խորենացի. նա ողբում է Արամյան նահանգն ու Արամյան ազգի անմտությունը, նշում հայոց արատները, թուլություններն ու թերությունները: Մագիստրոսի նամակները միջոց են՝ բացահայտելու հերոսի մարդկային ու քաղաքացիական որակները:

Քաղաքական և մշակութային գործունեության մանրամասների տիպականացմամբ Մագիստրոսը ներկայացվում է իր ինքնության առանձնակիության մեջ:

Վեպի բազմաթիվ դրվագներում վեր է հանվում Գր. Պահլավունու և Պետրոս Արշարունի կաթողիկոսի մտերմությունը: Պահլավունին նրան հղած իր նամակներում մեծարանքի բառեր է ասում, նրան համարում իմաստուն այր, երկրորդ լուսավորիչ, մտքի ընդարձակագույն առագաստ, սրտի հոգևոր առաջնորդ, աղանդավորության և չարափառության կացին, իսկ երբ համոզվում է Արշարունու դավաճանության մեջ, զղջում է իր բարեկամության համար: Դարաշրջանի պարտադրած հարկադրանքից չի կարողանում խուսափել նաև Գր. Պահլավունին: Նա ընդունում է կայսեր կողմից շնորհված Մագիստրոս պատվանունը՝ իր կավածքները՝ Բջնին, Կեչառույքը, Հավուց թառը հանձնելով Բյուզանդիային, դառնում է Միջագետքի կուսակալ:

Առանձնակի դրամատիկությամբ է վերհանված կուսակալ Մագիստրոսի կյանքը հայրենիքից դուրս: Նա Բյուզանդիային մատուցած ծառայությունների մեջ չի թերանում: Միջագետքում շարունակում է իր ռազմական, գիտական, կրթական գործունեությունը: Մագիստրոսի՝ օտար ավերում անցկացրած տարիների ողբերգականությունը խտացված է «Միջագետքի կուսակալը» գլխում: Օտար հողում արարչագործական ինչ հաղթանակներ էլ արձանագրի հերոսը, սպեղանի չէ նրա դառնացած հոգուն, միևնույն է, մի օր նա պիտի հեկեկա՝ նայելով Բջնիի «Այստեղ որոնում են» ճեմարանի փլատակներին ու հիշի իր՝ ոգևորությամբ առլեցուն գործունեությունը հայրենի տարածքներում: Հ. Խաչատրյանի գաղափարական շեշտադրումների մեջ առանձնակի նշանակություն է ստանում Սյունիքից Մագիստրոսի դստեր՝ Եոհնեի՝ հորն ուղղված թղթի հետևյալ տողերը. «Ինչպես պատահեց, որ մենք դարձանք ցրոնք: ... Երբ

Բջնիում էինք, ամենքը նախանձում էին մեզ: Մեր ընտանիքն էլ ազգի նման է, այսպես ցրվելով ու՞ր կհասնենք»⁵: Գրողն այս խտացումով ազգի համար արդիական հարց է բարձրացնում. արտագաղթը միշտ եղել ու այսօր էլ մնում է հայոց գերխնդիրներից մեկը:

Մագիստրոսը վեր է հանվում որպես համաշխարհային մշակութային ժառանգության գիտակի ու տեսաբանի, ընդգծվում են նրա կապերը ժամանակի հայտնի քաղաքական, հոգևոր և մշակութային գործիչների հետ: Հերոսը գիտակցում է իր ապրած դարաշրջանի ներհակությունները, այդ դարաշրջանում իր ազգի ձեռքբերումների ու կորուստների պատճառները, սակայն չի կորցնում հավատն իր ազգի գալիքի հանդեպ, հավատում է, որ մի օր հայոց հողի վրա կհնչեն միայն հայերեն խոսքն ու հայերեն հրովարտակը, և օտարաշուրթ տիրակալներն այլևս չեն կողոպտի հայապատկան հարստությունները: Վեպն ավարտվում է Մագիստրոսի մահվամբ: Ս. Սարինյանը վեպի ավարտի մասին նշում է. «Ողբերգական վերջաբանը գուցեև ազգային հոռետեսությունն է, բայց տազնապի ահագանգ է, թե դեպի ուր է տանում հայոց ճակատագիրը՝ աշխարհաքաղաքական ազդեցությունների, արցախյան խնդրի, միացյալ Հայրենիքի անորոշության այս մղձավանջում»⁶: Մի դարում, որտեղ բախվում են արյունոտ թարբարությունն ու նրբագեղ քաղաքակրթությունը, հզոր անհատի ներքին դրաման ու ողբերգական վախճանը գեղագիտորեն հավաստի են:

Հ. Խաչատրյանի վարպետ գրչի տակ տիպականանում են նաև մյուս կերպարները: Գունեղ են Գագիկ Ա Բագրատունու և Կատրանիդե թագուհու նկարագրերը: Գագիկ Ա-ի ժամանակաշրջանում է հայոց պետական մտքի խճճված և երերուն հանգամանքներում ճիշտ գնահատվում իրադարձությունների ընթացքը, և պահպանվում է պետության ֆիզիկական և հոգևոր ինքնությունը: Առանձին ջերմությամբ են գեղարվեստականացվում Գագիկ թագավորի և Կատրանիդե թագուհու փոխհարաբերությունները:

Գրողը բազմաթիվ էջեր է նվիրում Վասիլ կայսեր կերպարն ամբողջացնելու համար: Կերպարը ներկայացված է երգիծական խոսքաշարում: Հայազարմ Վասիլն ամեն ինչ բյուզանդականացնելու մոլուցք ունի: Ըստ նրա՝ Բյուզանդիայի բոլոր ժողովուրդներին պետք է լցնել կայսրության հնոցը և նրանցից բյուզանդացի թրծել: Նրան նույնիսկ խանգարում է իր հայկական ար-

⁵ Նույն տեղում, էջ 370:

⁶ Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, գ. 3, Երևան, 2002, էջ 446:

տաքինը և հույն վարսահարդարին հրամայում է իր արտաքինից հեռացնել հայկականը և իրեն բյուզանդացի ձևել: Աշխարհում նրա համար ամենադյուրին բանը խառնելն է: Ուժին նա հակադրվում է խորամանկությամբ, որը ժառանգել է իր նախորդներից: Հովհաննես Սմբատի կործանարար հետևյալը ցնծությամբ է ընդունում, բարձր պատիվների արժանացնում Պետրոս Արշարունի կաթողիկոսին, հետևյալն անվանում հայոց համար խաղաղապարզ թուղթ: Իրեն տիրակալ հռչակած կայսրը, որ ցանկանում է Արևելքը բռան մեջ սեղմած պահել, չի գիտակցում, որ Անիի հետևյալը Բյուզանդիայի կործանման հիմնաքարն է դնում: Հետևյալը դառնում է հայոց ճակատագրի ծաղրը: Հովհաննես Սմբատն անհիմաստասեր վարք է դրսևորում մինչև վերջ: Տալով հետևյալի գավեշտական պատմությունը՝ գրողը մի անգամ էլ է շեշտում, թե ինչպես իշխանության գլուխ կանգնած թագավորի ոչ խոհեմ պահվածքը կործանարար կարող է լինել մի ամբողջ երկրի ճակատագրի համար: Հովհաննես Սմբատը վեպում ներկայացված է որպես կամազուրկ ոչնչություն: Լինելով Բագրատունյաց գահատիրության օրինական ժառանգը՝ իր հոգևոր և ֆիզիկական պատրաստվածությամբ չի կարողանում դիմակայել ժամանակի հրամայականներին: Նրա անհեռատես, նաև հանցավոր ծրագրերի գործակիցն է դառնում շահամոլ կաթողիկոս Պետրոս Արշարունին: Ոսկու փայլը կուրացնում է կաթողիկոսին, քնեցնում միտքն ու խիղճը: Վեպի կերպարային համակարգում Պետրոս Արշարունին առանձնանում է հոգեբանական խորքով: Գրողը համոզիչ գույներով վեր է հանում շահասիրության կործանարար հետևանքը:

Ջոջումը վրա է հասնում ուշացումով: Պետրոս Արշարունին գիտակցում է, որ ինքն այն մարդն է, որ կտարել է հայրենիքի ողնաշարը: Հ. Խաչատրյանն իր գեղարվեստական մտածողության և ստեղծագործական նպատակաուղղվածության մեջ գաղափարական ու գեղագիտական նոր դիրքերից է մոտենում պատմությանը: Իրադարձությունների պատճառահետևանքային կապի մեջ քննելով անհատի գործունեությունը՝ գալիս է այն եզրահանգման, թե կան մեղքի և ապաշխարանքի արանքում գործող բնազդներ, որոնք հավիտյանս փակում են բարոյական դարձի ճանապարհները:

Վիպական ժամանակի մշակութային դաշտն առանձին շեշտվածություն ունի: Գրողի ուշադրությունից դուրս չեն մնում ժամանակի մեծություններ Տրդատ Ճարտարապետը, Հովսեփ Հնձացին, Հովհաննես Տարոնցի Կոզերնը, Ստեփանոս Տարոնցի Ասողիկը, Արիստակես Լաստիվերցին և ուրիշներ: Հայոց մշակութային դաշտը ներանձնացած չէ: Ստեղծվում են երկու քաղաքակրթությունների մերձեցման պատմություններ: Գրիգոր Մագիստրոսը կրթու-

թյուն է ստանում Բյուզանդիայում: Տրդատ Ճարտարապետը, որ հայոց կառուցողական հանճարի անկրկնելի դրսևորումներից մեկն է, չի սահմանափակվում հայաստանյան իր կառուցումներով: Մտքի խոյանքների այս հանճարը զարմանքով է լսում Գրիգոր Մագիստրոսի դատողությունները մարդու կյանքը երկարացնելու միջոցների մասին, և հատկապես նրա զարմանքն ավելի է մեծանում, երբ Գրիգորը հավաստում է, թե մարդու կյանքի տևողությունը կարող է երկարել, եթե նա հաճախ շքեղակերտ խոյակներ դիտի:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից ամբողջական հատվածներ մեջբերելով՝ գրողը վեր է հանում նրա իմաստասիրական մտքի խորքերը, համաշխարհային հասարակական կյանքի հոգևոր տեղաշարժերը վերլուծելու, քննելու և խորաթափանց եզրահանգումներ անելու ունակությունը: Իբրևհիմ ամիրա և Գրիգոր Մագիստրոս գծի հիմքում ընկած է ժամանակի երկու փոխափաների փոխըմբռնման միտումը: Հ. Խաչատրյանը համարձակորեն կերպավորում է համաշխարհային հռչակ վայելող պատմական և մշակութային գործիչների: «Ջրույցի են նստում Աբու-Լալա Մահարին և Գրիգոր Մագիստրոսը» գլխում վեր է հանված տասնմեկերորդ դարի արաբ նշանավոր բանաստեղծ Աբու-Լալա Մահարու կերպարը: Արաբ բանաստեղծը տեղյակ է Գրիգորի քերթողական և իմաստասիրական հանճարին: Նրանք քննում են քերթողական արվեստին վերաբերող ու իմաստասիրական բարդ խնդիրներ: Մահարին հետաքրքիր դատողություններ է անում թոնդրակյան, ընդհանրապես աղանդավորական շարժումների մասին, գտնում, որ դրանք անիշխանության ջատագովներ են, իսկ ամենամեծ չարիքները ծնվում են անիշխանությունից:

Հայկ Խաչատրյանն իր հերոսի կենսագրության ժամանակն իմաստավորում է պատմական անցուդարձի զուգահեռում: Միննույն ժամանակ ուշադրություն է դարձնում կերպարի հոգեբանական վերլուծությանը և համապարփակ ընդգրկումով պատմական ժամանակը ներկայացնում աշխարհաքաղաքական իրադարձությունների և մարդկային հարաբերությունների լարված անցումներով: «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» փաստանյութի և գեղարվեստականության անզուգական համաձուլվածք է: Գրողը էքսկուրս է կատարում պատմության խորքերը, վեր հանում համաշխարհային և հայոց մշակույթի դարակազմիկ արտահայտությունները, դրանց հեղինակներին՝ պատմավեպին տալով գիտաճանաչողական հսկայական արժեք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում Հ. Խաչատրյանի «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմավեպը, վեր է հանվում այն գիտանյութը, որը առաջ է հանդիսացել պատմավեպի համար: Նշվում է, որ վեպը նորարարական արժեք ունի և հայ գրականագիտության մեջ արժևորվում է որպես վեպ-էպոպեա: Պատմական բարդ ժամանակաշրջանի քաղաքական և հասարակական տեղաշարժերի համապատկերում բարձրացվում է պատմական անհատն իր ինքնության առանձնակիության մեջ՝ որպես հայ հանճարի նորոյրա պողթկում, որն իր ռազմական, գիտական, մշակութային ներուժը նվիրաբերում է հայրենիքին՝ այն դիտարկելով որպես համաշխարհային քաղաքակրթության բնօրրաններից մեկը:

Բանալի բաներ – պատմական ժամանակաշրջան, գիտական նյութ, պատմավեպ, նորարարական արժեք, արդի գրականագիտություն, վեպ-էպոպեա, քաղաքական և հասարակական տեղաշարժեր, ներհակ ապրումներ, ազգային առանձնահատկություններ, հայ հանճարի պողթկում, ռազմական և գիտական ներուժ, համաշխարհային քաղաքակրթության բնօրրան:

ИСТОРИЧЕСКИЙ РОМАН АЙКА ХАЧАТРЯНА «ПОСЛЕДНЕЕ ПИСЬМО ГРИГОРА МАГИСТРОСА»

ЖАННА БЕГЛАРЯН

В статье рассматривается роман А. Хачатряна «Последнее письмо Григора Магистроса», историческая эпоха, идея и образ героя одноименного романа. Выявляется научный материал, служащий основой исторического романа.

Роман имеет новаторскую ценность и квалифицируется в современном литературоведении как роман-эпопея. На фоне политических и общественных изменений сложной эпохи индивидуализируется личность с ее противоположными психологическими переживаниями, являющаяся в своей этнической особенности вспышкой армянского гения новых дней и посвящающая свой военный, научный, культурный потенциал родине, рассматривая ее как один древнейших всемирных очагов цивилизации.

Ключевые слова – историческая эпоха, научный материал, исторический роман, новаторская ценность, современное литературоведение, роман-

эпопея, политические и общественные изменения, психологические переживания, этнические особенности, вспышки армянского гения, военный и научный потенциал, всемирный очаг цивилизации.

HAYK KHACHATRYAN'S HISTORICAL NOVEL "THE LAST PAPER OF GRIGOR MAGISTROS "

ZHANNA BEGLARYAN

Zhanna Beglaryan, in this article considers Hayk Khachatryan's historical novel "The Last Paper of Grigor Magistros " and imparts the scientific material constituting the basis for the novel. Armenian literary critics consider it innovative and rate it an epic novel. In the complex historical era with a panorama of political and social changes, a historical individual with a detached personality is created as a new flash of Armenian genius who sacrifices his military, scientific, and cultural inner force to his motherland regarding it as one of the international civilization cradles.

Key words – historical epoch, scientific material, historical novel, innovative value, contemporary literature, epic novel, political and social changes, psychological feelings, ethnic specificity, flash of the Armenian genius, military and scientific energy, ancient cradle of the international civilization.

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԻ ՀԱՏՎԱՆԻՇ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ՄԱՐԻԱՆԱ ԲԱԴԱԴՅԱՆ

Պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է և գործառական ոչ բոլոր ոճերին է բնորոշ: Խոսքի պատկերավորությունը հիմնականում ստեղծվում է համապատասխան լեզվաոճական միջոցներով ու հնարանքներով, որոնց գործառությամբ հնարավոր է դառնում պատկերվող իրողությունն ու երևույթները ներկայացնել ավելի գունեղ, տպավորիչ, պատկերավոր, հուզական ու արտահայտիչ: Լեզվի պատկերավորման միջոցները բաժանվում են երկու խմբի՝ այլաբանություն և շարահյուսական բանադարձումներ:

Այլաբանությունը՝ որպես լեզվի պատկերավորման միջոց, ունի բառային դրսևորում և հենվում է բառերի փոխաբերական իմաստի վրա, այն հիմնականում գործ է ածվում գեղարվեստական, հրապարակախոսական և առօրյա – խոսակցական ոճերում և ապահովում է ոչ միայն խոսքի պատկերավորությունն ու արտահայտչականությունը, այլև նրա ներգործման, գեղագիտական գործառույթը, իսկ բանադարձումներն ավելի շատ հենվում են շարահյուսական տարբեր կառույցների վրա: Այլաբանությունը հաճախ անվանում են նաև փոխակերպություն, քանի որ այլաբանության ժամանակ փոխակերպվում է բառի կամ բառակապակցության իմաստը¹: Նկատելի է, որ դարձվածքների կազմավորման գործում մեծ դեր են խաղում ոճական և արտահայտչական մի շարք միջոցներ՝ **փոխաբերությունը, փոխանունությունը, համեմատությունը, չափազանցությունը, շրջասությունը, խորհրդանշանը (սիմվոլ)** և այլն:

Ուսումնասիրվող երեք լեզուներում էլ **փոխաբերությամբ** ավելի շատ դարձվածքներ են կազմվում: Ժողովուրդն ավելի խորիմաստ ու պատկերավոր է դարձնում իր խոսքը՝ հիմնվելով զանազան զուգորդությունների, նմանու-

¹ **Եգեկյան Լ.**, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 332-334:

թյունների վրա: Դրանցից հիմնականներն են զգայարանների միջոցով ստացվող տպավորությունները, ժողովրդի դիտարկումներն ու կենսափորձը, պատրաստի կայուն գործածություն ունեցող համեմատությունները, որոնք կրճատվելով դարձել են փոխաբերություններ: Օրինակ՝ **Լույսի կտոր** - Չքնաղ: **Կրկիպ լորի** - ժլատ: **Կաթ թափած կափու**- Շվար, մոլոր մարդ: **Սիրտը բարակ** - Դյուրագգաց, նուրբ: **Փափուկ սիրտ** - Շուտ ազդվող, նրբագգաց, զգացմունքային: **Քնքուչ սիրտ** - Փափուկ, մեղմ հոգի, անձ: **Красная девица** - **Գեղեցիկ աղջիկ**: **A honey tongue, a heart of gall** (բառացի՝ լեզուն մեղր, սիրտը՝ սառույց / քար) (ասույթ) - Խոսքը ջերմ է, բայց ինքն անգութ է, քարսիրտ: **A wooden head** /բառացի՝ փայտե գլուխ/ - Բույթ, անհասկացող մարդ: **A nose of wax** (բառացի՝ մոմե քիթ) - Կամազուրկ մարդ, հեշտությամբ այլ ազդեցության ենթարկվող: **Black heart** (բառացի՝ սև սիրտ) - Չարագործ, սրիկա: **Cabbage head** /բառացի՝ կաղամբի գլուխ / - Հիմար: **Soft / Touched / Weak in the head** /բառացի՝ փափուկ / դիպած / թույլ գլխով/ - Հիմար, անխելք:

Փոխաբերություններ կազմելու միջոցները խիստ բազմաթիվ ու բազմատեսակ են, ուստի հնարավոր չէ դրանք խմբավորել մեկ անվան տակ: Երբեմն փոխաբերության հիմք ծառայող առարկան կամ երևույթը գոյություն չունի իրականության մեջ: Այդ պարագայում ժողովուրդը նմանեցումներ ու համեմատություններ է կատարում՝ գործի դնելով իր երևակայությունը: Առաջին դեպքում ժողովուրդը հիմնվում է իր զգայական դիտարկումների վրա և կատարում բնախոսական մեկնաբանություններ, երկրորդում՝ նախապես գիտենալով երևույթն ու դրա մեկնաբանությունը, լեզվական ընդհանրացում է կատարում և երևույթի ֆիզիոլոգիական նշանակության ըմբռնումից հասնում դրա բարոյական նշանակության ըմբռնմանը²: Երևակայության միջոցով կազմված փոխաբերություն-դարձվածքները մեծ թիվ են կազմում: Դրանք գեղեցիկ ու տպավորիչ լեզվական միավորներ են, որ չեն խամրում կամ հնանում, ինչպես՝ **Ծակ բերան** - Գաղտնիքը չպահող, բացբերան, բամբասասեր (մարդ):

Կողը հասր - Սաստիկ համառ. անկիրթ և համառ: **Սափանայի հեք ծնված** - Շատ տգեղ:

Քարի կոկոն - ժլատ, կծծի: **Օգոստոսի աղվես** - Խիստ նիհար: **Золотое сердце** - Բարի, սիրող, ազնիվ = **Ոսկի սիրտ** = **A heart of gold** **A heart of gold** (բառացի՝ ոսկի սիրտ) - Մեծահոգի, ոսկի սիրտ ունեցող = **Ոսկի սիրտ** =

² **Պետրոսյան Ե.**, Հայերենի դարձվածքները, Երևան, 1969, էջ 48:

Золотое сердце , A heart of stone (բառացի՝ քարե սիրտ) = **Stony hearted** - Քարսիրտ, անխիղճ, անզուգ անձ = **Քար սիրտ**:

Փոխաբերական դարձվածքները ոչ միայն նպաստում են խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականությանը՝ այն դարձնելով ավելի տպավորիչ, այլև բացահայտում են մարդկային բնավորության տարբեր գծեր, իրավիճակներ, գործողության տարբեր հանգամանքներ: Երեք լեզուներում փոխաբերական վերափոխաստվածան առանձնահատկություններն ուսումնասիրելով՝ նկատում ենք, որ փոխաբերության ոճական հնարով կազմված դարձվածքներն ունեն իրենց համարժեքները դիտարկվող մեկ կամ երկու լեզուներում, ինչպես, օրինակ՝ **Ոսկի սիրտ- Золотое сердце – A heart of gold**:

Չափազանցումը ևս դարձվածքներ կազմելու տարածված միջոցներից է: Այն գործադրվում է որևէ երևույթ շեշտելու նպատակով: Չափազանցման հիմքում ընկած են որոշակի առարկայի, հատկանիշի կամ գործողության չափազանցումը, գույների խտացումը, որը հաճախ, պայմանավորված լինելով պատկերի ոչ իրական հատկանիշներով, առավել վառ և արտահայտիչ է դարձնում դարձվածային միավորը: Այս դարձվածքների բացատրության մեջ օգտագործվում են «շատ», «խիստ», «չափազանց», «սաստիկ» բառերը:

Օրինակ՝ **Ասեղ մաշկե-** *խիստ ժլատ լինել*: **Գլխին խելք մնալ** /հարց. և ժխտ.-ով/ – *Շատ զբաղված, ցրված, անուշադիր լինել*: **Երեսի գույնը գետին կաթել** – *Շատ առողջ լինել*:

Ձողի ծայրով վարդը քթին չհասնել (խսկց.) – Շատ հպարտ, ինքնահավան լինել: **Չոփ չտալ, որ աչքը կոխի (գռհկ.)** – Շատ ժլատ լինել: **Սաքանա պայրող** – Չափազանց ճարպիկ, հնարագետ: **Без царя в голове** – Շատ հիմար, անհեռատես: **Голова на плечах** – Շատ խելոք է: **Светлая голова** – 1. Շատ խելոք, մտածող, տրամաբանող, 2. Խելոք մարդ: **С царем в голове** – Շատ խելացի, հնարամիտ: **Ученая голова** – Շատ խելացի անձ, կարդացած, սովորած անձ:

Չափազանցումը լայնորեն օգտագործվում է գեղարվեստական գրականության մեջ, ինչպես նաև իրապարակախոսական, երգիծական ստեղծագործություններում: Դիտարկվող երեք լեզուներում չափազանցման ոճական հնարով բազմաթիվ դարձվածքներ են ձևավորվում: Դրանք գործածվում են որևէ երևույթ շեշտելու նպատակով: Սրանք պատկերավոր կապակցություններ են, որոնցում դարձվածքների պատկերավորությունը գումարվում է չափազանցման երևույթին՝ ստեղծելով շատ տպավորիչ պատկերներ: Բերենք մի շարք դարձվածքներ հայերենում, ռուսերենում և անգլերենում: Օրինակ՝ **Ձվի մեջ**

մազ փնորել - Խիստ բժախնդիր, ձևական լինել: **Մորթը դուրս տված աղվես** - Սաստիկ նիհար: **Семь пядей во лбу** (ասացվ.) - Խելքի ծով, շատ խելացի: **Ни кожу, ни рожу** (գոհկ., ժղվրդ.) - Շատ տգեղ է: **Not to be worth sb's little finger** (բառացի՝ չարժենալ մեկի ճկույթը)- Խիստ անարժան լինել:

Շատ քիչ դեպքեր կան, երբ գործածվում է լիտոտան: Սա ևս չափազանցում է՝ միայն հակառակ ծայրահեղությամբ. կատարվում է առարկայի կամ նրա հատկանիշի նվազեցում, փոքրացում: Հայերենում նվազասույթ ոճական դարձույթը դարձվածքներում հիմնականում կազմվում է **մի** թվականով և մարմնի մաս անվանող որևէ գոյականով: Օրինակ՝ **Մի մալ** – **Շալ փոքր: Մի թիզ** – **Շալ փոքր: Короче воробьиного носа** – **Շալ փոքր: Короче птичьего носа** – **Շալ փոքր: От горшка два вершка** – **Շալ փոքր: С ноготок** – **Շալ փոքր: Knee high to a duck (to a grasshopper, to a mosquito)** (բառացի՝ բաղի/մորեխի, մոծակի ծնկի բարձրության) – **Շալ փոքր:**

Շրջասությունը տարածված ոճական միջոցներից մեկն է, որի դեպքում հասկացությունն անվանապես կոչելու փոխարեն հիշվում են նրա բնորոշ հատկանիշներն ու կողմերը: Արտահայտչական նպատակներով լեզուն հաճախ է դիմում շրջասությունների: Երբեմն երկույթների անուղղակի անվանումը շատ ավելի ներգործուն տպավորություն է ունենում, քան ճիշտ ձևերը, և հետևաբար՝ դրանք ավելի լայնորեն են կիրառվում լեզուներում: Մյուս կողմից՝ շրջասությունն օգտագործվում է՝ տպավորությունը մեղմելու, բառի արտահայտած վիրավորական տպավորությունը նվազեցնելու համար: Շրջասությունների են դիմում նաև երկյուղից, նախապաշարմունքից կամ ուրիշներից իրենց իմացածը թաքցնելու նպատակով: Շրջասույթները լինում են երկու տեսակ՝ նկարագրական և այլաբանական: Գերակշիռ թիվ են կազմում նկարագրական շրջասությունները, որ յուրատեսակ, վառ պատկեր ստեղծելու հզոր ներուժ ունեն: Երեք լեզուներում էլ գերակշռում են շրջասույթ հնարի վրա կառուցված գոյականական, ածականական և մակբայական դարձվածային միավորները: Այս շարքում կարելի է դասել այն դարձվածային միավորները, որոնք նկարագրում են վիճակ, որակ, հատկանիշներ՝ ըստ նրանց որոշակի արտահայտությունների: Օրինակ՝ **Առյուծի սիրտ** – Քաջ: **Գլուխը հաստ** – Չհասկացող, չգիջող: **Կաշի ու ոսկոր** – Նիհար: **Ձեռքը գրպանից խոռվ** – Ժլատ: Այլաբանական շրջասությունները փոխաբերական իմաստ ունեն: Օրինակ՝ **Թաթ ու կրունկ** – Հարբած: **Նապաստակի սիրտ** – Վախկոտ: **Туз на ухе** – Վատ լսող: **A hare's heart** (բառացի՝ նապաստակի սիրտ) – Փոքրոգի: **Dead above the ears (Am.**

Dead from the neck up) (բառացի՝ մինչև ականջները խուլ) – Բթամիտ: **Dance barefoot** (**Շեքսպ.**) (բառացի՝ պարել ոտաբոբիկ) – Պառաված օրիորդ:

Փոխանունությունը բավականին շատ հանդիպող ոճական հնարքներից է: Դարձվածքներում հանդիպում ենք փոխանունության շատ դեպքեր, որոնցից են՝ սերում, պարունակողի և պարունակյալի հարաբերություն, մասի ու ամբողջի հարաբերություն: Փոխանունությունը հատկապես տարածված է մարմնի անդամների անուններով կազմված դարձվածքներում: Մարմնի անդամի անունը կարող է փոխարինել ոչ միայն «մարդուն», այլև իր իսկ դերի կամ տվյալ անդամին վերագրված զգացմունքների ամբողջությունը:

Ջ. Լեյբոֆֆի և Մ. Ջոնսոնի³ ըմբռնմամբ հասկացական փոխաբերության մի տեսակ է հասկացական փոխանունությունը: Ի տարբերություն փոխաբերության, որն իմաստային մեկ ոլորտը ներկայացնում է մեկ այլ ոլորտի կարգերի միջոցով, փոխանունությունն իմաստային միավորը ներկայացնում է դրա մի մասի կամ նրա հետ առնչվող այլ միավորների կարգերով: Փոխանունության միջոցով ճշտվում են հոգեբնախոսական հատկանիշները, ապրումային և հաղորդակցական առանձնահատկությունները: Օրինակ՝ **Աստիտ երեսից թափած** - Անամոթ, անպատիվ: **Լեդի ունենալ** - Քաջ լինել: **Քիթը մեծ** - Գոռոզ, մեծամիտ: **Քիթը բարձր** - Բարձրամիտ: **Правая рука** - Աջ ձեռք, առաջին օգնականը, գլխավոր, վստահված անձը: **Медный лоб** - Անմտորեն համառ, բուր, սահմանափակ մարդ: **A cool head** (բառացի՝ սառը գլուխ) - 1. Պաղարյուն, սառնարյուն, հանգիստ: 2. Պաղարյունություն, սառնարյունություն, հանգստություն: **Green head** (բառացի՝ կանաչ գլուխ) - Անփորձ մարդ: **White hands** (բառացի՝ սպիտակ ձեռքեր) - Ոչինչ չանող մարդ: Փոխանունությունը, որը լայնորեն գործածվում է լեզվի խոսակցական, գեղարվեստական և հրապարակախոսական ոճերում, կարող է արտահայտել բազմապիսի հարաբերություններ, հետևաբար և խոսքում տարբեր դրսևորումներ ունենալ: Տարբեր լեզուներում, այդ թվում՝ հայերենում, ռուսերենում և անգլերենում տարածված երևույթ է զգայությունների անվանումների փոխարեն զգայարանների անվանումների օգտագործումը, ինչպես օրինակ՝ **գլուխը**՝ խեղճին ու դատողությանը, **լեզուն**, ինչպես և **բերանը**՝ խոսքին, **սիրտը**՝ փորին ու ստամոքսին, իսկ **փորը**՝ սրտին, **քիթը**՝ հոտառությանը, **ականջը**՝ լսողությանը և այլն: Ժողովուրդը նախընտրում է վերջիններս, քանի որ այս կերպ զգայությունն ավելի է շեշտ-

³ **Лакофф Дж., Джонсон М.** Метафоры, которыми мы живем. Теория метафоры. М., Прогресс, 1990, с.376-377.

վում, խոսքը դառնում է ավելի պարզ ու մատչելի: Օրինակ՝ *Ականջից թեթև* - Շուտ լսող, հասկացող: *Ականջը ծանր* - Դժվարությամբ լսող, կիսախուլ: *Առյուծի սիրտ ունենալ* - Քաջ, խիզախ լինել: *Ուրբը թեթև* - Արագաշարժ: *Дурья голова* - Հիմար մարդ: *A hard heart* (բառացի՝ կարծր՝ պինդ սիրտ) - Դաժան, քարսիրտ անձ: *A thick - headed thing* (բառացի՝ հաստագլուխ իր) - Անհասկացող, բույթ անձ: *Have a good / kind heart* (բառացի՝ լավ / բարի սիրտ ունենալ) - Բարի, մեծահոգի լինել:

Համեմատության ոճական հնարով կազմված դարձվածքները նույնպես բավականին տարածված են, հատկապես անգլերենում: Հայերենում համեմատությունը սովորաբար իրականացվում է *պես, նման, ինչպես, որպես, իբրև* կապող բառերով, ռուսերենում՝ *как*, իսկ անգլերենում՝ *as ... as, like, as like, such as, as if, as though, seem* և այլ կապերի ու կապող բառերի միջոցով: Հայերենում քիչ են համեմատական դարձվածային միավորները, իսկ անգլերենում դրանք բավականին մեծ թիվ են կազմում: Օրինակ՝ *Ул нирраթի պես* - Տխուր, անտրամադիր *Черныйй как сажа* - Շատ սև: *Черныйй как угольки* - Ածխի պես սև աչքերի մասին: *As black as a cherry* (բառացի՝ կեռասի պես սև) - Կեռասի պես կարմիր: *As black as night* (բառացի՝ գիշերվա պես սև) - Տխուր, անհույս: *Be thin like a tooth drawer* (բառացի՝ նիհար, ինչպես ատամի ունեյին) - Շատ նիհար, տանձի պոչ: *Like a chicken with its head cut off* (բառացի՝ ինչպես հավը՝ կտրած գլխով),- Անգոր, ուժը կորցրած:

Ածականական համեմատություններն արտացոլում են մարդկանց ամենաբազմազան հատկանիշները: Օրինակ՝ *Քիթը կալած հարս նմանել* (բրբ.), - Պարկեշտ, ամաչկոտ լինել: *Как без рук* - 1. Լրիվ անօգնական: 2. Անկարող, անճարակ: *As crooked as a dog's hind leg* (բառացի՝ այնքան ծուռ, որքան շան հետևի ոտքը),- Անազնիվ, ոչ օրինավոր:

Խորհրդանշանը (սիմվոլ) հաճախ հենվում է բառերի փոխաբերական իմաստների վրա և կառուցվում երկու երևույթների նմանության հիման վրա: Անձի հատկանիշ արտահայտող դարձվածային միավորներում խորհրդանշական իմաստ են ստացել կենդանիների գործողությունների, գույների, բույսերի անվանումները:

Սեփական մարմնի և հոգու նկարագրության համար մարդը մշտապես ընդհանրության եզրեր է փնտրել իրեն շրջապատող բնության ամենատարբեր երևույթների, կենդանիների, առարկաների հետ: Օրինակ՝ երեք լեզուներում էլ տխրության, չարության խորհրդանիշ է սևը: *Ул հոգի* - Չար, դաժան:= *Черная душа: Ул սիրտ: = Черное сердце = Black heart* - Չարագործ, սրիկա:

Դարձվածային ոճագիտությունը ժամանակակից լեզվագիտության և դարձվածաբանության զարգացող ուղղություններից է: Այս գիտության հիմքը դրվել է Շ. Բալլի⁴, Վ.Վ. Վինոգրադովի⁵, Ա.Ի. Եֆիմովի⁶, Ա. Վ. Կունինի⁷ և շատ այլ լեզվաբանների աշխատություններում: Հայերենագիտության մեջ դարձվածային ոճաբանության խնդիրներին անդրադարձել են Ա. Մուրվալյանը⁸, Ա. Սուքիասյանը, Խ. Բաղիկյանը, Լ. Եզեկյանը⁹, Պ. Բեդիրյանը և ուրիշներ: Դարձվածքները լեզվի պատկերավորման միջոցներ են, խոսքին հաղորդում են պատկերավորություն, հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը:

Պատկերավորությունը խոսքի կարևորագույն և հիմնական արժանիքներից է և բնորոշ է գործառական բոլոր ոճերին: Կան լեզվի կիրառության ոլորտներ, որոնցում պատկերավորությունը, արտահայտչականությունն առաջնային են, և տվյալ գործառական ոճը հենվում է լեզվի այդ հատկանիշների վրա: Խոսքի պատկերավորությունը հիմնականում ստեղծվում է համապատասխան լեզվաոճական միջոցներով և հնարքներով, որոնց գործածությամբ հնարավոր է դառնում պատկերվող իրողությունն ու երևույթները ներկայացնել ավելի գունեղ, տպավորիչ, պատկերավոր, հուզական ու արտահայտիչ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել հետևյալը. դիտարկվող երեք լեզուներում (հայերեն, ռուսերեն, անգլերեն) ամենամեծ թվով դարձվածքներ են ձևավորվում փոխաբերության և փոխանունության ոճական հնարներով, ինչը չի կարելի ասել ոճական այլ հնարների մասին: Համեմատություն դարձվածքները ամենաշատը հանդիպում ենք անգլերենում, իսկ հայերենում և ռուսերենում դրանք շատ ավելի քիչ են հանդիպում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվել են անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորների ոճական և արտահայտչական միջոցները

⁴ Балли Ш. Французская стилистика. М., 1961, 60 с.

⁵ Виноградов В. В. О языке художественного произведения., М., 1958, 360 с.

⁶ Ефимов А. И. Стилистика художественной речи. М., 1983, 223 с.

⁷ Кунин А. В. Основы понятия фразеологической стилистики. Проблемы лингвостилистики. М., 1969, 110 с.

⁸ Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանությունը և բայակազմությունը, Երևան, 1959, էջ 63-68:

⁹ Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2000, էջ 181-359:

հայերենում, ռուսերենում և անգլերենում: Խոսքի պատկերավորությունը հիմնականում ստեղծվում է համապատասխան լեզվաոճական միջոցներով ու հնարանքներով, որոնց գործառնությամբ հնարավոր է դառնում պատկերվող իրողությունն ու երևույթները ներկայացնել ավելի գունեղ, տպավորիչ, հուզական ու արտահայտիչ: Դիտարկվող երեք լեզուներում դարձվածքները լեզվի պատկերավորման միջոցներ են, խոսքին հաղորդում են հուզական երանգավորում, միաժամանակ նպաստում խոսքի սեղմությանն ու հակիրճությանը:

Բանալի բառեր- դարձվածային միավոր, լեզվաոճական միջոցներ, գունեղ, հուզական, արտահայտիչ:

ЭКСПРЕССИВНО-СТИЛИСТИЧЕСКИЕ СВОЙСТВА ФРАЗЕОЛОГИЗМОВ, ХАРАКТЕРИЗУЮЩИХ КАЧЕСТВА ЧЕЛОВЕКА В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

МАРИАНА БАДАДЯН

В статье исследованы экспрессивно-стилистические свойства фразеологизмов, характеризующих качества человека в армянском, русском и английском языках. Выразительность речи преимущественно передается посредством соответствующих лингвистических средств, которые делают ее более красочной, зрелищной, эмоциональной и выразительной. В рассматриваемых трех языках фразеологизмы эмоционально окрашивают речь и в то же время способствуют ее краткости и лаконичности.

Ключевые слова – фразеологические единицы, лингвистические средства, красочный, эмоциональный, выразительный.

THE STYLISTIC AND EXPRESSIVE MEANS OF PHRASEOLOGICAL UNITS INDICATING CHARACTER QUALITIES IN ARMENIAN, RUSSIAN AND ENGLISH

MARIANA BADADYAN

This article considers the stylistic and expressive means of phraseological units indicating character qualities in Armenian, Russian and English. A vivid

communication speech through language is possible by employing linguistic features, which make the presented image more colorful, impressive, emotional and expressive. The phraseological of all the three languages, are language tools that help render speech emotional, and at the same consice and laconic.

Key words – phraseological unit, linguistic means, colorful, emotional, expressive.

ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԼԵՁՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԴՈՆԱՐԱ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Յուրաքանչյուր գրողի տաղանդը, անհատականությունը մեծ չափով պայմանավորված են համաժողովրդական լեզվամիջոցների յուրօրինակ գործածությամբ: Գրողը, հիմք ընդունելով լեզվում գործող քերականական հիմնական նորմերը, չի սահմանափակվում դրանցով. գրական լեզվի օրինաչափություններից միտումնավոր կատարված շեղումները շատ հաճախ պայմանավորում են գրողի լեզվի բարձր գեղարվեստականությունը:

Մ. Սարգսյանն իր ստեղծագործություններով գրական աշխարհի բերեց հայրենի բնաշխարհի ուրույն պատկերը, որի մասին անկեղծորեն ու մեծ սիրով վիպում է արվեստագետը: Նրա յուրաքանչյուր ստեղծագործություն յուրատեսակ մենախոսություն է, գրույց աշխարհի հետ: Խոսքարվեստի հիմնական հատկանիշներն են՝ պատմելու անմիջականությունը, պարզ լեզվամտածողությունը, գեղարվեստական պատկերի նուրբ զգացողությունը, էպիկական և քնարական լեզվատարրերի ներդաշնակ համադրումը: Կերպարի և միջավայրի ներդաշնակումը, արտաքին գործոնների շնչավորումը ստեղծում են իրականի ու երևակայականի վավերական տպավորություններ: Հեղինակի գեղարվեստական խոսքն առանձնանում է բովանդակային խորությամբ և արտահայտման ձևերի ներդաշնակ կիրառությամբ:

Իրենց խոսքը կառուցելու համար գրողները գործածում են նույն բառերը, բայց թե ինչպես են դրանք կապակցում ու կիրառում, պայմանավորված է յուրաքանչյուր հեղինակի լեզվամտածողությամբ և ոճի անհատականությամբ: Գեղարվեստական ոճն առավել ցայտուն է արտահայտվում շարահյուսության մեջ, որտեղ ընդգծվում են բառակապակցությունների և նախադասությունների արտահայտչականությունն ու ինքնատիպությունը:

Շարահյուսությունը կամ խոսքի կառուցվածքը գեղարվեստական երկերում կատարում է գրեթե նույն դերը, ինչ անվրեպ, ճշգրիտ ու դիպուկ ընտրված բառը: Մ. Սարգսյանի լեզվի բնորոշ ժողովրդայնությունը ձևավորում են նաև շարահյուսական իրողությունների տեղին կիրառությունները: Ա. Ի. Եֆիմովն իրավացիորեն նկատում է. «Յուրաքանչյուր գրողի անհատական ոճի բանալին շարահյուսության մեջ պետք է փնտրել...»¹:

¹ Ефимов А. И. Стилистика художественной речи, М., Изд-во Моск. ун-та, 1961, с. 68.

Մեր նպատակն է բացահայտել Մ. Սարգսյանի ստեղծագործությունների լեզվի շարահյուսական համակարգի առանձնահատկությունները, շարահյուսական-ոճական հնարանքները, որոնք բնորոշ են նրա անհատական ոճին: Գտնել լեզվական այն միջոցները, որոնք գրողի ասելիքը դարձնում են ինքնատիպ, նպաստում կերպարների տիպականացմանը, հեղինակի լեզվի ժողովրդայնացմանը:

Ինչպես գիտենք, տարբեր գրողներ կիրառում են զանազան բառակապակցություններ: Եթե Պ. Պոռոշյանը գերադասում է կիրառել կարճ բառակապակցություններ, ապա Շիրվանզադեի երկերում դրանք բավականին երկար են: Եթե Նար-Դոսի խոսքը քիչ է տարբերվում սովորական խոսակցականից, ապա Ա. Բակունցի կիրառած բառակապակցությունը նախադասության շրջանակներում յուրատեսակ նկարագրություն է, որը կարող է առանձին գրական պատկեր համարվել: Մ. Սարգսյանի կիրառած բառակապակցությունները միահյուսված են երկի թեմային, այսինքն՝ ում կամ ինչ է նա նկարագրում, ինչ իրավիճակում, ում խոսքի մեջ: Օր.՝ «Քուռ գետն ու նրա ծախսափնյա վտակը՝ Թափարվանը, խոր ձորերով ու կիրճերով թրատում են Ջավախքի բարձրավանդակը: Ձորերում՝ այգիներ, դաշտերում՝ հացահատիկ և լեռներում՝ ոչինչ: Հարավ-արևմուտքում Ճուբարետի կուսական անտառներն են զանգրացնում լեռները, հյուսիս-արևելքում ծփում է Փարվանա լիճը, իսկ նրանից ծնված Թափարվան ջրառատ գետը մրգով և բանջարեղենով զարդարում է այգիներն ու բոստանները և կարմրախայտով՝ սեղանները: Բարձրավանդակի վրա իշխում է բարձրագահ Աբուլը և իր հաղթ ուսերին պահում Ջավախքի երկնքի կապույտ վրանը»²: Դժվար չէ նկատել, որ բառակապակցություններն այստեղ հիմնականում բաղկացած են երկու անդամից (*ծախսափնյա վտակ, ձորերով թրատել, կուսական անտառներ* ևն): Գրողը պարզ և հատու խոսքով հստակ պատկերացում է տալիս այն աշխարհի մասին, որը նկարագրում է:

Ս. Արզումանյանը գրում է. «Շատախոս չէ հեղինակը, չի ընկնում մանվածապատ դատողությունների ետևից, խուսափում է մեջտեղ քաշել ոճը ծանրացնող նկարագրություններ: Քիչ «բնագիր», շատ «ենթաբնագիր», կարճ «տեքստի» միջոցով հարուստ «ենթատեքստ». այս մեթոդին է հետևում Մ. Սարգսյանը»³: Հեղինակը ձգտում է պարզության և համառոտության, որոնք նաև

² **Սարգսյան Մ. Դ.**, Խաղաղություն պատերազմից առաջ: Չմակարդվող արյուն, «Խորհրդրդային գրող» հրատ., Երևան, 1989, էջ 5:

³ **Արզումանյան Ս. Հ.**, Սովետահայ վեպը, Գիրք 2, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1980, էջ 123:

ճիշտ բառը նտրության ու բառօգտագործման արդյունք են: Սա թե՛ ոճի, թե՛ ճաշակի հարց է: Կ. Ֆեդինը գրում է. «Բառի ճշգրտությունը ոչ միայն ոճի պահանջ է, այլ նաև՝ առողջ ճաշակի: Բայց առաջին հերթին՝ իմաստի պահանջ: Որտեղ չափից շատ բառեր կան, որտեղ դրանք թույլ են, այնտեղ միտքը անզոր է, տկար: Խառնաշփոթությունը (խճճվածությունը) չի պարզաբանվում պարզ, ճշգրիտ բառով»⁴: Սարգսյանը բառերի մեջ նոր երանգներ տեսնելու, դիպուկ ընտրված բառերի ու մակդիրների գործածության վարպետ է, սա արտահայտչական ու գեղարվեստական մեծ արժեքով է օժտում նրա խոսքարվեստը: Օրինակ՝ «*Հարսանեկան թափորը՝ ասկյարների շքախմբի ուղեկցությամբ բռնեց Արդահանի ճանապարհը: Հարսանեկան քարավանն արդեն անցնում էր...*»⁵: Այստեղ հեղինակը մակդիրների հմուտ գործածությամբ շատ կարճ ու համառոտ ցույց է տալիս թուրքերի կողմից ստիպողաբար և արհեստակա՝ նորեն կազմակերպված հարսանեկան իրավիճակ (հարսնացուն ամուսնացած կին էր՝ Եղիզարեթը):

Մ. Սարգսյանի խոսքարվեստը հարուստ է շարահարության օրինակներով: Հեղինակի ոճի առանձնահատկությունն այն է, որ նա համադասական նախադասության բաղադրիչների միջև շաղկապներ գրեթե չի գործածում: Ինչպես գիտենք, անշաղկապությունն առօրյա-խոսակցական ոճին բնորոշ իրողություն է:

Հեղինակը դիմում է նաև դադարի՝ արտահայտման մի ձև, որն ընդգծում է նախադասության որոշ մասը՝ անջատելով հիմնական մասից և ներկայացնելով որպես առանձին նախադասություն: Սա ուժեղացնում է ընթերցողի վրա թողած տպավորությունը: Կարճ նախադասություններով գրողը ստեղծում է ներգործուն պատկերներ. «Խուճապն սկսվեց միանգամից: Թուրքական հրետանու ձայնը քաղաք հասավ նախ հեռավոր ամպրոպի նման, հետո լռեց: Մայիս էր, արև: Երկինքը մաքուր կապույտ, և մարդիկ զարմացած և շվարած նայեցին միմյանց: Բավականին երկար ընդմիջումից հետո լսվեց երկրորդ համազարկը»⁶: Նկատելի է, որ Մ. Սարգսյանը ձգտում է ստեղծել մի ոճ, որն ունի ժողովրդական շունչ ու ոգի:

Սարգսյանական արձակին հատուկ է բնության նկարագրությունը: Գրողը բնությունը և մարդ արարածին տեսնում է ներքին անբաժանելի կապի ու

⁴ Федин К. А. Писатель. Искусство. Время. М., "Советский писатель", 1973, 323 с.

⁵ Սարգսյան Մ. Գ., Խաչված քաղաքը, «Հայաստան» հրատ., Երևան, 1996, էջ 116:

⁶ Տե՛ս Սարգսյան Մ., նշվ. աշխ., էջ 27:

ամբողջության մեջ: Սարգսյանը բնությունը սիրում է այնպես, ինչպես իր պարզ, անարատ, մաքուր և բնությանը մերված հերոսները: Բնության նկարագրությունները նպաստում են հերոսների անհատականացմանը, նրանց ներքին զգացողությունների, հոգեվիճակների, ուրախությունների, տառապանքների, նրանց կայացրած որոշումների, եզրահանգումների բացահայտմանը և հաճախ, նախորդելով դեպքերին, ենթադրում մոտալուտ իրավիճակներ: Անձնավորման, փոխաբերության, համեմատության գործածությամբ հեղինակը բանաստեղծականացնում և պատկերավոր է դարձնում իր խոսքը. «Մի մղուքավոր ամպ էլ շուրթը երկարել է դեպի գետակը և ոչխարի հոտի նման կպել ալիքներին: Արևը դեռևս չի արթնացել: Անբան է, ծույլ: Գյուղը շուտ է արթնանում, արևը՝ ուշ...»⁷: «Փափուկ մի հով է անցնում լեռան լանջերով, բերելով ծաղիկների շշուկ և ծառերի հառաչ: Լուսինը լեռան թիկունքից դուրս է հանում դեղնավուն ճակատը և ապա հսկայական սկավառակի նման զարկում սարի կատարին...»: «Լուսինը նստել է վրանի առջև և կովում է նավթի ճրագի հետ: Անտառի շնչառությունը ներքևից մագլցում է վեր, ծաղիկների բույրը վերևից հոսում է ներքև»:

Սովորական երևույթների մասին Մ. Սարգսյանը խոսում է աչքի համար անսովոր պատկերներով և համեմատություններով, նրա գրչի տակ սովորական բառերն ու նախադասություններն ստանում են այլ բույր ու հնչեղություն: «Գեղարվեստական երկի ոճի առանձնահատկությունը,- գրում է Դ. Ռոզենտալը,- նրանում դրսևորվող «հեղինակի կերպարն է»՝ ոչ իբրև հեղինակի անհատականության արտահայտություն, այլ իբրև նրա յուրօրինակ վերամարմնավորում»⁸:

Սարգսյանի ստեղծագործություններում հեղինակային խոսքը հիմնականում կանոնավոր է, եղած շեղումները պայմանավորված են նրա լեզվի ժողովրդրայնությամբ, հեղինակային պատումի հիմքը հիմնականում պատմողական բնույթի երկկազմ նախադասություններն են, իսկ միակազմ նախադասություններ նա օգտագործում է վերհուշի դեպքում, բնության նկարագրություններում, իր և հերոսների ապրումների մասին խոսելիս: «Յուրաքանչյուր գրող (ինչպես նաև ճարտարապետ կամ գեղանկարիչ) իր գեղարվեստական ստեղծագործություններում ավելի հաճախ է դիմում նախասիրած կառուցվածքներ-

⁷ Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 64, 67, 68:

⁸ **Розенталь Д. Е.** Практическая стилистика русского языка, М., Высшая школа, 1987, с 61.

րին, որոնք տիպիկ և բնութագրական են նրա պատմելաձևին»⁹:

Վերհուշը Մ. Սարգսյանի ոճին հատուկ ձև է: Յուրաքանչյուր որոշակի պահ ու նկարագրություն ստեղծագործական աշխատանքի ընթացքում ենթադրում են համապատասխան ոճ ու գրելաձև: Քնարականությունը, որը հատուկ է հեղինակին, տրվում է վերհուշի նկարագրությամբ, որն էլ իր հերթին ներկայացվում է վարպետ բանաստեղծականությամբ, պարզ և բարդ համադասական նախադասությունների կիրառմամբ. «Սերգեյը չի դիմանում: Տեսածին գումարվում է վերհուշը: Կենդանանում են մոր և քրոջ պատկերները: Նա լալիս է՝ ծամելով աջ ուր: Հետո կատարվում է անսպասելին: Նա թռչում է սենյակից դուրս, գլորում առաջին պատահած գերմանացուն և սեղմում կոկորդը: Մինչև մեր միջամտությունը, գերմանացին արդեն մեռած էր...»¹⁰: «Զորակոչիկներին ուղեկցում էին ընկերներն ու հարազատները: Զորացրվածներին դիմավորում էին ամբողջ գյուղով: Զորս տարի գյուղը սպասել է ու լացել, հիմա ուզում է չորացնել, սրբել աչքերը... Գյուղը լցվում էր:

Հղի էր գյուղը, հարսները՝ երեխայով, ջահելները՝ սիրով, աշունը՝ հարսանիքներով»: «Նրան հանդիպեցի գնդի շտաբի դռանը: Կանգնած էր խոհարարուհի Մարուսյայի հետ և ինչ-որ ծիծաղաշարժ բան էր պատմում ջարդուփշուր ռուսերենով: Գնդիկ խոհարարուհու բարձրաձայն ծիծաղից զինվորական բլուզի տակ ավելոծվում էր նրա լիքը կուրծքը... Հայ էր: *Իմացա անմիջապես*: Դեմքը մի տեսակ մոխրագույն էր, չոր, շերտավոր որձաքարի նման: Դեմքը խիստ էր, երբ քեզ չէր նայում, իսկ երբ աչքերը հառում էր գրուցակցին, դեմքը լուսավորվում էր մի տեսակ մանկական ժպիտով...»¹¹:

Սոսկ քնարական տպավորություն ստեղծելն ավելի հեշտ է, քան վերհուշի իմաստը, որն ավելի խորն է ու ավելի բարդ: Վերհուշը հուզական և բանաստեղծական ուժեղ բովանդակություն է ստանում նաև հեղինակի կողմից ներկայացվող իրականությունը լավ ճանաչելու շնորհիվ: Նա պատմում է ականատեսի աչքերով, բնությունը ներկայացնում է մեծ բանաստեղծականությամբ, խենթ կարոտով: Այստեղ հեղինակն անցյալը հիմնականում պատկերում է ներկայի ձևով (սահմանական եղանակի անցյալ անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար ժամանակների փոխարեն կիրառում է սահմանական եղանակի ներկան). այս ոճական հնարը նպաստում է խոսքի անմիջականությանը.

⁹ **Ефимов А. И.** Стилистика художественной речи, М., Изд-во Московского университета, 1961, с. 423.

¹⁰ Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 104, 250:

¹¹ Նույն տեղում, էջ 209:

«Ձայնը փոխվում է, ավելի քնքշանում: Արցունքները մթության մեջ չեն երևում, բայց ես լսում եմ նրանց գլորվելու ձայնը, նույնիսկ շտապյունը, - մտքումս անգամ չեմ դավաճանել նրան, հավատա՛: Ես իմ մեծ կոիվն ունեմ պատերազմի դեմ, մահի դեմ: Այս գիշեր ես հաղթեցի պատերազմին, բա՛յց ... բայց Պետոն էլ հաղթվեց, նա սարի քամուն էլ էր խանդում:

Քնաթաթախ հովը սարից թավալվում է ներքև և խճճվում ծառերի մեջ, հետո հորանջելով արթնանում է լուսինը, հետո մի աստղ փոխում է իր տեղը, երևի տիեզերքի վերին արխում գնում է համբուրվելու, հետո մի տաք համբուրով Մանուշակը ոմբակոծում է պատերազմը»¹²:

Հեղինակային պատումը երբեմն ստանում է պարբերության լատուցվածք: Գ. Գարեգինյանը գրում է. «Պարբերույթը ընդգծված ոճական արժեք ունի, քանի որ աչքի է ընկնում զգացական հագեցվածությամբ, քնարական հուզականությամբ, հրապարակախոսական կրքոտությամբ, հոետորական հանդիսավորությամբ ու վերամբարձությամբ: Որպես ոճական գունավորում ունեցող կառույց՝ այն գերազանցապես օգտագործվում է գրավոր խոսքում»¹³: Պարբերույթը՝ որպես շարահյուսական կառույց, բնութագրվում է հատկանիշների բազմազանությամբ: Ըստ արտաբերության հնչերանգի՝ պարբերույթի առաջին մասն արտասանվում է բարձրացող, իսկ երկրորդ մասը՝ ցածրացող տոնով: Պարբերույթի երկու հիմնական մասերը գտնվում են սերտ կապի մեջ, ինչն էլ պարբերույթը դարձնում է քերականական տեսակետից ամբողջական կառույց. «Ջարմանալի գիշեր է: Լուսավոր՝ ցերեկվա նման: Իմ աչքին, առաջին անգամ, իմ ծննդավայրը՝ Ջավախքը, երևում է որպես մի սրբազան տաճար, երկնքի գմբեթից կախված լուսինը՝ ջահ, աստղերը՝ մոմեր, և հոգեցունց շարական՝ իմ ջրառատ լեռնաստանցի գետերի ու գետակների երգեցողությամբ:

Մեր փոքրիկ քաղաքը, որ մնաց ետևում, լուսաքողարկման մեղքով, քաղաքի նման չէ: Հեովից նա երևում է դիվական ուժով, իրար վրա դարսված հսկայական քարաբեկորների, ժայռերի ձևով, որոնց ներքո տրոփում են մեր մայրերի սրտերը, որի նեղլիկ փողոցներում ծվարել է մեր մանկությունն ու պատանեկությունը, որտեղ մենք թողնում ենք աշխարհի ամենատաք արևը և

¹² Սարգսյան Մ. Դ, Երկեր, 2 հատորով, հատ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 704 էջ, հատ. 2, «Հայաստան» հրատ., Երևան, 1977, էջ 141:

¹³ Գարեգինյան Գր. Լ., Ժամանակակից հայոց լեզու, Բարդ նախադասություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1991, էջ 356:

գեղեցկուհի լուսինը, ամենաերգասաց ջրերը ու ամենահրաշապատում հեքիաթները և առաջին սերը...»¹⁴:

«Հյուրերը երեք հոգի են և եկել են Թիֆլիսից: Անմիջապես նկատվեց, որ հյուրերն ու հյուրընկալները ծանոթներ են, որ առաջինները լավ գիտեն Մեհրաբ Չոբանյանին, որը գլխավորում է տեղական դաշնակցական փոքրաթիվ խումբը: Թեյի սեղանի շուրջ ծայր առավ տագնապալի մի զրույց, որի մեջ անհանգստություն կար գավառի հայ ու վրացի ազգաբնակչության ճակատագրի նկատմամբ: Թուրքական բանակը Վեհիբ փաշայի հրամանատարությամբ դանդաղ, աննկատելի սողում էր դեպի ռուս-թուրքական սահմանը, առանց մատնելու իր շարժման նպատակը, առանց նեղություն տալու քրիստոնյա բնակիչներին...»¹⁵:

Բերված օրինակներից առաջին պարբերությոը համադասական է, երկրորդը և երրորդը՝ ստորադասական: Առաջին և երկրորդ պարբերությունները ունեն դեդուկտիվ (պարբերության սկսվում է մտքով, որը մնացած մասում բացատրվում է), իսկ երրորդը՝ ինդուկտիվ կառուցվածք (պարբերության սկսվում է շարահյուսական թեմայով, որով մեկնարկում է պատմությունը): Իրավացի է Մ. Աբեղյանը, երբ գրում է. «Պարբերությոը խոսքերի մի ամբողջական գեղեցիկ միություն է, որի մասերը արվեստավոր կերպով այնպես են կապակցվում իրար հետ, որ մի հատ գլխավոր միտքը, որ զարգանում է ամբողջի մեջ, մինչ վերջն առկախ է մնում»¹⁶:

Ուսումնասիրելով Մ. Սարգսյանի արձակ երկերում շարահյուսական տարբեր միավորները՝ կարող ենք արձանագրել, որ նրան առավել բնորոշ են քիչ երկրորդական անդամներ ունեցող՝ երկանդամ, մասամբ նաև բազմաբարդ ստորադասական կառույցները: Դա պայմանավորված է մի կողմից՝ նախադասությունների իմաստային և հուզական բնույթով, մյուս կողմից՝ նախադասությունների ներքին կառուցվածքով. «Իսկ ընկերը, Հարությունը, եթե խռովեր իր ընկերոջ ընտանիքից, ինչպես կտաներ հիվանդ Արամազդը հին և հարազատ ընկերոջ կորուստը»¹⁷: «Արև օրը դեռևս երաշխիք չէ լավ եղանակի, որովհետև մի քանի թուրքի ընթացքում կարող է երկինքը բարդ-բարդ ամպերի կուտակումներ ծնել, իսկ ամպերը անձրևի այնպիսի հեղեղներ, որ արևը դառնա հեռավոր մի երագ»¹⁷: «Բայց արդեն գիտենք, որ պատերազմը

¹⁴ Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 228:

¹⁵ Նույն տեղում, էջ 14:

¹⁶ **Աբեղյան Մ. Հ.**, Հայոց լեզվի տեսություն, «Միտք», Երևան, 1965, էջ 673-674:

¹⁷ **Սարգսյան Մ. Դ.**, Դարավերջի հայր, «Հայաստան» հրատ., Երևան, 1999, էջ 32, 68:

սովորականներից չէ, որ թեև մարդկանց արյունը ջուր չէ, սակայն հոսում է և պետք է հոսի ելման ջրի սաստկությամբ»¹⁸:

Այսպիսով, հեղինակի գեղարվեստական մտածողության առանձնահատկությունը, ստեղծագործությունների թեմատիկան, վերհուշը, իր և հերոսի, բնության և աղետաբեր պատերազմի նկարագրությունները, ժողովրդային գրողին հատուկ քնարականությունն ու բանաստեղծականությունը պայմանավորում են շարահյուսական իրողությունների ոճական կիրառությունները: Սարգըսյանական արձակին հատուկ են էական այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են պարզությունը, պատկերավորությունը, բնականությունը, հումորը, արտահայտչական միջոցների ներդաշնակությունը և ամենակարևորը՝ ազգային լեզվամտածողությունը: Այս ամենը վկայում են, որ լեզվի հարցում հեղինակն անկաշկանդ է:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում քննարկվել և ներկայացվել են Մ. Սարգսյանի արձակի լեզվի շարահյուսական առանձնահատկությունները: Վերլուծվել են շարահյուսական այն կառույցները, որոնք հատկապես նպաստել են գրողի լեզվի գեղարվեստականացմանը, ժողովրդայնացմանը, հուզականությանն ու հերոսների խոսքի տիպականացմանը:

Բանալի բաներ – ոճաբանություն, հեղինակի լեզու, ժողովրդայնություն, քնարականություն, հերոսի կերպարի տիպականություն, շարահյուսություն:

СИНТАКСИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ЯЗЫКА ПРОЗЫ МКРТЫЧА САРКИСЯНА

ДОНАРА БАХЧИНЯН

В статье исследованы и представлены особенности языка прозы известного армянского писателя второй половины XX века М.Саркисяна. Проанализированы такие конструкции автора, которые в первую очередь способствовали повышению художественности, народности его слова, типизации речи героев.

¹⁸ Տե՛ս **Սարգսյան Մ.**, նշվ. աշխ., էջ 155:

Ключевые слова – стилистика, народность, авторская речь, мелодичность, типизация образов героев, синтаксис.

THE SYNTACTIC FEATURES IN MGRTICH SARGSYAN'S PROSE

DONARA BAKHCHINYAN

The article considers the syntactic features of the prose of M. Sargsyan - a well known Armenian writer of the second half of the XXth century. Bakhchinyan has analyzed the constructions that have contributed to better the esthetic and elegant qualities of Sargsyan's style, enhance its popularity and typify the emotionalism and speech of his heroes.

Key words - stylistics, the author's language, popularity, lyric, typification of an image of a hero, syntax.

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ՇՈՒՇԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Խոսքային գործունեությունը կամ ակտը համագործության ընթացքի՝ որոշակի նպատակով կատարվող հարաբերականորեն ինքնուրույն հատված է: Հաղորդակցության ամենավիճարկ միավորը որոշակի ակտերի իրականացումն է: Դրանցից են՝ հարց տալը, հայտարարություն անելը, կարգադրելը, նկարագրելը, բացատրություն տալը, ներողություն խնդրելը: Խոսքային ակտերը երեք տեսակի են՝ խոսողական, կատարողական, ներգործական: Խոսողական ակտը, ըստ լեզվի արտասանական և քերականական նորմերի, նախադասության արտաբերումն է: Երբ նախադասությունը լսողի կողմից համարժեքորեն է կիրառվում, կատարողական ակտ է դառնում: Վերջին՝ ներգործական ակտը կապված է լսողի վրա ազդելու, ներգործելու հետ: Կատարողական բայերը լինում են պատմողական, հրահանգային, ստիպողական, հորդորական, հայտարարական, արտահայտչական: Խնդրանքը, հրամանը, կարգադրությունը, թույլտվությունը խոսողական ակտեր են. դրանց նպատակը լսողի կողմից գործողություն կատարելն է:

Եղանակի կարգը եղանակավորման լեզվական ավելի ընդհանրական կարգի քերականական (ծնաբանական) դրսևորումն է: Ըստ Գ. Զահուկյանի՝ «Եղանակավորումը հաղորդող (խոսող) սուբյեկտի և հաղորդման օբյեկտիվ բովանդակության, այլ կերպ ասած՝ հաղորդողի վերաբերմունքի դրսևորումն է ոչ միայն բայի հարացույցի, այլև եղանականիշ բառերի, հնչերանգի, շարադասության միջոցով»²: Եղանակի բայական կարգն իրացնում է եղանակավորության մեկ կողմը՝ *իրականություն* - ոչ *իրականություն* հակադրությունը, և այլ եղանակավորումներ այս կարգով չեն իրացվում³: Առաջին աստիճանում խոսողն իրականության և իր ասածի միջև կապ է հաստատում՝ ներկայացնելով այդ կապը որպես օբյեկտիվ, երկրորդ աստիճանում այս կապի մասին արտա-

¹ Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, 1987, էջ 194:

² Զահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 227-228:

³ Տե՛ս Գաբրիելյան Վ., Եղանակավորությունը և եղանակը հայերեն և անգլերեն լեզուներում, ատենախոսություն, Երևան, 1994, էջ 55:

հայտում է իր կարծիքը՝ այն որակելով որպես սուբյեկտիվ գնահատական:

Եղանակը՝ որպես ստորոգման հիմնական միջոց, բայական ամենահիմնական կարգերից է⁴: Եղանակի կարգի միջոցով այն, ինչ հաղորդվում է նախադասությամբ, ներկայանում է այս կամ այն ժամանակային հարթությունում (անցյալ, ներկա, ապառնի) կամ դիտվում է ժամանակային որևէ հարթությունից դուրս, որպես ինչ-որ մի ցանկալի, անհրաժեշտ, հնարավոր, ենթադրելի բան: Հաղորդվածի՝ ժամանակային որոշակիության և անորոշության հատկանիշների տարբերակման համար հիմք են ընդունում սահմանական եղանակ և այսպես կոչվող ոչ իրական եղանակներ հակադրությունը: Եղանակավորությունն ասույթի բովանդակության և իրականության հարաբերությունն է: Եղանակավորության ոլորտում ընդգրկվում են հաստատումն ու ժխտումը, հաղորդակցության նպատակադրումը, նախադասության տարբերակումները՝ ըստ գործողության իրական կամ ոչ իրական բնույթի, ըստ խոսողի՝ իր ասածի մեջ համոզվածության և այլն⁵:

Եղանակավորում ունեն իրականալիություն արտահայտող ձևերը, որոնց մեջ որոշակիորեն առկա է խոսողի տեսանկյունը (հայեցակետը): Իրականալիության պլանը ներկայանում է երեք եղանակային շարքերով: Մ. Աբեղյանը եղանակը բնութագրում է որպես «խոսողի վերաբերմունքը խոսքի բովանդակության նկատմամբ»⁶: Այս սահմանման մեջ գիտակցվում է խոսողի դերը և այն, որ խոսքը հարաբերության մասին է: Մ. Աբեղյանն իր տարբեր աշխատություններում անդրադարձել է և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի հրամայական եղանակին՝ առաջին դեպքում առանձնացնելով հրամայական ներկա և հրամայական ապառնի ժամանակաձևեր, իսկ երկրորդ դեպքում՝ հրամայական եղանակին ժամանակ չվերագրելով⁷: Ըստ նրա՝ երեք եղանակներով՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, կարելի է կազմել դատողության խոսքեր, որոնցով արտահայտվում է մեր դատողությունն իբրև իրական, հնարավոր կամ անհրաժեշտ: Բայց խոսքը կարելի է արտահայտել նաև իբրև կամք ու հրաման կամ արգելք, որով հրամայում կամ արգելում ենք մեկին մի բան անել⁸:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 57:

⁶ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 220:

⁷ https://hy.wikisource.org/wiki/Հայերենի_աշխարհաբար_քերականություն/Բայի_խոնարհումը:

⁸ Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 243:

Ըստ Գ. Զահուկյանի՝ հրամայական եղանակն իր բնույթով ժամանակա-
յին տարբերություններ չի տալիս⁹:

Հրամայական եղանակին բնորոշ է բազմիմաստությունը. այն արտա-
հայտում է գործողության կատարման հրաման, հորդոր, խնդրանք, թելադ-
րանք, կոչ, ողջույն, զգուշացում, պատվեր, պատվիրան, պատգամ և այլն¹⁰:

Ըստ Ռ. Իշխանյանի՝ հայերենի պարզ դիմավոր բայերը քերականական
եղանակի երկու արտահայտություն ունեն՝ 1. հրամայական, որ գոյանում է
հրամայական դիմավոր բայերի յուրահատուկ արտահայտությամբ ու բովան-
դակությամբ և 2. ոչ հրամայական¹¹: Ըստ արտահայտության՝ ունենք քե-
րականական համանիշների առատություն, անկայուն զուգահեռություններ,
օրինակ՝ **գրե՛ք** և **գրեցե՛ք**, ընդ որում այստեղ *g*-ից զուրկ զուգահեռները հա-
մանուն են ըղծական հոգնակի երկրորդ դեմքին: Դրական ձևերի դիմանիշ
մասնիկներն են եզակի՝ **ա** և **իր** փոփոխակները, հոգնակի՝ **ացեք** և **եք** փո-
փոխակները, ընդ որում վերջինն էլ ունի իր **եցեք** փոփոխակը:

Հրամայական եղանակը սուբյեկտիվ վերաբերմունքի եղանակ է: Այն
արտահայտում է խոսքի պահին ունեցած սուբյեկտիվ վերաբերմունքը ցույց
տված գործողության նկատմամբ: Միակ եղանակն է, որ չի կարող հարցական
հնչերանգով հնչել: Ժամանակի կարգը լեզվի ամենակարևոր հաղորդակցա-
կան-քերականական կարգերից է, որ ասույթը բայի միջոցով կապում է խոսքի
առկայացող իրողության՝ խոսքային գործունեության հետ: Ժամանակի քերա-
կանական կարգը ժամանակային հարաբերություններ է իրականացնում այն-
քանով, որքանով որ այդ հարաբերություններն առկայանում են **անցյալ**<--->
ներկա<-->**ապառնի** տիրույթների փոխադարձ անցումների շնորհիվ: Դա
լեզուների ընդհանրական հատկանիշն է, որը գործողության կամ իրողության
ժամանակը հարաբերում է ասույթի արտաբերման ժամանակին:

Ժամանակի տեսակետից հրամայական եղանակով արտահայտվում է
մի գործողություն, որ պետք է կատարվի խոսելուց, հրամանը, կարգադրու-
թյունը տալուց հետո, բայց թե ինչ ժամանակամիջոցում՝ հայտնի չէ, որովհետև
հայտնի չէ, թե գործողությունը փաստորեն պետք է կատարվի՞, թե՞ ոչ¹²: Վե-

⁹ Զահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ
272:

¹⁰ [http://lraber.asj-oa.am/256/1/15_Yuzbashyan_\(153\).pdf](http://lraber.asj-oa.am/256/1/15_Yuzbashyan_(153).pdf)

¹¹ Իշխանյան Ռ., Արդի հայերենի հոլովումն ու խոնարհումը, Երևան, 1971, էջ 109:

¹² Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերե-
նում, Երևան, 1959, էջ 129:

րաբերելով խոսքից հետո եկող ապառնի անորոշ ժամանակի՝ հրամայականով արտահայտվում են ժամանակային երկու իմաստներ՝ որոշակի հրամայական կամ հրամայական արդի իմաստով և հրամայական ընդհանուր իմաստով: Ինչպես օրինակ՝ սահմանական ներկա *երգում եմ* բայաձևը կարող է նշանակել թե՛ այս րոպեին՝ խոսելիս, թե՛ ընդհանրապես, այնպես էլ հրամայականը կարող է արտահայտել կատարվելիք գործողություն, որ ունի թե՛ ներկայի (արդի հրամայական) իմաստ և թե՛ ընդհանրապես ապառնի բոլոր ժամանակների համար տեղի ունենալիք գործողության (ընդհանուր հրամայական) իմաստ: Օրինակ. *1.Գնա՛ թափրոն: 2.Հուսա՛ և սպասի՛ր:* Հիմնականը գործողության կատարման ազդակի առկայությունն է: Կարևոր է հրահանգը, որով խոսողը դրդում է խոսակցին, որպեսզի խոսակիցը կատարի գործողությունը¹³: Ըստ իրավիճակի՝ հրամայականով մատնանշվածն է վերաբերում ապագային, քանի որ խոսողը դրդում է խոսակցին կատարել կամ չկատարել գործողությունը, որը խոսելու պահից հետո է լինելու: Հրամայական եղանակը կարող է խոսակցին ուղղված լինել՝ շարունակելու այն գործողությունը, որն արդեն խոսելու պահին ընթացքի մեջ է, օրինակ՝ *խոսե՛ք, խոսե՛ք*: Այս դեպքում հրամայականով ասվածը, միևնույնն է, հղված է ապագային՝ շարունակելու համար խոսելու ընթացքում կատարվող գործողությունը:

Հրամայական եղանակի ձևավորման համար ամենաառաջնայինը հնչերանգն է, որի ուժգնությունը պայմանավորված է խոսողի վերաբերմունքով, նպատակով. հրաման, կարգադրություն պարունակող նախադասությունները զգալիորեն տարբերվում են խնդրանք, հորդոր պարունակող նախադասությունների հնչերանգից:

Նախադասությունը՝ որպես լեզվական միավոր, կատարում է մտքի ձևակերպման գործառույթ, ինչն էլ իր հերթին ապահովում է խոսքային հաղորդակցության իրականացումը: Յուրաքանչյուր նախադասության մեջ առկա է խոսողի վերաբերմունքը իրականության նկատմամբ: Հրամայական նախադասությունների հաղորդակցական գործառույթը հրաման կամ կարգադրություն արտահայտելն է:

Հրամայական նախադասությունները հիմնականում դիտարկվում են հրամայական եղանակի շրջանակներում, բայց քանի որ դրանց հիմնական գործառույթը ենթադրում է հաղորդակցական համագործակցություն խոսողի և

¹³ http://www.let.leidenuniv.nl/pdf/S&R/fortuin_polisemija_imperativa.pdf---cr2

լսողի միջև, այն քննվում է շարահյուսության բաժնում՝ որպես նախադասության հաղորդակցական հատուկ տեսակ:

Հրամայական նախադասությունների հաղորդակցական գործառույթը հրաման կամ կարգադրություն արտահայտելն է: Արգելական հրամայական նախադասություններում տեղի է ունենում կամքի արտահայտության վերաիմաստավորումից դեպի արգելք:

Հրամայական նախադասությունները խոսողական ակտեր են: Որևէ նախադրույթ չեն արտահայտում:

Երբ հրամայական նախադասությունները բացականչական նշան են ունենում, ավելի է շեշտվում, ընդգծվում ասույթի արտահայտչականությունը:

Գործաբանական տեսանկյունից հրամայական կառույցները դրսևորում են տարաբնույթ իմաստներ՝ սկսած ամենամեղմ քաղաքավարի խնդրանքից մինչև կտրուկ ու վճռական կարգադրություն՝ խնդրանք, աղերսանք, հրավեր, խորհուրդ, առաջարկ, նախազգուշացում, վստահեցում, քաջալերում, համոզում, դրդում, թույլտվություն, արգելք, նախատինք, ուղղորդում, ցուցում, սպառնալիք, զայրույթ, պահանջ, կամք, կոչ, խրատ, պատգամ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Լեզվաբանների մեծ մասը համարում է, որ իմաստ չունի հրամայական եղանակին ժամանակ վերագրել, քանի որ այդ եղանակում չեն ստեղծվում ժամանակային հակադրություններ: Լեզվաբանները, որոնք նկարագրում են ժամանակը, տարբերակում են ներկա և ապառնի ժամանակներ: Կարևոր է ընթացքը իրականից հետո կամ էլ հրամայական եղանակի իրականացման որակը: Քանի որ այս եղանակը հասցեագրված կամքի արտահայտողն է, ուստի ավելի որոշակի է թելադրում խոսողի կամքը ունկնդրին: Հենց սրանով է բացատրվում երկրորդ դեմքի հաճախակի կիրառությունը հրամայական եղանակում:

Քանալի բաներ – հրամայական, ժամանակ, կապակցում, ընդդիմային/օբստրուկտիվ հրամայական, եզակի թիվ, լեզու, խոսող, ներկա ժամանակ, երկրորդ դեմք, եղանակ:

ПРИМЕНЕНИЕ ПОВЕЛИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ

ШУШАНИК ГЕВОРКЯН

Большинство лингвистов считает, что нет смысла приписывать время повелительному наклонению, так как в этом наклонении не создаются временны́е контрасты. Лингвисты, которые описывают время, дают ему временнóе описание настоящего и будущего времен.

Важно следование вслед за настоящим или же реализационное качество повелительного наклонения. Так как данное наклонение является выразителем адресованной воли, воля говорящего диктуется слушателю более определенно. Именно этим объясняется более частое употребление второго лица в повелительном наклонении.

Ключевые слова - императив, время, сопряжение, обструктивный императив, единственное число, язык, говорящий, настоящее время, второе лицо, наклонение.

THE USAGE OF THE IMPERATIVE MOOD

SHUSHANIK GEVORGYAN

Most linguists consider the attribution of tense to the imperative mood senseless, as no temporal contrasts are formed. However, the linguists who pin time, attribute the present or future tense to the imperative.

The imperative mood is an expression of addressing will. In this way, the will of the speaker is dictated more specifically to the interlocutor and that explains the usage of the second person in the imperative.

Key words - imperative, time, tense, conjugation, obstructive imperative, singular number, language, speaker, the present tense, the second person, mood.

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՆՈՒՅՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ ՁԵՎԱՎՈՐՈՂ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Համաձայն Գրայսի քանակի կարգախոսի՝ համագործակցող խոսքնկերները չեն արտաբերում տեղեկություն չպարունակող ասույթներ (Grice 1989): Եթե հաշվի առնենք, որ նույնաբանական ասույթներն ի սկզբանե ճշմարիտ են և հետևաբար չեն պարունակում նոր տեղեկություն, ապա նրանք չպետք է կիրառվեն հաղորդակցվելիս: Սակայն ինչպես ցույց են տվել բազմաթիվ հետազոտություններ, նույնաբանական ասույթները, բացի իրենց պայմանագրական նշանակություններից (conventional meaning), կրում են բավականին ընդգրկուն հաղորդակցական-գործաբանական ներուժ և լայնորեն կիրառվում են խոսքում:

a is a կառույցի տրամաբանական մոդելը կազմված է հետևյալ երեք հիմնական բաղադրիչներից՝ սուբյեկտ, պրեդիկատ և կապ: Ըստ որում սուբյեկտն ու պրեդիկատն իրենց բառային/ձևական կառուցվածքով համընկնում են, իսկ կապը հանդես է գալիս բայ-հանգույցի ձևով (Meibauer 2008): Եվ քանի որ սուբյեկտը, ըստ տրամաբանության մեջ ընդունված սահմանման, հասկացություն է այն առարկայի մասին, որին վերագրվում է որոշակի հատկություն կամ հարաբերություն՝ հաստատման կամ ժխտման միջոցով, իսկ պրեդիկատը հասկացություն է այն հատկության կամ հարաբերության մասին, որը հաստատվում կամ ժխտվում է սուբյեկտի նկատմամբ (Բրուտյան 1998), ուստի, չնայած այն փաստին, որ նույնաբանական կառույցներում սուբյեկտը և պրեդիկատը իրենց բառային կազմով նույնական են, նրանց արտահայտած իմաստները նույնական չեն կարող լինել: Խիստ կարևոր ենք համարում այն փաստը, որ այս շարահյուսական կաղապարների առաջին անդամը մատնանշում է տվյալ խմբի որևէ առանձին անդամ կամ անդամներ, իսկ նույնաբանական կառույցների երկրորդ անդամն իր բնույթով ստորոգելական է (Meibauer 2008, Autenrieth 1997): Համաձայն Ֆիլմորի՝ երկրորդ անդամը չի մատնանշում խմբի առանձին անդամ կամ անդամներ, այլ ընտրում և մատնացույց է անում այդ խմբի առանձին անդամին կամ անդամներին բնորոշ հատկանիշներ: Փաստական նյութի մեր քննության արդյունքները նույնպես

ցույց են տալիս, որ նույնաբանական կառույցների առաջին անդամը ներկայացնում է հաղորդակցության առարկան (դենոտատը): Երկրորդ բաղադրիչը նույնաբանության կիրառման յուրաքանչյուր դրոշակի դեպքում արտահայտում է իր ներփակված իմաստի տարբեր կողմեր: Այսպիսով, օրինակ՝ *Kids are kids* նույնաբանական կառույցը նշանակում է *Kids have properties of kids*: Սակայն սա հարցի մի կողմն է: Հաստատելով, որ խմբի անդամը կամ անդամներն ունեն համապատասխան հատկանիշներ, այս կառույցի շրջանակում այդ հատկանիշներն ընկալվում են որպես անխուսափելի և անփոփոխ: Հետևաբար՝ *Kids are kids*-ը հնարավոր է վերլուծել որպես *Kids necessarily have properties of kids*: Ասվածը հիմնավորելու նպատակով դիտարկենք հետևյալ օրինակը.

“It was a normal, typical Saturday night” said Catherine Belardo, an auburn-haired woman in a housecoat. They get dressed up, they go out together. I don’t want people saying, “Well, where were the parents?” “Her parents were here. Her mother was home, her father was home. You can’t keep your kids in a tube. They go out. **Kids are kids**. You have to show them you trust them. They go out the door and who knows, really, what can happen? You tell them to walk in groups. You tell them to walk where it’s light. You tell them never to talk to strangers. And they did everything they were told. (Philadelphia Inquirer, 15 February 85)

Ուսումնասիրելով տվյալ հատվածում նույնաբանական կառույցը՝ կարծում ենք, որ այն արտահայտում է հետևյալ միտքը. անհնար էր անել որևէ բան, որը կփոխեր իրավիճակը: Նույնաբանության արտահայտած ներհմաստն այն է, որ երեխաներին բնորոշ է անսպասելի արարքներ անելը, ու այդ արարքները կանխելը երբեմն անհնար է: Գործածելով տվյալ նույնաբանությունը՝ մենք ծանրության կենտրոնը տեղափոխում ենք հենց երեխաների վրա ու երեխաներին ամենաբնորոշ հատկանիշի՝ ոչ խելամիտ ու հետևաբար անկանխատեսելի արարքներ անելու մեծ հավանականության վրա ու մտովի հղում ենք անում մարդկանց մեծամասնության մեջ տարածված «երեխաների» մասին պատկերացումներին: Հետևաբար՝ վերևի օրինակում, որտեղ խոսողն ասում է “Kids are kids” (երեխաները երեխաներ են), նա ցանկանում է, որ իր զրուցակիցը մտովի բացառի այնպիսի այլընտրանքային տարբերակներ, ինչպիսիք կարող են լինել «երեխաները միամիտ են», «երեխաները հեռատես չեն», կամ էլ «երեխաները անփորձ են», կամ «երեխաները մեծ չեն» տարբերակները: Նույնաբանության արտահայտած ներակայումն այստեղ այն է, որ

երեխաներին բնորոշ են իրենց հատուկ հատկանիշներ, այն է՝ անել ոչ խելամիտ և անկանխատեսելի արարքներ:

Նույնաբանական կառույցում բառի ստորոգելական կրկնության հետևանքով հնարավոր է, որ փոփոխվի նրա իմաստային միջուկը՝ ինտենսիոնալը: Այս դեպքում տեղի է ունենում տվյալ բառի ներակա իմաստային հատկանիշների ռեմատիզացիա: Օրինակ՝ *boy* բառի ինտենսիոնալը կազմում են հետևյալ իմույթները 1. human being, 2. male, 3. child: Հետևյալ օրինակում, ինտենսիոնալի փոփոխությունը *boy* բառին հաղորդում է նոր իմաստ՝ inexperienced, unprofessional person.

“These guys cannot talk with me! We are not companions musically. Big men are big men in music and **boys are boys.**” (BB Internet)

Լեզվափոխության մեջ ընդունված է այն կարծիքը, որ ամեն անգամ, երբ բառը կամ արտահայտությունը կրկնվում է, նրա իմաստը փոխվում է (Derrida 1976): Մյուս կողմից բառի կրկնությունը ստեղծում է ռիթմիկ պատկեր, որն էլ իր հերթին ստեղծում է կոգնիտիվ ներազդում: Հենց այս կոգնիտիվ ներազդումն է, որ թույլ է տալիս ուղեղին ընկալել տեղեկատվությունը (Ruhlen, M. and Bergston J. D 1994: 28): Ինչպես ցույց է տալիս նյութի մեր քննությունը, գոյականական անդամի կրկնությունն էլ հենց պայմանավորում է նույնաբանական կառույցում ներակայման և գործաբանական ներուժի ձևավորումը:

Այժմ Սամանթա Փաուերի հեղինակած “**A Problem from Hell”: America and the Age of Genocide** (Harperperennial Library, May 2003) գրքից ընտրված հատվածի վերլուծությամբ պարզենք, թե տվյալ հաղորդակցական իրադրության մեջ կիրառված նույնաբանական կառույցն ինչ հաղորդակցական-գործաբանական արժեք է ձեռք բերում և ինչ դեր ունի նույնաբանության բաղադրիչների կրկնությունն այդ գործընթացում.

“Others were critical not so much of Lemkin’s definition as his apparent naiveté. His innovation was interesting, they said, **but a word is a word is a word.** Merely affixing the genocide label would not necessarily cause statesmen to put aside their other interests, fears, or constraints. Even if lawyers in Madrid had adopted Lemkin’s proposal, they noted, neither the existence of the label nor the application of it would have affected Hitler’s decision-making, his ideology, or the outside world’s lethargic response to his crimes. Lemkin met those criticisms with defensive bombast. He told a North Carolina audience that the rejection of his Madrid proposal was “one of the thousand reasons why... your boys are fighting and dying in different parts of the world at this very moment.”

Նույնաբանական կառույցը վերլուծելու համար մեզ անհրաժեշտ է ունենալ հենքային գիտելիք, տեղյակ լինել հարատեքստին, օգտագործել համատեքստը ու փորձել այս գործոնների օգնությամբ վերծանել նույնաբանական կառույցը: Մեջբերումը վերցված է Ռաֆայել Լեմկինի մասին պատմող հատվածից: Որպես հարատեքստ այստեղ պետք է իմանալ, թե ով է Լեմկինը, ինչ գործունեությամբ է նա զբաղվել, մասնավորապես “Genocide” եզրի միջազգային ճանաչման ու միջազգային ատյաններում այն քրեականացնելու համար, ինչ ջանքեր է ներդրել, տեղյակ լինել, թե ինչպիսի դժվարություններ է նա հաղթահարել ու ինչ համառ պայքար է մղել այդ եզրը ստեղծելու ու ամրագրելու համար: Տվյալ նույնաբանությունը մեկնաբանելիս ընթերցողի/լսողի համար կարևոր է նաև այն հենքային գիտելիքը, որ այժմ ցեղասպանությունը (“Genocide”) միջազգային հանցագործություն է, որը չունի վաղեմության ժամկետ: Այս հիմքի վրա արդեն հնարավոր է դառնում դիտարկել համատեքստը՝ որպես նույնաբանական կառույցի անմիջական միջավայր, որտեղ այն ձեռք է բերել իր հաղորդակցական-գործաբանական ներուժը: Հենց առաջին նախադասությունից հասկանալի է դառնում, որ Լեմկինի առաջ քաշած եզրույթն առանձնապես մեծ ոգևորությամբ չի ընդունվել, ու դրա ընդունումից հետո մեծ փոփոխությունների հոյսեր չեն առաջացել: Սա հասկանալի է “...Others were critical not so much of Lemkin’s definition as his apparent naivete” նախադասությունից, որտեղ Լեմկինին նույնիսկ միամտության մեջ են մեղադրում: Ու հենց այս վերապահումով մոտեցումն ավելի ամրապնդելու համար կիրառվում է “but a word is a word is a word” նույնաբանական կառույցը: Այստեղ կարևոր ենք համարում կառույցը դիտարկել “but” շաղկապի հետ միասին: Թեպետ շաղկապը բուն նույնաբանական կառույցի մաս չէ, սակայն այն հաղորդում է երանգ, տվյալ դեպքում հավատի բացակայություն, ոչ վստահելի լինելու վերաբերմունք, որն ընթերցողի մեջ որոշակի տրամադրվածություն է առաջացնում նույնաբանության նշանակության հանդեպ: Բուն նույնաբանական կառույցն ունի հետևյալ բանաձևը՝ “a is a is a”, ինչը, ելնելով մեր փաստական նյութից, պետք է վստահ ասել, որ շատ հազվադեպ հանդիպող կառույց է: Եթե սովորաբար նույնաբանություններին բնորոշ է շրջանաձև կառույց, երբ գոյականն անդրադառնում է ինքն իրեն, ապա այստեղ կա երեք բաղադրիչ՝ երեք “a” (word): Սակայն ուշադիր նայելով՝ հնարավոր է դառնում իմաստային բաժանարար տանել այս երեք a-երի միջև և արդյունքում ստանալ հետևյալ բանաձևը՝(a is a) is a: Ստացվում է, որ երկրորդ a-ն առաջին a-ի համար հանդես է գալիս ստորոգելիական (predicative) գործառույթով: Այն բնորոշում է առաջին

a-ին՝ հստակեցնելով դրա գոյականական իմաստի դաշտն ու որոշակիացնելով այն իմաստը, որը տվյալ դեպքում արտահայտում է a-ն: Այժմ, օգտվելով Օքսֆորդի բառարանից, դուրս բերենք “word” բառի նշանակությունները և փորձենք պարզել, թե դրանցից որն է այստեղ կիրառվել՝ Word 1. UNIT OF LANGUAGE – a single unit of language which means sth and can be spoken and written: 2. STH YOU SAY – a thing that you say; a remark or statement: 3. PROMISE – a promise or guarantee that you will do sth or that sth will happen or is true 4. INFORMATION/NEWS – a piece of information or news:

Եթե փորձենք տեղադրել մեր բանաձևի մեջ այս իմաստները հերթով ու սկսենք վերջից՝ չորրորդ իմաստից, ապա միանգամից ակնհայտ կդառնա, որ մեր նույնաբանության մեջ նկատի առնված չէ “information” իմաստը, քանի որ դա չէր համապատասխանի ընդհանուր համատեքստային իմաստին: Մինչդեռ երրորդ իմաստը համապատասխանում է մեր բանաձևի երկրորդ “word”-ին այն դեպքում, երբ ընդունում ենք, որ առաջին “word”-ը արտահայտում է “word”-ի բառարանային առաջին իմաստը՝ լեզվի միավոր: Ստացվում է, որ եթե փակագիծը բացենք, կստացվի հետևյալ պատկերը («լեզվի միավորը» «երաշխիք է») is a (Word): Այժմ կրկին անդադարձ կատարենք համատեքստին ու հարատեքստին ու փաստենք, որ այս նույնաբանությունը կիրառվել է Լեմկինի քննադատների կողմից, ովքեր չէին հավատում, թե նրա առաջ քաշած “Genocide” հասկացությունն ու եզրույթն էական դեր կունենան քաղաքականության մեջ ու կզսպեն ազդեսորներին հետագայում և կստիպեն զերծ մնալ մարդկության դեմ կատարվելիք ոճիրներից:

Այս տեղեկույթը հաշվի առնելով՝ կարող ենք արձանագրել, որ երրորդ “Word”-ը արտահայտում է “Word” բառի երկրորդ բառարանային իմաստը, այն է՝ մի բան, որ ասում ես: Արդյունքում ունեցանք հետևյալ բանաձևը («լեզվի միավորը» «երաշխիք է»)՝ «խոսք է»: Եթե փորձենք ավելի պարզ ներկայացնել, կստացվի, որ եզրույթը, որը Լեմկինն առաջարկել է որպես մարդկության որևէ էթնիկական խմբի ոչնչացման դեմ ուղղված երաշխիք, ընդամենը խոսք է և ոչ մի իրական գործողություն չի նախատեսում կամ ենթադրում:

Նման կառույցով նույնաբանության մեկ այլ շատ հետաքրքիր և ինչ-որ չափով էլ խորհրդավոր օրինակ է Գերտրուդ Ստայնի՝ 1913 թվականին գրված և 1922 թվականին “Geography and Plays” գրքում տպագրված “Sacred Emily” բանաստեղծության մի հատված: Դիտարկենք այն.

Rose is a rose is a rose is a rose

Loveliness extreme.

Extra gaiters,

Loveliness extreme.

Sweetest ice-cream.

Pages ages page ages page ages.

Այս նույնաբանական կառույցը Ստայնի ամենասիրելի տողերից էր, ու նա մի քանի այլ տեղերում էլ է կիրառել այն հետևյալ ձևակերպումներով.

2. Do we suppose that all she knows is that **a rose is a rose is a rose is a rose**. (Operas and Plays)

3. ... she would carve on the tree **Rose is a Rose is a Rose is a Rose is a Rose** until it went all the way around. (The World is Round)

4. A rose tree may be **a rose tree may be a rosy rose tree** if watered. (Alphabets and Birthdays)

5. Indeed **a rose is a rose** makes a pretty plate. (Stanzas in Meditation)

Ուսումնասիրելով նշված օրինակները՝ անմիջապես աչքի է զարնում “rose” (վարդ) բառի բազմակի կիրառությունը: Եթե դուրս բերենք բանաձև, ապա կստացվի “a is a is a is a”։ Սովորաբար անվանական նույնաբանական կառույցներում գոյականական անդամը կրկնվում է երկու անգամ՝ սուբյեկտի ու պրեդիկատի դիրքով: Սակայն այս օրինակում, թվում է, չկա սահմանափակում, թե քանի անգամ կկիրառվի գոյականական անդամ “rose”-ը: Դիտարկելով երկրորդ օրինակը՝ մենք տեսնում ենք, որ Ստայնը ասում է, որ տվյալ նույնաբանական կառույցը գրվում է ծառի բնին, մինչև գրվածքը շրջանաձև պտտվի բնի շուրջ, և նախադասության սկիզբն ու վերջը միանան: Իսկ երբ միանան, անհնար կդառնա գտնել սկիզբն ու վերջը: Կդառնա փակ շղթա, որը եթե փորձենք բանաձևով արտահայտել, ապա կստացվի “a is a is a ad infinitum”։ Ընդ որում սրանով էլ թերևս կարելի է բացատրել Ստայնի կողմից ցուցաբերվող «անհետևողականությունը» “rose” բառի կիրառության քանակի հանդեպ. ինչպես տեսնում ենք, որոշ տեղերում այն երեք անգամ է կիրառվում, իսկ այլ տեղերում՝ երեքից ավելի: Սակայն որպեսզի կարողանանք թափանցել տվյալ կառույցի իմաստի մեջ, ապա պետք է այդ անվերջ շարունակվող շղթան ընդհատենք որևէ մասում ու փորձենք մեկնաբանել այդ հատվածը: Այնուհետև ստացված արդյունքը հնարավոր կլինի տարածել ամբողջ անվերջանալի կառույցի վրա, քանզի եթե միատարր նյութի մի մասնիկի համար որևէ հատկանիշ ճիշտ է, ապա դա ճիշտ է ամբողջի համար նույնպես: Դիտարկենք “Rose is a rose is a rose is a rose” նմուշը: Այստեղ թերևս պետք է սկսել Ստայնի պոեզիայի ու արվեստի ուղղության ընկալումից, այսինքն՝ մեզ որոշակի հենքային գիտելիք է անհրաժեշտ: Ստայնը մոդեռնիստական շրջանի առաջա-

մարտիկ արվեստագետ էր, արվեստի փորձարար և նորարար, ով գրում էր սիմվոլներով հարուստ գործեր: Նա անձամբ այս արտահայտությունը մեկնաբանել է հետևյալ կերպ, որ Հոմերոսի և Չոուսերի ժամանակներում, երբ բանաստեղծն օգտագործում էր որևէ առարկայի կամ երևույթի անուն, այդ առարկան կամ երևույթը հենց այդտեղ էր: Սակայն ժամանակների փոփոխությանը զուգահեռ առարկայի ու բառի միջև անմիջական կապը, շփումը կորսվեց, և իրը, երևույթը կորցրեց իր ինքնությունը: Հենց այս ինքնությունն էր Ստայնը փորձում վերականգնել իր այս նույնաբանական կառույցով: Ստացվում է, որ նույնաբանության գոյականական անդամը՝ «rose»-ը, կրկնելով՝ Ստայնը փորձում է մոտենալ հենց «վարդ» երևույթին: Նա ասում է, որ այս կառույցում անգլիական գրականության մեջ վերջին հարյուր տարվա ընթացքում առաջին անգամ վարդը կարմիր է: Այսինքն՝ վարդի կենդանությունն ու գույնը հնարավորինս ընդգծելու համար նա նույնաբանություն է օգտագործել: Պետք է նաև նշել, որ ասելով «վարդ»՝ մարդկանց գիտակցության մեջ որոշ կարծրատիպային նշանակություններ են ակտիվանում՝ գեղեցիկ ծաղիկ, անուշ բույր և այլն: Իսկ երբ այս բառն արդեն մի քանի անգամ է կրկնվում, առավել ևս բազմաթիվ անգամներ, ապա այդ պատկերի ուժգնությունն էլ համապատասխանաբար ուժեղանում է: Եթե փորձենք բանաձևել այս կառույցը, ապա կստացվի հետևյալ պատկերը ((a is a) is a) is a: Այսինքն՝ ամեն «a rose» լրացվում է հաջորդ «is a rose»-ի միջոցով, այնուհետև այդ երկուսը միասին լրացվում են արդեն հաջորդ «is a rose»-ի կողմից ու այդպես շարունակ: Ամեն հաջորդ «a rose» ունի պրեդիկատի իմաստ իր նախորդ «a rose»-ի համար և միևնույն ժամանակ ունի սուբյեկտի իմաստ իրեն հաջորդող «a rose»-ի համար: Եվ յուրաքանչյուր հաջորդ «rose» ավելի է ընդգծում, խտացնում «վարդի» պատկերն ընթերցողի/ստղի գիտակցության մեջ: Ուստի ամեն կրկնության հետ մեկտեղ տեղի է ունենում վերաբերական իմաստի ընդգրկման նեղացում, իսկ հասկացական, բովանդակային առումով՝ իմաստի հարստացում ու խտացում: Այսինքն՝ նույնաբանական կառույցի ուրույն կաղապարը Ստայնին հնարավորություն է տվել իրագործելու իր գեղագիտական նպատակը:

Այսպիսով, նույնաբանության գործաբանական ներուժի ապակողմավորման գործընթացը ենթադրում է տրամաբանական կառույցով հանդես եկող կողավորված բառային հասկացույթի փոխարինում նրա համատեքստայնացված տարբերակով: Այսինքն՝ տվյալ հաղորդակցական իրադրությունն իր բաղադրիչներով հանդերձ հնարավոր է դարձնում, բացառելով երկիմաստությունը, նույնաբանական կառույցին վերագրել այն իմաստը, որն ակտիվանում

է և խտանում տվյալ խոսքային իրադրությունում նույն անվանական անդամի կրկնությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է անվանական նույնաբանության գործաբանական քննությանը ժամանակակից անգլերենում: Մասնավորապես դիտարկվում է, թե ինչպես են կրկնվող միավորների միջոցով ձևավորվում նույնաբանական ասույթի ներակա իմաստը, նրա գործաբանական ներուժը, որի արդյունքում մեծանում է ասույթի տեղեկատվական բեռնվածությունը: Կառուցվածքային կրկնությանը զուգահեռ առաջ են գալիս զանազան թաքնված իմաստներ, կանխենթադրույթներ, ներակայումներ, որոնք ծառայում են տեքստի իմաստային ամբողջականության պահպանմանը: Հոդվածում մեր խնդիրն է նաև պարզել, թե ինչպես են այդ թաքնված իմաստները ձևավորվում և ճանաչվում խոսքաստեղծման ու խոսքընկալման գործընթացում:

Բանալի բառեր - նույնաբանական ասույթ, գործաբանական ներուժ, կրկնություն, ներակա իմաստ, հաղորդակցական իրադրություն :

Գրականության ցանկ

1. **Գ. Բրուտյան**, *Տրամաբանություն*, Եր.: «Գիտություն» հրատ., 1998, 213 էջ:
2. **Grice, Paul H.**, *Studies in the Way of Words*, Cambridge, Mass: Harvard University Press, 1989, p. 406
3. **Meibauer, J.** Tautology as Presumptive Meaning, John Benjamins, 2008: 439-469
4. Autenrieth, T. “Tautologien sind Tautologien”. In E. Rolf (ed), *Pragmatik. Implikaturen und Sprechakte [Linguistische Berichte, Sonderheft 8]*. Opladen: Westdeutscher Verlag, 1997 pp. 12-32.
5. **Գ. Բրուտյան**, *նույն տեղում*:
6. Philadelphia Inquirer, 15. 02. 1985
7. **DJ G, Derrida, J.**, *Of Grammatology*, Baltimore: John Hopkins University Press, 1997, p. 410
8. **Ruhlen, M. and Bergston J. D.**, *Global Etymology*, New York, Garland, 1994, pp. 207-41
9. **P.S. P. H., Power, S.A** Problem from Hell: America and the Age of Genocide Harperperennial Library, May 2003, p. 620
10. **SG R, Stein, G.**, Rose is a rose is a rose, Operas and Plays, The World is Round, Alphabets and Birthdays, Stanzas in Meditation

О РОЛИ ИТЕРАТИВНОСТИ В ОБРАЗОВАНИИ ПРАГМАТИЧЕСКОГО ПОТЕНЦИАЛА ТАВТОЛОГИЙ

АРТУР МЕСРОПЯН

Статья посвящена изучению прагматического потенциала тавтологических высказываний в современном английском языке. В частности, рассматривается роль итеративности при образовании имплицитности тавтологии, в результате чего увеличивается ее смысловая нагрузка. Наряду со структурным повторением выявляются различные скрытые значения, пресуппозиции и импликатуры, которые сохраняют семантическую целостность текста. В статье также уточняется, как эти скрытые смыслы формируются и идентифицируются в процессе речеобразования и речевосприятия.

Ключевые слова - тавтологическое высказывание, прагматический потенциал, итеративность, имплицитное значение, коммуникативная ситуация.

REPETITION AS A PREREQUISITE FOR THE FORMATION OF THE POTENTIAL OF PRAGMATIC TAUTOLOGY

ARTHUR MESROPYAN

Arthur Mesropyan in this article considers the pragmatic potential of nominal tautologies in Modern English. In particular he considers how by means of repeated items the implicit meaning and pragmatic potential are formed as a result of which the semantic and communicative charge of tautology increases. Along with structural repetitions various hidden meanings, presuppositions and implications are generated, which serve to retain the semantic integrity of the text. The objective of the article is as well to explicate how these hidden meanings are formed and perceived in the speech creation and comprehension processes.

Key words - tautological utterance, pragmatic potential, repetition, implicit meaning, speech situation.

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԼԻԼԻ ՄԻՐՈՒՄՅԱՆ

Յուրաքանչյուր գեղարվեստական երկի լեզվի ինքնատիպության հիմքում նախ և առաջ բառապաշարն է, որի համակողմանի ուսումնասիրությամբ բացահայտվում են հեղինակի հմտությունը, բառընտրության և բառագործածության վարպետությունը:

Հարուստ ու բազմաշերտ է Ս. Կապուտիկյանի հուշագրության¹ բառապաշարը: Այն բնորոշվում է ոճական-արտահայտչական զգալի լիցք ունեցող համագործածական, ժողովրդախոսակցական, բարբառային, արևմտահայերեն բառերի, նաև նորակազմությունների լայն գործածություններով: Հուշագրությունների բառապաշարի մի մասն են կազմում նաև *օտարաբանությունները*: Օտար բառերով ու արտահայտություններով են ոճավորված հեղինակի՝ հայագգի որոշ հերոսների խոսքերը, իսկ օտարազգիների խոսքը գրողը երբեմն շարադրում է համապատասխան լեզվով:

Գրական լեզվի համար անցանկալի և անթույլատրելի օտար բառերի (նաև քերականական օտարաբանությունների) գործածությունները գեղարվեստական խոսքում ոճական-արտահայտչական առումով արժևորվում են նրանով, որ ստեղծում են օտար միջավայրի, տարբեր ժողովուրդների կենցաղի ազգային գունավորում, հանդես են գալիս որպես երգիծանքի միջոց և անհատականացնում են հերոսների խոսքը: «Գեղարվեստական գրականության լեզվում օտար բառերն անհրաժեշտ են որպես այլ ժողովուրդների կենցաղի գունեղ արտացոլման և մտքերի արտահայտման ավելի արդյունավետ միջոցներ»²:

¹ **Կապուտիկյան Ս.**, Քարավանները դեռ քայլում են, Երկերի ժողովածու 2 հատորով, հ. 2, Երևան, 1973 (այսուհետև՝ 1), Խճանկար հոգու և քարտեզի գույներից, Երկեր 3 հատորով, հ. 3, Երևան, 1985 (այսուհետև՝ 2), Գույներ նույն խճանկարից, Երևան, 1989 (այսուհետև՝ 4), Հոգու նույն երթուղիներով, Երևան, 1993, Քարավանները հեռանում են, Երևան, 1999: Վերջին երկու հուշագրություններն ամփոփված են նաև «Իմ կածանը աշխարհի ճանապարհներին» գրքում, Երևան, 2002 (այսուհետև՝ 3):

² **Գոլյոբ Ի.** *Стилистика современного русского языка*, М., 1976, с. 116.

Ս. Կապուտիկյանի հուշագրություններում ներկայացվող օտար միջավայրը լայն հնարավորություն է տվել օտար բառերի, արտահայտությունների գործածության համար, իր արտացոլումը գտել արտահայտիչ, ներդաշնակ, ճշմարտացի պատումով ու նկարագրությամբ: Այդ միջավայրի համապատասխան երանգ են ստեղծում հեղինակային խոսքում գործածված մի շարք օտարաբանություններ. «Մեծ քաղաքներում, մանավանդ «թրաֆիգ» ժամերին, ավտոմեքենաները ուղղակի երեսպատում են փողոցները» (2236, 201, 4248, 2186), «Օրվա *սիկ* ժամն է» (4580), «Թիվ ու ամսաթիվ տակ դրված էր ... Ռիչարդ Նիքսոնի *ֆաբսիմիլեն*» (2345), «Ալիսն իր ավտոմեքենան կանգնեցրեց ... «*պարկինգում*» (2329), «... ծննդյան *քեյքի* ժամանակ օրվա հերոսը ... հանգցնում է հորեյանական կարկանդակի մոմերը» (2214), «... նա հնարել էր մի հարմարանք, որ «*թոսպր*» կոչվող ... հացաշերտեր է թողարկում» (2300), «...*կոնդիշներ*ը ... որոշված ջերմաստիճանից ավելի ջերմություն բաց չէր թողնում» (2309), «Կյուրենցիների *քեմպում* ենք» (1413):

Տարբեր՝ ամերիկյան, գերմանական, իտալական, եգիպտական միջավայրերի, այդ ժողովուրդների կյանքին, կենցաղին համապատասխան ազգային երանգավորում ստեղծելու նպատակով Կապուտիկյանը դիմում է նաև *փոխառյալ բառերի* գործածությանը: Այդ բառերը Ֆ. Խլղաթյանն անվանում է *տարաշխարհիկ բառեր*³, Էդ. Աղայանը՝ *հատկական փոխառություններ*⁴՝ նշելով, որ դրանք «ցույց են տալիս այս կամ այն երկրին հատուկ երևույթներ, այս կամ այն ժողովրդին հատուկ սովորույթներ, կենցաղային սովորույթներ, իրեր, արտադրանքներ և այլն»⁴: Օտարաբանությունների համեմատ սակավաթիվ այս բառերն ունեն զուտ անվանողական արժեք հետևյալ խոսքաշարերում. «... իր փառահեղ առանձնատանը «*կոկոբեյլիարթի*» էր կազմակերպել» (1310), «Բոննը ... Գերմանիայի մայրաքաղաքը դառնալու պատվին արժանացավ ... պետական *կանցլեր* Ադենհաուերի ծննդավայրը լինելու բերումով» (339), «Ես իզուր էի հավակնում նստել կառամատուցի ջրերում նազելիորեն օրորվող *գոնդոլներից* մեկը, ըստ երևույթին նրանք, ինչպես Ճապոնիայում *գեյշաները*, քչերին մատչելի մի հաճույք է ...» (4562), «Փարավոնների դամբանների առաջ և տաճարների մոտերքում սպիտակ, երկար խալաթներով, փաթթոցավոր *ֆելլահները* գետնին փռել և վաճառում էին իրենց ձեռքով պատրաստած

³ **Խլղաթյան Ֆ.**, Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 159:

⁴ **Աղայան Էդ.**, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 169: Այս բառերը հայտնի են նաև *էլզոփիզմներ* անվանումով:

պարզունակ արտադրությունները ...» (1475):

Թուրքական միջավայրի գունավորում են ստեղծում *կշլա* (զորանոց)⁵, *ասնաֆ* (արհեստավոր), *ասկյար* (զինվոր) փոխառյալ բառերը Վանի ինքնապաշտպանության նկարագրությունում, թուրք ժողովրդի ներկայացուցիչների մասին ակնարկներում. «... հօդսն են ցնդում ... հյուպատոսարանը, Համուտ աղայի *կշլան* ...» (2283), «... թուրք «*ասնաֆի*» հետ է ձեռնարկել այս գործը...» (387), «... կանայք հանդես էին գալիս ... թուրք *ասկյարների* ... դերում» (348):

Որքան էլ ոճաբանական տեսակետից առավել ուշագրավ ու հետաքրքրական են գործածության սահմանափակ ոլորտ ունեցող օտար բառերը, այնուամենայնիվ, հանրության լայն շրջանակներում այդ բառերի անհասկանալիությունը հաճախ առաջ է բերում խոսքի ոչ ճիշտ ընկալում: Գեղարվեստական իրական միջավայր ստեղծելու և միաժամանակ անհասկանալիության ու խորթության տպավորությունը մեղմելու նպատակով հուշագրություններում հաճախ օտար բառերին ու արտահայտություններին անմիջապես հաջորդում են հայերեն համարժեքները: Դրանով ավելի է ընդգծվում օտարաբանությունների՝ միայն միջավայրի համապատասխան գունավորում ստեղծելու արժեքը, ինչպես. «*Սինեմա* այստեղ ասում են *կինոյին*» (1375), «... «*Հայաթ* «... արաբերեն նշանակում է *կյանք, վայելք...*» (270), «... «*Քրիսմըսը*», *այսինքն՝ Քրիստոսի ծննդյան օրը*» (2375), «... ժամը 1416 թվերի դիմաց գրված է *պոչիվկա, այսինքն՝ հանգիստ*» (4155), «...եկվորները փոփում են լայնարձակ տարածություններում, որ բնիկների լեզվով կոչվում է *պամպա արոտավայր*» (4470):

Գործածության հաճախականության առումով հուշագրությունների բառապաշարում առավել շատ են ոճական տարբեր նպատակներով գործածված *ռուսերեն* կամ *ռուսերենի միջնորդությամբ* հայերենին անցած բառերը: Այդ բառերով գրողը ոճավորում է նաև հերոսների խոսքը, այն դարձնում առավել բնական ու անմիջական, ինչպես, օրինակ՝ «Հոգու նույն երթուղիներով» հուշագրության հերոսների՝ իջևանցի Դավթյանի, Սվետլանայի խոսքերը. «*Էս ըմենը* կապել ա պետք, էստեղ շատ խիստ ա, եթե չկապենք, 40 մարկ *շպրաֆ* պիտի տանք» (323), «... ո՞վ դրան *միկրոֆոն* կտար...» (331) և «Էդքան որ

⁵ Թուրքերեն բառերի բացատրությունները տրվում են ըստ Ռ. Ղազարյանի «Թուրքերեն- հայերեն բառարան»-ի, Երևան, 2003:

դժգոհում ես, Հայաստան արի, ինչու չես գալիս ... որպես *տորիստ* գալիս ես ու իսկույն ետ փախչում» (324): Կամ՝ «Քարավանները դեռ քայլում են» հուշագրության հերոսի՝ վարսահարդար Սարգիսի աշակերտ վարպետ Ավետիսի խոսքը. «Ետքը պիտի իմ *սալոն* բանամ» (1107):

Առօրյա-կենցաղային նկարագրություններում հանդիպող ռուսերեն բառերը (այդ թվում՝ նաև նշվածները), որոնց մի մասը միջնորդավորված փոխառություններ են, լայն գործածություն ունեն բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում: Այդ օտար բառերը առօրյա-խոսակցական լեզու են ներթափանցել տվյալ լեզուն կրող հանրության հետ անմիջական շփման հետևանքով: Դրանք նույնպես ընդգծում են հեղինակի՝ խոսքին անմիջական, ժողովրդական երանգ հաղորդելու, հերոսների կյանքն ու գործը պարզ, անպաճույճ ոճով ներկայացնելու ձգտումը, որը բխում է հուշագրությունների նյութից և հեղինակային նպատակադրումից: Կապուտիկյանի հուշագրությունների թեման օտարության գիրկն ընկած հայ ժողովուրդն է, որի լեզվամտածողությունը ինչ-ինչ չափերով փոխվել է օտար լեզվի ազդեցությամբ, ուստի գործածում է այնպիսի բառեր ու արտահայտություններ, ինչպիսիք են՝ *ակցենտ* (127), *գարաժ* (272, 1444), *մոդայիկ* (386, 2271, 149), *բագաժ* (1433), *կազինո* (451), *սուվենիր* (3285), *կոնկուրս* (271), *ֆուլգա* (3319), *միկրոֆոն* (1225), *կոմպյուտեր* (3331), *բուլվար* (13, 29), *անփիկվար* (372, 2307, 211), *շեֆ* (2262, 3288), *սերվիս* (1456), *սալոն* (29, 3334, 338), *իմպորտնի* (2116), *սապոզ* (119, 410), *սեզոն* (478), *սիգարետ* (4120), *տորիստ* (2309), *կոլեգա* (3243), *տրադիցիա* (179), *կավալեր* (2196, 1387), *կամպանիա* (458), *ոխսկ* (3210, 242), *շոկ* (4533):

Թեև այս բառերի կիրառությունը, երբեմն նաև կրկնությունը պարզ, անկաշկանդ ու բնական են դարձնում ասելիքը, սակայն այդ օտարաբանությունները հուշագրություններում, հատկապես հեղինակային խոսքում երբեմն անցանկալի բառագործածություններ են, մանավանդ որ դրանց մի մասի հայերեն համարժեքները նույնպես գործածական են խոսակցական լեզվում, օրինակ՝ «... կասկածել են մաշկի քաղցկեղ, *օպերացիա* են արել» (2121), «Սա ... արդեն մի որոշակի «*շանս*» էր՝ հաջող թռիչքի համար ...» (2421), «Ինչպիսի~ դեղեր ասես, որ չէին բերում ինձ *դոկտորն* ու իմ բարեկամները» (168):

Հեղինակային խոսքում եվրոպական լեզուներից ռուսերենին անցած մի խումբ օտար բառեր տերմինային արժեք ունեն. *ինվեստիցիա* (3245), *ինֆեզրացիա* (3245), *էփիկետ* 3305), *էնփուզիազմ* (2304), *ինփերվյու* (3203), *ինփերյեր* (2115), *կոնփակտ* (2118), *օրիենտացիա* (2311), *կոնսենսուս* (3104),

ինտուիցիա (437), *ինտերմեդիա* (4 40), *նեցիդիվիստ* (1146), *դեկլարացիա* (474), *էմանսիպացիա* (377)*:

Օտար միջավայրին ավելի ներդաշնակ են միջազգային նշանակություն ունեցող, առավել լայն ու հաճախակի կիրառության շնորհիվ հանրությանն ավելի հարազատ ու հասկանալի այս բառերը, քան նրանց գրական համարժեք թարգմանությունները, ինչը հաճախ չի խրախուսում նաև ինքը՝ Կապուտիկյանը. «Միջազգային գործադրություն ունեցող բառերից բոլորը չէ, որ պետք է թարգմանել»⁶:

Տերմինային նշանակություն ունեցող օտար բառերը, նաև դրանց հայերեն համարժեքները գիտական ոճի արտահայտություններ են: Հուշագրությունների լեզվում հեղինակային-վերլուծական որոշ հատվածներ հրապարակախոսական ոճի դրսևորումներ են. հիշյալ բառաշերտի գործածությունը վերամբարձություն է հաղորդում խոսքին, ուժեղացնում խոսքի ներգործության ուժը, ինչպես. «... մենք ունենք Թուրքիայի ու Ադրբեջանի պես հարևաններ, ունենք մեր հենց այդ *գեոպոլիտիկայով* պայմանավորված երկարամյա ռուսական արևելում» (364), «Ամբողջովին ամերիկացած, նյութապես ամրացած, կրթական *ցենզը* ապահոված հայը այլևս վախ չունի, որ իրեն ամերիկացի չեն համարի» (2414), «...պետք է տեղի ունենար Ասիայի և Աֆրիկայի բանաստեղծների *սիմպոզիումը*» (267), «Նրա «Լծի տակ» վեպը, լինելով բուլղար ժողովրդի խիզախումների *էպոպեան* ... համահունչ է մեր պատմությանը» (4186):

Այս օտարաբանությունների ոճական արժեքը հուշագրություններում ընդգծվում է հատկապես այն դեպքում, երբ դրանք գործածվում են ոչ համապատասխան ոլորտում, հերոսների, առօրյա երևույթների նկարագրություններում. «...հայ ընտանիքի հարսներ էին ... որոնք, ամուսիններին ֆրանսերենով լիակատար *կասպիտույացիայի* ենթարկելուց հետո, ուզում էին կեսուր կեսարին էլ հայերենով զինաթափ անել...» (233), «Դոյակի տիրուհու

* Այս շարքից որոշ բառեր՝ ինվեստիցիա (ներդրում), օրիենտացիա (կողմնորոշում), կոնսենսուս (միակարծիքություն), ինտուիցիա (ներըմբռնում), դեկլարացիա (հայտարարագիր), Կապուտիկյանի ստեղծագործական շրջանում չունեին հայերեն համարժեքներ: Այդ ժամանակաշրջանում օտարաբանություններ չէին նաև շարադրանքում նշված տերմինային նշանակություն ունեցող այլ բառեր՝ գեոպոլիտիկա (աշխարհաքաղաքականություն), սիմպոզիում (գիտաժողով), էպոպեա (սխրագործություն):

⁶ **Վահանյան Գ.**, Լեզուն մեր հոգևոր հարստությունն է. «Գարուն»-ի հարցազրույցը Սիլվա Կապուտիկյանի հետ, «Գարուն», 1985, № 9, էջ 63:

ռեսպավրացիան հետապնդող այս ամբողջ զարդ ու հարդարանքից միայն թանձրապակի ակնոցներն էին, որ հասնում էին իրենց նպատակին» (258):

«Խճանկար հոգու և քարտեզի գույներից» հուշագրությունից բերված այս հատվածներում գրողը ներկայացնում է Քվեբեքի համալսարանում հայերեն սովորել ցանկացող հայ կանանց, «Արմավիր» դրյակի մենակյաց տիրուհուն: Օտար *կապիտուլյացիա* (պատերազմում հաղթող կողմի առաջադրած պայմաններով պարտվող պետություն, նաև նրա զինված ուժերի անձնատուր լինելը⁷), *ռեսպավրացիա* (վերականգնում) բառերն այս դեպքում ծառայում են ոճական որոշակի նպատակի իրականացմանը՝ հեզնանքի դրսևորմանը, կյանքի տարբեր երևույթներ, մարդկային զանազան հարաբերություններ բացահայտում երգիծական նրբերանգներով: Ոճական նույն գործառույթն է կատարում *էրուդիցիա* (բազմահմտություն, խորահմտություն, բազմակողմանի զարգացածություն) բառը խոսքային տարբեր իրադրություններում՝ դրսևորելով գրողի հեզնական վերաբերմունքն արտասահմանյան ռադիոյով հայերի մասին կցկտուր տեղեկություններ հայտնած հաղորդավարուհու, մեկ այլ դեպքում՝ հերոսի նկատմամբ. «... արևմտյան բարձր *էրուդիցիայի* փայլուն մի օրինակ էր այդ տեղեկատվությունը» (289), «Ձավենը շտապում է ցուցադրել իր *էրուդիցիան*՝ ճշգրտելով պարող աղջիկների գիշերային սակագները» (1375):

Օտար բառի ընտրությամբ գրողը բացահայտում է հերոսի էությունը, արտաքինը, ընդգծում վերաբերմունքը: Այս տեսակետից տպավորիչ է օտար արտահայտությամբ ու բառով ոճավորված դարսեցի, ռուս տարագիրների շրջապատում մեծացած Մարգո Հովհաննիսյանին բնութագրող հեղինակային խոսքի հետևյալ հատվածը, որտեղ օտար բառի հասարակաբանական երանգը նպաստում է հերոսուհու արտաքինի նկատմամբ հեղինակի անբարյացակամ վերաբերմունքի դրսևորմանը. «... դարսեցի Մարգոն էլ «չինահայ» էր... ապրել է ռուս *էմիգրանտների* շրջապատում: Սակայն, չնայած այդ շրջապատին, Մարգոն «*свой человек*» էր ... իր հաստիկ, զուտ «երևանյան» *գաբարիտներով* ...» (2352):

Նույն խոսքաշարում համանուն օտար բառերի՝ անձնանվան և նույն բառի՝ որպես հասարակ անվան գործածությունը ձևավորել է ինքնատիպ բառախաղ՝ ընդգծելով գրողի համակրանքը «Գույներ նույն խճանկարից»

⁷ Օտար բառերի բացատրությունները տրվում են ըստ **Ա. Հայրապետյանի** «Օտար բառերի բառարան» -ի, Երևան, 2011:

հուշագրության հերոսի՝ Կարո Քաբուլյանի բուլղարուհի կնոջ նկատմամբ. «...*Վեսելկա* ուրախ անունով կլորիկ, ծիծաղն երեսին, սիրտ մտնող տիկին է, մի իսկական *վեսելկա* ...» (4170):

Հուշագրություններում հանդես եկող անհատները, որոնք իրական դեմքեր են, ներկայանում են իրենց հատուկ մտածելակերպով, աշխարհըմբռնումով և իրենց բառուբանով: Կերպարի խոսքը ոճավորելով օտար բառերով՝ գրողը բացահայտում է նրա հոգեբանությունը, էությունը, կյանքի երևույթների նկատմամբ վերաբերմունքը: Նրա մարդկային նկարագիրը կերտելիս գրողը երբեմն էլ նկատի է ունենում նաև ծագումը: Այսպես՝ ծագումով թուրքահայ, վրացահայ հերոսների խոսքերում համապատասխան լեզվից ընտրված բառերի գործածության ոճական նպատակը կերպարի հավաստիությունը հիմնավորելն ու նրանց ազգային ակունքն ընդգծելն է: Ոճական առաջին գործառույթ են կատարում թուրքերեն *յախալամիշ*, *օրթալըղ*, *սարսըրմիշ* բառերը «Քարավանները դեռ քայլում են» հուշագրության հերոսներից մեկի՝ բժիշկ Գասպարյանի խոսքում՝ խտացնելով հեղինակի կողմից նախապես հիշատակված հանգամանքները. Թուրքիայից էր, թրքախոս ծնողների զավակ, հայերեն վատ գիտեր, այդ պատճառով հաճախ էր դիմում թուրքերենին. « Ատիկա մուշտերիներուն *յախալամիշ* ընելու համար է... *օրթալըղը* հիվանդն է, որ զիյան կընե...» (167), «Գլուխնիդ *սարսըրմիշ* կըլլա՛...», որին հաջորդում է հեղինակային բացատրությունը՝ «*Սարսըրմի՛շ ... Սարսաղ* բահի՛ց է: Ատ է» (167):

Ուշագրավ է նաև նույն հուշագրության մեկ այլ հերոսի՝ ծագումով թիֆլիսեցի Կարո Հուսենճյանի խոսքը: Վրացերեն, ռուսերեն բառերն ու արտահայտությունները մտերմիկ, անմիջական, մի փոքր էլ երգիծական լիքք են հաղորդում նրա խոսքին, ընդգծում հերոսի ազգային լեզվի ակունքը, ժողովրդական պարզ ու անկաշկանդ լեզվամտածողությունը, հերոսի ողջ ներաշխարհը, ուրախ ու աշխույժ բնավորությունը. «Օ, Սիլվա~, եկար ... *Յ~ավդ փանիմ, շենի ճիրիմե, դոռոզդ փովարիշ ... Մի՛ խնդար, մեծ հայրիկիս լեզուն է, թիֆլիսցի եղած է*» (157), «Հապա մեր «Վերածնունդը» ինչո՞ւ չես հիշեր ... *Թելեֆոնեն* ըսած քանի մը խոսքերս գրեցիր գրքիդ մեջը, անկե ետքը մոռցա՛ր զիս, *գենացվալե*, ցավդ տանեմ...» (1135):

Տրամագծորեն հակառակ գործառույթն են կատարում օտարաբանությունները «Քարավանները հեռանում են» հուշագրության հերոսուհիներից մեկի՝ տիկին Դեմիրճյանի խոսքում: Նա, հեղինակի պնդմամբ, «երբ խոսքը վերաբերում է բեյրութահայերին, խոսում է ռուսերեն»: Այս դեպքում օտար

լեզուն, հայերենին զուգադրված օտարահունչ նախադասությունները դառնում են իրականության երևույթների և անձանց նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունքի դրսևորման հատուկ միջոցներ: Դրանց գործածությամբ ընդգծվում է նաև կերպարի՝ խոսքին պաշտոնական տեսք հաղորդելու ձգտումը. «Ох, эти бейрутцы! Сами не знают, что делают ...ես հենց սկզբից ուզեցի ձեզ մեր կողքը հրավիրել ... Как можно было с Вами так поступать...» (3301):

Օտար բառերը լրացուցիչ գունեղանգ են հաղորդում նաև այլ հերոսների խոսքին:

Բացի խոսքի անհատականացումից՝ հայ կերպարների խոսքում օտարաբանություններն ունեն նաև օտար միջավայրի՝ մայրենի լեզվի վրա թողած ազդեցությունը շեշտելու միտում, ինչպես օրինակ՝ Սեմ Բակոբյանի, ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանի, սիրելի ու մտերիմ հերոսուհու՝ Բեաթրիսի խոսքերում. «... մադագասկարցի աղջիկ մը գտա և *քոնպրակպ* կապեցի» (3285), «...Մանրամասն կլուսաբանեն նշանավոր մարդոց ... կյանքի բոլոր մանրամասնությունները՝ առաջին անգամ ե՞րբ սիրահարվեցավ, քանի՞ անգամ է ամուսնացած, քանի՞ անգամ *դիվորս* ըրած է...» (1429), «Այո՛, *արշի-միլիոներ* ես, *արշիմիլիոներ*...» (2241), որին հաջորդում է հեղինակային բացատրությունը՝ «*Արշիմիլիոներ*». *այսինքն՝ հարուստ, շատ հարուստ, անսահման հարուստ*» (2241):

«Գույներ նույն խճանկարից» հուշագրության հերոսներից մեկը՝ Ալեքսանդր Կազարովը, դարձյալ հեղինակի վկայմամբ, «նեղն ընկած տեղը ռուսերենն է մեջտեղ բերում»: Կերպարի խոսքում օտար լեզվի ազդեցությունն ընդգծվում է նաև առօրյա-խոսակցական աղքատ բառապաշարի առկայությամբ: Օտար բառերի գործածությամբ գրողը բացահայտում է նաև կեղծ ազնվական լինելու հավակնությամբ տառապող անձի խղճուկ, օտարամոլ հոգու էությունը. «Դուք բոլորդ *բեզդելիկներ* եք» (4623), «... էրեկ էստեղ *դեն ոստղենի* էր, մե 20 հոգի նստած էին» (4624):

Հուշագրությունների լեզվում օտար բառերի գործածությունը հեղինակի՝ տարբեր լեզուների իմացությամբ բացատրելն անհիմն է թվում: Դա հաստատում են նաև այդ ստեղծագործություններում այս կամ այն օտար լեզվին չտիրապետելը հաճախակի շեշտող, օտար բառի անհասկանալիության պատճառով անհարմար իրավիճակների մեջ հայտնվելու գրողի ակնարկները, նաև միայն տվյալ իրադրությունում օտար բառ-նախադասություններով հեղինակի պատասխանները. «*Օոս՛, օոս՛*, հարցնում է... Ես ու Վարդուհին իրար երեսի ենք նայում. ի՞նչ է նշանակում «*օոս*»: Երևի հարցնում է՝ ոսկի՞ է, գլխի

ընկավ Վարդուհին: Սի', սի', պատասխանեցինք, *ոտա ...*» (4388), կամ «Ես հայ եմ ... *Armen, armen*, ինքս ինձ ցույց տալով, իմ կարծիքով անզլերեն բացատրեցի ես» (289):

Այս տեսակետից հիմնավորվում է դրանց գործածության զուտ ոճական միտումը:

Այսպիսով, հուշագրությունների լեզվում օտար բառերը համոզիչ են դարձնում նկարագրվող տարբեր միջավայրերը, ստեղծում ներդաշնակ ազգային գունավորում, ոճական յուրահատուկ երանգավորում հաղորդում հերոսների խոսքին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ս. Կապուտիկյանի հուշագրությունների լեզուն հարուստ է օտար բառերի ու արտահայտությունների լայն դրսևորումներով: Դրանք հանդիպում են և՛ հեղինակի, և՛ հերոսների խոսքում: Հեղինակային խոսքում գործածված օտարաբանությունները ստեղծում են օտար տարբեր միջավայրերի իրական գունավորում: Տարբեր ժողովուրդների կյանքին, կենցաղին ազգային երանգ են հաղորդում նաև փոխառյալ բառերը (էկզոտիզմներ): Համեմատաբար շատ են ռուսերեն բառերը: Դրանց գործածությամբ գրողն ապահովում է խոսքի բնականությունն ու անմիջականությունը: Հերոսների խոսքում օտարաբանություններն ընդգծում են օտար միջավայրի ազդեցությունը:

Բանալի բառեր – Ս. Կապուտիկյան, հուշագրություն, բառապաշար, օտարաբանություններ, փոխառյալ բառեր, ռուսերեն բառեր, բարբառ, ժողովրդախոսակցական լեզու, օտար լեզու, գիտական ոճ, հրապարակախոսական ոճ, հեզնանք:

ВАРВАРИЗМЫ В МЕМУАРАХ СИЛЬВЫ КАПУТИКЯН

ЛИЛИ МИРУМЯН

Язык мемуаров С. Капутикян богат широкими отображениями иностранных слов и выражений. Они встречаются в словах как автора, так и героев. Варваризмы, которые использованы в словах автора, создают реальную раскраску иностранной разной среды. Заимствованные слова (экзотизмы) передают национальный оттенок жизни и быту разных народов. Относительно много русских слов. Используя эти слова, писатель обеспечивает натураль-

ность и непосредственность речи. Варваризмы в словах героев подчеркивают воздействие иностранной среды на родной язык.

Ключевые слова – С. Капутикян, мемуары, лексикон, варваризмы, экзотизмы, русские слова, диалект, разговорный язык, иностранный язык, научный стиль, публицистический стиль, ирония.

BARBARISMS IN SILVA KAPUTIKYAN'S MEMOIRS

LILI MIRUMYAN

Silva Kaputikyan's memoirs are rich with a wide scope of foreign words and expressions. They are both in the diction of the author, and in that of her heroes. The barbarisms used in an author's works create a real coloring of various foreign conditions. The loanwords (exoticisms) transmit a national hue to the life and everyday activities of different peoples of the world. Russian words are relatively many in Kaputikyan's memoirs. Their usage provides her diction with naturalness and spontaneity. Barbarisms in the diction of the characters emphasize the impact of foreign environment on one's native language.

Key words - S. Kaputikyan, memoir, lexicon, barbarisms, loanwords, Russian words, dialect, colloquial language, foreign language, scientific style, journalistic style, irony.

ԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ԱՆԱԻԴԱ ՄՈՎԱԽՍՅԱՆ

Իրականությունները /реали/ բառեր կամ բառակապակցություններ են, որոնք անվանում են որևէ ժողովրդի կյանքին, կենցաղին, պատմությանը, մշակույթին բնորոշ առարկաներ, իրողություններ և օտար են այլ ազգերի համար¹: Ռուսաց լեզվում իրականություններ են **царь, самовар, степь, пельмени, гармонь**, իսկ հայերենում՝ **լավաշ, դուդուկ, թան, ժածիկ** բառերը: Լինելով ազգային կամ պատմական բներանգի կրողներ՝ իրականությունները, որպես կանոն, համարժեքներ չունեն, չեն թարգմանվում այսպես կոչված ընդհանուր սկզբունքներով և հատուկ մոտեցում են պահանջում:

Իրականությունների թարգմանությունը բարդ է երկու առումով: Նախ՝ թարգմանության լեզվում չկան համարժեքներ, որովհետև այն կրող ժողովրդի կյանքում իրականությունների անվանած առարկաները չկան /դրանք կոչվում են ռեֆերենտներ/: Բացի դրանից, իրականությունների առարկայական նշանակության փոխանցման հետ մեկտեղ անհրաժեշտ է փոխանցել նաև նրանց ազգային և պատմական բներանգը:

Սակայն նախքան թարգմանության սկզբունքները քննելը փորձենք պարզել, թե ինչպես կարելի է տարբերակել իրականությունները բնագրի լեզվում: Իհարկե, ավելի ճանաչելի են սեփական լեզվի իրականությունները, մանավանդ այն դեպքում, երբ մայրենի լեզվից ենք թարգմանում: Միջազգային իրականություններն առանձնացնելու հարցում ևս դժվարություններ չեն առաջանում, որովհետև դրանք ընթերցողին ծանոթ են գրականությունից, մամուլից և մշակութային շփումներից: Բազմաթիվ լեզուներում տարածված այդպիսի բառերից են **գոնդոլ, սաֆարի, սամբրերո, ռիկշա** և այլն: Սակայն նման իրականությունները թարգմանելիս պետք է զգույշ լինել: Նախ՝ անհրաժեշտ է ճշտել, թե տվյալ իրականությունն արդեն կա՞ թարգմանության լեզվում, ի՞նչ իմաստով է կիրառվում, արտասանական ի՞նչ փոփոխությունների է ենթարկվել: Բացատրության ավելի քիչ կարիք ունեն տարածաշրջանային իրականությունները: Օրի-

¹ Տե՛ս **Влахов С., Флорин С.** Непереваемое в переводе, М., 1986, с. 55:

նակ՝ սովետական գրականության մեջ շատ էին Սովետական Միության ժողովուրդների կենցաղը և մշակույթն անվանող իրակությունները, ինչպես՝ **առու, չայխանա, ակսակալ, կումիս, չախոբիլի** և այլն: Կան նաև Արևելքի ժողովուրդների կյանքին, կենցաղին բնորոշ ընդհանուր իրակություններ՝ **մզկիթ, մինարեթ, չադրա, հինա** և այլն:

Երբեմն որոշ հեղինակներ որևէ կերպ չեն բացատրում իրակությունները՝ հուսալով, որ ընթերցողը դրանք կկռահի բնագրից: Նրանք, փորփրելով պատմական նյութը, վերցնում են իրակություններ՝ առանց մտածելու, թե վերջիններս կարդացողին որևէ տեղեկատվություն տալի՞ս են, թե՞ ոչ: Իսկ Ա. Տոլստոյն իր «Պյոտր Առաջին» վեպում ոչ միայն գործածել, այլև նույնիսկ ստեղծել է նոր իրակություններ²: Եվ այս ամենը կատարվում է ստեղծագործությանն ազգային կամ պատմական բներանգ հաղորդելու նպատակով:

Հեղինակների մի մասն էլ իրենց գործերում առանձնացնում է իրակությունները: Որոշ գրողներ չակերտների մեջ են վերցնում դրանք, երբեմն գրում են լատինատառ: Շատ տարածված է իրակության բացատրությունը տեքստում չեզոք համարժեքով կամ էլ տեսակի անվանումով, օրինակ՝ **սառնա՝ ֆիննական բաղնիք, կալվադոս՝ խնձորի օղի**: Լ. Տոլստոյն իր «Կազակներ» վեպում շատ բառեր բացատրում է հենց բնագրում: Հաճախ այդ բացատրությունները համառոտ են, առանձնանում են զծիկով, ստորակետերով, փակագծերով կամ մեկնական բառերով, օրինակ՝ **песчаные буруны/ наносые пески**³: Եթե իրակությունն առանցքային դեր է կատարում, ապա հեղինակը կարող է այն հանգամանորեն բացատրել տողատակում: Լև Տոլստոյի տված բացատրությունների մեծ մասը այդպիսին է, այսպես՝ **буза татарское пиво из пшена, чувяки обувь**⁴: Իրակությունները կարելի է մեկնաբանել նաև ստեղծագործության վերջում՝ ցանկերում և բառարաններում: Այս ձևը, սակայն, ընթերցողի գործը բարդացնում է. ամեն անգամ պետք է թերթել, բացել վերջին էջը, իսկ դրանից կտրվում է մտքի թելը: Նախկինում նման մեկնաբանություններն ավելի շատ էին:

Եթե բնագրում իրակությունն ինչ-որ ձևով առանձնացված է, ապա թարգմանչի գործը բավականին դյուրին է դառնում. նրան մնում է ընտրել թարգմանության մեթոդը:

² Տե՛ս նույն տեղում, էջ 92:

³ **Толстой Л.** Казаки, М., 2006, с. 166 .

⁴ Նույն տեղում, էջ 173:

Իրակությունների թարգմանությունը կատարվում է երկու հիմնական սկզբունքով՝ տառադարձությամբ և թարգմանությամբ: Այս սկզբունքներից նախընտրելին, իհարկե, տառադարձությունն է, որովհետև նրա շնորհիվ կարողանում ենք պահպանել իրակության երկու հիմնական առանձնահատկությունները՝ իմաստը և բներանգը: Ընդ որում, օտար բառերը կարելի է փոխանցել՝ պահպանելով լեզվի հնչյունները /հնչադարձություն/ կամ պահպանելով տառերը /գրադարձություն/⁵: Ռուսերենից բառեր փոխառելիս ավելի հաճախ կիրառում ենք գրադարձություն, իսկ անգլերենից՝ հնչադասություն: Թարգմանությունն իր հերթին ունի մի քանի տարատեսակներ՝ նորաբանության ստեղծում, իրակության փոխարինում, մոտավոր թարգմանություն, խոսքաշարային թարգմանություն⁶: Արմեն Հովհաննիսյանը Ա. Տոլստոյի «Պյոտր Առաջին» վեպը թարգմանելիս վերը նշված բոլոր տարատեսակները գործածել է: Այսպես, ստեղծել է նորաբանություններ. *Кальцо в калитке*⁷ բառակապակցությունը թարգմանել է դարպասաթակ⁸, *полати* հնաբառը, որը նշանակում է ռուսական վառարանի և խրճիթի առաստաղի միջև պատին ամրացված քնատեղ⁹, փոխանցել է վերնաթախտ նորաբանությամբ: Իրակության փոխարինման դեպք կարելի է համարել *лапоть* բառը տրեխով թարգմանելը: *Лапоть*-ը նշանակում է «Крестьянская обувь, сплетённая из лыка, охватывающая только стопу»¹⁰, իսկ տրեխը՝ «Կիսամշակ կաշվից տանը պատրաստված ոտքի անկրունկ հագնելիք, չարոխ»¹¹: Երկուսն էլ նույն գործառույթն են կատարում, սակայն ազգային բներանգը կորել է կամ ավելի ճիշտ փոխվել, ինչը միշտ տեղի է ունենում վերը նշված հնարը կիրառելիս: Մոտավոր թարգմանության բազմաթիվ օրինակներ կան. *дьяк* բառը /*Чиновник* в древней Руси, исполняв-

⁵ Հայ լեզվաբանության մեջ այս իրողության համար տարբեր եզրույթներ կան, տե՛ս **Ավետիսյան Յու.** Հայոց լեզու և խոսքի մշակույթ, գիրք Ա, Երևան, 2014, էջ 31, 32:

⁶ Թարգմանության այս տեսակներն ունեն բազմաթիվ ենթատեսակներ, որոնց, սակայն, մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ անդրադառնալ:

⁷ **Толстой А. Н.** Петр Первый, Минск, 1981. Այսուհետ «Петр Первый» վեպից մեջբերումները՝ նշված գրքից:

⁸ **Տոլստոյ Ա. Ն.**, Պյոտր Առաջին, թարգմ.՝ Ա. Հովհաննիսյան, Երևան, 1987: Այսուհետ «Պյոտր Առաջին» վեպից մեջբերումները՝ նշված գրքից:

⁹ **Ожегов С. И., Шведова Н. Ю.** Толковый словарь русского языка, М., 1992.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ **Աղայան Է. Բ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, հ. 2, 1976:

ший обязанности секретаря отдельного учреждения/¹² թարգմանել է ատենավոր, որը նշանակում է ատյանի մասնակից, ժողովական: Сторожка բառին /Небольшой домик, помещение для сторожа/¹³ որպես համարժեք ընտրված է տուն մոտավոր տարբերակը, չնայած հայերենում կան պահատնակ, պահակատնակ բառերը: Խոսքաշարային թարգմանությունը սովորաբար հակադրում են բառային թարգմանությանը: Այս դեպքում կարևոր է դառնում իմաստի փոխանցումը: Օրինակ՝ перебивались с хлеба на квас արտահայտությունը թարգմանել է ցամաք հացով մի կերպ ապրում էին նախադասությամբ, որը իմաստային առումով համարժեք է բնագրին:

Իրակությունները թարգմանելիս ամեն անգամ հարկ է լինում պատասխանել հետևյալ հարցին՝ տառադարձե՞լ, թե՞ թարգմանել: Իհարկե, ինչպես այս, այնպես էլ թարգմանության դեպքում ընդհանրապես պատրաստի դեղատոմսեր չկան: Թարգմանիչները, հենվելով ֆոնային գիտելիքների, փորձի, ինտուիցիայի վրա, հաշվի առնելով նաև «բնագրային իրադրությունը», յուրաքանչյուր առանձին դեպքի համար ընտրում են ամենահարմար, երբեմն միակ հնարավոր ճանապարհը: Ընտրությունը կախված է նաև տեքստի ժանրային առանձնահատկությունից: Գիտական աշխատություններում իրակությունները եզրույթներ են և պետք է փոխանցվեն եզրույթով, հրապարակախոսական տեքստերում ավելի ընդունված է տառադարձությունը, իսկ գեղարվեստական գործերում ընտրությունը կախված է տեքստի բնույթից: Արձակ ստեղծագործություններում, եթե տառադարձություն ենք անում, ապա կարելի է տողատակում բացատրություններ տալ, ինչը սկզբունքորեն հնարավոր չէ դրամատիկական երկերում: Մանկական ստեղծագործություններում անհրաժեշտ է ձեռնպահ մնալ օտար բառեր գործածելուց, իսկ եթե դրանք պահպանվում են, անհրաժեշտ է բացատրել: Արկածային վեպում տառադարձվող բառը կարող է ոճական դեր կատարել, որպես էկզոտիզմ հանդես գալ: Գիտահանրամատչելի տեքստում տեղին կլինեն սպառիչ բացատրությունները՝ հաշվի առնելով ստեղծագործության ճանաչողական բնույթը: Հետազոտությունները ցույց են տվել, որ այսպես կոչված «հարթ» գեղարվեստական տեքստում, հեղինակային խոսքում, նկարագրություններում և դատողություններում տառադարձությունն ավելի հեշտ է ընդունվում, և այն բացատրելու, մեկնաբանելու հնարավորու-

¹² Ушаков Д. Н. Толковый словарь Ушакова. М., 1935-1940.

¹³ Նույն տեղում:

թյուններն՝ ավելի շատ են, իսկ ուղիղ խոսքում, երկխոսություններում դրանք փոխանցելու այլ հնարքներ պետք է գտնել¹⁴:

Կարևոր է նաև, թե իրակությունը ստեղծագործության մեջ ինչ դեր է կատարում, ոճական ինչ գունավորում ունի: Կապ ունի նաև այն հանգամանքը, թե իրակությունը բնագրի լեզվի՞նն է, թե՞ օտար: Օտար իրակությունն արդեն տարբերվում է իր բառային միջավայրից, և բնագրի հեղինակն իր ընթերցողի համար հաճախ մեկնաբանում է այդ օտար բառը: Բնագրի սեփական իրակությունը թարգմանչի առաջ ավելի բարդ խնդիրներ է դնում թե՛ ճանաչելու և թե՛ թարգմանության սկզբունքը գտնելու հարցում: Տառադարձության ժամանակ բնագրում ոճական գունավորում չունեցող այդ բառերն ու բառակապակցությունները թարգմանության լեզվում մի տեսակ առանձնանում են և իրենց վրա մեծ ուշադրություն են կենտրոնացնում: Այդ դեպքում ձևի և բովանդակության խախտում է տեղի ունենում, և համարժեք թարգմանություն չի ստացվում: Իսկ այլ սկզբունքով թարգմանելիս ազգային կամ պատմական բներանգից ինչ-որ բան անհետանում է, ջնջվում: Չարյաց փոքրագույնը կլինի տառադարձությամբ թարգմանել այն դեպքում, երբ այդ իրակությունները գտնվում են բնագրի իմաստային լարվածության կենտրոնում, և նրանց վրա մեծ ուշադրություն է բևեռված: Այդպես է վարվել Ակսել Բակունցը «Տարաս Բուլբա» վիպակը թարգմանելիս, այսինքն՝ տառադարձել է միայն առանցքային, կրկնվող իրակությունները, ինչպես՝ **բատկո, կազակ, հեթման, կուրեններ, եաուլ, ստեպ, կաֆտան, ռադա, պան, կոմիսար, բուրսակներ** և այլն¹⁵:

Երբեմն թարգմանության սկզբունքի ընտրությունն պայմանավորվում է սուբյեկտիվ գործոններով: Ավելի հաճախ տառադարձության են դիմում այն թարգմանիչները, որոնք թարգմանում են մայրենի լեզվից օտար լեզու, ինչպես նաև այսպես կոչված *երկլեզվյան* թարգմանիչները, կամ նրանք, ովքեր ապրել են այն երկրում, որտեղ ստեղծվել է բնագիրը:

Որոշ իրակություններ էլ, չնայած իրենց համարժեքներն ունեն, տառադարձվում են ավանդույթի ուժով: Օրինակ՝ **աուլ, կոլխոզ, սիթի, թաուն, խուտոր, ստանիցա** բառերը **քաղաք** կամ **գյուղ** են նշանակում: Մյուս կողմից, սակայն, այդ իրակությունների գործածությունն արդարացված է, որովհետև բազմամիլիոնանոց ամերիկյան քաղաքը տարբերվում է իտալական փոքրիկ քաղաքից, իսկ միջինասիական աուլը՝ սովետական կոլխոզից:

¹⁴ Հմմտ. **Влахов С., Флорин С.** Непереводимое в переводе, М., 1986, сс. 96, 106:

¹⁵ **Գոգոլ Ն. Վ.**, Տարաս Բուլբա, թարգմ.՝ Ա. Բակունց, Երևան, 1950:

Իրակությունների մեծ մասը գոյականներ են, և եթե նրանք փոխում են իրենց խոսքիմասային պատկանելությունը, դադարում են իրակություն լինելուց: Այսպես, գոյականներից առաջացած ածականների մեծ մասը չի պահպանում ազգային բներանգը, ավելի շուտ հանդես է գալիս փոխաբերական իմաստով օր.¹⁶ **богатырь – богатыйский**, վերջինս թարգմանվում է **ուժեղ, հզոր, անպարտելի** համարժեքներից մեկով, **пуд пудобый** բառը փոխանցվում է **ծանր**, չնայած հայերենում կարող ենք գործածել նաև **փթանոց** բառը:

Իրակությունների մեծ մասը դառնում է փոխառություն, իսկ լեզուները տարբեր չափով են փոխառություններ կատարում: Օր.¹⁶ անգլերենն ավելի շատ է բառեր «վերցնում», որովհետև ինքը բազմաշերտ է: Բայց նույնիսկ այս դեպքում անգլերենում սլավոնական լեզուներից փոխառություններն ավելի քիչ են, քան արևելյան փոխառությունները, որովհետև շփումները Ռուսաստանի հետ ավելի քիչ են եղել, քան Հնդկաստանի և Չինաստանի հետ: Ռուսերենն այս առումով ավելի պահպանողական է: Սակայն Սովետական Միության կազմավորումից հետո այն սկսեց մեծ ազդեցություն ունենալ Միության կազմի մեջ մտնող այլ ազգերի լեզուների վրա՝ միաժամանակ ինքն էլ փոխառելով բազմաթիվ իրակություններ: Գերմաներենն իրակություններ փոխառելու հարցում *ոչ հյուրընկալ* լեզուների շարքում է /ավելի *անհյուրընկալ* է երևի հունգարերենը/: Նույնիսկ շատ միջազգային բառեր, օր.¹⁶ *телефон, телевидение* գերմաներենը թարգմանում է¹⁶: Դա բացատրվում է նրանով, որ բառակազմության պատճենման եղանակը գործուն է: Այս երևույթը կարելի է բացատրել նաև հակառակ կողմից. օտար բառերը չծուլելու ցանկությունը ստեղծել է հարմար միջոց՝ բառերը պատճենելու համար:

Այսպիսով, թարգմանության հաջողվածությունը մեծ մասամբ կախված է իրակությունները վարպետորեն փոխանցելուց: Նախ՝ պետք է կարողանալ տարբերակել իրակությունը բնագրում, որոշել նրա կարևորության աստիճանը, հետո դիմել թարգմանության սկզբունքներից մեկին՝ տառադարձությանը կամ թարգմանությանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իրակություններն ազգային և պատմական բներանգ ունեցող բառեր ու բառակապակցություններ են, որոնք անվանում են որևէ ժողովրդի կյանքին, կենցաղին, սոցիալական կամ պատմական առաջընթացին բնորոշ առարկաներ, իրողություններ և օտար են այլ ազգերի համար: Այդ բառերը թարգ-

¹⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս **Влахов С., Флорин С.** Непереводимое в переводе, М., 1986, сс. 112- 113:

մանելու երկու հիմնական սկզբունք կա՝ տառադարձություն և թարգմանություն: Թե որ մեթոդը պետք կիրառել, որոշում է ինքը՝ թարգմանիչը:

Բանալի բառեր – իրականություն, թարգմանություն, տառադարձություն, ազգային քներանգ, փոխառություն, համարժեքներ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПЕРЕВОДА РЕАЛИЙ

АНАИДА МОВСИСЯН

Реалии – это слова и словосочетания, которые имеют национальные и исторические оттенки значения, чуждые для других наций, и которыми называют вещи и истинности, характерные для жизни, образа жизни, социального или исторического прогресса определенной нации. Для перевода этих слов существуют два метода: транслитерация и перевод. Какой из методов будет выбран – решает сам переводчик.

Ключевые слова – реалии, перевод, транслитерация, исторический оттенок, заимствованное слово, эквивалент.

QUESTIONS RELATING TO THE TRANSLATION OF FOCAL VOCABULARY

ANAHITA MOVSISSIAN

The focal vocabulary consists of words and phrases that have national and historical shades of meaning. They are used to designate objects and realities typical of the lifestyle, of social or historical events of a certain nation or a group and these are foreign for other nations. However, there are two main principles to translate focal vocabulary: transliteration and translation. The translator is the one to decide, which method to use.

Key words – focal vocabulary, translation, transliteration, national shade of meaning, rendition, equivalents.

ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻԻ «451 ԱՍՏԻՃԱՆ ԸՍՏ ՖԱՐԵՆՀԱՅԹԻ» ՎԵՊԻ ՈՐՈՇ ԼԵԶՎԱՌՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՀԱՍՄԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

XXI դարը տեխնոլոգիական նվաճումների և վիրտուալ իրականության ժամանակաշրջան է: Արդեն իրականություն են դարձել բարձրագույն տեխնոլոգիաներին վերաբերող անցյալի կանխատեսումները: Գիտաֆանտաստիկան՝ գիտականի և գեղարվեստականի միաձույլ դրսևորում և փոփոխություններ ներկայացնող գրական ժանրը¹, կարևոր դեր է կատարում տեխնոլոգիական կանխատեսումներ անելու գործում: Մարդկության տեխնոլոգիական ապագան կանխագուշակել փորձող հեղինակների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում ամերիկացի գրող Ռեյ Բրեդբերին իր «451 աստիճան ըստ ֆարենհայթի» (1953)² հանրահայտ վեպով: Վեպի վերնագիրը ներկայացնում է այն ջերմաստիճանը, որի տակ այրում են գրքերը. ապագայի դիստոպիական այդ հասարակության մեջ կարդալն արգելված է: Թեև վեպն ապագա կանխատեսումներ անելու բնորոշ օրինակ է, հեղինակն ինքը կարծում է, որ իր նպատակը ոչ թե ապագան կանխագուշակելն է, այլ «ապագան կանխարգելելը»³: Իրոք, մարդկության աղետալի ապագան «կանխարգելելը» գիտաֆանտաստիկ ժանրի ամենակարևոր մարդասիրական նպատակն ու առաքելությունն է:

Բրեդբերիի ստեղծագործության մեջ սոցիալ-հասարակական արտալեզվական այդ առաքելությունն իրացվում է ճանաչողական և երևակայական լեզվաոճական միավորների միաձույլ դրսևորումներով, ուղղակի և փոխաբերական իմաստներ արտահայտող տարրերի գեղեցիկ համադրումներով, որոնց ուսումնասիրությունն էլ մեր նպատակն է: Այլ խոսքով՝ լեզվաոճական և լեզվաբանաստեղծական մեթոդների կիրառությամբ ուսումնասիրվում են

¹ Տե՛ս Oxford Advanced Learner’s Dictionary. Oxford: OUP, 2005:137.

² **Bradbury R.D.** Fahrenheit 451. NY: Random House, 1953. Տե՛ս նաև Fahrenheit 451 by Ray Bradbury. (Copyright 2016) <<http://www.neabigread.org/books/fahrenheit451/readers-guide/epub/>> Accessed 11 January 2015.

³ Տե՛ս **Prochnow A.** Presentations. Prezi Inc. (Copyright 2016)<<https://prezi.com/r1ptinlsvag/fahrenheit-451/>> Accessed 9 January 2016.

իմաստային, վերնշանային և վեր-վերնշանային մակարդակներում⁴ իրենց լեզվաոճական հնարավորություններն իրացնող խոսքային միավորները, կարևորվում ստեղծագործության իմացական կողմն ապահովող և ժանրի «ճանաչողական-երևակայական»⁵ հանձնարարության իրացմանը նպաստող իմացական գործոնների ու հասկացությունները դերը: Նման մոտեցումը թույլ է տալիս կատարել նյութի ոչ թե գրականագիտական կամ զուտ լեզվաբանական վերլուծություն, այլ դիտարկել գիբսոնյան պատկերավոր խոսքը որոշակի ոճակավմի չճանաչողական առանձնահատկությունների լրյսով:

Դիտարկենք հետևյալ համատեքստը.

IT was a special pleasure to seethings eaten, to see thingsblackened and changed. With the brass nozzle in his fists, with this great python spitting itsvenomous kerosene upon the world, the blood pounded in his head, andhis hands were the hands of some amazing conductor playing all the symphonies of blazing and burning to bring down the tatters and charcoal ruins of history.[...] He strode in a swarm of fireflies. He wanted above all, like the old joke, to shove a marshmallow on a stick in the furnace, while the flapping pigeon-winged books died on the porch and lawn of the house.

(Fahrenheit 451:1)

Ներագրման ոճական ուժգնությամբ աչքի ընկնող միավորների հետևում թաքնված է վեպի համար համընդհանուր համարվող ճանաչողական սոցիոլոգիական փաստը. եթե չկա գիտելիք/գրքեր, չկա գիտակցության և էթիկայի զարգացում, եթե չկա էթիկա, չկա բարոյական և գիտակցական նորմերով առաջնորդվող հասարակություն: Ճանաչողական այս մոտեցումն օգնում է հասկանալ, որ այրվող գրքերին զուգահեռ վերանում են գիտելիքն ու գիտակցությունը, ջախջախվում ազատ մտածելու և ազատ գործելու կարողությունը: Երևակայությունն իրացվում է հենց այս ճանաչողական կաղապարում. կրակի դիստոպիական այդ աշխարհում հրջեջները ոչնչացնում են հասարակության ապագան:Առաջին հայացքից չեզոք թվացող eaten, blackened, changed միավորների ոճական ուժգնությունը մեծանում է, երբ դրանք

⁴ **Гаспарян С.К.** Лингвопозитика образного сравнения. Ереван: Лусакн, 2008.

⁵ «Ճանաչողաերևակայություն»(cognitiveestrangement) եզրույթը ստեղծվել է գիտաֆանտաստիկ գրող և ժանրի տեսաբան Դ. Սուվինի կողմից (Suvin, D. MetamorphosesofScienceFiction. NewHaven, Ct: YaleUniversityPress, 1979:17).

զուգորդվում են կրակի, հրդեհի հետ: Փոխաբերականորեն, կրակը ներկայացվում է որպես *great python spitting its venomous kerosene upon the world*, իսկ Գայ Մոնթագի ձեռքերը՝ որպես *the hands of some amazing conductor*: Գրքերն այրելը այս հրշեջին կարևորության զգացողություն է հաղորդում, նա հպարտորեն քայլում է կայծերի միջով (*He strode in a swarm of fireflies*՝ փոխաբերություն) և կառավարում այրվող աշխարհն այնպես, ինչպես նվագավարն է ղեկավարում սիմֆոնիկ նվագախումբը (*symphonies of blazing and burning*՝ մակդիր): Հաջորդող փոխաբերությունը՝ *to bring down the tatters and charcoal ruins of history*, ընդգծում է այրվող գրքերի պատմական և մշակութային արժեքը: Համատեքստի վերջին փոխաբերական ասույթը՝ *the flapping pigeon-winged books died on the porch and lawn of the house*, պարունակում է գրքերը երկնքում ճախրող աղավինների հետ համեմատող մակդիր (*pigeon-winged books*) և մեռնող մարդու հետ համեմատող անձնավորում (*books died on the porch and lawn of the house*): Վեր-վերասույթային մտորումները կապված են մարդկային երևակայության, երջանկության ու երազանքների կորստի, անգիտության հորձանուտում խարխափող հասարակության պատկերների հետ:

Դիտարկենք ներագման ուժգնությամբ աչքի ընկնող ևս մեկ համատեքստ.

He held his pants out into an abyss and let them fall into darkness. His hands had been infected, and soon it would be his arms. He could feel the poison working up his wrists and into his elbows and his shoulders, and then the jump-over from shoulder-blade to shoulder-blade like a spark leaping a gap. His hands were ravenous.

(*Fahrenheit 451*:19)

Առաջին ասույթի փոխաբերության (*held his pants out into an abyss and let them fall into darkness*) կազմում հանդես եկող ներակա առնշանակայնությամբ օժտված *abyss*(անդունդ) գոյականը, զուգորդվելով *darkness* (մթություն) գոյականի հետ, խորհրդանշում է հերոսի հոգեբանական փոխակերպումը. գրքերը գողանալն ու այրելն այլևս հաճույք չեն պատճառում Մոնթագին, նրա շարժումները մեխանիկական են, կարծես անգիտակից: Նրան թվում է, թե իր ձեռքերը թունավորված են, և թույնը կրակի նման բարձրանում է վեր՝ մինչև ուսերը (*the poison working up his wrists [...] like a spark leaping a gap*՝ գեղարվեստական համեմատություն): Վերնշանային մակարդակում

իրացվող *his hands were ravenous* անձնավորված փոխաբերությունը և հատկապես ներակա առնշանակայնությամբ օժտված *ravenous (սովամահ)* լածականը թույլ են տալիս մեկնաբանել նրա վայրագ աշխատանքը որպես գրքերը վառելու անգիտակից, բնազդային, անհագ ցանկություն:

Ինչպես նշում են մի շարք տեսաբաններ⁶, մարդկային մտածողությանը ներհատուկ է երևակայական պատկերներ կերտելու կարողությունը: Հաշվի առնելով այս պնդումը՝ կարող ենք ասել, որ Բրեդերիի ստեղծագործ խոսքը ոչ միայն նրա բնատուր, այլև ճանաչողական երևակայության արդյունքն է:

Վերլուծենք համընդհանուր ճանաչողության տեսանկյունից տեխնոլոգիական առաջընթացը որպես բացասական երևույթ դիտարկող մի համատեքստ.

*It was not the **hysterical light** of electricity but-what? But the strangely **comfortable and rare and gently flattering light of the candle**. One time, when he was a child, in a power-failure, his mother had found and lit a last candle and there had been **a brief hour of rediscovery**, of such **illumination** that **space lost its vast dimensions and drew comfortably around them**, and they, mother and son, alone, transformed, **hoping that the power might not come on again too soon**.*

(Fahrenheit 451:3)

Երկու մակդիրները (*the hysterical light of electricity* և *the strangely comfortable and rare and gently flattering light of the candle*) ներկայացնում են մարդկային կյանքի երկու ժամանակաշրջան՝ մինչտեխնոլոգիական և հետտեխնոլոգիական: Դրանք բնութագրող հակադիր՝ դրական առնշանակային *comfortable* և բացասական առնշանակային *hysterical* միավորները ցույց են տալիս, որ հեղինակի համակրանքի առարկան *հազվագյուտ, բացառիկ (rare)*, մոմի թրթռացող լույսով պարուրված (*gently flattering light of the candle*) հին, բարի օրերն են: Հաջորդող վաթսունմեկ բառից կազմված նախադասությունը և հատկապես *a brief hour of rediscovery; illumination, space lost its vast dimensions and drew comfortably around them; hoping that the power might not*

⁶ Տե՛ս Johnson, M. *The Body in the Mind. The Bodily Basis of Meaning, Reason and Imagination*. Chicago: Chicago University Press, 1987; Fauconnier, G. & E. Sweetser, (eds.) *Spaces, Worlds, and Grammar*. Chicago: University of Chicago Press, 1996; Lakoff, G. and M. Johnson *Philosophy in the Flesh. The Embodied Mind and Its Challenge to Western Thought*. New York: Basic Books, 1999.

come on again too soon լեզվական միավորները լրացնում են հին օրերի գեղեցիկ պատկերը: Իմաստային մակարդակում անվերահսկելի վիճակ և էլեկտրական լույս ցույց տվող *hysterical* և *light of electricity* տարրերով կազմված *the hysterical light of electricity* շարույթն իրացվում է վերնշանային մակարդակում՝ պատկերելով զգայարանների վրա չափազանց ուժեղ և տհաճ ազդեցություն թողնող լուսավորություն: Առավել հետաքրքրական է, որ այդ շարույթի վեր-վերնշանային մակարդակի ընկալումները կապված են համ-ընդհանուր ճանաչողական այն գաղափարի հետ, որ տեխնոլոգիական առաջընթացը հեշտացնում է մեր ֆիզիկական կյանքը, բայց անդառնալի կորուստներ է պատճառում մեր հոգեկան աշխարհին: Մոմի թույլ առկայծող լույսն է իսկական լուսավորությունը /illumination/, մարդուն պարուրող ջերմությունը, մտքերի ու զգացմունքների պայծառությունը:

Հաջորդ համատեքստը ցույց է տալիս, որ Բրեդբերին կարողացել է շուրջ կես դար առաջ կանխատեսել ոչ միայն ընդհանրապես տեխնոլոգիական զարգացման, այլև հենց էլեկտրոնային/համակարգչային առաջընթացի բացասական ազդեցությունը մարդկային ներաշխարհի և միջանձնյա հարաբերությունների վրա:

Without turning on the light he imagined how this room would look. His wife stretched on the bed, uncovered and cold, like a body displayed on the lid of a tomb, her eyes fixed to the ceiling by invisible threads of steel, immovable. And in her ears the little Seashells, the thimble radios tamped tight, and an electronic ocean of sound, of music and talk and music and talk coming in, coming in on the shore of her unsleeping mind.

(Fahrenheit 451:5)

Փոքրիկ ծովախեցիկն (*the little Seashells*) և մալոնգաչափ ռադիոն (*thimble radios*) անհամատեղելի հասկացություններ են: Ծովախեցիկն ականջին հպելիս կարծես լսում ենք ծովի ձայնը: Ռադիոն հեռարձակում է «անկենդան» երաժշտություն: Առաջինը խորհրդանշում է բնությունը, իսկ երկրորդը՝ տեխնոլոգիան: Բրեդբերին «կերտած» փոքրիկ լսողական սարքն այսօրվա այփոդն (*ipod*) է՝ թվային նվագարկիչը, որը կարող է համացանցից հազարավոր երգեր ներբեռնել: Բնությունից, կյանքից կտրվածությունը պատկերվում է նաև հետևյալ գեղարվեստական արտահայտչամիջոցների օգնությամբ. *His wife stretched on the bed, uncovered and cold, like a body displayed on the lid of a tomb* (համեմատություն), *invisible threads of steel* (մակդիր); *immovable*

(արտակա առնշանակային աճական), *electronic ocean of sound* (մակդիր), *unsleeping mind* (մակդիր): Տեխնոլոգիային վերաբերող համընդհանուր ճանաչողական կադապարի շրջանակներում առաջացող վերնշանային և վերվերնշանային մտորումները կապված են միայնության, միջանձնյա հաղորդակցության բացակայության, երջանկության պատրանք ստեղծող անվերջ, անկենդան, հիպնոսացնող երաժշտության և հեղոնիստական⁷ պատկերների առաջացրած զուգորդումների հետ:

Կարևորելով այն փաստը, որ սոցիալական և տեխնոլոգիական ճանաչողական հասկացությունների և երևակայական լեզվական արտահայտչամիջոցների համաձույլ դրսևորմամբ իրացվող Ռեյ Բրեդբերիի խոսքը մեզ և ապագա սերունդներին ուղղված ուղերձ է, անդրադառնանք այս հետազոտության մեջ դիտարկվող վերջին, երկու նախադասությունից կազմված վերասույթային միասնությանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես ցույց է տալիս համատեքստը, աշխարհաճանաչողական գործիք համարվող գիտությունների (տվյալ դեպքում փիլիսոփայության ու սոցիոլոգիայի) և ընդհանրապես ինտելեկտուալ գործունեության նկատմամբ հարգանքի բացակայությունն արտահայտվում է ներկա առնշանակային *melancholy* (մելանաղձություն) միավորի միջոցով: Մոնթագին (հասարակությանն ընդհանրապես) խորհուրդ է տրվում մերժել գիտությունը և տրվել զվարճությանը: Հենց սա նկատի ուներ Ռեյ Բրեդբերին, երբ ասում էր, որ իր նպատակը «ապագան կանխարգելելն է»⁸:

Քանալի բառեր - գիտաֆանտաստիկա, Ռեյ Բրեդբերի, «451 աստիճան ըստ ֆարենհայթի», ճանաչողություն և երևակայություն, ուղղակի և փոխաբերական լեզվաոճական միավորներ:

⁷ Հերոնիզմը հաճույքը գերագույն արժեք, հաճույքներին նվիրվածությունն ապրելակերպ և երջանկություն դիտարկող գաղափարախոսություն է (WordReference (Copyright 2016) Online Language Dictionaries. <<http://www.wordreference.com/definition/hedonism%20>> Accessed 12 December 2015).

⁸ Տե՛ս **Prochnow A.** Presentations. Prezi Inc. (Copyright 2016)<<https://prezi.com/r1ptinIsIvag/fahrenheit-451/>> Accessed 9 January 2016.

О НЕКОТОРЫХ ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ РОМАНА РЭЯ БРЭДБЕРИ “451 ГРАДУС ПО ФАРЕНГЕЙТУ”

ГАЯНЕ МУРАДЯН, АСМИК ТУМАНЯН

Научная фантастика - литературный жанр, основанный на образном выражении и на постулировании научных фактов, форма литературы о пересечении мира научной фантастики и мира реальности, играет важную роль в технологических предсказаниях о человеческом мире, обществе и проблемах. Ряд авторов были вовлечены в технологические предсказания, среди них известный американский писатель Рэй Брэдбери с научно-фантастическим романом “451 градус по Фаренгейту” (1953). В этой статье мы сосредоточились на онтологическом сопоставлении фактичности и фиктивности в упомянутом романе, на лингвостилистических особенностях с точки зрения познания и образного мышления. Мы также сосредоточились на определенных когнитивных представлениях и стратегиях, которые обуславливают фактический аспект научной фантастики и способствуют созданию *когнитивного отчуждения*.

Ключевые слова - научная фантастика, Рэй Брэдбери, “451 градус по Фаренгейту”, познание и отчуждение, прямые и образные лингвостилистические единицы.

LINGOSTYLISTIC PECULIARITIES OF RAY BRADBURY'S FAHRENHEIT 421

GAYANE MURADYAN, HASMIK TUMANYAN

Science fiction – the literary genre based on imaginative expression and postulated scientific discoveries – is a literature depicting the realms of fantasies and reality which plays an important role in predicting future technologies, the destiny of the world, human society and their problems. A number of authors have been involved in predicting future technologies and among them is the famous American writer Ray Bradbury with his science fiction novel *Fahrenheit 451* (1953).

Gayane Muradyan and Hasmik Tumanyan, in this paper consider the ontological juxtaposition of the factitiousness and fictitiousness in *Fahrenheit 451* as well as the lingostylistic peculiarities in it from the point of view of awareness and

thorough thinking. They have also considered certain cognitive notions and strategies that condition the factual aspect of the novel and contribute to the creation of an environment of *cognitive estrangement*.

Key words - Science fiction, Ray Bradbury, Fahrenheit 451, cognition and estrangement, factitious and fictitious lingostylistic units.

ՏԵՔՍԸ ՈՐՊԵՍ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ

Տեքստի գիտական քննությունը համեմատաբար նոր գիտակարգ է, և չնայած բավականին բան է արվել, դեռևս շատ հարցեր մնում են չհստակեցված: Դրանք առավելապես վերաբերում են այն խնդրին, թե տեքստը ի վերջո լեզվաբանակա՞ն, թե՞ գրականագիտական կարգ է, և որպես լեզվի դրսևորման կարևոր ձևերից մեկը, իսկ ըստ որոշ լեզվաբանների՝ որպես ինքնատիպ շարահյուսական միավոր, այն կարո՞ղ է արդյոք ամբողջությամբ բնութագրվել միայն լեզվաբանության միջոցով: Ոլորտի նշանավոր հետազոտողներից Ի. Ռ. Գալպերինը տեքստը բնութագրում է այսպես. «Տեքստը խոսքաստեղծ գործընթացի արդյունք է, որն օժտված է ավարտվածությամբ, իրականանում է համապատասխանորեն մշակված գրավոր փաստաթղթի ձևով: Դա մի ստեղծագործություն է՝ կազմված անվանումից (վերնագիր) և մի շարք հատուկ միավորներից (վերֆրազային միասնություն), որոնք, միավորվելով բառային, քերականական, տրամաբանական, ոճական տարբեր կապերով, օժտված են որոշակի նպատակաուղղվածությամբ և պրագմատիկ-գործնական դիրքավորմամբ»¹:

Տեքստաբանությունը, գրականագետների ընկալմամբ, տեքստերի մեջ հեղինակի ստեղծագործական հոգեբանության, բնագրային տարբերակների, այլևայլ միջամտությունների ու տարընթերցումների և այլ բանասիրական խնդիրների պարզաբանումն է, որը կարող է օգտակար նյութ հաղորդել գրողի կամ տվյալ երկի ստեղծագործական ճանապարհի ճշգրտումներին: Այս ընդգրկմամբ է, որ «տեքստաբանությունը գրականագիտության հիմնական բաժիններից է»²: Փաստորեն նույն եզրույթի տակ տարբեր ընկալումներ են, և անկախ դրանց որոշ ընդհանուր կողմերից՝ տեքստի առանձնահատկությունները մեզ հետաքրքրում են լեզվաբանական առումով:

Տեքստը, այսպիսով, ավարտուն մեծ կամ փոքր խոսքային միավոր է՝ իր կառուցվածքային ու լեզվաոճական բնութագրիչներով: Այն պետք է դիտել

¹ Гальперин И.Р. Текст как объект лингвистического исследования, М., 1981, с. 18.

² Զավեն Ավետիսյան, Տեքստաբանություն, Երևան, 2008, էջ 5:

բովանդակային և ձևային-ձևակազմական մակարդակներում, և երկու դեպքում էլ որոշակի կդառնան նրա շարահյուսական հատկանիշները, թեպետ ինչ-որ չափով բացարձակացում կա այն հայտարարության մեջ, թե «տեքստի վերլուծման հիմնական ձևը շարահյուսական վերլուծությունն է»³: Անշուշտ, տեքստը կապակցված նախադասությունների մեծ կամ փոքր ամբողջություն է, որոշակի ձևերի մեջ ինչ-որ տեղեկություն է հաղորդում: Եվ որքան էլ դրանք շատ տարբեր են և այլևայլ դրսևորումներ ունեն, այնուամենայնիվ ակադ. Գ. Ջահուկյանի կարծիքով. «Տեքստը հետաքրքրում է լեզվաբանին ընդհանուր օրինաչափությունների, կառուցվածքի մոդելների, կազմակերպման հիմունքների, պայմանների տեսանկյունից»⁴:

Տեքստը բովանդակային մակարդակում որոշակի տեղեկատվության հաղորդումն է, որը Գալպերինը բաժանում է երեք տեսակի. 1) բովանդակափաստային (Содержательно – фактуальная информация - СФИ), որը տեղեկություն է փաստի, դեպքի, երևույթի մասին, որոնք պատահել են անցյալում, կատարվում են հիմա կամ պիտի պատահեն ապագայում: Դա օբյեկտիվ իրականության, դրանում առկա կապերի մասին հաղորդում է, որը կարող է լինել փաստագրական, հուշագրական, պատմաժամանակագրական, գեղարվեստական խոսքում և ունի չեզոք բնույթ: 2) Բովանդակադիրքորոշումային (Содержательно – концептуальная – информация - СКИ), որը հեղինակի վերաբերմունքն է այդ փաստերի ու երևույթների նկատմամբ և ավելի ակտիվ բնույթ ունի, պարունակում է գնահատման պահ, իսկ հեղինակային սուբյեկտիվությունը միշտ չէ, որ կարող է ներկայացվել բոլորի համար ընդունելի ձևով: 3) Բովանդակաենթատեքստային (Содержательно – подтекстовая – информация - СПИ)⁵: Այն արտաձվում է բովանդակափաստային հաղորդումից ասոցիատիվ մտածողությամբ, հնարավոր չէ տեքստի ուղղակի ընկալմամբ, քանզի նախորդ երկուսի հաղորդած նորը պահպանվում է տեքստի խորքում, որ շատ ավելի բնորոշ է գեղարվեստական խոսքին: Բնական է, որ հաղորդման այս երեք տեսակները տեքստում հանդես են գալիս միասնաբար:

Բերենք օրինակ գեղարվեստական տեքստից: Հայտնի է Հրանտ Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը» վիպակի ասելիքը: Ահա սկիզբը. «Այս գյուղը հազար թելով կապված է աշխարհին. հեռախոսով, հոսքագծով, բրդի, մսի,

³ Արամյան Ա. Մ., Պարբերության կազմակերպման առանձնահատկությունները գիտական- բանասիրական տեքստում, «Լեզվի և ոճի հարցեր», Երևան, 1988, էջ 9:

⁴ Джаукян Г.Б., Универсальная теория языка, М., 1999, с. 199.

⁵ Տե՛ս Գալպերին Ի. Բ., նշվ. աշխ., էջ 27-28:

յուղի մթերմամբ... Հինգերորդ դասարանի երեխան լցնում է մանկական ամսագրի խաչքառը Բեթովենով, Սերվանտեսով, Հիպոկրատով, Կոմիտասով, Սահարայով, Եփրատով ու կենգուրուով և պատասխանը չի ուղարկում խմբագրություն, որովհետև ուղարկելու իմաստը չի հասկանում... Ամառվա ամիսներին գյուղի զավակները քաղաքից, սովորելու տեղից գալիս են: Գալիս են ուղիղ հանդ: Հայրերը, մեծ ընկերները նրանց ասում են. «Եկա՞ր, բարով եկար, գերանդիդ հրեն քեզ է սպասում»⁶:

Բովանդակափաստային հաղորդումը (ԲՓՀ) տեղեկություն է տալիս նոր գյուղի կյանքի, աշխարհի հետ կապված և աշխարհից կտրված լինելու փաստի մասին: Բովանդակադիրքորոշումային հաղորդումը (ԲԴՀ) զգացնել է տալիս հեղինակի համակրանքն ու սերը գյուղի մարդկանց, մեծի ու փոքրի, նրանց պարզության ու անկեղծության նկատմամբ: Բովանդակաենթատեքստային հաղորդումը (ԲԵՀ) հուշում է, որ բարդ ու դժվար աշխարհի հետ «հազար թելով» կապված գյուղի և աշխատանքի այս պարզ ու անեղծ մարդիկ պետք է տառապանք ապրեն, որ համամարդկային դրամայի մի մասնիկն է:

Չափաճո տեքստից, որպես օրինակ, բերենք մի հատված Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել»-ից.

Երկա~ր կանգնեցինք: Մի զինվոր – ընկեր

Դիակն հրելով, խնդաց խելագար:

Բայց չէ՞ որ նա՛ էլ կրել է զենքեր,

Եղել է մեզ պես կյանքի սիրահար:

Ես մտածեցի՝ զնում ենք մենք էլ

Այսպիսի դիակ դառնալու համար?:

ԲՓՀ-ն տեղեկացնում է պատերազմի դաշտից մի բնորոշ դրվագի մասին, ԲԴՀ-ն պարզում է հեղինակի վերաբերմունքը նրանով, որ այստեղ բոլորին են սպասում նույն դաժան ճակատագիրն ու վախճանը, իսկ ԲԵՀ-ը խոհական ընդհանրացում է պարունակում այն մասին, թե ինչպես է հնարավոր մարդուն հեռացնել իր բնական նկարագրից և բանական էությունից:

Հայ լեզվաբաններից ոմանք, հետևելով Ի. Ռ. Գալպերինի դասակարգմանը, գտնում են, որ տեքստը հիմնականում ներկայանում է «արտաքին կապերի մեջ տեքստ-պարբերություն կաղապարով, իսկ ներքին կապերը

⁶ **Հրանտ Մաթևոսյան**, Երկեր երկու հատորով, հ. 1, Երևան, 1985, էջ 42-43:

⁷ **Եղիշե Չարենց**, Հատընտիր, Երևան, «Սովետական գրող», 1987, էջ 11:

գործում են պարբերություն-նախադասություն (պարբերություն) ոլորտում»⁸, և եզրակացնում, որ տեքստակազմիչ գործոնների մեջ դեր են խաղում հնչե-րանգը, բառերի դասավորությունը կամ շարահյուսությունը և այլն, բայց տեքստի «լեզվաբանության ամենահարմար օղակը նախադասությունն է... Կարևոր օղակներից է շարույթը, որը տեքստի քերականական կառուցվածքում խաղում է իմաստակիր նվազագույն միավորի դերը»⁹:

Որոշակի խնդիրներ կապվում են պարբերության և, այսպես կոչված, վերֆրազային միասնության (ՎՖՄ. Сверхфразовое единство - СФЕ) հարաբե-րության հետ: Պարբերույթը (պարբերությունը) կամ ՎՖՄ-ն տեքստի իմաստա-կիր նվազագույն միավորն է, բայց տեքստի հաղորդած վերոնշյալ տեղեկա-տվություններն առնչվում են նաև տեքստի բնույթի հետ: Ոչ գեղարվեստական տեքստերում տեղեկատվությունը հիմնականում չեզոք է, և այնքանով, որ-քանով լեզուն նաև կող է, որտեղ հնչյունային, բառային, ձևաբանական, շարա-հյուսական նշան-նշանակները կազմակերպում են տվյալ տեղեկության հաղոր-դումը, այդքանով դեր են խաղում նաև կողի տարբերակները: Գիտության լեզվական կողի բոլոր տարատեսակների մեջ, կապված նաև մասնագիտու-թյան բնույթի հետ, կարևորը հաղորդագրությունն է, տրամաբանական ան-ցումն ու տեքստերի կանոնիկությունը: Նույնը որոշակիորեն՝ նաև պաշտո-նական տեքստերում, որտեղ ըստ էության առկա չէ զգացմունքային գնահա-տականը, կարևորը ԲՓՀ-ն է, պարբերույթները կամ ՎՖՄ-երը պետք է նոր տեղեկություն հաղորդեն:

Բերենք Մ.Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն»-ից երկու կից ՎՖՄ-երի սկիզբը.

«Նախնական հավաքքի մնացորդներից կարևոր է հիշել հեյրևյալը. հայերի մեջ մեռելների հոգիները և նրանց պաշտամունքը մոտիկ հարա-բերության մեջ են դրվել աստվերի հետ: Հավատում էին, թե ամեն մարդ ունի մի աստղ, որ խավարում է, երբ մարդ վրանգի մեջ է ընկնում...»

Կրոնական հավաքալիքների ու բանահյուսության գերապրուկային մնացորդներ են մեր ժամանակի հմայական աղոթքները, արեգակին ու լուսնին ուղղված և այլ աղոթքներ, սնահավաքական զրույցներից շարերը...»¹⁰:

Առաջին պարբերույթը հաղորդում է տեղեկատվություն հավատքային

⁸ Արամյան Ա. Մ., նշվ. աշխ., էջ 5:

⁹ Նույն տեղում, էջ 8:

¹⁰ Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 23-24:

կամ սնոտիապաշտական երևույթներից մեկի մասին, որի վերապրուկները շարունակվել են երկար ժամանակ: Երկրորդ պարբերության հաղորդումը, ուղղակի կապված լինելով առաջինի հետ, նոր ասելիք է բերում այն մասին, թե ինչպես են այդ պաշտամունքային երևույթներն արձագանքվում աղոթքների մեջ: Կարևորը փաստերի չեզոք տեղեկագրումն է և դրա շնորհիվ՝ գիտական ընդհանրացումը:

Գիտական խոսքի այդ առանձնահատկությունների հետ համեմատած այլ են գեղարվեստական տեքստի՝ որպես շարահյուսական միավորի, վերլուծության սկզբունքները, մանավանդ այստեղ պարբերությամբ՝ ՎՖՄ-ն՝ որպես տեքստի նվազագույն իմաստակիր միավոր, չի պահպանում կառուցվածքի և հաղորդման նույն հստակությունը, և լեզվաբանները ստիպված են լինում փնտրել նոր բնութագրիչներ: Գեղարվեստական խոսքում, ինչպես վերևում տեսանք, կարևոր են տեղեկատվության հաղորդման բոլոր երեք ձևերն էլ, այսինքն՝ բովանդակափաստայինն արժևորվում է հեղինակային գնահատմամբ կամ բովանդակադիրքորոշումային հաղորդմամբ, և խորքերը պարզվում են բովանդակաենթատեքստային հաղորդմամբ: Ահա թե ինչու այս տեքստերում զգալի են երկխոսական կառուցվածքն ու բազմաձայնությունը, քանի որ ենթատեքստային հաղորդումը կարող է լինել ոչ միայն իրադրական, այսինքն՝ բխեցվել տվյալ խոսքային իրադրությունից, այլև նմանաբանական-ասոցիատիվ, այսինքն՝ հաղորդման խորքը կարելի է պարզել այլ պատկերային զուգահեռով: Օրինակ՝ Պետրոս Դուրյանի «Լճակ»-ի հայտնի՝ «Հոն հրդեհ կա, ոչ մատյան» տողի ուղղակի զուգահեռը հիվանդ պատանու արտաքինի և մատյանի խաղաղ իմաստնության միջև ենթատեքստում ամբողջանում է թաքնված հրդեհի կամ ներքին պոռթկումի համադրությամբ:

Այսպես, ներտեքստային կապերը, պարբերության կամ նախադասության մեջ միասնականություն պահպանելով, միաժամանակ դրսևորման տարբեր ձևեր են ունենում, բայց դրանք հարուստ են լինում գեղարվեստական տեքստերում: Ըստ Գալպերինի՝ վերֆրազային միասնության տարբեր մասեր կարող են իրար հետ կապվել կանոնիկ շարահյուսական կապակցություններով՝ «ահա թե ինչու, այնպես-ինչպես, դրա հետ կապված, դրա պատճառով» և այլն՝ նշելով տրամաբանական անցումներ, կամ «նախ և առաջ, այնուհետև» և նման ձևերով ցույց տալով թվարկման կապը:

Ինքնին առաջանում է տեքստի անդամների, դրանց բաժանումների խնդիրը, որը ևս հեշտ չի արվում, քանի որ տեքստ է ինչպես սովորական տեղեկանքը, այնպես էլ գիտական կամ գեղարվեստական ծավալուն գիրքը, որի

ավանդական բաժանումներն են՝ մաս, գլուխ, ենթագլուխ, պարբերություն: Մանավանդ գեղարվեստական տեքստի մեջ դիտարկվում են այսպիսի կառուցվածքային բաժանումներ կամ բաղադրիչներ. «1. Հեղինակի խոսքը. ա) պատում, բ) բնության, հերոսի արտաքինի, իրավիճակի, գործողության տեղի և այլնի նկարագրություն, գ) հեղինակի դատողությունները. 2. Ուրիշի խոսք. ա) երկխոսություն, բ) մեջբերում. 3. Անուղղակի խոսք»¹¹: Խոսելով այսպիսի խնդիրների մասին՝ լեզվաբանը թեական հարցադրում է անում. «Կարող է հարց առաջանալ, թե այս կառուցվածքային ներտեքստային կապերը արդյո՞ք տեքստի քերականական կարգ են»¹², և չի փորձում հիմնավոր կամ կտրուկ պատասխան տալ, թեպետ հնարավորինս աշխատում է կատարել լեզվաբանական վերլուծություն: Այսպես, ներտեքստային կապերի մեջ նշելով «կոնտինում»-ը՝ որպես ժամանակային և տարածական բաժանում, տեղաշարժում, նշում է, որ այն «տեքստի կարևոր քերականական կատեգորիա է»¹³: Եվ այստեղ խոսվում է մանավանդ ժամանակների հետևառաջության, ներկայի և անցյալի հարաբերության, անցյալի ձևերով ներկա ժամանակի արտահայտության մասին, որոնք ընթերցողի մեջ անընդհատ շարժման զգացողություն են պահում:

Տեքստի լեզվաբանական հատկանիշներից է համարվում ռետրոսպեկցիան կամ ընթերցողի ուշադրությունը նախկինում ասվածի վրա կենտրոնացնելը, որի նպատակն է հիշողության մեջ վերականգնել նախկին փաստերը, հաղորդելով նորը՝ հնարավորություն տալ դրանք գնահատելու նոր իրավիճակում, դրանով այժմեականացնելով տեքստի տարբեր մասերի հաղորդումները: Մասնավորապես գեղարվեստական գրականության մեջ այս ներտեքստային կառուցվածքներն ու դրանց կապերը կարող են ներկայանալ հեղինակային միջամտությամբ կամ առանց դրա:

«Խենթը» վեպի սկզբում Րաֆֆին ներկայացնում է Բայազեդի պաշարումը, խենթի կերպարով Վարդանի դուրս գալը այդտեղից և ռուսական բանակ հասնելը, և այդ ամենից հետո արվում է հեղինակային ընդմիջարկում՝ «Անցնենք պատերազմից մի քանի տարի առաջ»¹⁴, որին հաջորդում են պատերազմից առաջ կատարված դեպքերը, ցուցադրվում են կերպարները, մարմնավորվում են հեղինակի գաղափարները: Այս ամենից հետո ժամանակների

¹¹ Гальперин И.П., նշվ. աշխ., էջ 52:

¹² Նույն տեղում, էջ 83:

¹³ Նույն տեղում, էջ 89:

¹⁴ Րաֆֆի, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 4, Երևան, 1984, էջ 165:

հետևառաջությունը կրկին տանելով դեպի պատերազմի սկիզբը և շարժման մեջ լարված պահելով ընթերցողի ուշադրությունը՝ Րաֆֆին անցումը կատարում է նույնպիսի հեղինակային միջամտությամբ. «*Դառնանք դեպի մեր պատմության սկիզբը*»¹⁵, և պատերազմի օրհասներն ավարտելով հերոսների ողբերգությամբ, Լալայի մահով՝ գրողը վեպն ավարտում է սիրած աղջկա գերեզմանին Վարդանի տեսած երազով, ուր պատկերվում է Հայաստանն ապագայում՝ 200 տարի հետո. «*Նա տեսնում էր ավերակ և անապատ դարձած Հայաստանը՝ այժմ բոլորովին կերպարանափոխված: Այդ ինչ հրաշալի փոփոխություն էր: Մի՞թե կորած դրախտը կրկին վերադարձել էր այդ երկրի վրա*»¹⁶:

Տեքստի լեզվաբանական քննությանը զուգահեռ, այսպիսով, անխուսափելի է նաև գրականագիտական անդրադարձը: Ակադ. Գ. Բ. Ջահուկյանը տեքստի՝ որպես շարահյուսական միավորի մասին խոսելիս պարբերությամբ կամ ՎՖՄ-ն կոչում է «տեքստեմա», որը, ըստ նրա, «երկպլան միավոր է, ի տարբերություն նախադասության, բնութագրվում է մեծ դադարով՝ մյուս տեքստեմաներից, և մեծ հնչերանգային ավարտվածությամբ»¹⁷: Տեքստեման ունենում է միջուկ և հարակից անդամներ, որոնք միջուկը՝ որպես իմաստային կենտրոն, կապում են նախորդ և հաջորդ տեքստեմաներին, ընդ որում՝ այդ կապը լինում է նկարագրական և տրամաբանական: Այս լեզվակառուցվածքային դիտարկումները տեքստաբանության մեջ անխուսափելի են դարձնում ոճաբանական վերլուծությունը ևս, մանավանդ գեղարվեստական խոսքի մեջ, որտեղ ներտեքստային անդամներն ու դրանց կապերը, հեղինակային անհատական ոճի առկայությամբ և կանոնիկության հաղթահարումով ոճական իրողությունների բացահայտման ավելի մեծ հնարավորություն են տալիս: Եթե լեզվի գրավոր ու բանավոր ամեն մի դրսևորում խոսք է, ապա «գեղարվեստական խոսքի ամենաբնորոշ առանձնահատկություններն են պատկերավորությունն ու հուզակալությունը»¹⁸: Այնտեղ առկա է նաև ոճական համադրությունը, կան խոսքի տարբեր տեսակներ՝ գիտական, պաշտոնական, հրապարակախոսական և բավականին զգալի՝ առօրյա:

Ինչպես տեքստաբանության ու լեզվաբանության, այնպես էլ ոճաբանության ու քերականության հարաբերությունները, ընդհանուր կողմերով հանդերձ, ունեն նաև առանձնահատուկ գծեր: Եզրակացնելով, թե քերականության

¹⁵ Նույն տեղում, էջ 353:

¹⁶ Նույն տեղում, էջ 411:

¹⁷ Джаукян Г.Б., նշվ. աշխ., էջ 201:

¹⁸ Արրահամյան Ս. Գ., Հայոց լեզվի բառ և խոսք, Երևան, 1978, էջ 55:

համար առաջնայինը, ելակետը բովանդակությունն արտահայտող ձևն է, իսկ ոճաբանության համար՝ լեզվի կիրառական տարրերությունը՝ երբեմն կտրուկ սահմանազատում է արվում. «Ոճաբանությունն ըստ էության սկսում է այնտեղից, որտեղ կանգ է առնում քերականությունը և բառագիտությունը»¹⁹:

Ոճը իրականում ընդգրկուն երևույթ է, համատեքստի լեզվամտածողական բնորոշիչը, ներառում է նաև բառագիտական (հոմանիշության, բազմիմաստության, նաև նույնանունության ու հականիշության դիտարկումներ) և քերականական շերտեր: Օրինակ՝ կարելի է քննել նաև շարահյուսական հոմանիշներ («Հոգիս անչափ անհանգիստ է» - «Հոգիս այլեկոծվում է») կամ ավելադրություններ («Ով տեսնում է, նա զարմանում է»): Ոճատեղծ հայտնի լեզվական միավորներ են նաև հնաբանությունները, նորաբանությունները, օտարաբանությունները, բարբառային բառերը և այլն: Որքան էլ գեղարվեստական խոսքի մեջ հաճախադեպ են նաև դարձվածքները, առածներն ու ասացվածքները, թևավոր խոսքերն ու շրջասույթները (նավթ-«սև ոսկի», մանկություն-«կյանքի արշալույս») և այլն, բայց և այնպես ոճի բառամտածողական ընդգրկումը, հաղորդակցական ու հուզական արտահայտչականությունը չպետք է սահմանափակել միայն վերոհիշյալ բառափմաստային շերտերով: Այդպիսի միտում կա հետևյալ ձևակերպումներում. «Ոճերը (իդիոմները) դարձվածաբանական արտահայտություններ են բառային միավորներ... Ոճերը փոխաբերական արտահայտություններ են»²⁰:

Վերանալով «Ոճը ինքը գրողն է» գրականագիտական մետաֆորային բնութագրից՝ նկատենք, որ լեզվաբանական առումով ևս ոճի և ոճաբանության սահմանները բավականին ընդգրկուն են, ներառում են բառաքերականական տարբեր շերտեր, լեզվական համատեքստի կառուցման սկզբունքներ, անգամ լեզվի պատմության տարբեր օրինաչափություններ: Ոճի արտահայտչականությունը դրսևորվում է «բառերի ճիշտ ընտրությամբ և տեղին օգտագործմամբ, ... բառերի հուզական բնույթով... ամբողջական և կուռ կոնտեքստով»²¹: Բացի բառապաշարի վերոհիշյալ շերտերի օգտագործումից (հնաբանություններ և այլն)՝ ավանդաբար պատկերավորության միջոցներ են համարվում համեմատությունը, մակդիրը, փոխաբերությունը, փոխանունությունը («Շեքսպիր է կարդացել»), չափազանցությունը, անձնավորումը («Գետակը թռչում է ու

¹⁹ Մելքոնյան Ս. Ա., Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1984, էջ 10:

²⁰ Վահանյան Գ., Հայոց լեզվի ոճաբանության ձեռնարկ, Երևան, 1956, էջ 53-54:

²¹ Նույն տեղում, էջ 77:

ճշում»), հակադրությունը, նաև ճարտասանական հարցը, աստիճանավորումը (գրադացիան) («-Մեռել ե՞ք, սատկել ե՞ք,- գոռաց նա»), էլիպսիսը՝ ինքնին հասկացվող բառերի բացթողումը («Ո՞վ է սպանել...Մոսի՞ն...ու՞մ... ուր.. //- Անուշ, հե՛յ Անուշ... ջուր հասցրեք, ջուր...»), կրկնությունը և այլն:

Հովհ. Թումանյանի՝ «Մի բառը մի աշխարհ է» ատյաթը բանաձևում է ոճի սեղմության, ճշտության, խորության, հուզականության ու խոհականության հատկանիշները, որոնք և ստիպել են նրան մշակել իր գործերը, նոր տարբերակներում կատարել կրճատումներ: Վերհիշենք ամենատիպական օրինակներից մեկը. «Անուշ»-ի նախնական տարբերակում սպանված Սարոն ընկալվում է որպես «կանաչ սարի լանջին» քնած և «սև յափնջին վրեն քաշած» տղա, նաև՝ որպես «լուռ, հոտած» դիակ: «Հոտած» բառի հոգեբանական ու գեղագիտական առումով ոչ տեղին գործածությունը Թումանյանը փոխել է, դարձրել «սառած», որտեղ արդեն կա նաև նեղացածության հոգեվիճակի արտահայտություն: Ցավոք, ակադեմիական հրատարակության 10-հատորյակի մեջ ևս սպրդել է նախնական տարբերակը՝ խախտելով համատեքստի ուժը. «Ախ, չէ, աման, ասում են դա // Մի դիակ է լուռ, հուրած»²²: Թումանյանի ոճին բնորոշ պարզությունը, բարբառային բառերի տեղին օգտագործումը երբեմն համադրվում են նաև հնաբանություններով, ոճավորման պահանջը ներառում է գրաբարյան ձևեր: Օրինակ բերենք վաղ շրջանում գրած «Ալեք» պոեմից. «Բայց թե ուժը յուր բազկի // Չէ գործ դնում չար ճամփի»²³: Մի այլ դեպքում, որպես ուրիշի խոսք ստորև բերվող հատվածում, գրաբարյան ընդմիջարկմանը հարադրվում են բարբառային բառեր.

Սովդաքար մարդիկ տեղ են աղաչում.

-Ղոնախ ենք գալիս Սևանա վանքին:

«Տէր, արժանի արա անհոգ

Ձերեկս զայս խաղաղութամբ

Եւ անփորձ անցր զմեք...»²⁴

Այժմ մի դիտարկում ևս՝ կապված ժամանակակից պատմավեպի լեզվաոճական ինչ-ինչ կողմերի հետ: Հայտնի է, որ Պերճ Զեյթունցյանը, առնչվելով արդի գրական հոսանքներին ու կերպարաստեղծման սկզբունքներին, միշտ հարազատ է մնում իր «չափավոր-ինտելեկտուալ» ոճին, անգամ

²² Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1989, էջ 108:

²³ Նույն տեղում, էջ 27:

²⁴ Հովհ. Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1990, էջ 196:

պատմավեպում չի դիմում հնաբանությունների, շարադասության շրջունության, որոնք անցյալի կոլորիտ ու ոճավորում ստեղծելու ընդունված միջոցներ են: «Արշակ Երկրորդ» վեպում հայոց արքայի՝ պատմական ու հոգեբանական բարդ շերտեր ունեցող կերպարը ներկայացնում է Արշակավանի կառուցման և Փառանձեմի հետ ամուսնության դրամատիկ իրավիճակներում: Պատմագեղարվեստական տեքստը ներառում է գիտական խոսքի տարրեր, որը բովանդակափաստային հաղորդումն է՝ ԲՓՀ-ն. «Կոզովիդը, որի փարածքը մեծ մասամբ ճահճապար էր, սահմանափակված էր բնական արգելազծերով՝ լեռներով: Գավառը հայտնի էր իր Դարոյնք բերդով, որը գտնվում էր Թավրիզից դեպի Կարին փանող և Այրարատյան աշխարհը Արածանիի հովտի հետ միացնող ճանապարհների խաչմերուկում»²⁵: Փաստի չեզոք հաղորդումը, գիտական ոճի օբյեկտիվ չափավորությամբ, այնուհետև այս տեղանքում կառուցվող քաղաքի պատկերավոր-խոհական ընկալումներով հիմք է տալիս բովանդակադիրքորոշումային հաղորդման՝ ԲԴՀ-ի, որի հեղինակային գնահատականը բնապատկերից անցնում է կառուցումին՝ «ապահով» և «անհեթեթ» բառափմաստային հակադրությամբ նախապատրաստելով տեղեկատվության երրորդ տեսակը. «Հայը նայում է լեռներին և ապահով զգում իրեն...Բայց քաղաքի այս քառուսի մեջ՝ ամենաբարձր բլրի վրա, երևում է մի անհեթեթ գեղեցկություն՝ այրնազարդ երկհարկանի պալատը: Անհեթեթ էին նրա պնդությունը, նրբակերպությունը»²⁶: Ապահով ազատության ու քառուսի համադրությունը բոլոր ժամանակներին բնորոշ խորքային դիտարկումների հիմք է տալիս, և երրորդ՝ բովանդակաանթատեքստային հաղորդումը՝ ԲԵՀ-ը, թույլ է տալիս հեղինակին բացել ենթատեքստի շերտերը. «Մեղքն իր լայն թևերը փռել է անասրված ու անօրեն քաղաքի վրա, որտեղ ոչ մի եկեղեցի չի կառուցված դեռ և չի էլ կառուցվի, պաշտպանում, նրա հովանու փակ է առնում նրա գաղտնիքները, թեթև դողեր ու սարսուռներ սփռում չորս կողմը»²⁷: Հաղորդումների այս երկրորդ և երրորդ ձևերում ակնհայտ են գեղարվեստական ոճի տարրերը, պատկերավորությունն ու հուզականությունը, որոնք հստակվում են նաև տեքստի կառուցվածքային առանձնահատկություններով:

Այսպիսով, եթե տեքստաբանության խնդիրն է կառուցվածքի ու տեսակի, հաղորդումների ձևերի, պարբերությունների կապերի և հաղորդած

²⁵ Պերճ Զեյթունցյան, Արշակ Երկրորդ, Երևան, 1977, էջ 134:

²⁶ Նույն տեղում, էջ 137:

²⁷ Նույն տեղում, էջ 141:

իմաստների ընդհանուր օրինաչափությունների բացահայտումը, ապա ոճաբանությունը հետամուտ է տեքստի արտահայտչական միջոցների, դրանց ոճական շերտերի ու ընդգրկումների պարզաբանմանը: Բոլոր դեպքերում լեզվաբանական հիմունքը շարահյուսական կառույցն է, որտեղ նախադասությունը հանդես է գալիս հաղորդակցական և հուզարտահայտչական տարբեր դրսևորումներով՝ տեքստային իմաստակիր նվազագույն միավոր դարձնելով վերֆրազային միասնությունը՝ ՎՖՄ-ն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեքստը ավարտուն գրավոր փաստաթուղթ է, որն ունի վերնագիր, առանձնահատուկ կառուցվածքային միավորներ, որոնք կապված են բառային, քերականական, ոճական հատկանիշներով և ունեն գործնական նպատակադրում: Տեքստի բովանդակային մասը կրում է երեք տեսակի տեղեկատվություն. բովանդակափաստային, բովանդակադիրքորոշումային, բովանդակաենթատեքստային, որոնք ավելի հստակ են արտահայտված գեղարվեստական տեքստերում: Տեքստի նվազագույն շարահյուսական իմաստակիր միավորը վերֆրազային միասնությունն է կամ պարբերայթը, որի շարահյուսական և ոճական առանձնահատկությունները տեքստը դարձնում են լեզվաբանական կարգ: Հոդվածում այս ամենը ցուցադրվում է որոշակի օրինակներով:

Բանալի բաներ – տեքստ, բովանդակափաստային հաղորդում, բովանդակադիրքորոշումային հաղորդում, բովանդակաենթատեքստային հաղորդում, ոճական առանձնահատկություններ:

ТЕКСТ КАК СИНТАКСИЧЕСКАЯ ЕДИНИЦА

ТАТЕВИК САФАРЯН

Текст – это завершённый письменный документ, который имеет заголовок, особые структуральные единицы, связанные лексическими, грамматическими, стилистическими признаками, имеющими прагматическую целенаправленность. Содержательная часть текста несёт информацию трёх видов: содержательно-фактуальную, содержательно-концептуальную, содержательно-подтекстовую, которые ярко выражены в художественном тексте. Минимальная значимая синтаксическая единица текста – это сверхфразовое единство, синтаксические и стилистические особенности которого делают

текст лингвистической категорией. Все это показывается в статье на конкретных примерах.

Ключевые слова – текст, содержательно-фактуальная информация, содержательно-концептуальная информация, содержательно-подтекстовая информация, стилистические особенности.

TEXT – A SYNTACTICAL UNIT

TATEVIK SAFARYAN

A text is a completed written document having a title and special structural items interconnected with lexical, grammatical and stylistic characteristics with functional objectives. The content of a text has three kinds of meanings: content-factual, content-conceptual and content-contextual. These are more precisely and explicitly expressed in literary texts. The minimum semantic unit of a text is the super-phrasal unity or the supra-sentential construction, the syntactical and stylistic peculiarities of which turn a text into a linguistic category. These are entirely presented in definite examples in this paper.

Key word – text, content-factual meaning, content-conceptual meaning, content-contextual meaning, stylistic peculiarities.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅԱՆ և ԹՈՒՐԲԻԱՅԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԹՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ 1878-1944 ԹԹ.

ՎԱՂԱՐՇԱԿ ՀԱԿՈՐՅԱՆ

XIV դարից մինչև XIX դարի վերջը Բուլղարիան Օսմանյան կայսրության մաս էր կազմում՝ կրելով օսմանյան տիրապետության ողջ ծանրությունն ու դժվարությունները: Դարեր շարունակ օսմանյան տիրապետությունը նվաճված տարածքներում ամրապնդվում էր ոչ միայն ռազմական ներկայությամբ, այլ նաև օսմանյան սուլթանները գրավված շրջաններում իրականացնում էին թուրքերի և այլ մուսուլմանների բնակեցում՝ այդ կերպ փորձելով ստանալ նաև դեմոգրաֆիկ առավելությունը: Այս տեսանկյունից բացառություն չէր նաև Բուլղարիան, որտեղ դարեր շարունակ մեծ թվով թուրքեր և այլ մուսուլմաններ էին բնակեցվում, ինչի արդյունքում փոխվում էր տեղի ազգագրական պատկերը: Դարերի ընթացքում մեծ թվով թուրքական ցեղեր Բուլղարիա էին անցնում Փոքր Ասիայի թուրքական տիրապետության տարածքներից՝ շարունակաբար ավելացնելով թուրքական ներկայությունը Բալկաններում ընդհանրապես և Բուլղարիայում մասնավորապես¹: 1859-66թթ. հյուսիսկովկասյան ժողովուրդների և ցեղերի՝ Օսմանյան կայսրության զանգվածային գաղթի ընթացքում Բուլղարիայի տարածքում բնակեցվեցին զգալի թվով հյուսիսկովկասցիներ, որոնք օգտագործվեցին Օսմանյան կայսրության կողմից բուլղարական ապստամբության ճնշման ժամանակ, մասնավորապես 1876թ. Ֆիլիպուպոլի (Պլովդիվ) կոտորածն իրականացվեց չերքեզների ձեռքով²:

1876 թվականին Բուլղարիայում սկիզբ առած հակաթուրքական շարժումն արագ ընդգրկեց ոչ միայն բուլղարաբնակ տարածքները, այլև անցավ Օսմանյան կայսրության այլ շրջաններ:

¹ Zhelyazkova A., Islamization in the Balkans as a Historiographical Problem: the Southeast-European Perspective, The Ottoman Empire and its Heritage Politics, Society and Economy, V. 25, Brill, 2002, pp. 229-231.

² История дипломатии, т.1. Москва, 1959, с. 648.

1876 թվականի ապրիլին օսմանյան զորքերը դաժանորեն ճնշեցին բուլղարական ընդվզումը, ինչն առաջ բերեց եվրոպական մի շարք երկրների և Ռուսաստանի բողոքը, որոնք սպառնացին միջամտել³:

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի արդյունքում Բուլղարիան Օսմանյան կայսրությունից կախյալ իշխանություն ստեղծեց, որն ուներ ինքնավարության բավական բարձր մակարդակ:

1878 թվականի մարտին կայացած Սան Ստեֆանոյի կոնֆերանսի արդյունքներով Ռուսական կայսրության միջամտությամբ Բուլղարիան ավելի մեծ հողային տարածքներ ստացավ: Սակայն պայմանագրի վերանայման նպատակով Բեռլինում հրավիրվեց վեհաժողով (1878 թ. հունիս - հուլիս), որին մասնակցում էին Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի և Օսմանյան կայսրության պատվիրակությունները:

Վեհաժողովի աշխատանքները Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկի նախագահությամբ սկսվեցին 1878 թ. հունիսի 1-ին⁴: Որպես վեհաժողովի աշխատանքների եզրափակիչ փաստաթուղթ՝ 1878 թ. հուլիսի 1-ին ընդունվեց Բեռլինի պայմանագիրը, որի 1-22-րդ հոդվածները վերաբերում էին Բուլղարիային⁵: Մեծ Բուլղարիան, որը նախատեսված էր ստեղծել Սան Ստեֆանոյի պայմանագրով, Բեռլինի պայմանագրի համաձայն, բաժանվեց երկու մասի: Հյուսիսային Բուլղարիան ճանաչվեց որպես ինքնավար պետություն՝ սուլթանի ինքնիշխանության ներքո, իսկ Մակեդոնիան ամբողջապես վերադարձվեց Օսմանյան կայսրությանը: Պայմանագրի համաձայն՝ երկիրը կառավարող քրիստոնյա իշխանի ընտրությունը, որը պետք է իրականացներ եվրոպական որևէ մեծ տերություն, հաստատվելու էր Ռուսաստանի և Բ. Դռան կողմից՝ վեհաժողովի մասնակից պետությունների պարտադիր համաձայնությամբ⁶: Ինչ վերաբերում է Հարավային Բուլղարիային, ապա այն, ստանալով Արևելյան Ռումելիա անունը, կրկին դրվեց սուլթանի իշխանության տակ, պայմանով, որ պետք է կառավարվի Բ. Դռան կողմից հաստատված քրիստոնյա-

³ **Bishku, M. B.**, Turkish-Bulgarian Relations: From Conflict and Distrust to Cooperation, Mediterranean Quarterly, V. 14, № 2, 2003, p. 78.

⁴ История дипломатии, т. 2, Москва, 1941, с. 129.

⁵ **Ключников Ю, Сабанин А.** Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 1, М., 1925, сс. 226-227.

⁶ **Shaw S. J., Shaw E. K.**, History of the Ottoman Empire and Modern Turkey, V. 2, New York, 2005, p 190.

ներից ընտրված գեներալ նահանգապետի կողմից⁷: Այսպիսով, Բեռլինի կոնֆերանսի արդյունքներով բուլղարական կողմին հատկացվելիք տարածքները զգալի կրճատվեցին, ինչը հնարավոր դարձավ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Մեծ Բրիտանիայի ճնշման ներքո, որոնց անհանգստացնում էր Ռուսական կայսրության հզորացումն ու ազդեցության տարածումը նաև Բալկանյան թերակղզում⁸:

Հաջորդ տարիներին, թեև իրավական տեսանկյունից բուլղարական իշխանությունը Օսմանյան կայսրության մաս էր կազմում, սակայն իրականում գործում էր որպես անկախ պետական կառույց, և օսմանյան կենտրոնական իշխանություններից կախվածությունը գրեթե նվազագույնի էր հասցված, իսկ ներքին հարցերում օսմանյան վերահսկողությունը գրեթե բացակայում էր⁹:

Բուլղարիայի ինքնավարության հաստատումից հետո երկրի թուրք բնակչությունը, որը հոծ խմբերով Բուլղարիայում էր հաստատվել XV-XVI դարերում Անատոլիայում սոցիալական տեղաշարժերի, ինչպես նաև Օսմանյան պետական քաղաքականության արդյունքում և մինչև ռուս-թուրքական պատերազմը գերիշխող դերակատարություն ուներ երկրի քաղաքական և պետական կյանքում, հայտնվեց փոքրամասնության կարգավիճակում¹⁰:

Օսմանյան կայսրության տիրապետության ավարտից հետո Բուլղարիան միջազգային մի շարք պայմանագրերով, մասնավորապես Բեռլինի պայմանագրով, պարտավորվեց ճանաչել և հարգել երկրի թուրք և այլ մուսուլման բնակչության քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Ստանձնելով միջազգային պայմանագրերով նախատեսված թուրք բնակչության իրավունքների պաշտպանությունը՝ ինքնավար Բուլղարիայի իշխանություններն իրականացրին մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին թուրքերի ներհամայնքային խնդիրների բարելավմանը: Մասնավորապես պետության աջակցությամբ իրենց գործունեությունը շարունակում էին կրոնական մուսուլմանական դատարանները, կրոնական, մշակութային կառույցները: Այդ տարիներին պետական գանձարանից ֆինանսավորում էին ստանում 12 մուսուլմանական մուֆթի: 1885 թ. ընդունվեց օրենք, որով ինքնավարություն էր տրվում թուրքական կրթական հաստատություններին: Այն թույլ տվեց պահպանել թուրքա-

⁷ Bayur Y. H., Türk İnkilâbi Tarihi, C. 1, k.1, Ankara, 1991, s. 3.

⁸ Bishku M. B., նշվ. աշխ., էջ 78:

⁹ Tümenoğlu, R., նշվ. աշխ., էջ 3, www.balgoc.org.tr/bilgi/ataturkdonemi.doc

¹⁰ Can T., Stilyanov Todorov M., Turks of Bulgaria: Assimilation Policy and Linguistic Oppression, <http://168.144.64.30/turksobulgaria.htm>

կան դպրոցների գործունեությունը, որտեղ ուսուցումն իրականացվում էր թուրքերենով: XX դարի սկզբին նման դպրոցների թիվը Բուլղարիայում հասնում էր մոտ 1300-ի¹¹:

1908 թվականի հուլիսի 23-ին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցավ երիտթուրքական հեղաշրջումը, իսկ աշնանը Բուլղարիան հռչակեց իր անկախությունն Օսմանյան կայսրությունից և դարձավ անկախ թագավորություն¹²:

1909թ. ապրիլի 19-ին Ստամբուլում Օսմանյան կայսրության և Բուլղարիայի միջև կնքվեց համաձայնագիր, որով Օսմանյան կայսրությունը ճանաչեց Բուլղարական թագավորության անկախությունը, իսկ վերջինս երաշխավորեց Բուլղարիայում բնակվող թուրքերի և մյուս մուսուլմանների կրոնական ու քաղաքացիական ազատությունները¹³:

Աբդուլ Համիդ II սուլթանի օրոք տարվող պանիսլամիզմի գաղափարախոսությանը փոխարինելու եկավ երիտթուրքերի օրոք զարգացում ապրող պանթուրքիզմի գաղափարախոսությունը, որն իր սաղմերը սկսել էր տալ XIX դարի վերջին¹⁴:

Մինչև 1908 թվականի հեղաշրջումն էլ երիտթուրքերն ակտիվորեն աշխատում էին Բուլղարիայում՝ փորձելով սեփական գաղափարները տարածել: Այսպես, 1906 թվականին Բուլղարիայում ստեղծվեց «Բուլղարիայի իսլամական ուսուցիչների միություն» կազմակերպությունը, որը համախմբում էր ոչ միայն թուրք և այլ մուսուլման ուսուցիչների, այլ նաև տարբեր մտավորականների: Ի դեպ, այս կազմակերպության անդամների զգալի մասն Աբդուլ Համիդ II սուլթանի կառավարության հակառակորդներն ու այլախոհներն էին: «Բուլղարիայի իսլամական ուսուցիչների միություն» կազմակերպությունն ավելի ակտիվացրեց գործունեությունը Բուլղարիայի թուրքերի շրջանում երիտթուրքական հեղաշրջումից հետո¹⁵:

Բացի դրանից, երիտթուրքերը հեղաշրջումից հետո մտադրություն

¹¹ **Marushiakova E., Popov V.**, Muslim Minorities in Bulgara, p. 5, <http://www.balkanethnology.org/files/library/E%20&%20V/Muslims.pdf>

¹² **Sönmezoglu F.**, Türk Dış Politikasının Analizi, İstanbul, 2001, s. 35.

¹³ **Şimşir B.**, Bulgatistan Türkleri (1878-2008), Ankara, 2009, s. 58.

¹⁴ **Landau J. M.**, Pan-Turkism: From Irredentism to Cooperation, Indiana University Press, 1995, p. 25.

¹⁵ **Karadjov A.**, The Turkish minority in Bulgaria and the “Revival process”: The construction of a political minority”, CEA, Nationalism and Religious Studies, Budapest, 2011, p. 58.

ունեին Բուլղարիայում բացել «Միություն և առաջադիմություն» (թուրք.՝ İttihat ve terakki) կոմիտեի ներկայացուցչություն, ինչը հետագայում պետք է վերածվեր Բուլղարիայում գործող կուսակցության և գործեր ներքին քաղաքական դաշտում: Երիտթուրքերը նախատեսում էին իրենց կենտրոնը հիմնել Շումենում¹⁶:

1913 թվականի սեպտեմբերին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կոնգրեսի ժամանակ առաջնահերթությունը տրվեց պանթուրքիզմի գաղափարախոսությանը, որն էլ սկսեց առավել ակտիվորեն կիրառվել Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության մեջ, ինչն ուղղակի ազդում էր նաև Բուլղարիայի և այդ երկրում ապրող թուրքական տարրի հետ հարաբերությունների վրա¹⁷:

Այս ընթացքում Բուլղարիային չէր բավարարում միայն անկախությունը, այլ նա ցանկանում էր նոր տարածքներ նվաճել, այդ թվում՝ նաև ի հաշիվ Օսմանյան կայսրության: Այս ամենի արդյունքում էլ 1912 թվականի մայիսի 8-ին սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը, որտեղ պայքարի մի կողմում Բուլղարիան, Սերբիան, Չեռնոգորիան և Հունաստանն էին (Բալկանյան միությունը), մյուս կողմում՝ Օսմանյան կայսրությունը: Բուլղարիան անկախության տարիներին կարողացել էր ստեղծել բալկանյան նորանկախ պետությունների մեջ ամենաուժեղ զինված ուժերը, ինչն էլ մեծ դեր խաղաց բալկանյան պետությունների հաջող ռազմական գործողությունների տեսանկյունից:

1913 թվականի մայիսի 30-ին պատերազմն ավարտվեց Բալկանյան միության հաղթանակով, ինչի արդյունքում Օսմանյան կայսրության տարածքից շուրջ 167.000 կմ² անցավ Բալկանյան միությանը, որից զգալի մասը բաժին հասավ Բուլղարիային: Պատերազմի ընթացքում անգամ վտանգ կար, որ բուլղարացիները կարող են գրավել կայսրության մայրաքաղաք Ստամբուլը:

Առաջին բալկանյան պատերազմի արդյունքներով կայացավ Լոնդոնի կոնֆերանսը, որի ժամանակ էլ հաղթանակած կողմերը բաժանեցին Օսմանյան կայսրությունից իրենց անցած տարածքները¹⁸: Օսմանյան կայսրության և Բուլղարական թագավորության միջև սահման ընդունվեց Միդիա-Ենոս գիծը, ինչը բուլղարական տարածքներն ընդհուպ մոտեցնում էր մայրաքաղաք Ստամբուլին¹⁹:

¹⁶ Bayur Y. H., Türk İnkilabi Tarihi, C. 2, İstanbul, 2000, s. 110.

¹⁷ Նշվ. աշխ., էջ 410:

¹⁸ Sönmezoglu F., նշվ. աշխ., էջ 45:

¹⁹Նույն տեղում:

Առաջին բալկանյան պատերազմի արդյունքում Բուլղարիան կարողացավ իր տարածքներն ավելացնել մի քանի տասնյակ հազար կմ², իսկ այդ պետությանն անցան օսմանյան տիրապետության տակ գտնվող Ադրիանապոլիս (Էդիրնե) և Քրքրալերին (Լոզենգրադը):

Այսպիսով, Բուլղարիային անցավ ոչ միայն պատկառելի հողային տարածք, այլ նաև այդ տարածքի բնակչությունը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում թուրքերն ու այլ մուսուլմաններ: Օսմանյան կայսրությունն այս ընթացքում չկարողացավ օգտագործել Բուլղարիայում բնակվող մեծաթիվ թուրքալեզու փոքրամասնության ներուժը՝ կանխելու լրջագույն տարածքային կորուստները, որոնք լուրջ հարված էին «հիվանդ» կայսրությանը:

Այնուամենայնիվ, թեև Բալկանյան միությունը կարողացավ հաղթանակ տոնել, սակայն հետագայում Միության մաս կազմող պետությունների միջև սկսվեցին լուրջ տարածայնություններ՝ կապված գրավված տարածքների վերաբաժանման հարցի հետ: Առկա տարածայնություններն էլ Երկրորդ բալկանյան պատերազմի պատճառ դարձան, որը, սակայն, հիմնականում վնասեց բալկանյան պետություններին (գերագանցապես Բուլղարիային), ինչից էլ օսմանյան կողմը կարողացավ որոշակի օգուտներ քաղել և վերադարձնել հողերի մի մասը, որոնք Բալկանյան առաջին պատերազմի արդյունքով անցել էին բալկանյան պետություններին:

Երկրորդ բալկանյան պատերազմը սկսվեց հունիսի 29-ին: Ռազմական գործողությունների ժամանակ այս անգամ թիրախն արդեն Բուլղարիան էր, որի դեմ դուրս էին եկել նախկին դաշնակիցներ Սերբիան, Հունաստանն ու Չեռնոգորիան: Ստեղծված իրավիճակից շտապեցին օգտվել նաև Օսմանյան կայսրությունն ու Ռումինիան: Թուրքական կողմը կարողացավ գրավել Առաջին բալկանյան պատերազմի ժամանակ Բուլղարիային զիջած տարածքները՝ հետ գրավելով նաև կարևոր նշանակություն ունեցող Էդիրնե քաղաքը:

1913 թվականի օգոստոսի 10-ին Բալկանյան երկրորդ պատերազմի արդյունքներով ստորագրվեց Բուխարեստի պայմանագիրը, որով Բուլղարիան պաշտոնապես կորցրեց Էդիրնեն, որն անցավ Օսմանյան կայսրությանը:

Նույն թվականի սեպտեմբեր ամսին առանձին պայմանագիր կնքեցին նաև Օսմանյան կայսրությունն ու Բուլղարիան, իսկ փաստաթղթում հատուկ տեղ էր հատկացվում նաև Բուլղարիայի թուրք փոքրամասնության խնդիրներին²⁰: Օսմանյան կայսրությունը մի քանի ամիս բուլղարական վերահսկողու-

²⁰ Tümenoğlu R., նշվ. աշխ., էջ 8:

թյան տակ գտնված տարածքների հետ իրեն վերադարձրեց նաև տեղի բնակչությանը, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում էթնիկ թուրքերը:

Երկրորդ բալկանյան պատերազմից հետո՝ 1913 թվականի սեպտեմբերի 29-ին, Բուլղարական թագավորության և Օսմանյան կայսրության միջև Ստամբուլում պայմանագիր կնքվեց, որով երկու պետությունների միջև որպես սահման հաստատվեց Մարիցա գետը, Էդիրնեն և Քըրքլարեյին անցան Օսմանյան կայսրությանը, իսկ Արևմտյան Թրակիան՝ Բուլղարիային: Կարևոր էր այն, որ Ստամբուլի պայմանագրով անդրադարձ կար նաև երկու երկրների բնակիչների փոխանակման հարցին: Փաստաթղթում հատուկ տեղ էր հատկացվում նաև Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության խնդիրներին²¹:

Մասնավորապես պայմանագրով թույլատրվում էր Բուլղարիայում բնակվող մուսուլմաններին առաջիկա 4 տարիներին սեփական կամքով ազատորեն տեղափոխվել Օսմանյան կայսրություն, իսկ իրենց բնակավայրերում մնալ ցանկացող մուսուլմանները պետք է ստանային դավանանքի ազատություն և այլ իրավունքներ²²:

Օսմանյան կայսրությունը Երկրորդ բալկանյան պատերազմի ընթացքում և արդյունքներում մշտապես ակտիվորեն օրակարգ էր բերում Բուլղարիայի մուսուլման փոքրամասնության իրավունքների թեման:

Օսմանա-բուլղարական պայմանագրերով նախատեսվում էր Բուլղարիայի մուսուլման բնակիչներին ընձեռել իրավունքների ավելի լայն շրջանակ, մասնավորապես կրոնական հարցերում²³: Թեև համաձայնագրերում այս ամենը պաշտոնապես արձանագրված էր, սակայն իրականում դրանց կյանքի կոչումը բավական բարդ էր ընթանում և հանդիպում էր Բուլղարիայի տարբեր ղեկավար օղակների դիմադրությանն ու դժգոհությանը:

Թուրքիան փորձում էր օգտագործել Արևմտյան Թրակիայի թուրքալեզու բնակչության գործոնը, այս տարածքում իր քաղաքականությունն ավելի ակտիվ կյանքի կոչելու համար: Այս տրամաբանության շրջանակներում էր Երկրորդ բալկանյան պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակում Արևմտյան Թրակիայի տարածքում բնակվող թուրքերը ստեղծեցին սեփական անկախ պետությունը, որը պատմագրության մեջ հայտնի է Արևմտյան Թրա-

²¹ Նշվ. աշխ., էջ 8:

²² **Sönmezöglü F.**, նշվ. աշխ., էջ 46:

²³ **Lütem Ö. E.**, The Past and Present State of the Turkish – Bulgarian Relations, <https://strategicanalysis.wordpress.com/2006/10/03/the-past-and-present-state-of-the-turkish-bulgarian-relations/>

կիայի թուրքական հանրապետություն (այլ անվանմամբ Գյումուլքինայի Հանրապետություն) կամ Արևմտյան Թրակիայի անկախ կառավարություն անվանումներով, իսկ այս կազմավորման մայրաքաղաքը Կոմոտինին էր²⁴: Այս տարածքում ապրող թուրքերն անկախություն հռչակեցին 1913 թվականի օգոստոսի 31-ին, սակայն շուրջ 56 օր անց ինքնահռչակ կառավարությունը դադարեց գոյություն ունենալ: Ինքնահռչակ պետությունն ուներ սեփական զինված ուժերը, որի թվաքանակը կազմում էր շուրջ 30 հազար մարդ, իսկ թուրքալեզու զինվորներից կազմված զինուժը գլխավորում էր Սուլեյման Ասքերին, որը հետագայում դարձավ «Հատուկ կազմակերպության» առաջին ղեկավարը:

Օսմանյան կայսրությունն անմիջական մասնակցություն ունեցավ այս կազմավորման ստեղծման գործում, մասնավորապես Արևմտյան Թրակիայի անկախ կառավարությունն անմիջական կապեր ուներ էնվեր փաշայի հիմնադրած և ղեկավարած «Հատուկ ծառայության» (թուրք.¹ *Teskilât-i Mahsusa*) հետ²⁵:

Օսմանյան կայսրությունը պաշտոնապես չէր ճանաչում ինքնահռչակ պետական կազմավորման անկախությունը, սակայն գաղտնի կազմակերպությունների միջոցով դրա ստեղծումն ու այն իր ազդեցության տակ պահելը պայմանավորված էր նաև Բուլղարիայի դեմ իրականացվող քաղաքականությունը: Օսմանյան կայսրությունն ինքնահռչակ այս պետության միջոցով փորձում էր կանխել այս տարածքի անցումը Բուլղարիային, ինչը ենթադրում էր Երկրորդ բալկանյան պատերազմի արդյունքներով ստորագրված Բուխարեստի համաձայնագիրը: Այսպիսով, ակնհայտ էր, որ օսմանյան կառավարությունը փորձում էր օգտագործել ինչպես տեղի թուրք, այնպես էլ այլ մուսուլման բնակիչներին՝ սեփական խնդիրները լուծելու և Բուլղարիայի դեմ իր քաղաքականությունն իրականացնելու համար:

Այս իրադարձությունների ժամանակ ինչպես XIX դարի վերջին, այնպես էլ XX դարի առաջին տասնամյակներին Բուլղարիայի տարածքում բնակվող շատ թուրքեր նախընտրեցին տեղափոխվել Ստամբուլ և Օսմանյան կայսրության այլ տարածքներ, ինչը կապված էր ոչ միայն Բուլղարիայում քաղաքական

²⁴ Ինքնահռչակ պետության տարածքը կազմում էր շուրջ 8 000 քկմ: Այն տարածվում էր Էգեյան ծովի ափից մինչև Մարիցա և Մեստա գետերը: Բնակչությունը շուրջ 230 հազար էր, որի մեծ մասը մուսուլմաններ էին (թուրքեր, պոմակներ):

²⁵ **Stoddard Ph. H.**, *The Ottoman Government and the Arabs, 1911 to 1918: a Preliminary Study of the Teskilât-i Mahsusa*, Princeton University, 1963, p. 53.

տրամադրությունների, այլ նաև այդ երկրում առկա տնտեսական գործոնների հետ²⁶:

Առաջին աշխարհամարտի տարիներին Բուլղարիայի և Օսմանյան կայսրության միջև հաստատվել էին նախկինի համեմատ ավելի լավ հարաբերություններ, ինչը նախևառաջ կապված էր նույն ռազմաքաղաքական դաշինքի կազմում պատերազմելու հետ: Թուրք-բուլղարական հարաբերությունների նման ընթացքը դրական էր անդրադառնում նաև Բուլղարիայի էթնիկ թուրքերի վիճակի վրա²⁷: Հաշվի առնելով Օսմանյան կայսրության հետ դաշնակցային հարաբերությունները՝ բուլղարական ղեկավարությունը փորձում էր ավելի մեղմ քաղաքականություն իրականացնել բուլղարաթուրքերի հարցում:

Բուլղարիայի թուրք բնակչության իրավունքների պաշտպանության երաշխիքներն ամրագրվեցին Առաջին աշխարհամարտից հետո Բուլղարիայի կողմից ստորագրված Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի միջազգային և երկկողմ մի շարք պայմանագրերով: Մասնավորապես 1919 թ. նոյեմբերի 27-ին Փարիզի Նեյ-սյուր-Սյեն արվարձանում ստորագրված միջազգային պայմանագրով Բուլղարիան որպես Առաջին աշխարհամարտում պարտվող կողմ, պարտավորվում էր ապահովել իր երկրի բոլոր քաղաքացիների կյանքի և ազատությունների պաշտպանությունը՝ անկախ նրանց ծագումից, ազգությունից, ռասայից, լեզվից և կրոնից: Նեյի պայմանագրի 54-րդ հոդվածի 4-րդ մասով Բուլղարիայի ոչ բուլղարական ծագում ունեցող քաղաքացիներն իրավունք էին ստանում ունենալու և տնօրինելու իրենց կրոնական, հասարակական ու բարեգործական կազմակերպությունները, դպրոցներն ու այլ կրթական հաստատություններ, որտեղ ուսուցումը պետք է իրականացվեր իրենց մայրենի լեզվով²⁸:

Նեյի պայմանագրով ամրագրված երաշխիքները ներառվեցին Բուլղարիայի իրավական համակարգ: Հետևելով պայմանագրի դրույթներին՝ Բուլղարիայի կառավարության կողմից 1919 թ. ընդունվեց օրենք, որով երկրի թուրք բնակչությանը տրվում էր ինքնավարություն կրոնական, կրթական և մշակութային կյանքում, ինչպես նաև կատարյալ ազատություն ընտանեկան կյանքի բոլոր ոլորտներում²⁹:

²⁶ Bishku M. B., նշվ. աշխ., էջ 79:

²⁷ Tümenoğlu R., նշվ. աշխ., էջ 10:

²⁸ Ключников Ю, Сабанин А. Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. 2, М., 1926, с. 402.

²⁹ Eminov A., Turkish and Other Muslim Minorities in Bulgaria, London, 1997, pp. 49-50.

Այսպիսով, մինչև 1923 թ. Բուլղարիայի թուրք բնակչությունն ապրում էր առավել լիբերալ ժամանակաշրջան. խորհրդարանում էին մեկ տասնյակի չափ թուրք պատգամավորներ, վարչապետ Ալեքսանդր Ստամբոլիյսկու իրակա-նացրած քաղաքականության արդյունքում 1920-ական թթ. սկզբներին Շումե-նում հիմնվեց մուսուլմանական կրոնական քոլեջ, նմանատիպ քոլեջներ հիմն-վեցին նաև Սոֆիայում: Բուլղարիայի գրեթե բոլոր մուսուլմանական գյուղերում այդ տարիներին գործում էին առնվազն մեկ մզկիթ և բազմաթիվ մեդ-րեսեններ³⁰:

Իրադրությունը փոխվեց, երբ 1923 թ. հունիսի 9-ին Բուլղարիայում տեղի ունեցավ իշխանափոխություն, և Ալեքսանդր Ստամբոլիյսկու կառավարու-թյունը հեռացվեց: Նոր վարչակարգի օրոք վերացվեց նախորդ կառավարու-թյան կողմից թուրքական դպրոցներին հատկացվող 3 մլն լևա ֆինանսա-վորումը, սահմանափակվեց թուրքական ինքնավար դպրոցների թիվը: Նոր կառավարության օրոք թուրքերի մասնակցությունը երկրի քաղաքական կյան-քին հասցվեց նվազագույնի. 1925 թ. խորհրդարանում թուրք պատգամավոր-ների թիվը 10-ից իջավ 5-ի, իսկ 1933 թ.՝ 4-ի³¹:

Թեև Մուսթաֆա Քեմալի նախագահության առաջին տարիներին (1923-1938 թթ.) Բուլղարիայի և Թուրքիայի միջև լուրջ լարվածություն չարձանա-գրվեց՝ կապված տարածքային վեճերի և ռազմաքաղաքական տարաձայնու-թյունների շուրջ, սակայն ակնհայտ էին անհամաձայնությունները, որոնք վերաբերում էին Բուլղարիայում թուրքալեզու փոքրամասնությանը, ինչն էլ խնդիրներ էր ստեղծում երկու պետությունների միջև հարաբերություններում³²:

Անշուշտ, թուրք-բուլղարական հարաբերություններում տարաձայնու-թյունները չէին ավարտվում բուլղարաթուրքերի հիմնահարցերով, սակայն սրանք առավել ակներև խնդիրներից էին, որոնք էլ իրենց ազդեցությունն էին թողնում Անկարայի և Սոֆիայի քաղաքականության վրա:

Թուրքիայի Հանրապետության հռչակման հետ մեկտեղ երկրում աշ-խուժացան պանթյուրքիզմի գաղափարները, որոնք թուրքական իշխող շրջա-նակները փորձում էին տեղափոխել նաև Բուլղարիա:

1920-ական թվականներին Բուլղարիայում ակտիվ գործունեություն էր ծավալում թուրքական «Թուրան» կազմակերպությունը, որը Բուլղարիայի

³⁰ **Marushiakova E., Popov V.**, նշվ. աշխ., էջ 8, <http://www.balkanethnology.org/files/library/E%20&%20V/Muslims.pdf>

³¹ Նույն տեղում:

³² **Bishku M. B.**, նշվ. աշխ., էջ 80:

թյուրքալեզու փոքրամասնության շրջանում տարածում էր քեմալական ազգայնական գաղափարախոսությունը: Թեև կազմակերպությունը ստեղծվեց որպես մարզական կառույց, սակայն կարճ ժամանակում վերածվեց քաղաքականացված գաղափարական կառույցի՝ ակտիվ գործելով բուլղարաթուրքերի շարքերում³³: «Թուրանն» ակտիվորեն համագործակցում էր Անկարայի հետ՝ Բուլղարիայի թուրքերի շրջանում տարածելով քեմալիզմն ու թուրքական քաղաքականության այլ ուղղություններ: Կառույցը հրատարակում էր նաև նույնանուն «Թուրան» թերթը: Բացի այդ, Թուրքիայի Հանրապետության կառավարության քարոզչությունն էր իրականացնում «Դեյլիօրման» հանդեսը³⁴:

Այս ընթացքում Բուլղարիայում ստեղծվեցին նաև այլ թուրքական կազմակերպություններ, որոնք զբաղվում էին քեմալական գաղափարախոսության ակտիվ տարածմամբ, ինչը որոշակի անհանգստություն էր առաջ բերում Բուլղարիայում, որն էլ փորձում էր թուրքերի պահպանողական կառույցների միջոցով հակակշիռ ստեղծել Անկարայի ուղղակի ազդեցության արագ տարածման դեմ³⁵:

Ի պատասխան Բուլղարիայում քեմալիստական գաղափարախոսության տարածման՝ երկրի իշխանությունները ճնշում գործադրեցին բուլղարաթուրքերի նկատմամբ՝ նպատակ ունենալով ստիպել վերջիններիս կամ արտագաղթել Բուլղարիայից, կամ ձուլվել տեղի բնակչությանը: Այդ նպատակին էին ծառայում Բուլղարիայում գործող մի շարք հայրենասիրական կազմակերպություններ, որոնց մեջ աչքի էր ընկնում իշխանությունների գաղտնի հովանավորությամբ գործող «Հայրենիքի ազատություն» կազմակերպությունը³⁶:

Քեմալական կառավարությունը սկսեց Բուլղարիային մեղադրել ազգային փոքրամասնությունների հարցում բռնությունների և ճնշումների քաղաքականություն իրականացնելու համար: Բուլղարիայում լույս տեսնող թուրքական թերթերը քննադատում էին բուլղարական իշխանության՝ թուրքական դպրոցներում բուլղարացի վերահսկիչներ նշանակելու, ինչպես և փոքրամասնությունների դպրոցներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը կրճա-

³³ Karadjov A., նշվ. աշխ., էջ 58-59:

³⁴ Can T., Stilyanov Todorov M., Questioning Diglossia of the Language of Turks of Bulgaria, Syracuse 2005, <http://168.144.64.30/diglossia.htm>

³⁵ Karadjov A., նշվ. աշխ., էջ 59:

³⁶ Marushiakova E., Popov V., նշվ. աշխ., էջ 8, <http://www.balkanethnology.org/files/library/E%20&%20V/Muslims.pdf>

տելու որոշումները³⁷: Բուլղարաթուրքերի շրջանում դժգոհություն առաջ բերեց նաև 1928 թվականին ներկայացված Բուլղարիայի քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը, որով նախատեսվում էր ամուսնությունների, ապահարզանի և կտակի վերաբերյալ գործերը հանձնել բուլղարական քաղաքացիական կառույցներին, այլ ոչ մուֆթիներին, որոնք մինչ այդ զբաղվում էին նման հարցերով³⁸: Սա փաստորեն նշանակում էր մոաուլման հոգևոր առաջնորդների իրավասությունների և կարգավիճակի սահմանափակում. քաղաքականապես չկազմակերպված թուրք փոքրամասնության շրջանում հենց մուֆթիներն էին ոչ միայն հոգևոր, այլ նաև հասարակական առաջնորդները: Թուրքիան էլ իր հերթին ակտիվ աշխատում էր մուֆթիների հետ՝ փորձելով նաև նրանց միջոցով կյանքի կոչել սեփական քաղաքական որոշումները, որոնք առնչվում էին Բուլղարիայի թուրքերին:

Այն ժամանակ, երբ քեմալական կառավարությունը փորձում էր օգտագործել մուֆթիների ինստիտուտը Բուլղարիայում, երկրի ներսում ակտիվ իրականացնում էր աշխարհիկության /լաիցիզմի/ քաղաքականությունը՝ վերացնելով սուլթանությունն ու խալիֆայությունը: Թուրքիայի ներսում այս փոփոխությունները սկզբնական շրջանում արագ ազդեցություն չէին թողնում բուլղարաբնակ թուրքերի վրա, ինչը կապված էր նաև պաշտոնական Սոֆիայի դիրքորոշման հետ, որը փորձում էր հեռու պահել թուրք փոքրամասնությանն Անկարայի անմիջական ազդեցության գոտուց:

Թուրքիայում լատինատառ այբուբենի գործածությունից 4 ամիս անց Բուլղարիայի կրթության նախարարությունն արգելեց դրա կիրառումը Բուլղարիայի թուրքական դպրոցներում, ինչն առաջ բերեց պաշտոնական Անկարայի դժգոհությունը: Սոֆիայում Թուրքիայի դեսպանը դիմեց բուլղարական իշխանություններին՝ հանելու արգելքը: Բացի այդ, Թուրքիան պաշտոնական գրությամբ հանդես եկավ՝ կոչ անելով հանել լատինատառ այբուբենի նկատմամբ արգելքը: Թուրքական կողմից ակտիվ գործողություններից հետո բուլղարական կողմն ի վերջո համաձայնեց թույլատրել դրա կիրառումը Բուլղարիայի թուրքական դպրոցներում³⁹:

³⁷ **Barlasa D., Köksal Y.**, Turkey's Foreign Policy towards Bulgaria and the Turkish Minority (1923–1934), Southeast European and Black Sea Studies, V. 14, Is. 2, 2014, p. 180.

³⁸ **Lütem Ö. E.**, The Past and Present State of the Turkish – Bulgarian Relations, <https://strategicanalysis.wordpress.com/2006/10/03/the-past-and-present-state-of-the-turkish-bulgarian-relations/>.

³⁹ **Şimşir B. N.**, Bulgaristan Türkleri (1878-2008), ss. 128-141.

Թուրքիան շարունակեց ակտիվորեն միջամտել այն հարցերին, որոնք վերաբերում էին քեմալական բարեփոխումների տարածմանը բուլղարաթուրքերի շրջանում: Թուրքական պետությունը կապեր էր հաստատել բուլղարաթուրքերի ղեկավարների հետ, ինչի շնորհիվ էլ փորձում էր միջամտել թուրք փոքրամասնության և բուլղարական պետության հարաբերություններին⁴⁰: Քեմալական գաղափարախոսության ակտիվ տարածումը բուլղարաթուրքերի շրջանում զգալի մեծացնում էր թուրքերի էթնիկ ինքնագիտակցության մակարդակը⁴¹, ինչը հղի էր վտանգներով բուլղարական պետության համար, և Անկարայի ազդեցության համար ավելի նախընտրելի պայմաններ էր ստեղծում հարևան երկրում:

Իր հերթին Բուլղարիան ևս փորձում էր օգտագործել Թուրքիայի ներսում քեմալական բարեփոխումների շուրջ տարածայնությունները, միևնույն ժամանակ փնտրում՝ հակազդելու Թուրքիայի՝ բուլղարաթուրքերի վրա ազդեցության աճին, ինչն, անշուշտ, դեմ էր բուլղարական պետության շահերին: Բուլղարական կառավարությունը փորձում էր օգտագործել հնարավոր տարբեր միջոցներ՝ թուլացնելու Անկարայի ազդեցությունը և մեծացնելու իր ազդեցությունը Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության նկատմամբ՝ այդպիսով նրան պահելով սեփական վերահսկողության ներքո:

1920-ականների վերջին Բուլղարիան նման հնարավորություն ստացավ, որից էլ փորձեց առավելագույնս օգտվել: 1928 թ. քեմալական շարժման ակտիվ հակառակորդ Հուսեյին Հյուսնու Մուլլա Ահմեդը դարձավ Բուլղարիայի գլխավոր մուֆթի (թուրք.՝ *Başmüftü*): Այս պաշտոնում նա մնաց 8 տարի՝ մինչև 1936 թվականը⁴²: Գլխավոր մուֆթին Բուլղարիայի մուսուլմանների հոգևոր առաջնորդն էր, ինչն այդ նշանակումն ու պաշտոնը դարձնում էր խիստ կարևոր:

Հուսեյին Հյուսնուն լավագույնս համապատասխանում էր Բուլղարիայի պահանջներին: Վերջինս լավ հարաբերություններ ուներ բուլղարական իշխանական շրջանակների հետ, ինչպես և ակտիվորեն հանդես էլ գալիս Մուսթաֆա Քեմալի և նրա կողմնակիցների գաղափարների ու քաղաքականության դեմ:

Մասնավորապես Հուսեյին Հյուսնուն աչքի էր ընկնում կրոնապաշտությամբ և դեմ էր քեմալականների վարած աշխարհիկ քաղաքականությանը,

⁴⁰ Barlasa D., Köksal Y., նշվ. աշխ., էջ 181:

⁴¹ Karadjov A., նշվ. աշխ., էջ 60:

⁴² Keskiöglu O., Bulgaristan'da Türkler - Tarih ve Kültür, Ankara, 1985, s. 166.

որն առաջ էր բերում Թուրքիայում և նրա սահմաններից դուրս թուրք իսլամական գործիչների խորը դժգոհությունը⁴³:

Բուլղարիայի մուսուլմանների առաջնորդի դերում նման անձի նշանակումը թույլ էր տալիս Սոֆիային վերահսկողության տակ պահել այս ինստիտուտը և դրա միջոցով հակադրվել բուլղարաթուրքերի հարցում Անկարայի վարած քաղաքականությանը: Ժամանակը ցույց տվեց, որ Բուլղարիան այս հարցում ճիշտ որոշում կայացրեց և կարողացավ օգտվել Հուսեյին Հյուսնուի հակաքեմալական տրամադրություններից:

Հյուսնուի նշանակումը կարևոր պաշտոնում մեծ ազդեցություն ունեցավ նաև հակաքեմալական ուժերի համախմբման տեսանկյունից, քանի որ գլխավոր մոնոթիի շուրջ սկսեցին հավաքվել քեմալական կուրսից դժգոհ տարրերն ինչպես Բուլղարիայում, այնպես էլ Թուրքիայում և նրա տարածքից դուրս:

Բուլղարիան շարունակում էր օգտագործել նաև 1920-ականներին իրենց հակաքեմալական հայացքների համար Թուրքիայից արտաքսված գործիչների գործոնը: Մուսթաֆա Քեմալի դեմ հանդես եկած թուրք գործիչների մի մասն էլ հաստատվել էր Բուլղարիայում, որտեղից ևս շարունակում էր պայքարը թուրքական իշխանությունների դեմ: Նրանց թվում էին Օսման Նուրին, Գյումուլջինեյի Իսմաիլ Հաքքըն, ով սերտ հարաբերություններ ուներ գլխավոր մոնոթի Հուսեյին Հյուսնուի հետ: Վերջիններս թուրքական հետախուզության ուշադրության կենտրոնում էին, որոնք հետևում էին նրանց գործողություններին⁴⁴: Սա վկայում է, որ թուրքական իշխանությունները լրջագույն ուշադրություն էին դարձնում Բուլղարիայում բնակվող հակաքեմալական գործիչներին՝ նրանց համարելով հնարավոր վտանգ գործող իշխանության համար:

1934 թվականին Հուսեյին Հյուսնուն ստեղծեց «Իսլամական կրոնի պաշտպանների միություն» կազմակերպությունը, որը սկսեց հրատարակել նաև «Մեդենիյեթ» (թուրք.՝ *Medeniyet*) թերթը⁴⁵: Կազմակերպությունը, ի թիվս այլ հարցերի, զբաղվում էր բուլղարաթուրքերի դպրոցներում արաբատառ թուրքերենի տարածման աշխատանքներով՝ ի հակադրություն պաշտոնական

⁴³ Fleet K., Boyar E., A Dangerous Axis: The ‘Bulgarian Müftü’, the Turkish Opposition and the Ankara Government, 1928–36, *Middle Eastern Studies*, 44/5, 2008, pp. 775–89.

⁴⁴ F. Kate, B. Ebru, նշվ. աշխ., էջ 778–779:

⁴⁵ Memişoğlu H., *Geçmişten Günümüze Bulgaristan’da Türk Eğitim Tarihi*, Ankara, 2002, s. 205.

Անկարայի, որը փորձում էր Բուլղարիայի թուրք փոքրամասնության շրջանում տարածել լատինատառ թուրքերենը:

«Մեդենիյեթ» թերթը, որը տարածվում էր բուլղարաթուրքերի շրջանում, հաճախ էր օգտագործվում Անկարայի դեմ մեդիա արշավներ իրականացնելու համար: «Մեդենիյեթ» թերթը, ինչպես և գլխավոր մուֆթիի ինստիտուտից աջակցություն ստացող «Դոսթուք» պարբերականն ընկալվում էին որպես «հակաքեմալական գաղափարների օրգանները Բուլղարիայում»⁴⁶:

Այսպիսով, ակնհայտ էր, որ գլխավոր մուֆթի Հուսեյին Հյուսնուն դարձել էր ոչ միայն Բուլղարիայի, այլև տարածաշրջանի հակաքեմալական գործիչներին համախմբող անձ: Նման զարգացումը ձեռնտու էր Բուլղարիային, որը փորձում էր հակադրել Անկարայի քայլերին և փորձում էր խոչընդոտներ ստեղծել՝ բուլղարաթուրքերի վրա Թուրքիայի ազդեցությունը նվազեցնելու համար: Այս տեսանկյունից Հուսեյին Հյուսնուն և գլխավոր մուֆթիի ինստիտուտն առավելագույնս համապատասխանում էր Բուլղարիայի պետական շահերին և հետաքրքրություններին:

Միևնույն ժամանակ իրերի նման դրությունն անհանգստացնում էր պաշտոնական Անկարային, որը փորձում էր ոչ միայն իր վերահսկողության ներքո պահել հարևան երկրում խոշոր թուրքական համայնքը, այլ նաև փորձում էր տարածել քեմալական գաղափարախոսությունն ու բարեփոխումները բուլղարաթուրքերի շրջանում:

Այսպիսով, Անկարան նոր և լուրջ խնդիրների առաջ էր կանգնում. նախ՝ Հուսեյին Հյուսնուի գլխավորությամբ ջանքեր էին գործադրվում՝ բուլղարաթուրքերին զերծ պահելու Անկարայի ազդեցության գոտուց և նրանց առնելու Բուլղարիայի վերահսկողության ներքո և, մյուս կողմից, գլխավոր մուֆթիի շուրջը հավաքվում էին Մուսթաֆա Քեմալի քաղաքական հակառակորդները, որոնք ազատ գործելու և ինքնաարտահայտվելու հնարավորություն էին ստանում:

Անկարան փորձում էր դիվանագիտական ճնշումների միջոցով չեզոքացնել հակաքեմալական ընդդիմության ձևավորումն ու հզորացումը հարևան Բուլղարիայում: Թուրքիան առանձնակի ակտիվություն էր ցուցաբերում Բուլղարիայի թուրքական դպրոցներում լատինատառ թուրքերենի կիրառման հարցում, ինչին ուղղակիորեն դեմ էր Հուսեյին Հյուսնուն: Լատինատառ այբուբենի կիրառմանը դեմ էին նաև բուլղարական իշխանությունները, որոնք

⁴⁶ F. Kate, B. Ebru, նշվ. աշխ., էջ 777:

համարում էին, որ դա կարող է ավելացնել Անկարայի ազդեցությունը բուլղարաթուրքերի վրա:

Բուլղարիայի թուրք բնակչության նկատմամբ խիստ քաղաքականությունը շարունակվեց նաև հետագայում, հատկապես 1934 թ. մայիսի 19-ին Բուլղարիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո, երբ իշխանությունների որոշմամբ էլ ավելի նվազեց թուրքական դպրոցների թիվը, արգելվեցին թուրքական որոշ պարբերականների հրատարակումը, քաղաքական կուսակցությունների և կազմակերպությունների, այդ թվում և Թուրան կազմակերպության գործունեությունը: Որոշ թուրք երիտասարդ ակտիվիստներ արտագաղթեցին Թուրքիա, իսկ մի մասն սկսեց գործել ընդհատակյա՝ հետագայում հիմնելով ազգայնական և ահաբեկչական կազմակերպություններ⁴⁷:

Ի պատասխան բուլղարաթուրքերի նկատմամբ իրականացված քաղաքականության՝ Թուրքիայում սկսվեց հակաբուլղարական լայնածավալ արշավ, որն ուղեկցվում էր Բուլղարիայում տեղի ունեցող իրադարձություններին ռազմական միջամտության կոչերով: Լարվածությունը հանդարտվեց, երբ երկու երկրների միջև համաձայնություն կայացավ թույլատրելու շուրջ 10.000 բուլղարաթուրքերի արտագաղթը Թուրքիա⁴⁸:

1930-ական թվականներին Բուլղարիայում գործող ազգայնական կազմակերպությունների կողմից էթնիկ թուրքերի և նրանց գույքի վրա հարձակման դեպքերը հաճախացան: Հիշատակման արժանի է բուլղարական ազգայնական «Ռոդնա Չաշիտա» (բուլղ.՝ Родна защита, հայրենիքի պաշտպանություն) խմբավորման կողմից Ռազգրադի թուրքական գերեզմանատան վրա հարձակումը: Այս դեպքից հետո որոշվեց Ստամբուլում բողոքի ակցիա իրականացնել, սակայն թուրքական իշխանություններն արգելեցին այն՝ պատճառաբանելով, որ գործողությունները կարող են բուլղարաթուրքերի վրա բացասաբար անդրադառնալ: Այնուամենայնիվ, թուրք ոսանողների մի խումբ, չնայած արգելքին, որոշեց երթով գնալ Բուլղարիայի հյուպատոսարան, սակայն թուրքական ոստիկանությունը ձերբակալեց խմբի անդամներին⁴⁹:

Թուրքիան քայլեր էր կատարում, որպեսզի կանխեր բուլղարաթուրքերի մեկուսացումը թուրքական պետությունից 1930-ականների կեսերին: Այնուա-

⁴⁷ Karadjov A., նշվ. աշխ., էջ 60:

⁴⁸ Minorities in Southeast Europe, Turks of Bulgaria, Center for Documentation and Information on Minorities in Europe - Southeast Europe (CEDIME-SE), p. 6, <http://www.byteboss.com/view.aspx?id=49231&name=Cedime+Se+Bulgaria+Turks&qry=MINORITIES>

⁴⁹ Barlasa D., Köksal Y., նշվ. աշխ., էջ 183:

մենայնիվ, Թուրքիայի ոչ բոլոր քայլերն էին արձագանք ստանում և ստիպում բուլղարական իշխանություններին փոխել որոշումները: Թերևս Թուրքիայի ակտիվ միջամտության հաջողված փորձերից էր 1938 թվականին լատինատառ թուրքերենի կիրառման իրավունքի վերականգնումը. բուլղարական իշխանություններն արգելել էին լատինատառ թուրքերենը 1934 թվականին⁵⁰:

Այսպիսով, մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը Թուրքիայի և Բուլղարիայի հարաբերություններն ընթանում էին վայրիվերումներով, ինչն ուղղակիորեն ազդում էր նաև բուլղարաթուրքերի դրության և կարգավիճակի վրա: Թեև 1920-ականների սկզբին Բուլղարիայի և Թուրքիայի միջև հարաբերությունների համեմատաբար դրական ընթացքը որոշակիորեն հետք թողեց բուլղարաթուրքերի իրավիճակի վրա, սակայն 1930-ականներից իրադրությունը փոփոխություններ կրեց, ինչի արդյունքում Թուրքիան ավելի քիչ լծակներ ուներ Բուլղարիայում ապրող թուրքերի դրության վրա ազդեցություն ունենալու համար, ինչը կապված էր բուլղարական իշխանությունների քաղաքականության հետ, որով նրանք փորձում էին նվազեցնել Թուրքիայի ազդեցությունը բուլղարաթուրքերի վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

1878 թ. Բուլղարիայի ինքնավարության հաստատումից հետո երկրի թուրք բնակչությունը հայտնվեց փոքրամասնության կարգավիճակում, և Օսմանյան կայսրության հետ հարաբերությունները հասցվեցին նվազագույնի: Սակայն 1913 թվականի սեպտեմբերին «Միություն և առաջադիմություն» կոմիտեի կոնգրեսի ժամանակ առաջնահերթությունը տրվեց պանթուրքիզմի գաղափարախոսությանը, ինչն ուղղակի ազդում էր Բուլղարիայի և այդ երկրում ապրող թուրքական տարրի հետ հարաբերությունների վրա: 1920-30-ական թթ. Թուրքիան ակտիվորեն միջամտում էր այն հարցերին, որոնք վերաբերում էին քեմալական գաղափարախոսության տարածմանը բուլղարաթուրքերի շրջանում, ինչը զգալի մեծացնում էր թուրքերի էթնիկ ինքնագիտակցության մակարդակը և լի էր վտանգներով բուլղարական պետության համար:

Բանալի բաներ - Օսմանյան կայսրություն, Թուրքիա, Բուլղարիա, թուրք փոքրամասնություն, քեմալական, պանթուրքիզմ:

⁵⁰ **Lütem Ö. E.**, The Past and Present State of the Turkish – Bulgarian Relations, <https://strategicanalysis.wordpress.com/2006/10/03/the-past-and-present-state-of-the-turkish-bulgarian-relations/>.

ПОДХОДЫ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И ТУРЦИИ К ПРОБЛЕМАМ ТЮРКОЯЗЫЧНЫХ МЕНЬШИНСТВ В БОЛГАРИИ В 1878-1944 ГГ.

ВАГАРШАК АКОПЯН

В 1878 году, после утверждения болгарской власти, турецкое население получило статус меньшинства, и отношения с Османской империей были сведены к минимуму. Но в сентябре 1913 года, во время конгресса «Единение и прогресс», приоритет был отдан идеологии пантюркизма, которая непосредственно влияла на отношения Болгарии и живущих там турков. Во время 1920-30 гг. Турция активно вмешивалась в вопросы, которые относились к распространению кемалистской идеологии среди турков в Болгарии, что существенно повысило уровень их этнического самосознания и было чревато опасностью для болгарского государства.

Ключевые слова - Османская империя, Турция, Болгария, пантюркизм, турки.

THE APPROACHES OF THE OTTOMAN EMPIRE AND TURKEY TOWARDS THE PROBLEMS OF THE TURKISH-SPEAKING MINORITY IN BULGARIA DURING THE PERIOD 1878-1944

VAGHARSHAK HAKOBYAN

In 1878 after the confirmation of the Bulgarian authority, the Turkish population got the status of minority and the relationship with the Ottoman Empire was minimized. However, in September of 1913 at the “Union and Progress” congress, the “Pan-Turkism” ideology took priority and this directly affected the relationship between Bulgaria and the Turks living there. Turkey, in the years of 1920-30 actively interfered in the issues concerning the spread of the Kemalism ideology among the Turks of Bulgaria. This resulted in the significant rise of the level of the Turks’ ethnic self-consciousness but it endangered the Bulgarian State as well.

Key words – the Ottoman Empire, Turkey, Bulgaria, Turk minority, Kemalism Pan-Turkism.

ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՔՈՒՄ

ՄՈՒՇԵՂ ՂԱՀՐԻՅԱՆ

Իրաքի Հանրապետությունում բնակվում է 37 միլիոն մարդ, որի 15-20%-ը քրդեր են¹: Իրաքի 3 հյուսիսային նահանգներում՝ Էրբիլում, Սուլեյմանիեում և Դոհուկում, ստեղծվել է քրդական ինքնավարություն: Քրդական ինքնավարությունն ունի դաշնային շրջանի կարգավիճակ՝ լայն լիազորություններով:

Իրաքում քրդական հարցը ծագել է Օսմանյան կայսրության փլուզման և Իրաք պետության ստեղծման հետ միաժամանակ, իսկ Բաղդադի և քրդերի հակամարտությունը շարունակվում է մոտ 1 դար: Իրաքյան քրդերի գործոնը ժամանակի ընթացքում ավելի ազդեցիկ է դարձել թե՛ երկրում, թե՛ տարածաշրջանում:

Դավանաբանական առումով Իրաքի բնակչությունը բաղկացած է շիաներից, սուննիներից և փոքր տոկոս կազմող քրիստոնյաներից: Էթնիկ առումով Իրաքում բնակվող երկու հիմնական ժողովուրդներն են արաբները և քրդերը: Իրաքում ստեղծման օրվանից մինչև 2003թ. իշխանությունը պատկանել է սուննիներին: Սուննի արաբական կենտրոնը մի կողմից հակասության մեջ էր սուննի քրդական հյուսիսի, մյուս կողմից՝ շիա արաբական հարավի հետ: Տարիների ընթացքում այս երեք խմբերի միջև խոր անվստահության մթնոլորտ է ձևավորվել, որը ցցուն կերպով դրսևորվում է հետսադադամյան շրջանի Իրաքի քաղաքական կյանքում:

Արաբական աշխարհում այլ երկրներ էլ կան, որտեղ իշխանությունը պատկանել կամ պատկանում է դավանաբանական առումով փոքրամասնություն կազմող խմբին (Սիրիա, Բահրեյն): Այս երկրներում, ինչպես նաև Լիբանանում, պառակտվածությունը և հակասությունները դավանաբանական հարթության վրա են, իսկ Իրաքում կարևորագույն նշանակություն ունի նաև ազգային հարթությունը: Մի կողմից՝ քրդերն ու շիա արաբները բնական դաշնակիցներ են եղել ընդդեմ սուննի արաբների գերիշխանության, իսկ մյուս

¹ CIA, The World Factbook, Iraq, <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/iz.html>

կողմից՝ սուննի և շիա արաբները դեմ են հանդես գալիս քրդական անջատողականությանը:

Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո, երբ իշխանության մեջ սուննիների և շիաների «ոռտացիա» տեղի ունեցավ, իրավիճակը մի փոքր փոխվեց: Քրդերն ու սուննիները պարբերաբար համագործակցության եզրեր են փնտրում՝ շիայական ուժերին հակակշիռ ստեղծելու համար:

Իրան-իրաքյան պատերազմի ժամանակ՝ 1980-88 թթ., քրդերն ապրստամբություն բարձրացրին, մինչդեռ շիաները, որքան էլ սերտ կապերի մեջ էին Իրանի հետ, զանգվածային համագործակցության չգնացին: 1991 թ. Քուվեյթյան պատերազմում Իրաքի պարտությունից հետո քրդերը և շիաներն ապստամբություն սկսեցին Սադդամ Հուսեյնի դեմ, որոնք պարտություն կրեցին: XX դարի 90-ականներին երկրից արտաքսված շիա գործիչները, ինչպիսիք են Ահմադ Չալաբին կամ Իյադ Ալավին, ԱՄՆ-ի օգնությամբ փորձում էին ընդդիմություն ձևավորել՝ ներառելով նաև քրդական ուժերին: Սակայն 2004 թ. Իրաքում կոալիցիոն ուժերին ամենից համառ դիմադրություն ցույց տվող շիայական ուժերն էին կրոնական ազդեցիկ գործիչ Մուքթադա ա-Սադրի գլխավորությամբ:

Այս վիճակը մշտապես եղել է Իրաքի ամենախոցելի տեղը, որից օգտվել են արտաքին ուժերը: Ներքին սպառնալիքների դեմ պայքարելու համար իշխանությունը ստիպված է եղել ահռելի ռեսուրսներ ծախսել անվտանգության ուժերի և գաղտնի ծառայությունների վրա: Իրաքը նախքան 2003 թ. եղել է աշխարհի ամենից ռազմականացված պետություններից մեկը: Բնակչության թվով ընդամենը 40-րդը լինելով աշխարհում² զինված ուժերի թվաքանակով 4-րդն էր³:

Քրդական գործոնը ժամանակի ընթացքում դարձել է Իրաքի ներքին գլխավոր խնդիրը: Տարբեր իշխանությունների ժամանակ խնդրի հանդես գնացողներն ունեցել են իրենց առանձնահատկությունները: Միապետության օրոք (1920-58 թթ.), երբ քրդերը դեռ թույլ էին կազմակերպված, իսկ կառավարությունը Մեծ Բրիտանիայի ազդեցության տակ էր, վերահսկողությունը համեմատաբար հեշտ էր: XX դարի 30-50-ական թվականներին քրդերի հարցում Բաղդադի քաղաքականությունը նմանություններ ուներ քեմալական

² The World Bank, Data, <http://data.worldbank.org/indicator/SP.POP.TOTL>

³ **Կարապետյան Ռ.**, Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, էջ 255:

Թուրքիայի քաղաքականությանը, որը պարզապես անտեսում, չէր ընդունում քրդական հարցի և քրդական ինքնության գոյությունը: «Չկան քրդեր, չկա քրդական հարց» տարբերակն Իրաքում չաշխատեց:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ արաբական ազգային պետություններ էին ձևավորվում Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Մադրիբում, իսկ Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը հաղթանակով դուրս եկավ ֆրանս-անգլիա-իսրայելական ագրեսիայից, արաբական ազգայնականության վերելքի տարիներն էին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսված ժամանակաշրջանը նաև քրդական ազգայնականության վերելքի տարիներն էին: Իրանում 1946 թ. գոյություն ունեցած Մեհաբադի Հանրապետությունը, 1945 թ. Քրդուտանի դեմոկրատական կուսակցության ստեղծումը, ԽՍՀՄ-ից եկող ազդակներով ձախ, մարքսիստական, հեղափոխական տրամադրությունների շեշտակի աճը մեծ նշանակություն ունեցան քրդական ազգայնականության կայացման վրա:

XX դարի 50-60-ականներին նորածն էր արաբական միասնության գաղափարը, իսկ Իրաքն արաբական աշխարհի միավորման առաջամարտիկներից մեկն էր: Մի կողմից՝ արաբների միավորման դիրքերից հանդես եկող արաբական ազգայնականության, իսկ մյուս կողմից՝ անջատողական քրդական ազգայնականության բախումը հետագա տասնամյակներին դարձավ Իրաքի ներքին կյանքի գլխավոր և որոշիչ գործընթացը, իսկ քրդական գործոնը՝ ամենաառանցքային գործոնն Իրաքում, որի ազդեցության սահմաններն Իրաքում ամենևին չեն սահմանափակվում տարածքով:

Իրաքում քրդական գործոնն ունի մի քանի առանձնահատկություններ:

Մասշտաբայնություն. Քրդական գործոնի աշխարհաքաղաքական-տարածքային սահմանները և նրա ներազդման շրջանակները բուն Իրաքից բացի ներառում են Մերձավոր և Միջին Արևելքը: Քրդական հարցի սրման դեպքում այն առաջին հերթին կազդի տվյալ տարածաշրջանում և նրա հարակից պետություններում տիրող քաղաքական իրադրության վրա: Դա է պատճառը, որ Թուրքիան, Իրաքը, Իրանը և Սիրիան պարբերաբար խորհրդակցում են միմյանց հետ, մշակում են միասնական քաղաքականություն, անցկացնում արտաքին գործերի, երբեմն նաև՝ պաշտպանության

նախարարների փակ խորհրդակցություններ և համակարգում իրենց քայլերը քրդական մարտահրավերների նկատմամբ⁴:

Քրդական խնդրի սրման դեպքում անտարբեր չեն լինելու ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, որոնք ավանդաբար ներգրավված են մերձավորարևելյան խնդիրների մեջ: Կողմնակի դիտորդի դերում չեն կարող մնալ նաև միջազգային կազմակերպությունները՝ ՄԱԿ-ը, ՆԱՏՕ-ն, ԵԱՀԿ-ը, Արաբական պետությունների լիգան, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը:

Իրաքյան Քրդստանում պետական ինստիտուտների առկայություն.

Իրաքում, ինչպես նաև Թուրքիայում, Սիրիայում և Իրանում գոյություն ունեն քրդական մեծաքանակ համայնքներ, որոնք ինքնորոշման իրավունքի պահանջ են ներկայացնում՝ կոնֆլիկտի մեջ մտնելով պետության ազգային քաղաքականության հետ: Ինքնորոշման ճանապարհին ամենամեծ առաջընթացը գրանցել են իրաքյան քրդերը: Քրդական ամենախոշոր քաղաքական ուժերը՝ Քրդստանի դեմոկրատական կուսակցությունը, Քրդստանի հայրենասիրական միությունը Իրաքում, Քրդստանի աշխատավորական կուսակցությունը Թուրքիայում քրդական անկախության գաղափարի առաջ տանողներն են: ՔԴԿ-ը և ԲՀՄ-ը կարողացել են պետական ինստիտուտներ հիմնել: Իրաքյան Քրդստանն ունի պետական բոլոր որոշիչներն ու կառույցները՝ դրոշ, զինանշան, զինված ուժեր, կառավարություն, խորհրդարան, արդարադատության համակարգ և այլն:

Զինված ուժերի առկայություն. Իրաքում քրդական կուսակցությունները մեծաթիվ զինված ուժեր ունեն: Ֆորմալ առումով դրանք համարվում են իրաքյան բանակի ստորաբաժանումներ, սակայն ուղղակի ենթարկվում են ՔԴԿ-ին ու ԲՀՄ-ին:

Փեշմերգայի անձնակազմի թվաքանակը մոտ 150.000 է, որից 2 դիվիզիա՝ 30000 մարդ, դրվել է Իրաքի զինված ուժերի տրամադրության տակ: 30000 մարդ տրամադրվել է Իրաքի ներքին գործերի նախարարության ներքին զորքերին և անվտանգության ապահովման գործառույթներ է իրականացնում հիմնականում Բաղդադի տարածքում: Մոտ 12000 մարդ՝ 1 դիվիզիա, տրամադրվել է Իրաքի սահմանապահ գերատեսչությանը և տեղաբաշխվել է հիմնականում հյուսիսային սահմաններին: Իրաքի քրդական ղեկավարության տրամադրության տակ է գտնվում 21 բրիգադ՝ մոտավորապես 70000 մարդ՝

⁴ Նիկոլայ Հովհաննիսյան, ԱՌՀԻ, Աշխատանքային տետրեր, Երևան, 2011, էջ 84-85:

տեղաբաշխված ինքնավարության տարածքում, ինչպես նաև «նավթի անվտանգության ոստիկանությունը»՝ 5000 մարդ:

Սպառազինությունը համապատասխանում է մոտոհրաձգային բրիգադի սպառազինությանը, իսկ որևէ տեսակի ավիացիա և ՀՕՊ-ի զենիթահրթիռային համալիրներ չկան:

Նավթային պաշարներ. Իրաքում քրդերը վերահսկում են նավթի խոշոր պաշարներ, որոնք կազմում են ավելի քան 45 միլիարդ բարել⁵: Քրդերը երաշխավորված ստանում են Իրաքի նավթային եկամուտների 17%-ը, սակայն ձգտում են ինքնուրույն նավթարդյունահանում և վաճառք կազմակերպել, ինչին ընդդիմանում է Իրաքի կառավարությունը:

Ինքնության խնդիր. քրդական խնդրին անդրադառնալիս չի կարելի անտեսել էթնիկ ինքնության նշանակությունը: Քրդերը երբեք իրենց չեն նույնականացրել Իրաքի և իրաքցիների հետ: Քրդերն իրենց համարում են բնիկ ժողովուրդ, քրդերենը պարսկական լեզվաընտանիքին պատկանող լեզու է: Քրդերի լեզուն, սովորույթները, ավանդույթները, ներքին ցեղային կառուցվածքը տարբեր են թե՛ արաբականից, թե՛ թուրքականից, թե՛ իրանականից:

Վերջին 3 տասնամյակներին իրաքյան քրդերի գործոնի դերն ու նշանակությունը տարածաշրջանում մեծանում են, իսկ տարածաշրջանում խաղաղությունն ու կայունությունը մեծապես կախված են լինելու Իրաքի և հարևան երկրների քրդերի գործողություններից:

ԱՄՓՈՓՈՒՄ

Իրաքի բնակչության 20%-ը քրդերն են: Երկրի հյուսիսում ստեղծվել է քրդական ինքնավարություն, որը ձգտում է անկախության: Քրդական գործոնը շատ կարևոր դեր ունի երկրի ամբողջականության ու կայունության համար: Քրդական գործոնն ունի իր առանձնահատկությունները: Դրանք են մասշտաբայնությունը, քաղաքական ինստիտուտների գոյությունը, զինված ուժերի առկայությունը, նավթի խոշոր պաշարները և էթնիկ ինքնության գործոնը:

Քանալի բառեր – Իրաք, քրդեր, նավթ, Մերձավոր Արևելք, շիա, սուննի:

⁵ Khalid Al-Ansary. Iraq's Kurds Bypass State for Oil Exports to Tighten Control, 14 Jul. 2015 <http://www.bloomberg.com/news/articles/2015-07-14/iraq-s-kurdish-region-exporting-550-600k-b-d-oil-of-own-output>.

ОСОБЕННОСТИ КУРДСКОГО ФАКТОРА В ИРАКЕ

МУШЕГ ГАГРИЯН

Около 20% населения Ирака составляют курды. На севере Ирака существует курдская автономия, которая имеет целью стать независимым государством. Курдский фактор в Ираке играет очень важную роль для целостности и стабильности страны. Курдский фактор имеет свои особенности. В первую очередь – это масштабность фактора, которая охватывает весь регион. Курды на территории автономии создали политические и общественные институты и хотят вести независимую политику. Курды имеют плохо вооруженную, но многочисленную армию, которая позволяет защищаться от внешних угроз. В Иракском Курдистане обнаружены крупные запасы нефти. Курды хотят самостоятельно организовать продажу нефти и стать финансово независимыми от Багдада. И, наконец, есть фактор этнического самосознания. Курды не идентифицируют себя с иракцами, они считают себя отдельной нацией.

Ключевые слова – Ирак, курды, нефть, Ближний Восток, шииты, сунниты.

THE KURDISH ISSUE IN IRAQ

MUSHEGH GHANRIYAN

The Kurds constitute the 20% of the Iraqi population. A Kurdish autonomy is created in the north of Iraq striving for independence. The Kurdish issue has an immense import on Iraq's integrity and stability and it has its specificities. It is a large scale issue and the existence of political institutions, armed forces, major reserves of oil and ethnicity are its major specificities.

Key words – Iraq, Kurds, oil, Middle East, Shia, Sunni.

«ՀԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔԻ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ժԱՆՐԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

ՆԵԼԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հաճախապատումը» հայ փիլիսոփայական և քրիստոնեական ջատագովական գրականության առաջին գործերից է: Ճառերում մանրամասնորեն ներկայացված են Աստվածաշնչի, քրիստոնեական աշխարհընկալման հիմնական գաղափարներն ու սկզբունքները: Ս. Գրքից հետո «Հաճախապատում ճառերը» դարձել են Հայաստանեայց եկեղեցու առաքելական վարդապետության ամենահին սկզբնաղբյուրը, որում ամփոփված են նրա դավանական և բարոյական հիմնադրույթները:

Դատելով ճառերի բնույթից և ուղղվածությունից՝ կարելի է վստահորեն ասել, որ դրանք գրվել են իբրև թուղթ-նամակներ ի պատասխան թեմերից ստացված հարցադրումների: Փաստորեն դրանով պետք է բացատրել այն կրկնությունները, որոնք հանդիպում են տարբեր ճառերում, որովհետև Գրիգորի երկարամյա գործունեության ընթացքում՝ տարիների ընդմիջումից հետո, նույն հարցը կարող էր ծագել այլ գավառում, և Գրիգոր եպիսկոպոսը դրան պատասխանում էր նորովի, նոր բառերով, բայց նույն մտքով: Ահա այս գործնական նամակ-հրահանգները հետագայում, հավանաբար ասենք, Ներսես Մեծի օրոք հավաքվել և ի մի են բերվել մի գրքով՝ անվանվելով «Հաճախապատում ճառեր» հունարենով: Այսինքն՝ Գրիգոր Լուսավորիչը ճառերի ժողովածու գրելու ծրագիր չի ունեցել, այն ծնվել է նրա մահից հետո, երբ որոշել են մեծ վարդապետի գործնական թղթերը հավաքագրել մի ժողովածուի մեջ: Թե քանի ճառ է դուրս մնացել այդ գրքից՝ կորած լինելու պատճառով, այլևս անհնար է իմանալ, քանի որ չի պահպանվել նաև մինչև Ե դար հասած հունարեն ճառերի ժողովածուն, որի թարգմանիչն ու խմբագիրն է եղել Մաշտոցը: Բայց միանշանակ է, որ այդ վերնագիրը հետագայի է և նշանակում է շատ ճառեր պարունակող գիրք, ինչպես կարելի է կռահել նման ժողովածու նշող հունարեն եզրույթից (հմմ. Ճառընտիր, վրաց. մրավալթափի (=բազմագլուխ) են:

Ըստ այդմ, «Հաճախապատում ճառք» նշանակում է շատ ու բազմապիսի ճառերի ժողովածու՝ բազմապատիկ ճառեր: Այն ընդգրկում է տարբեր ծավալի և բովանդակության ԻԳ (23) ճառեր՝ նվիրված քրիստոնեական վարդապետության բարոյականության և կենցաղավարության առանձին հարցե-

րի¹, որոնցից մի քանիսը պատկանում են Մաշտոցի գրչին՝ հետագայի թեմաների արձարձումով:

Ճառերի դասավորության մեջ չկա որևէ օրինաչափություն կամ տրամաբանություն: Ուղղակի հեղինակը ձգտում է խրատել և ուսուցանել: Ճառերի մեծ մասը (17) կազմում են բարոյախրատական բնույթի «հոգևոր խրատները», որտեղ հեղինակը խոսում է քրիստոնեական առաքինությունների և բարոյականության մասին. հավատքի հաստատություն, պահոց ամրություն, սեր, հեզություն, ապաշխարանք, գթություն, զղջում, աղքատասիրություն և բարեգործություն: Զգուշացնում է անառակություններից, տարբեր երկրային գայթակղություններից, չարագործություններից և այլնից²:

Ե (5) ճառում առկա են հետևյալ գաղափարները. արարածների Աստծուց ստացել են անձնիշխանություն, այսինքն՝ բարի և չար գործելու ազատ կամք: Բարի գործեր կատարողները, ովքեր օժտված են զանազան առաքինություններով, արժանանում են երանության, իսկ չար գործեր կատարողները՝ խաբեբաները, անհնազանդները, ծուլները, ենթարկվում են պատժի:

Է (7) ճառում հեղինակն առաջ է քաշում այն միտքը, որ Աստված շատ երևույթներ ստեղծել է՝ մարդկանց կարիքները բավարարելու համար, ինչպես անձրևը, հողմը, ջուրը և այլն: Բայց մարդիկ, երբ չարություն են գործում, այդ նույն երևույթներով էլ պատժվում են՝ ցրտով, ջրհեղեղով և այլն:

Ժ (10) ճառում շոշափված են հասարակական խնդիրներ: Հեղինակն այստեղ զարգացնում է հասարակական ներդաշնակության գաղափարը, թագավորը և իշխանները նշանակված են Աստծու կողմից՝ կարգ ու կանոն հաստատելու համար, իսկ մյուսները պարտավոր են հնազանդվել նրանց: Տերերը պետք է հոգատար լինեն հնազանդների նկատմամբ և պատժեն մեղավորներին, բայց չպետք է չարաշահեն իրենց իշխանությունը: Քարոզելով մարդկային և քրիստոնեական առաքինություններ՝ հեղինակը գիտակցում է, որ խրատելով հաճախ անհնար է մոլորյալներին և չարագործներին դարձի բերել:

Ճառագիրը խոսում է նաև անհատական արարքների մասին: Նույնիսկ Արշակունի թագավորը կպատժվի արդար իրավունքով, եթե վատ արարքներ է կատարել: Խոսքը Աստծո պատժի մասին է, որից չի խուսափի և ոչ ոք³:

¹ «Սրբոյ Հօրն մերոյ Գրիգոր Լուսաւորչի Յաճախապատում ճառք և աղոթք», Վենետիկ, 1838, էջ 4:

² «Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, լուսաւորք», աշխատասիրությամբ Ա. Տեր-Միքելեանի, Էջմիածին, 1894, էջ 96:

³ Աբեղյան Մ., «Երկեր», հտ. 3, Երևան, 1968, էջ 141:

Ճառերում հեղինակը կարևորում է քրիստոնեական եկեղեցու հայտնի սկզբունքը. իշխանության ներքո գտնվողները հավատարմությամբ պիտի մնան.

«Ձի ոչ ուստեք է, ասէ, իշխանութիւն, բայց յաստուծոյ. որք են՝ յաստուծոյ են»⁴:

Հետևելով Ավետարանին և Պողոս առաքյալին՝ հեղինակն անիրավ իշխանավորներին միայն Աստծո բարկությամբ և հանդերձյալ կյանքով է սպառնում:

Ձուտ վարդապետական և աստվածաբանական խնդիրներ են արծարծվում Ա (1) և Բ (2) ճառերում, որոնց հավանական հեղինակը խմբագիր Մաշտոցն է:

Ա (1) «Յաղագս ամենասուրբ Երրորդութեան» ճառում խոսվում է Ս. Երրորդության գաղափարական մեկնաբանության մասին: Որքան անհասանելի է Ս. Երրորդության խորհուրդը մարդկային սահմանափակ մտքերի համար, դարձյալ հեղինակը երկրային օրինակի միջոցով այն ըմբռնելի է դարձնում, որպեսզի գոհացնի մեր հարցասիրությունը: Իհարկե, որևէ երկրային բացատրությամբ լիապես չենք կարող ամփոփել մեր սահմանափակ մտքի մեջ Աստծո անսահմանությունը:

Բ (2) ճառը կարելի է համարել նախորդի շարունակությունը, որտեղ ճառագիրն առանձին-առանձին բնութագրում է Ս. Երրորդության՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի անձնավորությունները: Ճառի հենց սկզբում, հստակորեն զանազանելով դրանք միմյանցից, բայց մյուս կողմից ընդգծելով դրանց միասնությունը՝ հեղինակը շատ պարզ և մատչելի է դարձնում այն մեր մտքերի համար⁵:

Աստվածաբանական բնույթի ճառերում արծարծված հիմնական նյութը Ս. Երրորդությունն է, որին հեղինակն անդրադառնում է նաև Դ (4), Ե (5), Զ (6) ճառերում, դրա համար էլ զգացվում է թարգմանիչ-խմբագրի ներկայությունը:

Ժողովածուի մեջ հատուկ տեղ են զբաղեցնում ԺԶ (16) և ԻԳ (23) ճառերը:

ԺԶ (16) ճառը նվիրված է սրբերի հիշատակը տոնելու անհրաժեշտության հարցին: Սրբերը, ըստ հեղինակի, իրենց սխրագործ կյանքով օրինակ են ծառայում հավատացյալների համար և բարեխոսությամբ նրանց առաջնորդում

⁴ «Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, լուսաւորք», աշխատասիրությամբ Ա. Տեր-Միքելեանի, Էջմիածին, 1894, էջ 116:

⁵ Նույն տեղում, էջ 15:

դեպի փրկություն: Այս ճառի առկայությունը հայերեն հնագույն վարդապետական ժողովածուներից մեկում նշանակալից է նրանով, որ ցույց է տալիս, թե սրբերի հիշատակման արարողությունը հայոց եկեղեցում ինչքան վաղ ժամանակներից է կանոնական բնույթ կրել: Այն պետք է համարել խմբագրի ընդարձակում:

ԻԳ (23) ճառը որոշակի պատմական բովանդակություն ունեցող միակ գործն է ժողովածուի կազմում: Հեղինակը, օգտվելով Բարսեղ Կեսարացու վանական կանոններից, ստեղծել է վանական հաստատությունների մի հատուկ կանոնադրություն, որտեղ խրատների ձևով սահմանված են վանականների պարտականությունները: Ուստի այդ ճառը և պետք է վերագրել թարգմանիչ-խմբագրին: Այսպիսով, եթե խիստ չափանիշ կիրառենք, ապա «Հաճախապատումի» 23 ճառերից յոթը (1,2,4,5,6,16,23) պետք է դուրս հանել Գրիգոր Լուսավորչի գրչին պատկանող բուն ժողովածուից, որը գրվել էր հունարենով: Իսկ եթե դրան էլ գումարենք թարգմանիչ-խմբագիր Մաշտոցի մյուս մանր-մունր խմբագրական միջամտությունները, ապա կարելի է զգալի համարել նրա մասնակցությունը մեզ հասած «Հաճախապատումի» մեջ:

Ճառերից յուրաքանչյուրը, բնականաբար, նվիրված է որևէ թեմայի, բայց ճառագիրը երբեմն չի կենտրոնանում մի խնդրի շուրջ և թեթևակի թռչում է զանազան կողմեր, որն էլ դժվարացնում է հետևել մտքի զարգացմանը⁶:

Հեղինակը քաջահմուտ է Աստվածաշնչին, գրական մեկնություններին: Ազատորեն և հմտությամբ է օգտագործում Աստվածաշունչն իր խորհրդածությունները, մտքերը, եզրահանգումները հաստատելու, «կնքելու» համար: Որոշ ճառեր ընդարձակ են, տեղ-տեղ ձգձգված, երբեմն էլ համառոտ և կենդանի: Երբեմն առաջանում է մտածումների հորձանք, որը հասցնում է խրթնաբանության, արտահայտության հարուստ ձևերի, կենդանի և պատկերավոր ոճի: Կիրառված են ճարտասանական այլազան ձևեր, եղանակներ: Իր միտքը, մտածումներն էլ ավելի արտահայտիչ դարձնելու համար հեղինակը սիրում է օգտագործել բնության երևույթներից և կյանքից վերցրած նմանություններ, հակադրություններ:

Ճարտասանական բազմաթիվ հնարքներից կարևոր տեղ են զբաղեցնում ոճական կրկնությունները, երբ յուրաքանչյուր տող կամ պարբերություն սկսվում է միևնույն բառով կամ արտահայտությամբ.

«Զի պահք դաստիարակ են մարդկան»:

⁶ Աբեղյան Մ., «Երկեր», հտ. 3, Երևան, 1968, էջ 143:

«Զի են մեզ պահք բժիշկը»⁷ [1,31]:

Ժ (10) ճառում պարբերությունները սկսվում են ավետարանական երանիներով.

«Երանի հեզոց, երանի, որ քաղցեալ և ծարավի իցեն արդարության»:

«Երանի աղքատաց հոգվոց»⁸:

ԺԱ (11) ճառի պարբերությունները սկսվում և կրկնվում են հեզություն բառով:

Հռետորական արվեստի բնորոշ հնարներից է նաև հակադրությունների գործածությունը, որը նույնպես հաճախակի է հանդիպում ճառերում:

«և ընդդեմ չափեն մեղացն զուղղութիւն անիրավութիւն իրաւունս, անսրբութիւն սրբութիւն...»⁹:

Մեծ տեղ են զբաղեցնում նաև համեմատությունները, որոնց նյութը հեղինակը վերցնում է Աստվածաշնչից, բայց հաճախ համեմատության եզր են ծառայում նաև առօրյա կյանքի երևույթները և մարդկային համեմատությունները:

Ընդհանուր առմամբ «Հաճախապատում ճառերը» գրված են խրթին, անմատչելի լեզվով, որովհետև, ինչպես նկատված է բանասիրության մեջ, դրանք որքան էլ սկզբնապես բանավոր քարոզներ ու խրատների գրառում լինեն՝ հասցեագրված ոչ միայն եկեղեցու վարդապետներին և հոգևորականներին, այլ նաև հասարակ ժողովրդին, միևնույն է, թարգմանության միջոցով վերածվել են հունաբան հայերենի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում քննարկվում են «Հաճախապատում ճառք» ժողովածուի կառուցվածքային առանձնահատկություններն ու ժանրային բնույթը: «Հաճախապատում ճառքը» հայ փիլիսոփայական և քրիստոնեական ջատագովական գրականության առաջին գործերից է: Ճառերում մանրամասնորեն ներկայացված են Աստվածաշնչի, քրիստոնեական աշխարհընկալման հիմնական գաղափարներն ու սկզբունքները: Ս. Գրքից հետո «Հաճախապատում ճառերը» դարձել են Հայաստանեայց եկեղեցու առաքելական վարդապետության ամենահին սկզբնաղբյուրը, որում ամփոփված են նրա դավանական և բարոյական հիմնադրույթները:

⁷ «Սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք, լուսաւորք», աշխատասիրությամբ Ա. Տեր-Միքելեանի, Էջմիածին, 1894, էջ 31:

⁸ Նույն տեղում, էջ 117:

⁹ Նույն տեղում, էջ 83:

Բանալի բառեր – «Հաճախապատում ճառք», ջատագովական գրականություն, Գրիգոր Լուսավորիչ, թուղթ-նամակներ, Մաշտոց, քրիստոնեական վարդապետություն, բարոյախոսական, բազմապատիկ ճառեր, թարգմանիչ-խմբագիր, հունարան հայերեն:

СТРУКТУРА И ХАРАКТЕР ЖАНРА "МНОГОВЕЩАТЕЛЬНЫХ РЕЧЕЙ"

НЕЛЛИ ПЕТРОСЯН

В данной статье рассматриваются структурные особенности и характер жанра «Многовещательных речей». «Многовещательные речи» являются одной из первых работ армянской философской и апологетической литературы. В речах представлены основные понятия и принципы Библии, христианского миропонимания. Вслед за Святым Писанием «Многовещательные речи» стали источником апостольского учения Армянской церкви, где собраны ее основные теологические и нравственные положения.

Ключевые слова – "Многовещательные речи", апологетическая литература, Григорий Просветитель, бумажные письма, Маштоц, христианская доктрина, нравоучительный, множественные речи, редактор-переводчик, армянский проэллинский.

THE STRUCTURE AND THE GENRE OF "HAJAKHABADUM GARKY" (A SEQUENCE OF SPEECHES)

NELLI PETROSYAN

This article considers the structural features and the genre of "Hajakhabadum Garky" (a sequence of apologies, speeches). "Hajakhabadum Garky" is one of the first works of the Armenian philosophical and religious apologetic literature. The basic concepts and principles of the Bible and Christian worldview are in depth presented in these speeches. "Hajakhabadum Garky" has become the oldest provenance after the Bible where the doctrine of the Armenian Apostolic Church and its moral principles are brought together.

Key words - "Hajakhabadum Garky", apologetic literature, Gregory the Illuminator, paper-mails, Mashtots, the Christian doctrine, preachy, multiple speeches. – translator-editor, philhellenism in the Armenian language.

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԳԳԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Մշակույթը նյութական ու հոգևոր արժեքների ամբողջություն է, որը ստեղծվել և ստեղծվում է մարդկային հասարակության գործունեության պատմական զարգացման ընթացքում: Այն գոյություն ունի հարաբերական ինքնուրույնության ձևով և հասարակական գործունեության արգասիք է: Նեղ առումով ընդունված է խոսել հասարակական գործունեության մեջ նյութական բարիքների և հոգևոր բարիքների արտադրության մշակույթի մասին¹:

Մշակույթը, ազդելով հասարակական գործունեության բոլոր ոլորտների վրա, միաժամանակ կրում է աշխարհում տեղի ունեցող գործընթացների ազդեցությունը: Քանի որ մշակույթն ընդգրկում է այլ մշակույթների հետ որևէ էթնիկ հանրության հաղորդակցվելու պատմական, քաղաքական, սոցիալ-տնտեսական գործընթացներով պայմանավորված համակարգը, ապա այդ հանրության ինքնատիպությունն էլ պայմանավորված է մշակույթի առանձնահատկություններով: Ընդհանուր առմամբ մշակույթը պատմական երևույթ է, որ զարգանում է կախված հասարակության կառավարման քաղաքական համակարգից, ինչպես նաև նրա սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական վիճակից²:

Մշակույթը դեռևս անհիշելի ժամանակներից արմատացած է եղել հայ ժողովրդի կյանքում՝ հանդիսանալով նրա ստեղծագործ մտքի արգասիքը, ապահովելով նյութական և հոգևոր բարիքների արտադրությունը, ինչն էլ իր

¹ Ադո Ա. Վ., Ալտման Վ. Վ. և ուրիշներ, Փիլիսոփայական բառարան. Կուլտուրա /Երեվան, «Հայաստան», 1975թ., էջ 220-221:

² Թադևոսյան Ա., Մշակույթային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցերը ազգային անվտանգության տեսանկյունից //«Նորավանք» ԳԿՀ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, Երևան, «Բավիղ», 2003թ., էջ 5-7, 10:

ուրույն և արժանի տեղն է զբաղեցրել համաշխարհային քաղաքակրթության ու համամարդկային մշակույթի զարգացման մեջ:

Ներկա ժամանակաշրջանում հայաստանյան հասարակությունը կրում է փոխակերպվող հասարակությանը բնորոշ դժվարություններ ոչ միայն սոցիալ-տնտեսական ոլորտում, այլև հոգևոր-մշակութային ոլորտում նույնպես³: Այդ դժվարությունները, թերևս, պայմանավորված են ներկայումս ընթացող համաշխարհայինացման գործընթացներով և դրանցում Հայաստանի Հանրապետության (<<) համարկվելու (ինտեգրվելու) անխուսափելիությամբ (կապված է հանրապետության կառավարման համակարգի և հասարակական գործունեության հետ, ներառյալ՝ հոգևոր-մշակութային ոլորտի՝ եվրոպական չափանիշներով ժողովրդավարացումը և բարեփոխումների ծրագրերը): Զարգացած երկրների մշակույթին համարկվելու, այդ երկրների մշակույթի արդյունք հանդիսացող քաղաքական, տնտեսական մոդելների յուրացումը ոչ պարզ ընդօրինակման ճանապարհով անխուսափելիորեն հանգեցնում է մշակութային փոփոխությունների: Հակառակ դեպքում էթնիկ հոգևոր-մշակութային միջավայրում առաջանում են մշակութային բնույթի հակասություններ, ինչն էլ թուլացնում է ազգային մշակույթի ինքնությունն ու այդ մշակույթի հաղորդակցային գործառույթը:

Աշխարհում ընթացող համընդհանուր փոփոխությունների հետևանքով ազգային հոգևոր-մշակութային արժեքները (այդ թվում՝ մշակութային ժառանգությունը) արժեզրկող, հասարակության հոգևոր-մշակութային կյանքն ապակողմնորոշող, անգամ կազմալուծող ներգործությունից զերծ չէ նաև <<-ն: Գլուխ է բարձրացնում մշակութային էքսպանսիոնիստական արշավանքը դեպի հայ ազգային հոգևոր-մշակութային միջավայր, ինչի արդյունքում տեղի է ունենում հայ մարդու բարոյահոգեբանական կերտվածքին խորթ օտար արժեհամակարգի ծավալում ու արմատակալում հասարակական գործունեության մեջ: Արդյունքում հին ու նոր մշակույթների միջև առաջացող հակասությունը ձևավորում է բախումնային իրավիճակ՝ վտանգելով հայ ազգային հոգևոր-մշակութային միջավայրի՝ նոր մշակույթի յուրովի ընկալման և իրեն հարիր, սեփական արտահայտչաձևերով դրսևորման ու ներկայացման ունակությունը⁴: Այլ խոսքով՝ վտանգվում է << հոգևոր-մշակութային անվտանգություն-

³ Միջազգային գիտաժողով. «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական և գործնական հիմնախնդիրներ» (Ամփոփումներ) /Երևան, ՀՊՄՀ, 16-17.04.2012թ., 108էջ:

⁴ Տե՛ս հղում № 2, էջ 17-20, 32-34:

նը, ինչը պետք է ընկալել որպես հասարակության մշակութային և հոգևոր-բարոյական արժեքների այնպիսի վիճակ, երբ դրանք պաշտպանված են տեղեկատվական քայքայիչ ներգործությունից⁵:

Ներկայումս համաշխարհային, մասնավորապես եվրոպական, զարգացող մշակութային համակարգին համարվելը պահանջում է մշակութային ինքնության սկզբունքներ՝ համաշխարհային համամարդկային արժեքները յուրացնելու և ազգայինին հարմարեցնելու միջոցով, միաժամանակ պահպանելով և վերարտադրելով հայ ազգային ինքնատիպությունը պայմանավորող մշակութային համակարգը: Մշակութային հարմարվողականությունը (մշակութային ադապտացիա) մշակութային համակարգի նորաստեղծ (ինովացիոն) հատկությունների և կայուն որակների (օրինակ՝ ավանդույթների) համադրության ներդաշնակ գործընթաց է, որը նպաստում է հասարակության մշակութային պահանջմունքների բազմակողմանի բավարարումը խթանող պայմանների ստեղծմանը⁶: Այդպիսի պայմաններ են, կամ, ինչպես ընդունված է ասել մշակութաբանության մեջ, մշակույթի ռացիոնալության ապահովման պայմաններ են պետական մշակութային քաղաքականությունը, համաշխարհայնացման գործընթացներում ազգային մշակույթի առաջընթացի ռազմավարությունը, մշակույթի ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումը, հասարակության սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրների, այդ թվում՝ մտավորականության սոցիալական կարգավիճակի հետ կապված խնդիրների կարգավորման համալիր ծրագրային մոտեցումը, հասարակության հայրենասիրական և կրոնաբարոյական դաստիարակությունն ու բարոյահոգեբանական կայունության ապահովումը: Մշակութային բացարձակ անաղարտության պահպանումը չի կարող համարվել մշակութային ինքնության, ազգային հոգևոր-բարոյական արժեքների պահպանման այնպիսի սկզբունք, որն ապահովի՝ մի կողմից արդի զարգացող աշխարհից հետ չմնալու, մյուս կողմից՝ պահպանելու և վերարտադրելու ազգային ինքնատիպությունը պայմանավորող մշակութային համակարգը⁷ ⁸:

⁵ **Քինակցյան Ա.**, Հոգևոր-մշակութային անվտանգությունը որպես տեղեկատվական անվտանգության բաղադրիչ // «Բանբեր Երևանի համալսարանի», Հասարակական գիտություններ - Իրավագիտություն, №3 (134), 2011թ., էջ 21-26:

⁶ **Քոչարյան Հ.**, Տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համատեքստում // «Նորավանք» ԳԿՀ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ /Երևան, «Բավիղ», 2003թ., էջ 13, 14, 16, 87:

⁷ Տե՛ս հղում №2, էջ 49, 52-54:

Հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտի անվտանգությունը եղել է և ներկայում էլ կա որպես ժամանակի տարբեր մարտահրավերների թիրախ, արտաքին և ներքին սպառնալիքների օբյեկտ: Ներկայումս ՀՀ-ի համար ևս ազգային-մշակութային ինքնության պահպանման խնդիրը հրատապ է, և ազգային անվտանգության համակարգում այն դառնում է առաջնահերթություններից մեկը⁹:

« Հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտի բարեփոխման, արդիականացման, ինչպես նաև համաշխարհայինացման գործընթացներում համարկման և սրանցով պայմանավորված տարաբնույթ մարտահրավերներին դիմակայելու, միևնույն ժամանակ հայ ազգային մշակութային ինքնատիպությունը պահպանելու և պաշտպանելու համար օրվա հրամայականն է հոգևոր-մշակութային ոլորտի վտանգների, սպառնալիքների բացահայտումը և վերլուծությունը: Այս նպատակադրումն է, ըստ էության, կազմում այս աշխատանքի բովանդակային հիմքը, միևնույն ժամանակ ընդգրկելով աշխատանքի թեմայի արդիականությունն ու հրատապությունը լուսաբանող հարցերը:

Ազգային անվտանգության ապահովման վերլուծական գործընթացներից ելնելով՝ անհրաժեշտություն է ծագում դասակարգելու « Հոգևոր-մշակութային անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները: Նշենք նաև, որ հոգևոր-մշակութային անվտանգության ապահովման համակարգում հասարակության հոգևոր-բարոյական անվտանգության ենթաբաղադրիչը ներկայացվում է հարաբերական ինքնուրույն ձևով՝ պայմանավորված Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ «Հ սահմանադրությամբ (հոդված 8.1) տրված իրավունքով՝ պետությունից անկախ գործառույթային համակարգով¹⁰:

Հոգևոր-մշակութային անվտանգության մարտահրավերներ. սրանք պայմանավորված են համաշխարհայինացման գործընթացներով, որ մշակութային տեսանկյունից հաճախ ընկալվում են որպես համահարթեցման

⁹ **Սարգսյան Ա., Հովականյան Յու.** և ուրիշներ. «Հ Ազգային անվտանգության հայեցակարգի հոգևոր-բարոյական հիմնախնդիրները // Երևան, «ՊՏՀ, «Ամբերդ» մատենաշար, №10, 2014 թ., էջ 23-28:

⁹ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն // «Հ Նախագահի հրամանագիր՝ ՆՀ-37-Ն, 07.02.2007 թ. / Երևան, ՀՀՊՏ №11 (525), 25.02.2007 թ., 39 էջ:

¹⁰ «Հ օրենքը «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» (հոդված 8, 9, 10) / Երևան, ՀՀ ԱԺ, 22.02.2007թ.:

գործողություններ: Գլոբալ տեղեկատվական ցանցերի ինտենսիվ օգտագործման պայմաններում զարգացած երկրներից զարգացող երկրների հանդեպ ծագում են մշակութային հարձակման (ազդեցիկայի) նոր ձևեր: Վերջինների վրա կախվում է մշակութային և ազգային յուրօրինակությունը կորցնելու վտանգ: Հարձակման սուբյեկտն իր մշակութային արժեքների թելադրմամբ և պարտադրմամբ արհամարհում է և անտեսում մշակութային օբյեկտի էթնոմշակութային ինքնատիպությունը պահպանելու բնական ձգտումը: ՈՒստի, իմաստ ունի դասակարգել ՀՀ հոգևոր-մշակութային անվտանգության մարտահրավերները ըստ գլոբալ և ազգային մակարդակների:

Գլոբալ մակարդակ.

- համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում մշակույթը՝ որպես տնտեսական ներուժի դիտման բացակայություն կամ նվազ գնահատվածություն. գրեթե բացակայում է հայկական մշակութային արտադրանքի ապրանքայնացման գործընթացը, որում, հավանաբար, իր ծանրակշիռ դերակատարությունը պետք է ունենա նաև հայկական դիվանագիտությունը,

- համաշխարհային մշակութային ժառանգության հարուստ և բազմազան շտեմարանում հայկական մշակույթի ներկայացվածության պակաս, ինչի արդյունքում պատշաճ մակարդակի վրա չէ հայկական մշակույթի տեսանելիությունը. չնայած հայկական բազմադարյան մշակույթին, զուտ ազգային մշակութային որոշ նմուշներ են պաշտոնապես գրանցված ՅՈՒՆԵՍԿՕ համաշխարհային մշակութային ժառանգության շտեմարանում (Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, Էջմիածնի Մայր տաճարն ու Ջվարթնոց հնագիտական վայրը, Գեղարդի վանքը և Ազատ գետի հովիտը, «Սասնա ծռեր» դյուցազներգությունը, հայկական խաչ-քարը, դուդուկը, լավաշ-հացը)^{11 12},

- արտերկրի որոշակի քաղաքական, դիվանագիտական սահմանակարգերի (ինստիտուտների), հասարակական կազմակերպությունների կողմից հայկական մշակութային ինքնության դիտարկում համաշխարհայնացման համահարթեցման պրիզմայի միջով. անողոք քննադատության է ենթարկվում, կարծրատիպ պահպանողականության գնահատականով, հայկական ինքնատիպ մշակութային համակարգը՝ պատմականորեն ապացուցված հոգևոր-

¹¹ Ամիրյան Դ., Սարգսյան Ա., Ազգային մշակույթը որպես ազգի ինքնության ձևավորման նախապայման /«Հոգեբանություն և կյանք», №3, 2007 թ., էջ 117-124:

¹² www.arlis.am/Document View.aspx? Doc ID=58019

մշակութային արժեքների և հայ ազգի վերարտադրման իր կայուն գործառնություն^{13 14 15 16},

- ազգային հոգևոր-մշակութային արժեքներն ընդունվում են որպես թիրախ համաշխարհայնացման գործընթացներում հաճախ անթաքույց գործող ապազգային, ապակառուցողական քարոզչական մեքենայի համար. առկա է բռնության, դաժանության, այլասերման, ազգուրաց, ցածրորակ, հիմնականում արևմտյան, մշակութային արժեքների ներթափանցումը հայ ազգային ինքնատիպ մշակույթ՝ զանգվածային գիտակցության վրա համեմատաբար արագ և «արդյունավետ» ներգործող քարոզչական ձևաեղանակների (մեխանիզմների) կիրառմամբ, հեռահաղորդակցության, հիմնականում՝ համացանցի և սոցիալական ցանցերի, բջջային կապի ու տեքստային նյութի հրապարակման բաց հրատարակումների միջոցով: Այս առումով արտերկրյա քայքայիչ կենտրոններից կառավարվող, կրոնական տարբեր կազմակերպությունների ապակառուցողական գործունեության թիրախ է դարձել նաև Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին (ստորև՝ Եկեղեցի): «Հ ներթափանցած աղանդավորական կրոնական կազմակերպությունների գործունեությունը, բացի կրոնական քարոզչությունից, կարող է ունենալ այլ շահեր և»^{17 18 19 20 21}:

Ազգային մակարդակ.

- համամարդկային և ինքնատիպ արժեքների ընդունմանը զուգահեռ, ազգային մշակութային նույնացման պահպանում,

- մշակութային ոլորտի փոխկապակցված տարբեր բնագավառների զարգացման տեմպերի տարբերություն (օրինակ՝ կրթություն և գիտություն, արվեստում երգ և պար),

¹³ Տե՛ս հղում №8, էջ 67-78:

¹⁴ Տե՛ս հղում №11, նույն տեղում:

¹⁵ **Լալայան Մ.**, Ազգային-պահպանողական գաղափարախոսության շուրջ /«21-րդ ԴԱԲ», №1(53), 2014թ., էջ 5-8:

¹⁶ **Հարությունյան Բ.** և ուրիշներ. Հայոց պատմություն /Երևան, «Տիգրան Մեծ», 2014թ., էջ 149-164:

¹⁷ www.religions.am/Սարգսյան Ա., Հոգևոր անվտանգություն:

¹⁸ Տե՛ս հղում №2, էջ 57-58:

¹⁹ Տե՛ս հղում №8, էջ 43-50:

²⁰ «Հ օրենքը «Խղճի և կրոնական կազմակերպությունների մասին» (հոդված 2, 3, 7, 8, 17) /Երևան, ՀՀ ԳԽ, 17.06.1991թ. (փոփոխություններով և լրացումներով՝ ՀՀ ԱԺ, 14.04.2011թ.):

²¹ Տե՛ս հղում №15, նույն տեղում:

- Եկեղեցու հոգևոր-բարոյական կայունության վտանգում՝ պայմանավորված Եկեղեցու հոգևոր գործունեության կառավարման բրգածնությամբ, անթափանցիկությամբ, հասարակության հոգևոր-կրոնական դաստիարակության գործընթացի բացերով, այդ գործընթացների նկատմամբ հասարակական վերահսկողական սահմանակարգերի և համապատասխան նորմերի պակասով²²:

Հոգևոր-մշակութային անվտանգության սպառնալիքները պետք է դիտել՝ նկատի առնելով դրանց գոյության արտաքին և ներքին աղբյուրները:

Արտաքին սպառնալիքներ.

- << տնտեսական շրջափակում, տարածաշրջանում փխրուն խաղաղություն,

- արտատարածաշրջանային մշակութային միջավայրում հայ ազգային մշակույթը նվաստացնող, հոգևոր-մշակութային արժեքներն արժեզրկող, համաշխարհային քաղաքակրթության վերաբերմունքն ու գնահատականն այդ մշակույթի և արժեքների հանդեպ ապակողմնորոշող գաղափարների քարոզչություն՝ ամեն տեսակի արմատական ուղղվածության կենտրոնների, կազմակերպությունների և հակառակորդ պետությունների պաշտոնական և ոչ պաշտոնական զանգվածային լրատվամիջոցներով ու տեղեկատվական-հեռահաղորդակցության կապուղիներով,

- հայ ազգային հոգևոր-մշակութային ոլորտի անաղարտության դեմ ուղղված քարոզչության հակազդման բացակայություն կամ անբավարար հակազդում,

- հայոց լեզվով և հայեցի լեզվամտածողությամբ կերտված ազգային հոգևոր-մշակութային ոլորտն օտարալեզու ենթամշակույթների ներխուժում, համաշխարհայնացման լեզու համարվող անգլերենի արմատավորում հայ իրականության մեջ²³,

- հայ հասարակության մեջ անընդհատ ներթափանցող օտար կրոնական ուղղություններ և դրանց բազմակողմանի հովանավորում ապահովող կազմակերպությունների գործունեություն^{24 25 26 27 28}:

²² www.mincult.am/purpose-activity.

²³ **Мирзоян Т.** Хэллоун - праздник нечести /«ГА», №117, 03.11.2012 г., с. 7.

²⁴ **Մայիլյան Ս.**, Ժամանակակից աղանդները Հայաստանում //Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոն. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին /Վաղարշապատ, 2000թ., էջ 17-24, 58-90, 127-228, 240-258, 261-270:

Ներքին սպառնալիքներ.

- հասարակության լայն շերտերի մեջ մշակույթի նկատմամբ հետաքրքրության բացակայություն՝ պայմանավորված առօրյա սոցիալ-տնտեսական խնդիրներով,

- ազգային ավանդական մշակույթի հարատևությունն ապահովող և այդ մշակույթի տարրերը ժամանակակից մշակույթի ճյուղերում ներդնելու ու նորովի լուսաբանելուն ուղղված միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ հստակ հայեցակարգի բացակայություն,

- գիտակրթական համակարգում գիտության և կրթության փոխկապակցված բնագավառների զարգացման տեմպերի տարբերություն. հիրավի, ճեղքվածք է առաջացել գիտության և կրթության միջև, չնայած այն հանգամանքին, որ մշակույթի հետ սերտ փոխկապակցված այս երկու բնագավառների գործունեության կառավարումն իրականացվում է մինևույն պետական լիազոր մարմնի կողմից (ՀՀ կրթության և գիտության նախարարություն),

- մշակույթի սուբյեկտի՝ ժամանակակից մտավորականության՝ որպես հասարակության խավի, դեռևս լիովին ձևավորված չլինելու իրողություն,

- հանրապետության գիտական և այլ մտավոր ներուժի, «ուղեղների» արտահոսք,

- երիտասարդության աճող արտահոսք՝ արտագնա աշխատանքի նպատակով,

- աղանդավորների ապազգային, ապակառուցողական գործունեություն՝ փակ ամբողջատիրական խմբերի ստեղծում, հասարակության հոգևոր-բարոյական կյանքի, մասնավորապես Եկեղեցու ավանդապաշտական ծիսակար-

²⁵ **Ասլանյան Ա., Խաչատրյան Գ.**, Փոխակերպվող հասարակությունում զինծառայություն անցնելու առանձին խնդիրների մասին //Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ (ՀՊՄՀ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես), N°2, 2012 թ., էջ 99-111 /Երևան, «Ձանգակ - 97», 2012 թ.:

²⁶ **Պողոսյան Ի. Բ.**, Տեղեկատվական-հոգեբանական պայքարի մեխանիզմները կրոնական քարոզությունում: /«Ընտանիք և դպրոց», N°1, 2009 թ., էջ 36-49:

²⁷ **Վարդանյան Կ., Կարապետյան Ն.**, Երիտասարդական դեստրուկտիվ ռեֆերենտային միավորումները որպես ազգի աուտոագրեսիվ վարքագծի դրսևորման գործոն //Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ (ՀՊՄՀ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես), N°3, 2012 թ., էջ 80-84 /Երևան, «Ձանգակ-97», 2012 թ.:

²⁸ **Իկիլիկյան Ա., Քինակցյան Ա.**, Տեղեկատվական հոսքերի ազդեցությունը երիտասարդության վրա /«21-րդ ԴԱԲ», N°4(22), 2008 թ., էջ 80-96:

գերի, խաթարում և դրա դեմ պայքարի ոչ լիարժեք օրենսդրական դաշտի առկայություն^{29 30}:

Հետևություն. պայմանավորված արդի համաշխարհայինացման բարդ ու փոփոխական գործընթացներով ՀՀ հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտը տարբեր մարտահրավերների թիրախ է, արտաքին և ներքին սպառնալիքների օբյեկտ: Մարտահրավերները հաղթահարելու, ինչպես նաև ոլորտի հանդեպ սպառնալիքները չեզոքացնելու գործընթացը պետք է կազմակերպել գլոբալ և ազգային մակարդակների վրա՝ բացահայտելով իրական սպառնալիքների աղբյուրները, հիմնվելով բազմակողմանի և մանրակրկիտ վերլուծությունների վրա:

Հոգևոր-մշակութային անվտանգության մարտահրավերների և հոգևոր-մշակութային ոլորտի հանդեպ սպառնալիքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ համաշխարհայինացման հետևանքով աճում է հայ մարդու բարոյահոգեբանական կերտվածքի համար անընդունելի օտար ենթամշակույթների ներթափանցումը հայաստանյան մշակութային միջավայր, ինչի արդյունքում մեծացել է հասարակության մի ստվար հատվածի հոգևոր-մշակութային պահանջմունքները բավարարող մշակութային ցածրաճաշակ արտադրանքը: Անարգել իրականացվում է տարբեր կարգի ամենաթողության և բռնության գաղափարատիպի (իդեալ) վրա հիմնված կենսակերպի, ներառյալ աղանդավորական բնույթը, քարոզչություն: Սա կարելի է դիտել որպես արտաքին և միաժամանակ նաև ներքին սպառնալիք ՀՀ հոգևոր-մշակութային անվտանգությանը:

Հայաստանում հոգևոր-մշակութային արժեքների աստիճանաբար արժեզրկման հետևանքով մշակույթը սկսում է կորցնել հասարակության կենսագործունեության մեջ թերևս իր գլխավոր դերը՝ հասարակության դաստիարակում, մարդկանց վարքի բարոյական կարգավորում և բարոյական արժեքային հիմքերի ամրագրում: Արդյունքում աճում է հասարակության սոցիալական ծանր պայմաններում հայտնված խմբերի կազմալուծումը (դեգրադացիան), որն ուղեկցվում է աներևույթ պարտադրված արտագաղթով:

Հայաստանում կրոնական-աղանդավորական կազմակերպություններն իրենց, ըստ էության ապազգային, գործունեությամբ թուլացնում են հայ ժողովրդի էթնիկ հոգեբանությունը (որոշ աղանդներ ազգային պատկանելու-

²⁹ Տե՛ս հղում N°2, էջ 62-65:

³⁰ Տե՛ս հղում N°6, էջ 90-92, 125-126, 135:

թյունը համարում են պարզ պատահականություն և զուտ ֆիզիոլոգիական երևույթ՝ խարխուլելով հայ ազգային ինքնատիպությունն ապահովող մշակութային համակարգի դիմադրողականությունը տարաբնույթ վտանգների նկատմամբ, ձևավորում են հասարակության մեջ անվտանգության մթնոլորտ պետական կառավարման համակարգի նկատմամբ և անտարբերություն՝ համեմված զուտ սպառողական բնագրներով:

Հայ հոգևոր-մշակութային ինքնության համար իրական սպառնալիք է բռնության, դաժանության, ահաբեկչության, այլասերման գաղափարների վրա հիմնված, հիմնականում արևմտյան, ցածրարժեք մշակութային արժեհամակարգի ներթափանցումը « ինքնատիպ մշակութային միջավայր, ինչպես նաև արտերկրյա կենտրոններից ղեկավարվող օտար, ապագային կրոնական-դավանաբանական գաղափարներ տարածող աղանդավորական կազմակերպությունների գործունեությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

« Հասարակական գործունեության հոգևոր-մշակութային ոլորտի բարեփոխման, արդիականացման, ինչպես նաև համաշխարհայինացման գործընթացներում համարկման և սրանցով պայմանավորված տարաբնույթ մարտահրավերներին դիմակայելու, միևնույն ժամանակ հայ ազգային մշակութային ինքնատիպությունը պահպանելու և պաշտպանելու համար օբյեկտիվ անհրաժեշտություն է հոգևոր-մշակութային ոլորտի վտանգների, սպառնալիքների աղբյուրների բացահայտումն ու վերլուծությունը: Այս գործընթացը մեկ անգամ ևս ապացուցում է հոգևոր-մշակութային անվտանգությունը որպես « ազգային անվտանգության բաղադրիչ դիտելու տրամաբանությունը: Քանի որ հոգևոր-մշակութային ոլորտը կրում է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման և զարգացման գործառույթներ (այլ խոսքով՝ հայ ազգի վերարտադրման գործառույթ), ապա այն ապահովում է ազգային անվտանգության հիմնարար արժեքների (հայապահպանություն, հայ ազգի հարատևություն) կայունությունը, ինչպես նաև պաշտպանությունն արտաքին և ներքին սպառնալիքներից:

« ազգային անվտանգության ապահովումը պետք է խորապես իմաստավորվի այն ակնհայտ փաստով, ըստ որի անվտանգության լիարժեք ապահովումն էապես պայմանավորված է նաև նորովի վերափոխված ազգային մշակույթով և դրա պարտադիր բաղադրիչով՝ հասարակության առողջ ու կայուն բարոյահոգեբանական վիճակով:

Բանալի բառեր - հոգևոր-մշակութային անվտանգություն, ազգային

ինքնություն, մշակութային ինքնատիպություն, մշակութային արժեհամակարգ, մարտահրավեր, սպառնալիք, բացահայտում, վերլուծություն, անվտանգության հիմնարար արժեք, պարտադիր բաղադրիչ, բարոյահոգեբանական վիճակ, գլոբալ և ազգային մակարդակներ:

ОБ ОТДЕЛЬНЫХ ЗАДАЧАХ ОБЕСПЕЧЕНИЯ ДУХОВНО-КУЛЬТУРНОЙ БЕЗОПАСНОСТИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГАГИК ХАЧАТРЯН

Выявление источников опасностей, современных вызовов и угроз по отношению к безопасности духовно-культурной сферы общественной деятельности в Республике Армения (РА), а также анализ причин, обстоятельств и условий их возникновения являются на сегодняшний день актуальной задачей, продиктованной осуществлением политики государства в области культуры: реформированием и демократизацией системы управления, а также участием в глобализационных процессах по интегрированию национальной культуры в современную систему ценностей всемирных достижений по культуре с учетом сохранения своеобразной самобытной системы армянской национальной культуры и ее защиты от разного рода посягательств. Постановка такого рода задачи лишней раз доказывает правоту логики: духовно-культурная безопасность есть составляющая национальной безопасности РА.

Поскольку духовно-культурная сфера общественной деятельности в РА осуществляет функцию сохранения и развития армянской национальности и ее самобытности, то она обеспечивает стабильность таких фундаментальных ценностей национальной безопасности как армянская национальная идентичность и наследственность, а также их защиту от внешних и внутренних угроз.

Поятие обеспечения национальной безопасности должно быть осмыслено таким очевидным фактом, что полноценная безопасность существенно обусловлена по-новому преобразованной национальной культурой и е неотъемлемой составляющей – здоровым и стабильным морально-психологическим состоянием армянского общества, а духовно-культурную безопасность нужно рассматривать и анализировать на глобальном и национальном уровнях.

Ключевые слова – духовно-культурная безопасность, национальная идентичность, самобытная культура, система ценностей культуры, фундаментальная ценность безопасности, вызов, угроза, выявление, анализ, неотъем-

лемая составляющая, морально-психологическое состояние, глобальный и национальный уровни.

CERTAIN ISSUES CONCERNING THE SPIRITUAL - CULTURAL SECURITY OF RA

GAGIK KHACHATRYAN

For the RA spiritual-cultural realm to refine, innovate, integrate into globalization processes and to be able to overcome the challenges that accompany these procedures and at the same time to preserve and protect the Armenian national identity, it is an objective necessity to reveal and analyze the sources of threats and dangers to the spiritual-cultural realm. This proves again and again the logic of viewing the spiritual-cultural realm security issue as a constituent of the Armenian national security strategy. As it sustains the objective of securing and developing the Armenian people and its national identity, then it protects the solidity of the basic values (preserving the identity of Armenians and the endurance of the Armenian nation) as well as the defense of the nation from the external and internal threats.

The concept of national security must be deeply acknowledged by the obvious fact that absolute security is conditioned by the renewed national culture and its inviolable element – the healthy and stable moral psychological condition of the society.

Key words – spiritual-cultural security, national identity, cultural identity, a cultural system of values, challenges, threats, disclosure, analysis, inviolable security principles, compulsory component, the moral psychology condition, global and national levels.

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ОСОБЕННОСТИ ОСНОВНЫХ ВИДОВ ПРАВОВОГО СТАТУСА ЛИЧНОСТИ

ЛИЛИТ КАЗАНЧЯН

Исследование видов правового положения личности, как элементов правового положения личности, имеет краеугольное значение для непрерывно развивающейся науки теории государства и права. **Согласно общепризнанному определению, правовое положение личности-это ее фактическое состояние в данном обществе и государстве, которое в большей или меньшей мере (в зависимости от формы правления и политического режима государства) находит свое отражение в праве¹.** Стоит отметить, что в современной науке теории государства и права выделяются следующие виды правового статуса личности²:

- 1) Общий или конституционно-правовой статус.
- 2) Специальный (родовой) статус.
- 3) Индивидуальный (личный) статус.
- 4) Статус физических и юридических лиц.
- 5) Статус иностранцев, лиц с двойным гражданством, апатридов и беженцев.
- 6) Отраслевые статусы (гражданский, административно-правовой и т.д.).
- 7) Должностные и профессиональные статусы (прокурор, судья и. т.д.).
- 8) Статус лиц, работающих в экстремальных (чрезвычайных) условиях или в особых регионах страны (Крайний Север, оборонный объект).

Характерно, что первые 3 вида правового статуса личности имеют краеугольное значение для непрерывно развивающейся науки теории госу-

¹ Айвазян В.Н. Права человека. Ереван, Тигран Мец, 2002, с. 43 (на арм. яз.).

² См.: Теория государства и права/Под.ред. Н.И. Матузова, А.В. Малько. М., Юристъ, 2004, с. 97-107; Проблемы общей теории права/Отв. ред. В.С. Нерсесянц, М., Норма, 2004, с. 308-309; Fulshiron J. Nationalite.Press Universitaires de France, Paris, 2000, p. 62-66.

дарства и права, так как они в основном охватывают особенности всех остальных видов правового статуса личности.

1) *Общий правовой статус* устанавливается конституцией, несет обобщенный характер и является статусом личности, как члена общества и гражданина данного государства. Содержание данного статуса составляют признанные и гарантированные Конституцией права, свободы, обязанности человека и гражданина, а изменение содержания этого статуса является волеизъявлением законодателя. Данный статус является общим и исходным для всех остальных видов правового статуса личности³. В юридической литературе, чаще всего, выделяется целостность правового статуса личности, которая определяется принципом равенства перед законом и судом. Если правовой статус является общим для всех граждан, более разумно, закономерно раскрыть его содержание при помощи общих прав, свобод и обязанностей, которые предусмотрены законом и, следовательно, которые могут быть приобретены и реализованы (осуществлены) любым гражданином. В частности, Н. Матузов акцентирует, что правовой статус един для всех, т.е. рабочий, крестьянин, ученый, государственный служащий, инженер и другие лица имеют один и тот же статус, равные права и обязанности⁴. Следовательно, подразумеваются права и обязанности, присущие как всем членам общества, так и каждому. В то же время, мы согласны с мнением автора о том, что понятие правового статуса гражданина синтезирует те элементы, которые в равной степени присущи (универсальны) всем правовым статусам граждан: оставляя за рамками характерные особенности статусов отдельно взятых граждан. По мнению Н. Матузова, правовой статус гражданина и правовой статус конкретных лиц соотносятся как общее и специальное (единичное). Такой подход к правовому статусу требует объяснений, поскольку в теории государства и права до сих пор остается открытым вопрос о том, какие права, свободы и обязанности личности составляют содержание правового статуса гражданина. Особенность общих прав, свобод и обязанностей состоит в том, что они принадлежат всем гражданам, независимо от социального, семейного положения, групповой принадлеж-

³ См.: **Бабенко С.В.** Правовой статус личности в правовом государстве: вопросы теории. Дисс... канд. юрид. наук., Краснодар, 2008, с. 67-78; **Федотов М.А.** Конституционный статус советского гражданина. М., Юрид. лит., 1982, с. 48-52.

⁴ См.: **Матузов Н.И.** Субъективные права граждан СССР. Саратов, изд. Сарат. ун-та, 1966, с. 85-87.

ности, пола, возраста и других факторов. К числу общих прав и обязанностей принадлежат как общеконституционные, так и общеотраслевые права и обязанности личности. Следовательно, нужно отделить общее правовое положение от отраслевого, специального правового положения личности.

2) Специальный (родовой) статус раскрывает отличительные черты правового положения определенной группы граждан (студенты, пенсионеры, военнослужащие и др.), которые, основываясь на общем правовом статусе, приобретают дополнительные права и обязанности или привилегии (льготы), предусмотренные текущим законодательством⁵. Цель юридической науки-это их усовершенствование.

Еще в советское время В. Копейчиков предложил классифицировать правовой статус советских граждан, в который входили бы: 1) основные права и свободы, закрепленные в советских конституциях, 2) иные общие для всех советских граждан права и обязанности, закрепленные иными юридическими актами, 3) права и обязанности отдельных категорий советских граждан (госслужащие, родители, представители отдельных, особых профессий и т.д.), 4) целостность (совокупность) прав и обязанностей советских граждан, которая обусловлена их индивидуальными особенностями (возраст, занимаемая должность, состояние здоровья и т.д.)⁶. В этом случае, правовой статус гражданина охватывает как общие (включая конституционные) права и обязанности гражданина, так и специальные права и обязанности отдельной группы лиц (граждан), обусловленные должностным, профессиональным и другим долгом, а также права и обязанности конкретных граждан, опосредованные индивидуальными качествами.

В юридической литературе единство прав и свобод разных групп людей (объединенных в силу особенностей своих статусов) выявляется посредством специального правового статуса. Мы считаем, что такой подход более оправдан, чем точка зрения В. Копейникова, согласно которой специальные права и обязанности отдельных групп граждан должны быть включены в единый правовой статус, присущий всем гражданам. Здесь имеются в виду не специальные права и обязанности граждан Иванова, Петрова, Сидорова, которые,

⁵ См.: **Витрук Н.В.** Общая теория правового положения личности. М., Норма, 2008, с. 140-141.

⁶ См.: **Копейчиков В.В., Суцук З.И.** Реальный социализм: демократия, личность, права человека. Киев, 1983, с. 120-130.

например, принадлежат конкретному судье, а вообще права, присущие любым судьям, в рядах которых могут быть граждане Иванов, Петров, Сидоров. Примерами специального статуса личности, обусловленными его социально-этническим своеобразием, могут быть национальные меньшинства или коренные малочисленные народы. Коренными малочисленными народами считаются те народы, которые с давних пор проживают на традиционных территориях своих предков, воспринимают себя как самостоятельную этническую общину, имеют самостоятельный быт, а численность населения ниже 50000 человек. Численность самых крупных групп не превышает 35000 человек, а их общее количество больше 65-и. Вместе с тем, данные народы не имеют национально-государственного строя, хотя сохраняют свой язык, культуру, своеобразие быта, на которых отпечатаны следы исторического развития и природных условий. Стоит отметить, что государства, ставшие на путь демократии, должны закрепить и гарантировать в конституциях и текущем законодательстве права, свободы и обязанности представителей этих групп, а также гарантировать их реализацию и защиту. Так, ст. 69 Конституции РФ гарантирует права и обязанности малочисленных коренных народов, а дополнительные права и обязанности их представителей устанавливаются Федеральным законом “О гарантиях прав коренных малочисленных народов РФ” (принято 30.04.1999г., № 82-ФЗ РФ), действие которого распространяется, в частности, на индивидов, представителей коренных малочисленных народов Севера, Сибири, Востока⁷. Положение о защите и охране прав свобод и законных интересов коренных малочисленных народов закреплено во многих международных документах: в Декларация прав и свобод человека (ООН), в Европейской конвенции о защите прав человека и основных свобод и т.д. Стоит отметить, что Рамочная конвенция “О защите национальных меньшинств” является первым юридически обязывающим документом, который в целом посвящен защите прав коренных малочисленных народов. Несмотря на тот факт, что конвенция не определяет понятие “коренные малочисленные народы”, цель конвенции-установить те правовые принципы, которые государства-участники будут обя-

⁷ См.: Федеральный закон от 30 апреля 1999 г. N 82-ФЗ "О гарантиях прав коренных малочисленных народов Российской Федерации" (с изменениями и дополнениями), <http://constitution.garant.ru/act/right/180406/>, /20.07.2012/.

заны соблюдать для гарантии и защиты этих народов. Перечисленные правовые акты гарантируют уважение национального достоинства, культуры, обычаев и вероисповедания, языка, судебную защиту при проявлении любой формы дискриминации, а также принятие во внимание традиций и обычаев коренных малочисленных народов во время судебного разбирательства, если они не противоречат конституции и законам страны, присоединившейся к этим правовым документам.

Возвращаясь к обсуждаемой теме, нужно отметить конкретные виды специального правового статуса.

1) Специальный правовой статус-это дополнение и детализация, уточнение общего, правового статуса личности. Так, иностранные лица и лица без гражданства наделены общим для них всех правовым статусом. Одновременно иностранные лица и апатриды могут быть наделены правами и обязанностями, вытекающими из особенностей(своеобразия) своих статусов пребывания в данной стране. Следовательно, различают специальные правовые статусы дипломатов, туристов, мореплавателей, военнослужащих и т.д.

2) Этот особый (специальный) вид правового статуса является ограничением общих прав и обязанностей, т.е. он представляет особый правовой статус: ограничение прав, свобод и обязанностей подозреваемого, обвиняемого, осужденного. Как мы уже отмечали, различая специальные и общие правовые статусы граждан, некоторые правоведы включают в содержание правового статуса гражданина как специальные, так и общие права и обязанности граждан, которые обусловлены социальными, профессиональными и другими особенностями этих лиц. Так, в теорию государства и права В. Патюлин ввел понятие "*правовой модус*" (от лат. *modus*- вид,мера) для раскрытия сущности прав и свобод особых видов правовых субъектов (обусловленных социально-классовыми, профессиональными, семейными и другими особенностями). По Патюлину, правовой модус-это совокупность правовых норм, которые, принимая правовой статус гражданина, закрепляют права и обязанности конкретных видов правовых субъектов. Следовательно, можно выделить правовой модус военнослужащих, лиц, работающих в особых условиях и т.д.⁸. Тем не менее, концепция "*правовой модус*" не утвердилась в науке теории государства и

⁸ См.: Патюлин В.А. Субъективные права граждан: основные черты, стадии, гарантии реализации//Советское государство и право. 1971, № 6, с. 28-29.

права. На наш взгляд, недопустимо рассмотрение правового модуса как совокупности норм объективного права, так как он принадлежит сфере регулирования субъективного, а не объективного права. Более того, он идентичен со специальным правовым статусом личности, а представленная концепция Патюлина отклоняется от первоначального смысла и целей, видов правового статуса личности.

3) **Индивидуальный статус личности** определяет совокупность прав, свобод и обязанностей конкретного индивида, которая обусловлена его конкретными особенностями, например: полом, возрастом, семейным положением, состоянием здоровья. Очевидно, что личный правовой статус предопределяется общим и специальным правовыми статусами. Следующим важным признаком данного юридического статуса является тот факт, что содержание личного правового статуса конкретного индивида меняется в разные периоды его жизни, так как не все права и обязанности приобретаются и реализуются одновременно и в полном объеме. Например, право собственности и другие имущественные права. Индивидуальный правовой статус – динамичное, со временем меняющееся явление, которое показывает какие права и обязанности личности реализуются в данный период времени. Следовательно, оно характеризуется этапами (фазами) обладания и осуществления (реализации) прав, свобод, обязанностей и законных интересов. Стоит отметить, что эти три вида правовых статусов взаимосвязаны и дополняют друг друга. Так, каждый индивид, представляясь гражданином какого-либо государства, принадлежит к определенному классу и своими конкретными признаками является неповторимой индивидуальностью. Тщательное исследование вышеупомянутых видов правового статуса личности играет важнейшую роль в реализации прав, свобод, обязанностей и законных интересов личности, так как в демократическом, правовом государстве общество и власть нацелены на осуществление и защиту гарантированных прав, свобод и обязанностей личности.

4) **Статус физических и юридических лиц** основан на главных элементах правосубъектности и их особенностях. *Юридическим лицом* считается организация, которая имеет в собственности обособленное имущество и отвечает по своим обязанностям этим имуществом, может от своего имени приобретать и осуществлять имущественные и личные неимущественные права, быть истцом

или ответчиком в суде (арбитраже)⁹. При этом, к числу организаций, коллективных субъектов правоотношений, относятся общество, частные организации и государство в целом. Деятельность разных организаций регулируется законами или учредительным документом, признанным государственной властью и не противоречащим законам. Известно, что наука теории государства и права классифицирует *правоспособность общую и специальную*. Так, общая правоспособность—это способность физического или юридического лица вообще быть субъектом права. Общая правоспособность для граждан возникает с момента рождения и прекращается смертью. Специальная правосубъектность возникает или с момента классификации личности к определенному классу, или с момента назначения данного лица на определенную должность, требующую от лица реализации особых функций (судья, депутат и т.п.). Правоспособность юридических лиц (правосубъектность и дееспособность) носит особый характер и отличается от правосубъектности физических лиц.

Во-первых, правосубъектность юридических лиц ограничивается теми целями и задачами, во имя которых они были созданы и действуют, т.е. Гражданский кодекс провозглашает специальную (целевую) правоспособность или, как его часто называют правоведа, уставную правоспособность, в отличие от общей правоспособности физических лиц. И на самом деле, юридическое лицо не может иметь такие права и нести такие обязанности, носителями которых могут быть лишь граждане. С другой стороны, существуют особые (специальные) права и обязанности, которые могут принадлежать некоторым видам юридических лиц. Например, юридическое лицо, выпускающее продукцию, может иметь право на товарный знак, торговую марку, открытие филиалов¹⁰.

Во-вторых, права юридических лиц могут быть ограничены в порядке, предусмотренном законодательными актами. Так, специальными видами дея-

⁹ См. Гражданский кодекс Республики Армения, ст. 50 http://www.parliament.am/law_docs/050598H0239rus.html?lang=rus#G4/,/15.01.2016/. Подробнее см.: **Марченко Н.** Теория государства и права. М., 2008, с. 459; **Bribosia E., Hennebel L.** Classer les droits de l'homme. Bruxelles. Bruylant, 2004, p. 108-110; **Caprano E.** État de droit et droits européens: l'évolution de modèle de l'État de droit dans le cadre de l'européanisation des systèmes juridiques. Paris, L'Harmattan, 2005; **Ruggie J.G.** Human Rights and the Future of International Society. Daedalus, 1983, 112: 4, p. 93-110.

¹⁰ См. Гражданский кодекс Республики Армения. ст. 52. http://www.parliament.am/law_docs/050598H0239rus.html?lang=rus#G4/,/15.03.2014/.

тельности юридическое лицо может заниматься только на основе особого разрешения: лицензии. Право на занятие такого рода деятельностью у юридического лица возникает с момента получения лицензии или с начала срока, указанного в ней, и прекращается с истечением срока действия лицензии, если другие условия не предусмотрены законом или иными юридическими актами.

В-третьих, юридическое лицо считается основанным, а его правосубъектность (правоспособность и дееспособность) возникает с момента государственной регистрации. В отличие от других демократических государств, где не требуется регистрация юридических лиц, почти во всех странах СНГ в основном действует вышеуказанный принцип основания юридического лица. Значит, в отличие от правоспособности физических лиц (возникает с момента рождения) и дееспособности (возникает с определенного возраста, а у некоторых лиц вообще отсутствует в силу их здоровья), моменты возникновения правоспособности и дееспособности у юридических лиц совпадают. Более того, правосубъектность у юридических лиц прекращается с момента ликвидации данного лица. Что касается особенностей дееспособности юридических лиц, то стоит отметить, что они непосредственно выражаются в действиях должностных лиц и представителей, выступающих от имени данной организации. Органами юридического лица являются индивиды, составляющие часть коллектива юридического лица, которые выбираются или назначаются для осуществления воли юридического лица, а также руководствуются действиями (приобретать права и нести обязанности) в интересах представляемого юридического лица¹¹.

5) Статус иностранцев, лиц с двойным гражданством, беженцев и апатридов. Иностранцем является лицо, имеющее гражданство конкретного государства, которое не является гражданством страны его пребывания. В отличие от апатридов, статус иностранцев обязывает человека подчиняться как законам страны его пребывания, так и законом той страны, гражданином которой он является. *Апатрид* – это лицо, которое ни одно государство не считает своим гражданином. Например, апатридом может считаться лицо, проживающее на территории РА, не имеющее гражданства РА, но которое не может доказать факт наличия гражданства (подданства) другого государства. Состояние апатридизма возникает тогда, когда человек утратил гражданство

¹¹ Гражданский кодекс Республики Армения. ст. 52. п. 5 http://www.parliament.am/law_docs/050598HO239rus.html?lang=rus#G4/,15.01.2016/.

страны своего постоянного пребывания (или рождения), но по каким-то причинам не приобрел гражданства другого государства. Лица, находящиеся в таком щекотливом положении, не могут рассчитывать на дипломатическое или консульское содействие (помощь) стран их бывшего подданства. Тем не менее, согласно общепринятому порядку, апатридам даруется особый статус, который, как правило, соответствует статусу иностранных лиц¹².

Двойное гражданство – это юридическая связь лица с двумя или более государствами. Например, индивид может одновременно быть гражданином Бразилии и Аргентины. Стоит отметить, что принцип двойного гражданства распространен в странах Латинской Америки. Он, в основном, возникает из-за пробелов и коллизий в законодательстве государства. Из статуса двойного гражданства следует, что человек с двойным гражданством может проживать в странах своего гражданства, нести военную службу в двух государствах, и быть верным этим государствам: уважать законы, религии, традиции, платить налоги и т.д. *Беженец* – это лицо, не являющееся гражданином Республики Армения, которое из-за обоснованного опасения стать жертвой преследования за принадлежность к расовой, национальной, религиозной, определенной социальной группе или политические убеждения находится вне государства своей гражданской принадлежности и не может, либо не желает пользоваться защитой этого государства, или, не имея гражданства какого-либо государства и пребывая вне государства своего прежнего основного места жительства, не может, либо не желает вернуться в это государство, или если лицо одновременно является гражданином нескольких государств, но имеет опасения, что не сможет пользоваться защитой какого-либо из этих государств¹³.

б) Нужно отметить, что в теории государства и права еще в советский период некоторые правоведы (А.В. Малько, Н.И. Матузов), классифицируя виды правового статуса личности, как особую группу выделили **должностное и**

¹² Подробнее см.: Закон Республики Армения “О гражданстве Республики Армения” (16.11.1995г.) <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1731&lang=rus/>, /15.01.2016/; Закон Республики Армения “Об иностранных лицах” (16.01.2007г.) <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2861&lang=ru/>, /15.01.2016/.

¹³ См. Закон Республики Армения “О беженцах и убежище” (27.11.2008г.). ст. 6 <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3422&lang=arm/>, /22.01.2016/. Также см.: **Андриченко Л.В., Белоусова Е.В.** Беженцы и вынужденные переселенцы (правовые проблемы) // Государство и право. 1995, № 5, с. 45-63.

профессиональное положение личности (статус прокурора, судьи и т.д.). Мы согласны с мнением другой группы авторов, которые утверждают, что такая классификация носит формальный характер, так как особенности профессионального, должностного статуса личности уже включены в специальный правовой статус личности.

7) Статус лиц, работающих в экстремальных (чрезвычайных) условиях или особых регионах страны (Крайний Север, оборонный объект).

В современном демократическом государстве до сих пор не полностью урегулирована проблемы правового статуса лиц, работающих в чрезвычайных условиях, особых регионах страны. Например, благодаря ежегодному постановлению правительства РФ предоставляется конкретная помощь лицам, живущим в данных регионах. Население в данных регионах пользуется льготами, привилегиями, связанными также с пенсионным возрастом. Женщины выходят на пенсию в возрасте 45-и лет (вместо 55-и и если трудовой стаж составляет не менее 20-и лет), а мужчины-с 50-и лет (вместо 60-и, при минимальном трудовом стаже в 25 лет). На Крайнем Севере или в прилегающих к нему областях (территориях) для лиц с трудовым стажем от 15-20 лет трудовой стаж начисляется по особой трудовой ставке, независимо от того, где он планирует в дальнейшем проживать¹⁴.

Еще раз хотим отметить, что социальный статус охватывает совокупность признаков, характеризующих индивида как участника правоотношений, а правовой статус личности-это юридически закрепленное положение личности в обществе.

РЕЗЮМЕ

В данной статье автор рассматривает сущность и особенности видов правового положения личности в современном демократическом, правовом государстве. В частности, анализируются точки зрения известных правоведов об особенностях отдельных видов правового статуса личности, а также подчер-

¹⁴ Поробнее см.: **Указ Президента РФ** “О мероприятиях по реализации государственной социальной политики” (07.05.2012г. №597)<http://base.garant.ru/70170950/./22.02.2016/>; **Постановление Правительства РФ** “О системе государственной поддержки и организации поставок продукции (товаров) в районы Крайнего Севера и приравненные к ним местности в 1995 году” (24.05.1995 г. № 508) <http://docs.cntd.ru/document/9011878/./22.02.2016/>.

квивается социально-юридическое значение некоторых видов правового статуса личности.

Ключевые слова - правовое положение, правовое государство, гражданство, общий правовой статус, специальный правовой статус, юридическое лицо, правоотношение.

ԱՆՁԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼԻԼԻԹ ՂԱԶԱՆՉՅԱՆ

Տվյալ գիտական հոդվածում հեղինակը դիտարկում է անձի իրավական դրության տեսակների էությունն ու առանձնահատկությունները ժամանակակից ժողովրդավարական, իրավական պետությունում: Մասնավորապես վերլուծության են ենթարկվում անձի իրավական դրության առանձին տեսակների վերաբերյալ մեծանուն իրավագետների դիրքորոշումները, ինչպես նաև ընդգծվում են անձի իրավական դրության որոշ տեսակների սոցիալ-իրավական նշանակությունը:

Բանալի բառեր - իրավական դրություն, իրավական պետություն, քաղաքացիություն, ընդհանուր իրավական վիճակ, հատուկ իրավական վիճակ, իրավաբանական անձ, իրավահարաբերություն:

THE MAIN TYPES OF AN INDIVIDUAL'S LEGAL STATUS

LILIT KAZANCHIAN

In this scientific article, Kazanchian considers the essence and characteristics of the main types of legal status of individuals in a modern democratic legal state. Kazanchian specifically analyzes the different stances of prominent lawyers on certain types of legal statuses of an individual. Moreover, he emphasizes the social and legal significance of certain types of the legal status of an individual.

Key words - legal status, legal state, citizenship, common legal status, special legal status, legal entity, legal relationship.

НЕКОТОРЫЕ РИСКИ ИДЕОЛОГИИ ТРАНСГУМАНИЗМА

ЛУСИНЕ ВАРДАНЯН

В течение долгого времени технаучка рассматривалась как инструмент изменения, а если быть более точной, то и ускорения общественного развития, однако в современном мире она уже изменяет не только окружение человека, но и меняет его самого. «Человечество — это эволюция, осознавшая самое себя», - указал Дж. Хаксли, отец трансгуманизма. Однако трансгуманизм у последнего – это «понимание новых возможностей человеческой природы», между тем, современный трансгуманизм, среди прочего, пытается эту человеческую природу преодолеть и получить в результате постчеловека.

Сбывается то, о чем еще в начале двадцатого века говорил Л.С.Выготский: «Когда говорят о переплавке человека, как о несомненной черте нового человечества, и об искусственном создании нового биологического типа, то это будет единственный и первый вид в биологии, который создаст себя сам»¹.

Идея о сверхчеловеке восходит к Ф.Ницше, который заявлял, что человек, связывающее звено между животным и сверхчеловеком. Однако в эпоху Ницше проблема была не более чем метафизической, лишенной какой-либо возможности осуществления. Развитие технаучки, в особенности в последние десятилетия, вооружило человечество средствами, с помощью которых реализация идеи стала вполне возможной. Инструментариями для этого процесса могут быть нанотехнологии, крионика, практическое применение биоимплантов вне лечебных целей, использование химических веществ и когнитивных методов для моделирования внутреннего мира человека.

Уже сегодня возможно конструировать организмы по заданным параметрам. Такие методы используются при создании генно-инженерно-модифицированных организмов, генетической диагностике, клонировании. Эти технологии могут затрагивать практически все сферы психосоматического бытия человека. Ф.Фукуяма указывает, что “это не просто технологическая революция в нашей способности декодировать ДНК и манипулировать ею... Эта

¹ **Выготский Л.С.** Исторический смысл психологического кризиса (методологическое исследование) // Собрание сочинений в 6 т. М.: Педагогика, 1982, т. 1, с. 43.

научная революция опирается на открытия и достижения в ряде взаимосвязанных отраслей, помимо молекулярной биологии, включая когнитивные науки о нейронных структурах мозга, популяционную генетику, генетику, генетику поведения, психологию, антропологию, эволюционную биологию и нейрофармакологию»².

Главная идея современного трансгуманизма – преобразование материальной основы – носителя интеллекта. Трансгуманисты верят, что биологическая основа – зверь, и «убийство зверя», т.е. уничтожение биологической составляющей биосоциальной природы человека как носителя Разума, является одним из, если не сказать единственным путем дальнейшего цивилизационного развития человека. Однако трансформация биологического носителя Разума не может быть изолированным процессом. Так, многие ученые в этом видят потенциал разрушения современной культуры. В.Ф.Чешко указывает в качестве одного из главных претендентов на роль инициирующего процесса разрушения социокультурного и социо-политического гомеостаза, развивающегося по схеме цугцванга, генные технологии и фундаментальную генетику³. Между тем, наличие инструментария еще не означает обязательное применение ее для воплощения той или иной идеи, и об этом поговорим далее.

Для воплощения этой основной идеи трансгуманизма необходимо, прежде всего, ответить на вопрос: возможно ли разделение сознания и тела в практическом плане? Как известно, тело и сознание взаимосвязаны, и прежде всего органически, и это исходит прежде всего с позиций материалистической парадигмы современной науки, где сознание – деятельность мозга. Об это твердят, прежде всего, философская антропология и феноменология. Кроме того, тело и сознание взаимно обусловлены. Так что изменяя тело, мы изменим сознание, что само по себе приведет к каскаду преобразований параметров всей цивилизации. Кроме того, если «потянуть» биологию человека до уровня развития новых техносоциальных реалий бытия Разума, поменяется сознание и появятся новые реалии, где опять биологии будет явно недоста-

² Фукуяма Ф. Наше постчеловеческое будущее. Пер. с англ. М.: АСТ, 2004 /Fukujama F. Nashe postchelovechesкое budushee. Per. s angl. M.ACT, 2004/.

³ Чешко В.Ф. Перспективы человека в эпоху глобальной эволюционной сингулярности: трансгуманизм versus биоэтика?// <http://www.transhumanism-russia.ru/content/view/234/94/> Cheshko V.F.Perspektivy cheloveka v epokhu globalnoj singuljarnosti: transgumanizm versus bioetika/.

точно. «В тот самый миг, когда я нашёл верные ответы, переменились все вопросы», - пишет в «Мактуб» Пауло Коэльо.

В погоне за реалиями техносциума не только можно потерять биологическую основу, но и неизбежен момент, когда сознание в отрыве от своего человеческого тела не будет идентифицировать себя в качестве человека. Поэтому согласимся с В.Ф.Чешко, который отмечает, что “изменение генетической основы носителей разумной жизни означало бы радикальный разрыв существующей культурной традиции, разрушение существующего социокультурного кода человека”⁴. Такой разрыв, как отмечает далее автор, равносильно генно-культурной катастрофе.

Как известно, трансгуманисты не признают существования Абсолюта. И поэтому если даже предположить, что речь в идеях трансгуманистов идет не о сознании как деятельности мозга, а о душе, то мы заметим плавный переход из техноконтента трансгуманизма в идеализм и религию. А это уже антитеза для основной идеи трансгуманизма. Таким образом, в современной парадигме науки идея не выдерживает критики.

Несмотря на такую внутреннюю противоречивость трансгуманизм сегодня в мире претендует называться: 1) новым мировоззрением и идеологией, 2) политическим проектом, 3) социальным движением. Как ни удивительно, но ему практически удается реализовать себя во всех трех ипостасях.

Трансгуманизм как идеология стала востребована, прежде всего, потому, что для потребительского общества с материальными мотивациями поведения научно-технический прогресс стал основным, если не единственным вариантом развития. Духовная пустота и несовершенство сейчас с лихвой окупаются использованием сверхновой аппаратуры и техники. Трансгуманисты к этому и стремятся: «Человечество превратилось в общество потребления и находится на грани тотальной утраты смысловых ориентиров развития. Интересы большинства людей сводятся в основном к поддержанию собственного комфортного существования... Мы считаем, что мир нуждается в иной идеологической парадигме. В ее рамках необходимо сформулировать сверхзадачу, способную указать новый вектор развития для всего челове-

⁴ Чешко В.Ф. Перспективы человека в эпоху глобальной эволюционной сингулярности: трансгуманизм versus биоэтика?// <http://www.transhumanism-russia.ru/content/view/234/94/> Cheshko V.F.Perspektivy cheloveka v epokhu globalnoj singuljarnosti: transgumanizm versus bioetika/.

чества и обеспечить проведение научно-технической революции»⁵. И чтобы не было “техношока”, идеи трансгуманизма “разбавляются” идеями известного традиционного гуманизма. Более того, как мировоззрение она уже сегодня вплетается в гуманистическую ткань современной цивилизации, предлагая для традиционного гуманизма новые идеи, навеянные и вдохновленные достижениями технонауки, которые, однако, объективно не отражают основные ценности “старого” гуманизма. Это мировоззрение, направленное на само-совершенствование человека и переход к «постчеловеку», обладающему принципиально новыми способностями, признающее возможность и желательность изменений человека с помощью передовых технологий, позволяющих значительно усилить физические и ментальные способности, ликвидировать страдания, старение и даже смерть. И на пути к постчеловеку промежуточным звеном должен стать трансчеловек (transhuman) — «потенциальный шаг» на пути эволюции в постчеловека, отличающегося от современных людей, по замечанию Эсфендиари, такими признаками, «как улучшение тела имплантатами, бесполость, искусственное размножение и распределенную индивидуальность»⁶.

Сторонники трансгуманизма указывают, что трансгуманизм – продолжение гуманизма, от которого он частично и происходит. Так, С. В. Тихонова, оспаривая рассмотрение трансгуманизма как призыва к дегуманизации, указывает: “Данное отождествление игнорирует обстоятельство, что лидеры трансгуманизма не только подчеркивают преемственность трансгуманизма и гуманизма, но и развивают, обогащают идеи последнего”⁷.

Утверждение о том, что трансгуманизм основан на гуманизме, исходит из того, что трансгуманизм основывается на идее вполне гуманистической. На это указывают и сторонники нового мировоззрения. Например, Н.Бостром неоднократно подчеркивает генетическую связь трансгуманизма с гуманизмом

⁵ Манифест стратегического общественного движения «Россия 2045»/ <http://2045.ru/articles/30840.html> /Manifest strategicheskogo obshchestvennogo obshchestvennogo dvizhenija «Rossija 2045»/.

⁶ Цит. по Четверикова О. Дух и цели транс гуманизма//журнал «Русское слово», 27.08.2015 г. /Chetverikova O. Dukh i celi trans gumanizma. Zhurnal «Rosskoe slovo» 27.08.2015/.

⁷ Тихонова С. В. Мифы дегуманизации и этика транс гуманизма, с. 47 /Tikhonova S.V. Mify degumanizacii i etika transgumanizma/.

Ренессанса и, далее, с традицией развития гуманизма и Просвещения⁸. Однако, это только идейная рецепция, в отрыве от контекста самого гуманизма.

Известно, что сама идея человека, который построит *Regnum hominis* на земле, аналогичное с Царством Абсолюта на небе, является локомотивом развития человека именно со времен Ренессанса. В этом аспекте в нашей цивилизации ничто не изменилось, и мы по-прежнему движимы этой идеологией. Однако, можно ли представить себе Рай в стиле “техно”, где все человеческое нивелировано? Ведь практически всегда описание райского состояния делается в чувственных нотках: это гармония, любовь, радость, блаженство – ценности, которые важны и для традиционного гуманизма. Трансгуманизм призывает человека расстаться с ценностями традиционного гуманизма: чувствами, верой, любовью, телесностью, деторождением, родительством, семьей, дружбой. Эти ценности, которыми мы живем, ради которых жертвуем становятся чем-то презрительным и «слишком человеческим» и должны быть нивелированы. И здесь особо видно то противоречие, которое отделяет гуманизм от трансгуманизма.

Является ли трансгуманизм лишь утопией? Нет, потому что это вполне реальное мировоззрение, которое уже превратилось в некий политический проект. К этому легко можно прийти, если проанализировать изменения, произошедшие в мире. Так, сегодня как вполне нормальные воспринимаются однополые браки, суррогатное материнство, пропаганда гендерной идентичности, которая ведет к размыванию социальных ролей мужчины и женщины, трансформации понятий семьи, материнства и отцовства, поощрение аборт; осуществление стерилизации населения с помощью генно-модифицированных продуктов и прививок; «чипизация» населения с целью тотального контроля и управляемости, добровольный уход из жизни и рассмотрение эвтаназии как естественного права человека на смерть. Трансгуманизм изложен в научных документах США, на которые американские государственные структуры и транснациональные корпорации, а также структуры, которые занимаются военным планированием (NASA и Google), выделяют огромные средства.

В 2009 г. в целях подготовки потенциальных лидеров, содействующих продвижению «технологий для решения глобальных проблем человечества»,

⁸ **Bostrom N.** In Defense of Posthuman // *Dignity Bioethics*, 2005, Vol. 19, No. 3, p. 202.

NASA и Google создали Университет Сигулярности, расположившийся в Исследовательском центре NASA⁹.

В феврале 2011 года в России было создано движение Россия–2045, целью которого является создание международного научно-исследовательского центра киборгизации с целью практического воплощения главного технопроекта – создание искусственного тела и подготовки человека к переходу в него. Многие могут не воспринимать всерьез данное движение, однако, как известно, свято место пусто не бывает: в условиях отсутствия идеологии трансгуманизм, опираясь на достижения технонауки, становится идеологией, которая, по словам его сторонников, может привести к развитию человечества.

Трансгуманизм предполагает изменение всех сфер жизни человека: культуры, веры, социальных институтов и регуляторов, личной жизни, семьи и более «общих» организаций: общества и государства. Однако необходимо ли это для развития общества? Есть что-то, что не может охватываться идеологией гуманизма для обеспечения поступательного развития цивилизации?

С нашей точки зрения, одной из важнейших задач современной цивилизации является сохранение человека и его уникальной среды обитания, в том числе и социально-культурной и социально-политической среды. Это вполне реально при возрождении, а точнее – актуализации установок гуманизма. Все сферы общественного бытия, гуманизм и человеческое духовное начало должны выступать в качестве определяющей ценности. Любые изменения должны видаться через призму человеческого и соотноситься с человечностью, ибо «Человек есть мера всех вещей...».

Должны считаться несостоятельными любые подходы и решения, где человек может быть сырьем, стать механизмом, машиной, где человек может превратиться в множество однотипных созданий, которые не способны любить или ненавидеть, жертвовать и верить, надеяться и иметь морально-нравственные ценности, быть существом биотелесно-духовным. Только приданием *абсолютного значения* человеческой жизни как биотелесно-духовного существа, признанием его в качестве абсолютной ценности можно остановить потерю человека, каким мы его знаем сегодня. Такой подход обозначается в рамках биоэтики, которая реализует себя уже не только, а может и не столько

⁹ Головин С. Эволюция мифа. Как человек стал обезьяной. М., 2000, с. 28. /Golovin S. Evoljicija mifa. Kak chelovek stal obezjanoj, M., 2000, с. 28/.

как философское направление, сколько как социальный институт: биоэтические нормы все чаще возводятся в ранг закона. Необходимость установления ограничений, которые должны действовать до обозначения пути развития с целью превенции коллапса, детально описанного В.Ф.Чешко в его работе «Перспективы человека в эпоху глобальной эволюционной сингулярности: трансгуманизм versus биоэтика?»¹⁰, мир, таким образом, осознал: однако превращение биоэтических норм в правовые происходит слишком медленно по отношению к семимильным шагам развития технонауки, биоэтика уже сама не успевает обозначать этические проблемы, которые одна за другой со скоростью геометрической прогрессии создаются технонаукой. Уповать поэтому на биоэтику в полной мере тоже не приходится. Единственным путем нам представляется тот, который может для современного человека показаться архаичным: связь человека с Абсолютом, которая может обусловить трезвость наших шагов, сознание ответственности за наши деяния, установит органические ограничения. Почему органические? Да потому, что если человек – это биотелесно-духовное существо, а трансгуманизм модернизирует биотелесность, то усиление духовности может поставить знак равенства между этими составляющими человека.

Дружба, любовь, семья, вера, надежда – это абсолютные духовные ценности человека, в них выражается личность, даже с позиции материализма, и этим человек живет, это смысл его жизни, без которого, порой, он сам не желает продолжать свою биологическую жизнь.

Все современные вопросы, в том числе вопрос выбора дальнейшего пути развития, должны быть решены в модусе бытия человека, и он должен нести ответственность за им же созданный мир, прежде всего, перед будущими поколениями.

Актуализированные установки гуманизма должны обусловить не только чисто внешнее, но и внутреннее – духовное и творческое развитие человека. Гуманистический идеал – теoантропоцентризм – еще не изжил себя.

Конечно, рассматривать научно-технический прогресс как зло не стоит. Любой инструмент сам по себе это не добро и не зло, он может лишь исполь-

¹⁰ Чешко В.Ф. Перспективы человека в эпоху глобальной эволюционной сингулярности: трансгуманизм versus биоэтика? // [http://www.transhumanism-russia.ru/content/view/234/94/Cheshko V.F.Perspektivy_cheloveka_v_epokhu_globalnoj_singuljarnosti:_transgumanizm_versus_bioetika/](http://www.transhumanism-russia.ru/content/view/234/94/Cheshko_V.F.Perspektivy_cheloveka_v_epokhu_globalnoj_singuljarnosti:_transgumanizm_versus_bioetika/).

зоваться для достижения целей, которые могут быть либо полезными, либо вредными, добрыми или злыми. Главная цель – определение того конечного пункта и того результата, который желателен и который должен быть обозначен уже сегодня соответствующими биополитическими решениями государств, международных сообществ и организаций. И поэтому инструменты технологического эволюционного процесса должны быть применены после того, как будет осознана и выбрана цель, к которой будет стремиться человечество в будущем. Вопрос о будущем биологического вида *homo sapiens*, таким образом, переходит в сферу практической этики и политики.

Мы достигли точки бифуркации. Или биополитика допустит целенаправленное создание нового носителя разума через внедрение генетических и когнитивно-информационных технологий в клиническую практику, что приведет к разрушению известных нам этической и социокультурной сред и к утрате известного сейчас биологического вида *homo sapiens*, или же биополитика установит через социальные институты такие ограничения, которые не допустят качественный скачок человека к трансчеловеку или к постчеловеку. Всегда надо иметь в виду, что последствием первого вида развития может стать абсолютное исчезновение носителя интеллекта на планете, потеря генетической идентичности человеком.

Таким образом, именно решения в сфере биополитики, биополитические решения, принимаемые государствами и международными организациями, должны наметить цель дальнейшей эволюции всего человечества.

РЕЗЮМЕ

Статья посвящена выявлению некоторых рисков возможной дегуманизации в контексте нового мировоззрения - трансгуманизма. Анализируются некоторые основные идеи трансгуманизма и их связь с классическим гуманизмом.

Ключевые слова - Трансгуманизм, социальные ценности, постчеловек, биоэтика, гуманизм.

ՏՐԱՆՍՀՈՒՄԱՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՌԻՍԿԵՐ

ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հոդվածը նվիրված է նոր աշխարհայացքի՝ տրանսհումանիզմի համատեքստում հնարավոր դեհումանիզացիայի որոշ ռիսկերի բացահայտմանը: Հեղինակի կողմից վերլուծվում են տրանսհումանիզմի որոշ հիմնական գաղափարներ և դրանց կապը դասական հումանիզմի գաղափարների հետ:

Բանալի բաներ – տրանսհումանիզմ, սոցիալական արժեքներ, հետմարդ, քիոէթիկա, հումանիզմ:

CERTAIN RISKS OF TRANSHUMANISM

LUSINE VARDANYAN

In this article Lusine Vardanyan discerns certain risks of dehumanization in the context of the new worldview, transhumanism. She analyzes some of the main ideas of transhumanism and their correlation with classical humanism.

Key words – transhumanism, social values, posthuman, posthuman, bioethics, humanism.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀՈՒՋԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՍԵՆ ԼՈՔՅԱՆ

Բազմաթիվ երկրների փորձի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ հանրային ծառայության աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է ծառայողի անձի հոգեբանական պատրաստվածությամբ, ընտրության և գնահատման հստակ համակարգերի, հոգեբանական աջակցության ու խորհրդատվության ծառայության առկայությամբ: Այս երևույթը հանգեցրեց ՀՀ հանրային ծառայությունը կանոնակարգող օրենսդրական ու բոլոր նորմատիվ փաստաթղթերի ուսումնասիրությանը, որի ընթացքը թույլ տվեց բացահայտել համակարգում առկա հոգեբանական ենթատեքստը:

Դրանով իսկ տեսական հետազոտությունից բացահայտված ենթախնդիրները համակարգվեցին հետևյալ խմբերում՝

- կառուցվածքի անկատարությունը հոգեբանական տեսակետից,
- հիմնական և շարունակական կրթական համակարգի խնդիրները,
- ներգրավված անձանց հոգեբանական կրթվածության մակարդակը,
- վերապատրաստման համակարգի շարժընթացը և միասնական մոտեցման բացակայությունը:

Այս ենթախնդիրները պայմանավորում են անձի՝ որպես կառավարչի հոգեբանական հատկանիշները, մասնավորապես նրա իրավասությունները՝ մասնագիտական և հոգեբանական, ինչի արդյունքում կարևորվում է՝


- անձի հոգեբանական կայունությունը/հուսալիությունն ընդհանրապես, մասնավորապես՝
- արդյունավետ հաղորդակցումը պայմանավորող գործոնները,
- հուզական կայունության առանձնահատկությունները:

Այս բաժնում ներկայացված են հանրային ծառայողների հուզական կայունության առանձնահատկությունները: Որպես հուզական կայունությունը պայմանավորող գործոն՝ ընտրվել է հուզական ինտելեկտը: Հուզական անկայունությունն արտահայտվում է պսիխոսոմատիկ դրսևորումներով, ինչն ան-

հրաժեշտություն առաջացրեց հուզական ոլորտի հետազոտական արդյունքները համադրելու հանրային ծառայողների բժշկական ձևաթերթերում արտահայտված առավել հաճախ հանդիպող ախտանիշների հետ: Հանրային ծառայողների աշխատանքը պարունակում է մարդ-մարդ փոխհարաբերությունը, որը ենթադրում է պետական ծառայողների հուզական ինտելեկտի բարձր մակարդակ՝ որպես արդյունավետ աշխատանքի կարևոր գործոն:

Հուզական ինտելեկտի ուսումնասիրության համար կիրառվել է Ն. Հոլի մեթոդաբանությունը, որը բացահայտում է հետևյալ բաղադրիչները՝ հուզական տեղեկացվածություն, սեփական հույզերի կառավարում, ինքնամոտիվացիա, ապրումակցում, ուրիշ մարդկանց հույզերի կառավարում¹:

Նկար 1-ում ներկայացված են հուզական ինտելեկտի բաղադրիչների դրսևորումները:



Նկար 1. Հուզական ինտելեկտի միջին ցուցանիշները(n=45)

¹ **Фетискин Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М.** Социально-психологическая диагностика развития личности и малых групп, М., Изд-во института психотерапии. 2002, 490 с.

Ինչպես երևում է հետազոտության արդյունքներից, հուզական տեղեկացվածության, ինքնամոտիվացիայի, ապրումակցման, այլ մարդկանց հույզերի ճանաչման ցուցանիշները գտնվում են միջին մակարդակում: Ցածր է սեփական հույզերի կառավարումը: Հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշը նույնպես ցածր է: Այս ամենը նշանակում է, որ նրանք դժվարությամբ են կարողանում գործ ունենալ իրենց և այլ մարդկանց հուզական վիճակների հետ, բավարար տեղեկացված չեն իրենց հուզական ապրումների մասին, չեն կարողանում կառավարել ինչպես սեփական հույզերը, այնպես էլ ուրիշներինը: Հուզական տեղեկացվածության միջին ցուցանիշից ելնելով՝ նշենք, որ նրանք ոչ բոլոր իրադրություններում են կարողանում գիտակցել և հասկանալ իրենց հույզերը: Նրանք չեն կարողանում կառավարել սեփական հույզերի դրսևորումները, ինչի հետևանքով էլ երբեմն դժվարությամբ են կառավարում (ինքնամոտիվացիայի միջին ցուցանիշը) սեփական վարքը: Ապրումակցման միջին ցուցանիշը վկայում է, որ նրանք որոշ իրադրություններում կարող են հասկանալ ուրիշների հույզերն ու զգացմունքները, կարեկցել, աջակցել նրանց: Ինչպես նաև կարող են որոշ իրադրություններում ազդեցություն գործել ուրիշ մարդկանց հուզական վիճակների վրա (այլ մարդկանց հույզերի ճանաչում): Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք ասել, որ հանրային ծառայողների մոտ զարգացման ցածր մակարդակում է սեփական հույզերը հասկանալու և գիտակցելու ընդունակությունը, նրանք դժվարությամբ են կառավարում հույզերի և զգացմունքների դրսևորումը, ինչպես նաև սեփական վարքը: Նրանք ոչ բոլոր իրադրություններում կարող են հասկանալ ուրիշների հուզական վիճակները նրանց շարժումներից, դիմախաղից, մարմնի դիրքից, խոսքի հնչերանգից՝ այդպիսով հնարավորություն չունենալով ազդեցություն գործել դրանց վրա: Հուզական ինտելեկտի ստանդարտ շեղումը բարձր է, ինչը ցույց է տալիս, որ տվյալները ցրված են միջին արժեքի շուրջ. ընտրանքը միատարր չէ:

Ինչպես երևում է ուսումնասիրության տվյալներից, պետական ծառայողների հուզական ինտելեկտի ցուցանիշները զարգացման բարձր մակարդակում չեն, ինչը ենթադրում է, որ աշխատանքային գործունեության ընթացքում հուզական դրսևորումները կարող են խոչընդոտել արդյունավետ աշխատանքը:

Անդրադառնանք կին և տղամարդ հանրային ծառայողների հուզական ինտելեկտի միջին ցուցանիշներին: Ստորև ներկայացված են հուզական ինտելեկտի միջին ցուցանիշները՝ ըստ գենդերային առանձնահատկությունների:

Աղյուսակ 1

Հուզական ինտելեկտի միջին ցուցանիշները՝ ըստ սեռի (n=45)

N	Հուզական ինտելեկտի բաղադրիչները	Կին (n=30)		Տղամարդ (n=15)		t
		M	σ	M	σ	
1	Հուզական տեղեկացվածություն	10,4	4,4	10,3	5,3	0,04
2	Սեփական հույզերի կառավարում	2,0	7,4	1,1	7,5	0,16
3	Ինքնամոտիվացիա	7,4	6,4	9,2	4,1	0,72
4	Ապրումակցում	10,4	3,9	10,7	3,7	0,21
5	Այլ մարդկանց հույզերի ճանաչում	8,4	5,3	9,3	5,3	0,32
6	Հուզական ինտելեկտի գումարային ցուցանիշ	38,6	19,3	40,5	20,6	0,05

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, կանանց և տղամարդկանց հուզական ինտելեկտի միջին ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ տղամարդկանց մոտ միջին մակարդակում են ինքնամոտիվացիայի և հուզական ինտելեկտի ցուցանիշները. վերջիններս կանանց մոտ ցածր մակարդակում են գտնվում: Այստեղից հետևություն. տղամարդ հանրային ծառայողները որոշ իրադրություններում կարող են կառավարել սեփական վարքը՝ հույզերը կառավարելու հաշվին: Երբեմն կարող են հասկանալ և գիտակցել սեփական հույզերը, կառավարել հույզերի և զգացմունքների դրսևորումը, ինչպես նաև սեփական վարքը: Որոշ իրադրություններում կարող են հասկանալ ուրիշների հուզական վիճակները նրանց շարժումներից, դիմախաղից, մարմնի դիրքից, խոսքի հնչերանգից՝ այդպիսով հնարավորություն ունենալով ազդեցություն գործել դրանց վրա: Ըստ Ստյոլդենտի t չափանիշի՝ կանանց և տղամարդկանց խմբերի միջև տարբերությունն էական չէ:

Հուզական ինտելեկտի համանման ուսումնասիրություն է իրականացվել Վոլգոգրադի հանրային ծառայողների շրջանում (120 պետական և մունիցիպալ ծառայողներ), որի արդյունքում պարզվել է, որ նրանց մոտ ցածր մակարդակում են գտնվում այլ մարդկանց հույզերի ճանաչման, էմպատիայի և սեփական հույզերի կառավարման ցուցանիշները: Վոլգոգրադի հանրային ծառայողների մոտ բարձր են հուզական տեղեկացվածության և ինքնամոտիվացիայի ցուցանիշները²:

Այս հետազոտության արդյունքների համեմատությունը մեր կողմից ստացված տվյալների հետ ցույց է տալիս, որ թե՛ Վոլգոգրադի, թե՛ ՀՀ հանրային ծառայողների մոտ ցածր է սեփական հույզերի կառավարումը: Տարբերությունը միայն հուզական տեղեկացվածության և ինքնամոտիվացիայի բարձր ցուցանիշներն են Վոլգոգրադի հանրային ծառայողների մոտ, ինչը վկայում է այն մասին, որ նրանք հասկանում և գիտակցում են իրենց հույզերը, կարողանում են կառավարել սեփական վարքը՝ հույզերը կառավարելու հաշվին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ հանրային ծառայողներին բնորոշ են՝

- ✓ սեփական հույզերի կառավարման ցածր մակարդակը,
- ✓ հուզական ինտելեկտի ցածր մակարդակը:

Ընդհանրացնելով հանրային ծառայողների հուզական ոլորտին վերաբերող հետազոտության արդյունքները՝ կարող ենք եզրակացնել, որ հանրային ծառայողների մոտ զարգացման ցածր մակարդակում է գտնվում ուրիշների հույզերը հասկանալու և գիտակցելու ընդունակությունը, նրանք դժվարությամբ են կառավարում հույզերի և զգացմունքների դրսևորումը, ինչպես նաև սեփական վարքը:

Գրականություն

1. **Լոքյան Ա.**, Հանրային ծառայողների մասնագիտական գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2015, 240էջ:

² **Долгополова О.А., Комарова А.И.** Эмоциональный интеллект и специфика профессиональной деятельности, http://www.rusnauka.com/26_WP_2013/Psihologia/12_144527.doc.htm

2. **Бодров В. А.**, Психология профессиональной деятельности, Теоретические и прикладные проблемы, М., РАН, 2006, 624 с.
3. **Долгополова О.А., Комарова А.И.**, эмоциональный интеллект и специфика профессиональной деятельности, http://www.rusnauka.com/26_WP_2013/Psihologia/12_144527.doc.htm
4. **Фетискин. Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М.**, Социально-психологическая диагностика развития личности и малых групп, М., изд-во института психотерапии. 2002, 490 с.

ՄՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերլուծվում են հանրային ծառայողների հուզական ինտելեկտի հետազոտության արդյունքները, որոնք ներկայացված են նաև ըստ սեռի, ինչպես նաև տվյալները համադրվել են Վոլգոգրադի հանրային ծառայողների համանման հետազոտության տվյալների հետ: Հանրային ծառայողների մոտ զարգացման ցածր մակարդակում են ուրիշների հույզերը հասկանալու և գիտակցելու ընդունակությունը, նրանք դժվարությամբ են կառավարում հույզերի և զգացմունքների դրսևորումը, ինչպես նաև սեփական վարքը:

Բանալի բաներ – հանրային ծառայող, հուզական ինտելեկտ, հույզերի կառավարում:

АНАЛИЗ РЕЗУЛЬТАТОВ ИССЛЕДОВАНИЯ ОСОБЕННОСТЕЙ ЭМОЦИОНАЛЬНОЙ СТАБИЛЬНОСТИ ГОСУДАРСТВЕННЫХ СЛУЖАЩИХ

АРСЕН ЛОКЯН

В статье анализируются результаты исследования эмоционального интеллекта госслужащих, которые представлены по признаку пола. Результаты исследования были сравнены с данными сходного исследования госслужащих города Волгограда. Распознавание эмоции других людей находятся на низком уровне развития у государственных служащих, они с трудом управляют проявления эмоций и чувств, а также собственное поведение.

Ключевые слова – государственный служащий, эмоциональный интеллект, управление эмоциями.

THE ANALYSIS OF RESULTS OF THE RESEARCH OF PECULIARITIES OF PUBLIC SERVANTS EMOTIONAL STABILITY

ARSEN LOKYAN

In the article discuss results of the research of emotional quotient of public servants. The results are presented also by gender of respondent. The data was compared with similar research of the public servants of Volgograd. Recognition of other people's emotions is at a low level of development among public servants: they have difficulty to control the manifestations of emotions and feelings, as well as their own behavior.

Key words – public servant, emotional intelligence, management of emotions.

ԱՎԱԶԱԹԵՐԱԴԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՍՈՍԵ ԽԱԶԻԲԱԲՅԱՆ

«Ձեր առջև ավազ է... Բնական ցանկություն է առաջանում ձեռքերն ընկղմել դրա մեջ՝ զգալով հաճելի սառնությունը, սահեցնել այն մափների միջով, զգալ սեփական ձեռքերի ջերմությունը:

Դրական հիշողությունները համակում են Ձեզ. մանկություն, ծով, արև, աշխարհի անվերջության զգացողություն և հրաշքի սպասում...»:

Տ. Դ. Զինկևիչ-Եվսփիզենևա

Հոգեբանության և հոգեթերապիայի զարգացման ընթացքում մշտապես արդիական է եղել հոգեթերապևտիկ «գործիքների»՝ մեթոդների հարցը: Այս հոդվածում կփորձենք ներկայացնել հոգեթերապիայի համեմատաբար սակավ տարածում գտած և դեռևս լիովին չբացահայտված մեթոդներից մեկի՝ ավազաթերապիայի էությունը, ինչպես նաև ընդգծել այս մեթոդի կարևորությունն ու արդիականությունը մեր երկրում:

Մասնագիտական ոչ հարուստ գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ավազաթերապիան՝ որպես հոգեթերապևտիկ մեթոդ, ձևավորվել է անալիտիկ հոգեբանության շրջանակներում: Այն անձի՝ աշխարհի և ինքն իր հետ հաղորդակցման ճանապարհ է, ներքին լարվածության թթափման միջոց, որը թույլ է տալիս անգիտակցական-խորհրդանշային լեզվի միջոցով բարձրացնել ինքնավստահությունը և բացահայտել առկա ռեսուրսները¹:

Ավազաթերապիայի հիմնական նպատակը ստեղծագործական ինքնաբուխ ինքնարտահայտման միջոցով այցելուի ինքնամոքումն է, իսկ հիմնական խնդիրը՝ անհատական անգիտակցականի ճնշված, արտամղված փորձը գիտակցված դարձնելը: Ավազաթերապիան հոգեթերապևտին թույլ է տալիս լուծել հոգեախտորոշիչ, շտկողական, թերապևտիկ, ստեղծագործական զարգացման մի շարք խնդիրներ: Ավազաթերապիան արտթերապիայի այլ

¹ Сакович Н.А. Технология игры в песок. Игры на мосту. СПб., Речь, 2006.

ձևերից առանձնանում է իր պարզությամբ և հասանելիությամբ, նոր ձևեր ստանալու հնարավորությամբ, ստեղծված պատկերների կարճաժամկետությամբ, ինչն արտացոլում է հենց հոգեկանի դինամիկան²:

Ավագաթերապիան իր պարզության, մատչելիության և խորության շնորհիվ համարվում է մանկական թերապիայի արդյունավետ մեթոդներից մեկը: Մանկական թերապիայում ավագամանի կիրառությունը հաճախ պայմանավորված է մեթոդի գլխավոր առանձնահատկություններից մեկով. այն փոքրիկ այցելուից չի պահանջում խոսքային մեծ ակտիվություն, ստեղծած պատկերներն ինքնին խոսուն են: Ավագաթերապիան օգնում է երեխային ձևավորել դրական պատկերացում իր մասին, ընդունել ինքն իրեն, վստահել և հավատալ սեփական ուժերին: Ավագով խաղի ընթացքում իրենց արտահայտությունն են գտնում երեխային հուզող բոլոր ապրումները, թոթափվում են ագրեսիան և լարվածությունը, երեխան ազատվում է վախերից, և ապրածը չի վերածվում հոգեկան խեղման: Խաղը թույլ է տալիս վերականգնել հավասարակշռությունը, բարձրացնել վերահսկողությունը, դառնալ վարքով ավելի պատասխանատու և սովորել հաղթահարել դժվարությունները: Ավագաթերապևտիկ գործընթացն օգնում է լուծել նաև ինքնագիտակցման և ինքնաիրականացման խնդիրները, բացահայտել ներքին ռեսուրսները և ապրել անձնային աճ³:

Այս ամենի շնորհիվ էլ հոգեբանական աշխատանքի ընթացքում, կիրառելով ավագով խաղը, կարելի է լուծել ինչպես հոգեախտորոշիչ, այնպես էլ զարգացման և շտկման խնդիրներ, իրականացնել առաջնային հոգեբանական օգնություն, անցկացնել հոգեթերապևտիկ կարճատև և երկարատև աշխատանք:

Իր զարգացման ընթացքում մեթոդը տարբեր փոփոխություններ է կրել. բացի թերապևտիկ աշխատանքում կիրառվելուց, ստացել է նաև զարգացնող մեծ նշանակություն: Այսպես, հոգեկան գործընթացների, հույզերի, ճանաչողական ոլորտի, ինչպես նաև մանր շարժողականության, շոշափողական զգայնության և ձեռքերի համակարգումը զարգացնելու գործընթացում ավագով աշխատանքը տալիս է ակնհայտ արդյունքներ:

² Штейнхард Л. Юнгианская песочная терапия. СПб., Питер, 2001 (Серия «Практикум по психотерапии»).

³ Грабенко Т., Зинкевич-Евстигнеева Т. Чудеса на песке. Методический практикум по песочной игротерапии.

Դասական և մոդիֆիկացված ավազաթերապիաները տարբերակելու և չչփոթելու համար արտասահմանյան գրականության մեջ ընդունված է դասական ավազաթերապիան գրել մեծատառով՝ **Sandplay** (բառացի՝ «Ավազախաղ»), իսկ ավազաթերապիայի մոդիֆիկացված տարբերակները, որոնք թերապևտիկ նշանակությանը զուգահեռ ունեն առաջնահերթ զարգացնող նշանակություն՝ փոքրատառով՝ **sandplay**⁴ :

Դասական կամ ինչպես ընդունված է ասել՝ յունգյան ավազաթերապիան ներկայումս պահպանվում և կիրառվում է որպես հոգեբանական աշխատանքի ինքնուրույն մեթոդ դասական ավազաթերապիայի դպրոցի հետևորդների կողմից: Միաժամանակ, պայմանավորված կիրառման դյուրինությամբ, խիստ սահմանափակումների բացակայությամբ, հոգեբանական աշխատանքում խնդիրների լայն սպեկտրի հետ աշխատանքի հնարավորությամբ և զարգացնող նշանակությամբ, ամբողջ աշխարհում բուռն զարգացում են ապրում ավազաթերապիայի մոդիֆիկացված տարբերակները:

Տողերիս հեղինակի՝ ավազաթերապիայի մեթոդով քառամյա մասնագիտական փորձը թույլ է տալիս որոշ դիտարկումներ կատարել մեր երկրում այս հոգեթերապևտիկ մեթոդի կարևորության և արդիականության վերաբերյալ:

• **Հայաստանում զարգացնող-շտկող աշխատանքի մեթոդների պակասը**

Հայաստանում հոգեբանությունը՝ որպես գիտություն, առավել ևս հոգեթերապևտիկ և զարգացնող պրակտիկ աշխատանք, բավական երիտասարդ է: Հետևաբար, հոգեբանական տեխնիկայի և մեթոդիկայի հարուստ պաշար ունենալը մշտապես արդիական է մնում:

• **Ծնողների շրջանում ծագող հետաքրքրությունը և վերաբերմունքը մեթոդի նկատմամբ**

Երբ խոսքը վերաբերում է հոգեբանական աշխատանքին, Հայաստանում դեռևս արդիական է մնում հասարակության տեղեկացվածության, վերաբերմունքի և վստահության խնդիրը: Բանն այն է, որ շատերի մոտ հոգեբանի աշխատանքի ընթացքը ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների հետ մնում է որոշ առումով անտեսանելի և խորհրդավոր: Շատ դեպքերում սա պայմանավորված է հոգեբանական աշխատանքի մեթոդի կամ այսպես կոչված՝ աշխատանքի նյութի անորոշությամբ: Այս առումով խնդիրը բավական դյուրին է դառնում ավազով աշխատանքի դեպքում, քանի որ նյութի

⁴ **Сакович Н.А.** Технология игры в песок. Игры на мосту. СПб., Речь, 2006.

ազդեցությունն ու առավելությունները տեսանելի են և շոշափելի հենց ծնողների համար:

• Ներկա ժամանակաշրջանում տեխնիկական հագեցվածության վնասները

Օր օրի հայաստանյան իրականության մեջ առավել սթափեցնող են դառնում երեխաների հոգեհուզական զարգացման վրա տեխնիկայի վնասակար ազդեցության մասին վկայող հետազոտություններն ու փաստերը: Համակարգչային սարքերի, վիրտուալ խաղերի գրավչությունն ու մեծ տարածումն արդիական են դարձնում իրական աշխարհում երեխաների համար իրենց գրավչությամբ չզիջող զբաղմունքի ձևերի, արվեստի ուղղությունների զարգացման հարցը: Ահա այսպիսի «ուժով» են օժտված ավազը և ավազանկարչությունը: Մասնագիտական աշխատանքի ընթացքում սակավաթիվ չեն այն դեպքերը, երբ նույնիսկ ավազ դպրոցական կամ դեռահաս տղաներն ու աղջիկները նախընտրում են մասնակցել ավազանկարչության հանդիպումներին՝ բացահայտորեն գերադասելով այն տեխնիկական խաղերից:

• Հայաստանի աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ ծովի և ավազի անհասանելիությունը

Եթե ծովամերձ տարածքի բնակիչների համար ավազը խիստ հասանելի բնական պաշար է, ապա հայաստանցի երեխաների համար բնական պայմաններում դժվար է հայտնվել ավազով հագեցած միջավայրում, իսկ բնական նյութերի առկայությունը երեխայի զարգացման համար դժվար է գերազնահատել:

• Երևանյան բակերում ավազամանների բացակայությունը կամ ավազի հիզիստիկ թերությունները

Ի տարբերություն արտասահմանյան շատ երկրների մայրաքաղաքների, որտեղ մաքուր ավազամաններ հանդիպում են գրեթե ամեն քայլափոխի, երևանյան բակերում դրանք բացակայում են կամ, անգամ եթե կան, չեն համապատասխանում ո՛չ ավազի տեսակի, ո՛չ մաքրության պահանջներին: Սա իր հերթին պայմանավորում է երևանաբնակ երեխաների համար ավազով խաղի պահանջն ու կարևորությունը:

Մեր երկրում ավազաթերապիայի՝ որպես հոգեբանական մեթոդի կիրառությունն առայժմ բավական համեստ պատմություն ունի: Հայաստանում ավազաթերապիայի և ավազանկարչության առաջին կենտրոնը բացվեց 2011 թվականի սեպտեմբերին: Կենտրոնը ռուսաստանյան համանուն ընկերության հայաստանյան մասնաճյուղն էր, որտեղ ծրագրերի հեղինակների կողմից

վերապատրաստված հայ մասնագետներն աշխատում էին նույն ծրագրերով, ինչ Ռուսաստանի մասնաճյուղերում: Մեծ հետաքրքրությունը հայ ծնողներին ուղղորդում էր դեպի ավագանկարչության նորաբաց կենտրոն, սակայն կենտրոնի ծրագրերի լուրջ թերությունն այն էր, որ նկատվում էին հստակ մշակութային տարբերություններ, և կարիք կար դրանք հարմարեցնելու հայ երեխաների միջավայրին:

Հավանաբար նաև այս իրողությամբ պայմանավորված՝ 2013-2014 թվականներին հիմնվեցին նոր ծրագրերով և հայկական մշակութային միջավայրին համապատասխանող ավագաթերապիայի երկու այլ մասնագիտացված կենտրոններ, որոնց հիմնական նպատակը երեխայի ներդաշնակ հոգեբանական զարգացումն ապահովելն էր թե՛ թերապևտիկ, թե՛ զարգացնող-շտկող աշխատանքի միջոցով:

Ավագաթերապիային զուգահեռ Հայաստանում բավական արդիական է դառնում ավագանկարչության մեթոդը. նախ՝ որպես նկարչական տեխնիկա, ապա աստիճանաբար նաև՝ որպես հոգեբանական զարգացնող աշխատանքի մեթոդ: Ավագանկարչությունն ավագի միջոցով նկարներ ստանալու յուրահատուկ արվեստ է: Այն XX դարի 70-ական թվականներին է ի հայտ եկել, երբ ամերիկացի անհիմատոր Քերոլայն Լիֆն առաջին անգամ ստեղծեց իր անհմացիոն ֆիլմը:

Ավագը մի նյութ է, որն օժտված է մեծ ձգողականությամբ, հատկապես երեխաների համար, և որով կարելի է նկարել նույնիսկ առանց հատուկ պատրաստվածության: Նկարելու ընթացքում երեխան մշտապես ստեղծում է նոր ձևեր, երևակայական կամ իրական պատկերներ: Ընդ որում, նա կարող է դրանք թողնել կայուն (ստատիկ) վիճակում կամ հաղորդել հարափոփոխություն (դինամիկա)՝ իր նախընտրած պատմությունը ներկայացնելով ավագե անհմացիայի տեսքով: Սա ճանապարհ է նաև երեխայի աշխարհաճանաչման և գեղագիտական զարգացման համար:

Ավագաթերապիան և ավագանկարչությունը հայ իրականության մեջ համարվում են նոր և զարգացող ուղղություններ, որոնց հանդեպ օր օրի աճող հետաքրքրությունը թե՛ մասնագետների, թե՛ ծնողների շրջանում դրդում է ավագաթերապիայով զբաղվող մասնագետներին ավելի հարստացնել մեթոդի մասին գիտելիքներն ու զարգացնել ավագաթերապևտիկ տեխնիկայի բազան:

Շուրջ երեք տարի է, ինչ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնում բացվել է մագիստրատուրայի «Արտթերա-

պիս» մասնագիտացումը, որտեղ դասավանդվող առարկաների շարքում տեղ է գտել «Ավագաթերապիա» առարկան: Առարկայի շրջանակներում ուսանողներին ներկայացվող թեմաները ներառում են նյութեր ինչպես դասական ավագաթերապիայի մեթոդի, այնպես էլ ավագով զարգացնող աշխատանքի, դրա կիրառության ժամանակակից միտումների և հնարավորությունների մասին: Ուսանողների շրջանում առաջացած մասնագիտական հետաքրքրությունն ու ոգևորությունն իր հերթին վկայությունն են այն իրողության, որ հայրենական հոգեբանության և հոգեթերապիայի զարգացող ուղղություններում նշանակալի է ավագաթերապիայի՝ որպես հոգեթերապևտիկ մեթոդի զարգացումը:

Այսպիսով, հայաստանյան հոգեբանության և հոգեթերապիայի զարգացման ներկայիս փուլում ավագաթերապիան և ավագանկարչությունն իրենց ուրույն տեղն են գրավում: Հատկապես մեծ է ավագաթերապիայի և ավագանկարչության հանդեպ հետաքրքրությունը մանկական հոգեթերապիայում և զարգացնող աշխատանքում, ինչը պայմանավորում է հոգեբան մասնագետների կողմից մեթոդի ակտիվ ուսումնասիրությունն ու կիրառումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ավագաթերապիան ժամանակակից արտթերապիայի ամենատարածված և արդյունավետ ճյուղերից մեկն է՝ շնորհիվ իր պարզության, նյութի գրավչության և օգտակար ազդեցության: Ավագաթերապիան թույլ է տալիս ներթափանցել հոգեկան առավել խոր շերտեր, ընդ որում՝ չպահանջելով մեծ խոսքային ակտիվություն: Հենց այս հանգամանքն է ավագաթերապիայի մեթոդն անփոխարինելի դարձնում երեխաների հետ աշխատանքում:

Այնուամենայնիվ, ավագաթերապիայի ոլորտում դեռևս կան ուսումնասիրության ենթակա շատ հարցեր, որոնց բացահայտումը խիստ կարևոր է մեթոդի զարգացման համար: Հայաստանում ավագաթերապիայի նկատմամբ օրեցօր աճող հետաքրքրությունը հնարավոր է դարձնում մեր երկրում այս ուղղության զարգացումը:

Բանալի բառեր - ավագանկարչություն, ավագաթերապիա, հոգեթերապիա, զարգացնող աշխատանք, արտթերապիա:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ПЕСОЧНОЙ ТЕРАПИИ В АРМЕНИИ

СОСЭ ХАЧИБАБЯН

Песочная терапия - один из наиболее распространенных и продуктивных методов современной арт-терапии, благодаря относительной простоте его использования и, одновременно, высокой продуктивности результата. Песочная терапия позволяет затрагивать наиболее глубокие слои психики, не напрягая, а наоборот, расслабляя человека в процессе терапии, не требуя при этом высокой вербальной активности. Вместе с тем, песочная терапия еще имеет достаточно много белых пятен, ожидающих своего открытия. Именно это делает песочную терапию особенно значимым и незаменимым методом в детской психотерапии. В этом плане не является исключением и Армения, где интенсивно возрастает интерес к данному виду терапии, что и делает ее актуальной и применяемой в нашей стране.

Ключевые слова - песочное рисование, песочная терапия, психотерапия, развивающая работа, арт-терапия.

SANDPLAY THERAPY DEVELOPMENT IN ARMENIA

SOSEH KHACHIBABYAN

Sandplay therapy is one of the most widely spread and efficient branches of modern art therapy thanks to its simplicity, material appeal and useful effect. Sand therapy opens the possibility of penetrating into deeper layers of the psyche not requiring much of verbal activity. Being a non-verbal therapy, sand play techniques are unique in working with children.

Nevertheless, still there are many issues to be considered in sand therapy whose study is very important to the evolution of the method. Sandplay therapy is gaining greater acceptance in Armenia with everyday and this fact sets an opportunity for establishing it in our country.

Key words - Sand painting, sandplay therapy, psychotherapy, developing work, art therapy.

**ՄՆՆԴԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԻԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՆ ՀՈԳԵՔԱՆՆԵՐԻ ԱՆՁԻ
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ՀԱՄՄԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

Սննդային վարքի շեղումների առաջացման սոցիալ-հոգեբանական դրդապատճառների բացահայտումը ենթադրում է դրանց բազմակողմանի ուսումնասիրություն, ինչն իր հերթին ներառում է նաև դրանց ուսումնասիրությունն անձի տեսությունների, ինչպես նաև անձնային և սոցիալական դիրքորոշումների վերաբերյալ ակնառու դասական հոգեբանների առաջարկած դրույթների համատեքստում: Հիմք ընդունելով անձի զարգացման գործընթացի վերաբերյալ դասական հոգեբանների տեսությունները՝ հնարավոր է դառնում այն խորքային դրդապատճառների բացահայտումը, որոնք ընկած են սննդային վարքի շեղումների առաջացման անմիջական ակունքներում: Տվյալ աշխատանքի շրջանակում մենք սննդային վարքի շեղումների հիմք ենք դիտարկել Է. Էրիկսոնի, Ա. Ադլերի, Է. Ֆրոմի, Ջ. Սքինների, Ա. Բանդուրայի, Ա. Մասլոուի, Կ. Ռոջերսի և այլ նշանավոր հոգեբանների տեսությունները:

Այսպես, պրոնկտելով վերոհիշյալ հեղինակների անձի տեսությունների գաղափարախոսությունը սննդային վարքի շեղումների ակունքների հարթություն՝ գտնում ենք դրանց առաջացման հիմնական պատճառները: Ըստ Ա. Ադլերի տեսության՝ մարդու կյանքը ինքնակատարելագործման ակտիվ գործընթաց է: Դրա դրդիչ ուժն անձի թերարժեքության զգացումն է (Adler, 1964): Անձին Ադլերը դիտարկում է որպես զուտ սոցիալական փոխներգործության արդյունք¹:

Հետևաբար, սննդային վարքի շեղումների առաջացման հիմքում ընկած է սեփական մարմնի նկատմամբ թերարժեքության զգացումը, իսկ սննդային վարքի խեղաթյուրված դրսևորումներն այդ զգացումը հաղթահարելու սոցիալ-մշակութային քարոզչության արդյունքում ի հայտ եկած ոչ արդյունավետ միջոցներ են:

¹ **Adler A.** Superiority and social interest: A collection of later writings. H. L. & R. R. Ansbacher (Eds.). Evanston, IL: Northwestern University Press. 1964, 480 P., p. 321.

Աբրահամ Մասլոուն համարում է, որ անձն ինքն իր կենսափորձի արդյունքն է, և դրա հիմքում է ինքնիրացման միտումը²:

Հետևաբար, սոցիալական ազդեցությունների ներքո ի հայտ եկած հաջողակ կնոջ պատկերի պրոպագանդի հետևանքով անձը ձգտում է ինքն իրեն համապատասխանեցնել այդօրինակ կարծրատիպերին, և եթե տվյալ անձի մեջ առկա է սեփական մարմնակազմի և արտաքին տեսքի նկատմամբ թերարժեքության զգացումը, ապա տվյալ երևույթի ազդեցության ներքո վերջինն ընտրում է սննդային վարքի խեղաթյուրված դրսևորումների ճանապարհը՝ որպես սեփական թերարժեքության զգացումը հաղթահարելու, հետևաբար նաև ինքնիրացման կեղծ միջոց:

Ըստ Էրիկ Ֆրոմի՝ անհատը սոցիալական ազդեցությունների ներքո դադարում է լինել այնպիսին, ինչպիսին որ նա կա: Նա դառնում է այնպիսի անհատ, ինչպիսին որ պահանջում է մշակութային մոդելը: Այդ պատճառով էլ նա փոփոխությունների է ենթարկում սեփական անձը՝ համապատասխանելու համար տվյալ մշակույթին հատուկ սոցիալական սպասումներին³:

Այստեղ նույնպես կարմիր գծով անցնում է արևմտյան կնոջ կերպարին բնորոշ սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելուն ուղղված վարքային մոդելների ձևավորումը: Այդ մոդելը ներառում է նաև սննդային վարքի շեղումների նկատմամբ որոշակի հակվածության հնարավորությունը:

Էրիկ Էրիկսոնն իր անձի տեսության մեջ առանցքային է համարում անձի ինքնագնահատականի կախվածությունը սեփական կյանքի կառավարման զգացումից: Արտաքին ազդեցությունների ներքո այդ զգացման թուլացումը, ինքնակառավարման զգացողությունը և ինքնագնահատականը հավասարակշռելու նպատակով, հանգեցնում է ինքնասահմանափակման հակվածության⁴: Այս տեսության հիմունքները նույնպես հանգեցնում են այն եզրակացության, որ արևմտյան կնոջ կերպարի սոցիալ-մշակութային կարծրատիպերի պրոպագանդի գերազդեցությունը մեծապես ազդում է մասնավորապես դեռահասների սննդային վարքի խիստ սահմանափակումային շեղումների առաջացման վրա: Այդպիսի վարքային դրսևորումներով ինքնուրույ-

² **Maslow A. H.** The psychology of science: A reconnaissance. New York: Harper and Row. 1966, 168 P., p. 45.

³ **Fromm E.** Escape from freedom. New York: Avon. 1965, 333 P., p. 208.

⁴ **Erikson E. H.** Life cycle. In International Encyclopedia of the Social Sciences (Vol. 9, pp. 286- 292). New York: Crowell Collier & Macmillan. 1968, p. 286-292.

նություն և սեփական կյանքի կառավարման զգացողություն ձեռք բերելու բնական ձգտումներով տոգորված դեռահասը փորձում է մի կողմից, ենթարկվելով սոցիալական սպասումներին, մյուս կողմից՝ ձերբազատվել դրանց ազդեցությունից՝ դրանց համապատասխանելու միջոցով:

Այսպես, Սքիններն անձի վարքի և գործունեության հիմքում տեսնում է միանշանակ հասարակության ազդեցությունը⁵:

Ասել է թե ընդունված սոցիալ-մշակութային կարծրատիպերը հիմք են որոշակի վարքային մոդելների ձևավորման համար: Այսպիսի վարքային մոդելներ են սննդային վարքի շեղումները՝ ուղղված անձի սոցիալական խմբում ընդունելի կամ ավանդական կարծրատիպերին սեփական մարմնակազմը կամ սննդային վարքը համապատասխանեցնելու գաղափարին: Հենվելով տվյալ գաղափարախոսության վրա՝ կարելի է բացատրել սննդային վարքի սահմանափակումային, զգայագեն և էքստերնալ շեղումների առաջացումը՝ որպես անձի սոցիալական խմբերում գործող սննդային վարքի մոդելներին, նորմերին, ավանդույթներին համապատասխանելու միտման արդյունքում ի հայտ եկող երևույթներ:

Մյուս կողմից, հիմք ընդունելով այն տեսակետը, որ գործունեության դրդապատճառները հենց գործունեության փորձի արդյունքում են ստեղծվում և պրոեկտելով այն սննդային վարքի շեղումների առաջացման հարթություն՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների:

Այսպես, արևմտյան հաջողակ կնոջ կերպարի սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելու ցանկությունը դրդում է սեփական մարմնակազմի նկատմամբ թերարժեքության զգացում ունեցող անձին դիմել սննդային վարքի սահմանափակումային շեղում համարվող սննդային վարքի, ինչի արդյունքում փոփոխվում է անհատի մարմնակազմը, և ինքնաբերաբար բարձրանում է նրա ինքնագնահատականը: Այս ամենի արդյունքում անձը էլ ավելի է տարվում տվյալ սննդային վարքի թեպետ շեղված մոդելով, ինչն արդյունքում, ժամանակին չկանխարգելվելու պարագայում, կարող է վերաճել սննդային վարքի անոռեկսիկ խանգարման: Մյուս կողմից՝ սննդային վարքի զգայագեն շեղումը, ի հայտ գալով սթրեսային պայմաններում, հանգեցնում է անձի հուզական լարվածության լիցքաթափման, ինչը ժամանակի ընթացքում վերաժվում է սթրեսային պայմաններում, ինքնակառավարման հիմնական գործիքի: Հետևաբար, սննդային վարքի շեղումների դրդապատճառներն ի

⁵ Skinner B. F. Beyond freedom and dignity. New York: Knopf. 1971, 225 P., p. 12-13.

հայտ են գալիս դրանց առաջին դրսևորման արդյունքում ձևավորված դրական հուզական փորձի արդյունքում:

Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմքում ընկած են նաև մի շարք ակնառու սոցիալական հոգեբանների գաղափարախոսություններ անձնային և սոցիալական դիրքորոշումների վերաբերյալ, որոնց աշխատանքները փաստացի հիմք են հանդիսացել այն տեսության զարգացման համար, որ սննդային վարքի շեղումների առաջացումն ունի նախևառաջ սոցիալաձին արմատներ, և դրանց կանխման ուղիները պետք է փնտրել անձի դիրքորոշումային ոլորտում:

Դիրքորոշումների ուսումնասիրության հարցում հատուկ տեղ է տրվում վրաց հոգեբան Ուզնաձեի դպրոցին: Ուզնաձեն անձի դիրքորոշումը բնութագրում է որպես մարդու կյանքում համընդհանուր երևույթ, որը մարդու կենսագործունեության մեջ կենտրոնական դերն է խաղում: Ուզնաձեի դպրոցի հետնորդ Պերվուշինան համարում է, որ մարդու ենթագիտակցականի գործունեության ասպարեզն այնքան տարածական է, որ այն ընկած է մարդու ամբողջ ներքին և արտաքին ակտիվության հիմքում: Ցանկացած վարքային ակտից առաջ սուբյեկտի մոտ ի հայտ է գալիս յուրահատուկ դինամիկ վիճակ՝ դիրքորոշում, որն ուղղորդում է մարդու հակազդումները: Այսպես սննդային վարքի շեղումների առաջացումը մասնավորապես դեռահաս աղջիկների մոտ կարծրատիպերին համապատասխանելու ձգտման արդյունք է, որը նրա կենսագործունեության մեջ առանցքային տեղ ունի: Հեղինակը համարում է նաև, որ որոշակի խմբում որոշակի դերի մեջ մտնելով՝ մարդը սովորում է այդ դերի ենթադրող վարքաձևերին, ինչի արդյունքում յուրացվում են որոշակի վարքային դիրքորոշումներ⁶:

Այսպես, սննդային վարքի խեղաթյուրված դրսևորման դիրքորոշումներն առաջանում են անձի սոցիալական խմբում՝ որպես հաջողակ կնոջ կերպարի սոցիալ-մշակութային կարծրատիպին համապատասխանելու ձգտման արդյունք, մասնավորապես խմբում հաջողակ համարվող դեռահասների մոտ:

Մյուս կողմից՝ անձի վարքի կառավարումն արդեն բխում է ոչ միայն սեփական պահանջմունքներից, այլև սոցիալական պահանջներից և նորմերից: Ընդ որում, այս երկու հասկացությունները հաճախ փոխկապակցված են:

⁶ **Первушина О. Н.** Общая психология: Методические указания. – Новосибирск: Научно-учебный центр психологии НГУ, 1996. 90 с., с. 35-41.

Դ. Ռոբինսոնն անձի վարքի և համոզմունքների կապը տեսնում է որպես հաստատուն դրական կամ բացասական կարծիքի արդյունքում ձևավորված դիրքորոշում: Նա համարում է, որ դիրքորոշումների և դրանք ձևավորող համոզմունքների առաջացման վրա մեծագույն ազդեցություն ունեն նաև կարծրատիպերը⁷: Այսպես, սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելու միտումով առաջացած սննդային վարքի շեղումները դեռահաս աղջիկների խմբի առաջնորդների մոտ ակամա տարածվում են նաև խմբի մյուս անդամների վարքի վրա:

Տեստինգերի տեսության համաձայն՝ մարդու դիրքորոշումներին չհամապատասխանող վարքածեր ստիպում է փոփոխության ենթարկել դրանք, որպեսզի անձն ազատվի բացասական զգացողություններից⁸:

Այսպես, սոցիալ-մշակութային կարծրատիպերին համապատասխանելու դեռահասի դիրքորոշումը դրդում է նրան դիմել սննդային վարքի խեղաթյուրված դրսևորումների:

Կոնսկոն համարում է, որ դիրքորոշումը որոշում է անձանց գործողությունների, ակտիվության ուղղվածությունը՝ միևնույն ժամանակ հանդիսանալով ընկալման և մտածողության միջոց: Այսպես, սննդային վարքն իր տարաբնույթ դրսևորումներով անձնային և սոցիալական դիրքորոշումների արդյունք է⁹:

Ըստ Լանգեի՝ ուշադրության և դիրքորոշման երևույթները սերտորեն կապված են միմյանց, և անձը հակված է իր ուշադրությունը սևեռել այն վարքային դրսևորումներին, որոնք դիրքորոշումների արդյունք են¹⁰: Այսպես, սննդային վարքի խեղաթյուրումների հակված անձն իր սննդային վարքն առանցքային ուշադրության է արժանացնում՝ սևեռվելով այդ երևույթի վրա, ինչի արդյունքում հնարավոր են դրա հետագա զարգացումը և վերափոխումը այլ, առավել բարդ սննդային վարքի խանգարումների:

⁷ **Робинсон Д.** 101 ключевая идея: Психология. – Пер. с англ. О. Перфильева. – М.: ФАИР-ПРЕСС, 2001, 224 с., с. 167-184.

⁸ **Морозов А.В.** Социальная психология. Учебник - М.:Изд. Академический проект, 2008, 335 с., с. 136.

⁹ **Крысько В. Г.** Социальная психология: учебник для вузов/ Крысько В. Г. – 3-е издание, перераб. и доп. – М.: Эксмо, 2010, 688 с., с. 93-98.

¹⁰ **Козубовский, В. М.** К59 Общая психология: познавательные процессы: учебное пособие / В.М. Козубовский. - 3-е изд. - Минск: Амал-фeya, 2008, 368 с., с. 137-138.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սննդային վարքի շեղումների առաջացման սոցիալ-հոգեբանական դրդապատճառների հիմնովին ուսումնասիրությունը ենթադրում է նաև այնպիսի դասական հոգեբանների անձի ձևավորման և զարգացման տեսությունների ուսումնասիրություն, որպիսիք են Ադլերը, Մասլոուն, Ֆրոմը, Սքինները, Լանգեն և այլք: Այս տեսանկյունից խնդրի վերլուծության արդյունքում հնարավոր է օբյեկտիվ զուգահեռներ անցկացնել տվյալ տեսությունների և սննդային վարքի շեղումների առաջացման մեխանիզմների միջև և պարզաբանել դրանց սոցիալ-հոգեբանական ակունքները:

Բանալի բաներ – սննդային վարքի շեղումներ, սոցիալ-մշակութային կարծրատիպեր, անձի տեսություններ:

АНАЛИЗ ПРИЧИН ВОЗНИКНОВЕНИЯ НАРУШЕНИЙ ПИЩЕВОГО ПОВЕДЕНИЯ В КОНТЕКСТЕ ТЕОРИЙ ЛИЧНОСТИ ПСИХОЛОГОВ КЛАССИКОВ

АСМИК ШАГИНЯН

Глобальное исследование вопроса социально-психологических причин возникновения нарушений пищевого поведения предполагает исследование теорий становления личности таких психологов классиков, какими являются Адлер, Маслоу, Фромм, Скиннер, Ланге и другие. Исследование данного вопроса с этой позиции дает возможность объективно понять социально-психологические механизмы и причины возникновения нарушений пищевого поведения.

Ключевые слова – нарушения пищевого поведения, социально-культурные стереотипы, теории личности.

ANALYSIS OF EATING HABIT DISTORTIONS IN CLASSICAL PSYCHOLOGISTS' SELF THEORIES

HASMIK SHAHINYAN

The thorough analysis of the socio-psychological causes of eating habit distortions implies the study of Self psychology and development theories suggested by such classical psychologists, as Adler, Maslow, Fromm, Skinner,

Lange and etc. As a result of the investigation of the problem from this point of view, it is possible to draw objective parallels between these theories and the mechanisms causing distortion of eating habits and find out their socio-psychological roots.

Key words – Eating habit distortions, socio-cultural stereotypes, theories of Self.

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՆԿՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԵԴԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սոցիալական տարածության մեջ ակտիվ գործառնելու, սեփական պո-տենցիալն ամբողջովին իրացնելու համար անձի ակտիվությունն ուղղված է կայուն սոցիալական կարգավիճակ ձեռք բերելուն և սեփական հնարավորությունները ստեղծագործաբար իրացնելուն: Կյանքի ընթացքում անձի սոցիալական կարգավիճակները, այդ թվում՝ գլխավոր՝ մասնագիտական կարգավիճակը, ենթակա է տեղաշարժի: Այս առումով հույժ կարևոր է մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը միջին տարիքում: Ներկայիս միջին տարիքի անձը երկու՝ խորհրդային և հետխորհրդային արժեքային համակարգերի կրողն է, ինչը պայմանավորում է անձի արժեքափմաստային ոլորտի առանձնահատկությունները:

Վ. Ա. Տոլչեկը նշում է, որ աշխատանքի մեջ լուրջ ճշգրտումներ մտցրին ծանր ֆիզիկական աշխատանքի մասի կրճատումը և բարձր տեխնոլոգիաների ներդրումը, համակարգչայնացումը, աշխատուժի (բանվոր) արտագաղթը (ապաորակավորումը, աշխատանքային շահույթի կրճատումը, մասնագիտական գործունեության ինտենսիվացումը, ինտելեկտուալ լարվածությունների աճը, օրվա ընթացքում յուրաքանչյուր մարդու աշխատանքի արդյունավետության վրա վերահսկողության ուժեղացումը): Ժամանակակից աշխարհն առաջարկում է մասնագիտությունների նոր անվանացանկ, իսկ եղած մասնագիտությունների մեջ մտցնում է բարդություններ, որոնք միջին տարիքի անձը չի կարողանում հաղթահարել: Նման պայմաններում բազմաթիվ միջին տարիքի անձինք զբաղվում են ավելի ցածր որակավորմամբ և աշխատանքով, ինչը որոշում է սոցիալական տարածության մեջ տարեց հոգեկան աշխարհի առանձնահատկությունները: Առաջին հայացքից թվում է, թե աշխատանքը կարևոր բնութագիր չէ, բայց իբրև Ես հիմնադրույթի բաղադրիչ՝ իր մասին «հայտարարում է» սոցիալական կամ ներքին՝ հոգեբանական միջավայրի

(տարիքային ճգնաժամեր, կարիերայի հետ կապված հարցեր, գործազրկության իրադրություն և այլն) փոփոխության դեպքում ¹:

Սոցիալական փոփոխվող պայմանների, անցումային շրջանի հորձանուտում հայտնված անձանց հոգեկանում նկատվում են փոփոխություններ՝ մասնավորապես արժեքահմաստային ոլորտի վերակառուցումների ձևով, ինչը թույլ է տալիս հարմարվել միջավայրին՝ կրկին իմաստավորելով իրականության հետ հարաբերությունները: Ինդրի ուսումնասիրությունը հրատապ է հատկապես միջին տարիքի անձանց շրջանում, քանի որ նրանք են կազմում մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում հայտնված թիրախային խումբը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ աշխատանքի հարկադրաբար փոփոխությունը կամ կորուստն այս տարիքում անձի մեջ առաջացնում է սթրեսի, տագնապի, հուզական անզսպվածության վիճակ: Իսկ գործազրկությունը սոցիալականից արդեն վերածվել է հոգեբանական աղետի, ինչպես առանձին անձի, այնպես էլ հասարակության համար: Տնտեսական ճգնաժամերի փուլն ուղեկցվում է զանգվածային ազատումներով՝ կապված արտադրության կրճատման հետ, ծնում է նոր ֆենոմեն՝ գործազրկություն²:

Գործազրկությունը միջին տարիքում կարող է դառնալ ընտանեկան հարաբերությունների կորստի, սեփական անձի անպետքության զգացումի առաջացման և ինքնահարգանքի կորստի պատճառ: Գործազրկությունը հատկապես սուր են ապրում այն տղամարդիկ, որոնք սոցիալականացման ընթացքում յուրացրել են ընտանիքին կերակրողի դերը: Անձի մեջ առաջանում է անելանելիության իրավիճակ, կորցնում է հույսն ապագայի նկատմամբ: Եթե նման երևույթը տեղի է ունենում հաճախ, մարդը կարող է դուրս մնալ աշխատաշուկայից: Պետք է նշել, որ միջին տարիքի անձի համար աշխատանքի հարցի լուծումն ավելի բարդ խնդիր է: Առաջինը կապված է այն հանգամանքի հետ, որ անձի մեջ դեռ առկա է իր մասնագիտական կարգավիճակի նույնացում, ուստի նա դեռ պատրաստ չէ հրաժարվելու մասնագիտական դերից: Երկրորդ՝ աշխատանքի ընդունելիս առկա է նման անձանց խտրականության հավանականություն՝ կապված տարիքի հետ: Երրորդ հերթին, ցանկացած մասնագետ այս դեպքում դառնում է ցածր վարձատրվող և ունենում է ավելի ցածր կարգավիճակ, քան նախկինում: Նման իրադրության մեջ հայտնված

¹ Толочек В. А. Современная психология труда, СПб., Питер, 2005, сс. 29, 107.

² Психология человека от рождения до смерти, под ред. А. А. Реана, СПб., Прайм-Еврознак, 2002, с. 535.

անձանց ստվար զանգված է կազմում հետխորհրդային երկրների բնակչությունը, որոնց ճնշող մեծամասնությունը միջին տարիքի ներկայացուցիչներ են³:

Մասնագիտությունը կամ մասնագիտական կարգավիճակը Ե. Ա. Կլիմովը սահմանում է իբրև հանրության անհրաժեշտ, սոցիալականապես արժեքավոր աշխատանքի բաժանման և մարդու ֆիզիկական ու հոգևոր ուժերի ներդրման վայր, որտեղ մարդն իր աշխատանքի դիմաց ստանում է անձի զարգացման և գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ [4, 12]⁴: Մասնագիտությունը մեծ կարևորություն է ձեռք բերում հատկապես միջին տարիքում:

Ա. Ա. Ռեանը գտնում է, որ տարիքային այս ժամանակահատվածը կարելի է բնորոշել իբրև մարզինալ՝ սահմանային, քանի որ գտնվում է երիտասարդության և ծերության տարիքային շրջափուլերի միջև, երբ անձի արժեքները, ընդհանուր կենսական դիրքը անձի կողմից ենթարկվում են վերահամաստվորման, վերաարժևորման: Ա. Ա. Ռեանը մեջբերում է Ռոնալդ Կեսսլերի տեսակետը, ով, ուսումնասիրելով ԱՄՆ-ի բնակչության վիճակագրական տվյալները, գալիս է այն եզրակացության, որ մարդու համար ամենալավ տարիքը 50 տարեկանն է: Ընդհանուր դիսթրեսի մակարդակը ցածր է, դեպրեսիվ և տագնապային վիճակները նվազում են 35 տարեկանի սահմաններում: Անձն առողջ է, գործունյա, ընտանեկան կյանքը կայացել է, և ամուսնալուծության հավանականությունը մեծ չէ: Միջին տարիքում անձը կարող է իր ողջ ժամանակը նվիրել սեփական կեցությանը, ոչ թե կայացմանը: Միջին տարիքի վերաբերյալ այս տեսակետը հաշվի չի առնում էթնիկական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական տարբերությունները և, իհարկե, կենսական իրադրությունը, ինչը հետխորհրդային շրջանի պայմաններում խիստ կարևոր է միջին տարիքի անձի հոգեկան աշխարհը նկարագրելու առումով: Նման պայմաններում գտնվող անձի կենսական իրադրությունը բնորոշվում է կենսական պայմանների կտրուկ վատթարացմամբ, նույնականության նմուշների հակասականությամբ, կարգավիճակային տեղաշարժերով: Այնուամենայնիվ, միջին տարիքում առկա են մի շարք գործոններ, որոնք պետք է հաշվի առնել մասնա-

³ Крайг Г., Бокум Д. Психология развития. 9-е изд., СПб.: Питер, 2005 – Серия “Мастера психологии”, с. 713.

⁴ Климов Е. А. Психология профессионала, М., Воронеж, 1996, с. 12. Ст’у Психология человека от рождения до смерти под ред. А. А. Реана, СПб., Прайм-Еврознак, 2002, с. 478, 489:

գիտական կարգավիճակի անկման պայմաններում հայտնված անձի հոգեկան առանձնահատկությունները բնորոշելիս:

Այսպես, միջին տարիքի առանձնահատկություններից է իմաստության հասնելու փաստը: Իզուր չէ, որ հին հույներն այս տարիքն անվանում էին «ակմե», ինչը նշանակում է մարդկային անձի բարգավաճման առավելագույն պահ: Մյուս կողմից, այս տարիքային փուլին բնորոշ են կյանքի իմաստի կորուստը և ճգնաժամը: Վերջինս չնայած նորմատիվային է՝ պայմանավորված տարիքային շրջափուլի առանձնահատկություններով, բայց պայմաններ ստեղծում դեպրեսիվ ֆոնի, սթրեսների համար: «Ճգնաժամ» բառը հանրագիտարանային բառարանում (հուն. Krisis՝ որոշում, շրջադարձային կետ, ելք) հասկացվում է իբրև կտրուկ շրջադարձ, դժվար անցումային շրջան կամ դժվար դրություն: Լ. Ն. Յուրևան նշում է, որ մի քանի տասնամյակ առաջ հասունությունն ընդունվում էր իբրև ձեռքբերումների շրջան, բայց որոշ հետազոտողներ՝ Ջ. Լևինսոնը, Բ. Նեյգարտեն, Ս. Օշերսոնը, ստիպեցին այլ կերպ նայել հասունությանը և այն անվանեցին հասունության ճգնաժամ: Է. Էրիքսոնը գտնում է, որ այս փուլին բնորոշ է նաև մարդկության ապագա բարեկեցության մասին հոգատարությունը. հակառակ դեպքում առաջանում է անտարբերություն, ապաթիա, ուրիշների մասին հոգ տանելու ցանկության բացակայություն: Կյանքի այս փուլում, Լ. Ն. Յուրևայի կարծիքով, մեծանում է դեպրեսիաների, ներոզների, ինքնասպանությունների, վարքի կախյալ ձևերի հաճախականությունը: Հասակակիցների մահը ստիպում է անձին մտածել սեփական կյանքի ավարտուն լինելու մասին⁵:

Հայրենական հոգեբաններից Ս. Ս. Խուդոյանը զարգացնում է տարիքային ճգնաժամերի տեսությունը: Այս տարիքում մարդը խիստ զգայուն է լինում որոշակի խնդիրների նկատմամբ, ինչի ֆրոստրացիան սուր է ապրվում նրա կողմից, քան այլ շրջաններում: Իզուր չէ, որ միջին տարիքում մասնագիտության փոփոխությունն ապրվում է հատկապես սուր. չէ՞ որ այն մասնագիտական ինքնաիրացման, սեփական կենսական ծրագրերի ամփոփման փուլ է⁶:

Միջին տարիքի ճգնաժամի սահմանը 40 տարեկանն է, որի բնորոշ գծերից են՝ կասկածները, կենսական կողմնորոշիչների բացակայությունը և

⁵ Юрьева Л. Н. Кризисные состояния личности. Днепропетровск, Арт, 1999, сс. 4-7.

⁶ Խուդոյան Ս. Ս., Անձի զարգացման ճգնաժամային տարիքները, Երևան, «Զանգակ-97», 2004, էջ 34-82:

հակվածությունը պատրանքային որոշումներ ընդունելու նկատմամբ: Անձը խորհում է կյանքի ավարտունության, սեփական հնարավորություններն իրացնելու, անցած ժամանակն ամփոփելու մասին [7, 401]⁷: Կյանքի կեսի ճգնաժամը նորմատիվային է, ունի սոցիալ-պատմական, մշակութային բնույթ և հասարակության պատմության ավելի ուշ կազմավորում է: Ճգնաժամն առաջանում է այն ժամանակ, երբ անձի առջև ծառանում է ինքնասակտուալացման ուղիների միջև ընտրության հարցը: Օ. Ա. Կարաբանովան նշում է, որ ժամանակակից հասարակության մեջ անձը կանգնած է բազմաթիվ այլընտրանքային հնարավորությունների առջև, ուստի դժվարանում է ընտրություն կատարել: Առաջանում է նորմատիվային ճգնաժամի անհրաժեշտություն՝ որպես արժեքափմաստային ճգնաժամի կենսական արդյունքների ամփոփում և վերանայում⁸: Այսինքն՝ տարիքային ճգնաժամն առաջին հերթին դրսևորվում է արժեքափմաստային ոլորտի վերանայման մեջ: Նորմատիվային ճգնաժամի շրջանակներում սեփական կյանքի, անձի և մասնագիտության հետ կապված վերաարժևորման գործընթացները կառուցողական են և թույլ են տալիս անձին սեփական գործունեությունը կառուցելու դրական ելքեր որոնել:

Հասունության ճգնաժամերն ուսումնասիրող Մակկինա-Պիխը նշում է, որ Կ. Յունգն առաջին հետազոտողներից էր, ով ուշադրություն է դարձրել կյանքի երկրորդ կեսին՝ գտնելով, որ մարդն այս փուլում հանդիպում է սեփական անգիտակցականի հետ: Անձի համար առաջնային է կենտրոնացումը սեփական ինքնության վրա⁹: Ըստ Յունգի՝ անձի բոլոր ուժերը ձգտում են միավորման, իսկ միասնականություն ձեռք բերելու ցանկությունը հակադրվում է ապակազմավորմանը, և այդ ժամանակ անձն աստիճանաբար գալիս է իր ներքին միասնականության գիտակցմանը, որը մինչ այդ որոնում էր դրսում: Այս հակասությունը միջին տարիքում զարգացման խթանն է: Ճգնաժամի դրական լուծումն անձի կողմից իմաստության ձեռքբերումն ու ստեղծագործելն է, իսկ դրա հակառակ բևեռը ներոզն ու հուսահատությունն են: Գ. Շիխին առանձնացնում է կյանքի կեսի ճգնաժամի հաղթահարման երկու ուղի, ինչից կախված է ճգնաժամից հաջող կամ անհաջող ելքը. արդյոք անձը տեսնո՞ւմ է իր առաջնային երազանքները իբրև իր անձնային խնդիրների լուծում, թե՞ վերաձևակերպում է դրանք իրատեսական նպատակների: Նա համոզված է,

⁷ Психология развития/под ред. А. К. Болотовой и О. Н. Молчановой, М., 2005, с. 401.

⁸ **Карабанова О. А.** Возрастная психология, изд. «Айрисс-пресс», М., 2005, с. 224.

⁹ **Малкина-Пых И. Г.** Возрастные кризисы взрослости, М.: Изд-во, Эксмо, 2005, с. 50.

որ տարիքային ճգնաժամը հաղթահարելու հնարավորությունն անձի ներսում է, նրա ներքին ուժն է, ինչը նա պետք է գործադրի առաջ շարժվելու և ճգնաժամից դուրս գալու համար: Յուրաքանչյուր նոր իրադարձություն այս տարիքում անձին կրկին ստիպում է վերանայել սեփական կենսագրությունը¹⁰: Կենսական ուղին միայն կրկնվող պատմական գործընթաց չէ, այն նաև կապված է անձի անհատական առանձնահատկությունների հետ, ինչպես նաև կախված է սոցիալական ենթատեքստից, որը փոփոխվող աշխարհում թելադրում է իր պահանջներն անձի տարիքային զարգացմանը: Անցումային հասարակության պայմաններում, ինչպիսին Հայաստանն է, կյանքի կեսի ճգնաժամը ստանում է իր յուրահատկությունը:

Ինչպես տեսնում ենք, ճգնաժամի կենտրոնում անձի կողմից ձեռք բերված փորձի, արժեքների, վերաարժևորման գործընթացն է: Անձն ի մի է բերում իր ձեռքբերումներն անձնական, ընտանեկան և մասնագիտական ոլորտներում: Կրկին վերանայում է այս տարիքում արդեն կայացած արժեքային համակարգը՝ տեսնելու, թե ինչն է առավել կարևոր իր համար ներկայումս: Յուրաքանչյուր ոլորտում սոցիալական կամ կենսական պայմանների ազդեցությամբ առաջ եկած փոփոխությունը կարող է առաջացնել դրդապատճառային ճգնաժամ՝ կապված առաջատար կենսական դրդապատճառի թուլացման կամ դրանից հրաժարվելու հետ: Ճգնաժամն ապրելու բնույթը, խորությունը մեծապես կապված են միջին տարիքի անձի ինքնագնահատականի, հավակնությունների մակարդակի հետ: Որքան ցածր է անձի ձեռք բերածը միջին տարիքում սեփական հավակնությունների մակարդակի և վաղ հասունության տարիքում ցանկալիի հետ համեմատած, այնքան անձն ավելի ծանր է ապրում անհաջողությունը, ընկնում է ինքնագնահատականը՝ սրելով դրդապատճառային ճգնաժամը կենսական ուղու այս հատվածում:

Միջին տարիքի անձի հիմնական ապրումները կապված են սեփական պոտենցիալն իրացնելու հնարավորության, ներկայի և ապագայի ծրագրերի հետ: Միջին տարիքում մարդու առաջատար գործունեությունն է աշխատանքը, ինչը որոշում է անձի կյանքի էությունը, դառնում է նրա զարգացման հիմքը: Ի. Ա. Ակինիկովան նշում է մասնագիտական կարգավիճակի երկակի գործառնությունը. այն միաժամանակ զարգացման գործոն և զարգացման միջոց է: Մասնագիտական դերի կատարման ընթացքում անձը յուրացնում է մասնագիտական կարգավիճակին ներկայացվող պահանջները, որոնք ձևավորում են

¹⁰ Шихи Г. Возрастные кризисы, СПб., Ювента, 1999, с. 1983.

յուրահատուկ արժեքային դաշտ և ուղղորդում, յուրահատկություն են տալիս անձի արժեքներին: Տևական աշխատանքային գործունեությունը ձևավորում է ոչ միայն անձի առանձին գործառնական համակարգը և հոգեկան գործընթացները (մասնագիտական հիշողություն, մտածողություն և այլն), այլ նաև սոցիալ-մասնագիտական տիպը՝ որոշակի արժեքային կողմնորոշումներով, բնավորությամբ, միջխմբային և ներխմբային շփման առանձնահատկություններով¹¹: «Մասնագիտություն» հասկացությունը անձի համար դառնում է կարևորագույն արժեք, իսկ մասնագիտական ինքնաիրացման ձգտումը՝ նրա արժեքային համակարգի բարձրագույն արժեքը: Անձնային աճը ենթադրում է անձի կողմից կյանքի իմաստի իրացման նկատմամբ մոտեցում՝ անձնային փորձի ձեռքբերման միջոցով, որը ներառում է ինքնաճանաչողությունը և համընդհանուր մարդկային արժեքների յուրացումը, այնպիսիք, ինչպիսիք են անկեղծությունը, վստահությունը, ընդունված լինելը, ազատությունը և այլն:

Միջին տարիքում մտորումների կենտրոնական թեման մասնագիտական հեռանկարներն են: Մասնագիտության կորուստը կամ փոփոխությունն անձի համար ողբերգական իրադարձություն է: Ա. Մասլոուն գործազրկության հարցին մոտենում է ինքնաակտուալացման տեսության դիրքերից: Բուրգի վերին հատվածի պահանջմունքների ֆրուստրացիան, օրինակ՝ կարգավիճակի նվաճման պահանջմունքի, անձին ուղղում է դեպի բուրգի ստորին աստիճանները՝ դրանով սահմանափակելով ինքնաակտուալացման պահանջմունքը¹²: Լինելով մեկ անգամ ճնշված՝ այդ պահանջմունքները կարող են ընդմիջտ մարել նույնիսկ պայմանների փոփոխության դեպքում:

Հումանիստական ուղղության մեկ այլ ներկայացուցիչ Էրիխ Ֆրոմմը նշում է, որ աշխատանքի գործընթացում արտաքին միջավայրի ձևավորման փոփոխման գործընթացում մարդը ևս ձևավորվում և փոխվում է: Աշխատանքի օտարված բնույթը հանգեցնում է ամբողջական ծուլության, առաջանում է թաքնված, հաճախ անգիտակցական թշնամական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ: Հեղինակը փաստում է, որ 65 տարեկանից բարձր տարիք ունեցող մարդկանց մեծամասնությունը, աշխատանքը դադարելու ան-

¹¹ **Акиндинова И. А.** Самоактуализация личности в различных типах организации профессиональной деятельности, оп. в сб. науч. труд. “Психолого-педагогические проблемы развития личности в современных условиях: “Психология и педагогика в общественной практике”, М., Изд-во РГПУ им. А. И. Герцена, сс. 29-36. Տե՛ս Психология человека от рождения до смерти под ред. А. А. Реана, СПб., Прайм-Еврознак, 2002, с. 505:

¹² **Маслоу А.** Мотивация и личность. М., Евразия, 1999, сс. 83-119:

հրաժեշտության հետևանքով, դառնում են տխուր, իսկ երբեմն էլ՝ ֆիզիկապես հիվանդ¹³:

Վ. Ֆրանկլի կարծիքով մարդը իմաստին կարող է հասնել նաև սոցիալական կառուցվածքում կարգավիճակ ձեռք բերելով, ինչը կապահովի ոչ միայն նրա նորմալ կենսագործունեությունը, բայց և կնպաստի սեփական ռեսուրսների իրացմանը: Սոցիալական ախտաբանությունները, հասարակության մեջ տեղ գտած բացասական երևույթները, ճգնաժամերը Ֆրանկլը բացատրում է բազմաթիվ մարդկանց մեջ գոյաբանական վակուումի առկայությամբ: Այն բնորոշվում է իմաստի նկատմամբ ձգտման ֆրուստրացիայով և արտահայտվում է ծանծրայի մեջ¹⁴: Այս տեսանկյունից մասնագիտական ինքնաիրացման ֆրուստրացիան կասեցնում է անձի բնականոն զարգացումը:

Գ. Օլփորթը գտնում է, որ աշխատանքը մարդու հոգեկան առողջության չափորոշիչ է: Նա առաջնային նշանակություն է տալիս անձի գծերին: Ըստ Օլփորթի՝ դրանք թույլ են տալիս փոփոխությունների լայն շրջանակ: Փոխադարձ հարմարումը ձեռք է բերվում անձի և սոցիալական համակարգի ներքին ճկունության հիման վրա: Կապված դիրքը հասարակական կառուցվածքում անձը լուրջ փոփոխության չի ենթարկվի, քանի որ անձնային միջուկը մնում է անփոփոխ¹⁵: Չի կարելի անտեսել այն փաստը, որ անձի միջուկի հիմնական գծերը կայունանում են՝ դառնալով մասնագիտական կարգավիճակով պայմանավորված կառույցներ՝ արժեքներ, ուստի մասնագիտական կարգավիճակի փոփոխության դեպքում կարող են նպաստել սոցիալական իրականության արժևորման, իմաստավորման փոփոխություններին, ինչը դիտվում է միջին տարիքի անձի հոգեկանում: Անձի կենսական ուղու անհատական փոփոխականության փաստը նախազգուշացնում է մասնագիտական կարգավիճակի հետ խիստ նույնացման բացասական հետևանքների մասին: Այնուամենայնիվ, մարդկային անձը ճկուն է, ուստի կյանքի պայմանների՝ աշխատանքի, ընտանեկան կարգավիճակի փոփոխության դեպքում արժեքային ոլորտում նկատվում է դրանց հետ կապված արժեքների իմաստների վերաարժևորման, վերաիմաստավորման անհրաժեշտություն:

¹³ **Фромм Э.**, Здоровое общество. М., Изд. АСТ, 2005, сс. 205, 357, 359.

¹⁴ **Франкль В.** Человек в поисках смысла: пер. с англ. и нем., М.: Прогресс, 1990, сс. 10, 35-39.

¹⁵ **Оллпорт Г.** Становление личности. Избранные труды, пер. с англ. Д. А. Леонтьева, Л. В. Трубницыной, под общ. ред. Д. А. Леонтьева, М; Смысл, 2002, сс. 383-386.

Չնայած նրան, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխությամբ պայմանավորված հոգեբանական նորագոյացությունները միջին տարիքի անձանց մոտ մանրամասնորեն ուսումնասիրվել են, այնուամենայնիվ թերի է մնում մասնագիտական կարգավիճակի անկման պայմաններում միջին տարիքի անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հարցը:

Միջին տարիքում արժեքային համակարգը կայացած և հարաբերակա- նորեն կայուն է, այնուամենայնիվ տնտեսական-գաղափարական, արժեքային դաշտի փոփոխությունները մեծապես ազդում են հասուն անձի արժեքային համակարգի վրա: Անձի համար մասնագիտությունը ձեռք է բերում կենսական արժեքի կարգավիճակ: Միջին տարիքում մասնագիտական կարգավիճակի փոփոխությունն անձի կողմից ապրվում է հիվանդագին ձևով հատկապես նրանց կողմից, ում արժեքային համակարգում մասնագիտություն և աշխատանք արժեքներն առաջնային են և ունեն կենսական կարևորություն: Կարելի է ենթադրել, որ նման պայմաններում հայտնված անձանց մոտ նկատվում է մասնագիտություն արժեքի վերափոխում աշխատանք արժեքի՝ իբրև գոյատևման, կենսամակարդակ ապահովելու միջոցի: Արժեքային համակարգի վերակառուցումը ենթադրում է մասնագիտական արժեքների առաջնային նշանակության կորուստ:

Այնուամենայնիվ, միջին տարիքում մասնագիտական կարգավիճակի փոփոխությունն անձի մեջ առաջացնում է մի վիճակ, որը բնորոշվում է մասնագիտական ինքնաիրացման հնարավորության սահմանափակմամբ, սեփական կյանքի որակով անբավարարվածությամբ, կենսական հենարանի զգացման բացակայությամբ: Անձը կարող է հայտնվել հոգեբանական փակուղում, ինչը չհաղթահարելու դեպքում տարիքային նորմատիվ ճգնաժամը կարող է վերաճել հոգևոր ճգնաժամի: Հոգևոր ճգնաժամը, ըստ Վ. Վ. Կոզլովի, անձի զարգացման հատուկ փուլ է, երբ նախաձեռնվում է Ես-ի նյութական, հոգևոր և սոցիալական ներքին ենթահամակարգերի միավորումը մեկ միասնական տարածության մեջ, ինչը տեղի է ունենում բոլոր արժեքների վերագնահատման ժամանակ, և այդ գործընթացում անձը սկսում է վերաիմաստավորել կյանքում իր տեղը: Անձի առջև ծառանում են ինքնորոշման, ինքնաիրացման խնդիրներ, և նա, փաստորեն, ներգրավվում է ճգնաժամի մեջ: Ճգնաժամի ժամանակ տեղի է ունենում կյանքի վերաիմաստավորում, որը ծայրահեղ իրավիճակներում գոյատևման հոգեբանական մեխանիզմ է. կամ փախչել, կամ դիմակայել անբարենպաստ ճնշմանը: Եթե մարդու գոյության իմաստները չեն իրացվում, ապա կյանքի որոշակի փուլում առաջանում է գոյաբանական դատարկություն,

և նա բախվում է իր գոյության անիմաստությանը, ինչը բավականին վտանգավոր իրադրություն է: Հոգևոր ճգնաժամ առաջ բերող գործոնների մեջ Վ. Վ. Կոզլովն առանձնացնում է ինտեգրատիվ սոցիալական կարգավիճակի կորուստը՝ ազատման, հաստիքների կրճատման, թռչանի անցնելու, ձեռնարկության լուծարման կամ ապադրակավորման պատճառով, նշանակալի սոցիալական կապերի այլափոխումը, ինչը հրահրում է ուժեղ հուզական ապրումներ: Հիրավի, կյանքի իմաստի կորուստը վտանգներով լի իրավիճակ է, երբ մարդուն իր գոյությունը չի բավարարում: Այդ վիճակն ուղեկցվում է դեպրեսիայով և տագնապով: Անձը որպես իրադրությունից ելք կարող է ընտրել ինքնասպանությունը: Նրա մեջ կարող են ակտիվանալ մահվան հետ կապված մտքեր: Դրանք առաջանում են նախկին հավակնությունների կործանման և նախկին դերերից ազատագրման արդյունքում: Ճգնաժամը մարդուն զրկում է արտաքին հենարանի որոշակի տարրերից, օրինակ՝ սոցիալական կարգավիճակ, եկամուտ և այլն, ինչի հետ նա ունի նաև ներքին նույնացում: Իհարկե, ճգնաժամը մարտահրավեր է անձի գոյությանը, որից ելքը մեծապես կախված է անձի հմտություններից, ընդունակություններից, անհատական առանձնահատկություններից¹⁶:

Այսպիսով, մասնագիտական կարգավիճակի անկման իրադրությունը հոգեբանական առումով առավել սուր ապրվում է միջին տարիքի անձանց կողմից՝ արտահայտվելով մասնավորապես արժեքային կողմնորոշումների փոփոխության ձևով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է միջին տարիքի անձի հոգեկանում արժեքային վերակառուցումների խնդիրը: Սոցիալական տարածության մեջ ի հայտ եկող տարաբնույթ փոփոխությունները պայմանավորում են մասնագիտական կարգավիճակի վարընթաց տեղաշարժի երևույթը: Վերջինս ներառում է բազմաթիվ միջին տարիքի անձանց, որոնք կանգնում են կենսական կարևոր, մասնավորապես մասնագիտական արժեքների վերաարժևորման խնդրի առջև: Այս իրադրության դրսևորումներից մեկը հոգևոր ճգնաժամի առկայությունն է:

¹⁶ **Козлов В. В.** Психотехнологии измененных состояний сознания. Методы и техники, М.: Изд-во Института психотерапии, 2005, сс. 106-116.

Բանալի բաներ - նորմատիվային ճգնաժամ, դրդապատճառային ճգնաժամ, մասնագիտական կարգավիճակ, մասնագիտական ինքնաիրացում, հոգևոր ճգնաժամ:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПАДЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО СТАТУСА ЛИЧНОСТИ СРЕДНЕГО ВОЗРАСТА

СЕДА ВАРДАНЯН

В статье рассматривается проблема ценностных перестроек личности среднего возраста. Различные изменения, которые происходят в социальном пространстве, обуславливают явление нисходящего перемещения профессионального статуса. Последнее охватывает множество лиц среднего возраста, перед которыми встает проблема переоценки жизненно значимых, в частности, профессиональных ценностей. Одним из проявлений этой ситуации является наличие духовного кризиса.

Ключевые слова – нормативный кризис, мотивационный кризис, профессиональный статус, профессиональная самореализация, духовный кризис.

THE PSYCHOLOGICAL FEATURES OF A MIDDLE-AGED INDIVIDUAL'S DECLINE IN PROFESSIONAL STATUS

SEDA VARDANYAN

Seda Vardanyan in this article considers the issue of axiological reconstructions in a middle-aged individual's mind. Various changes taking place in social environment cause a decline in the professional status of an individual. Numerous middle-aged people involved face vital problems. They are particularly confronted by the problem of reassessment of professional values. One such problem is the actuality of spiritual crises or spiritual emergencies.

Key words - normative crisis, motivation crisis, professional status, professional fulfillment, a spiritual crisis.

ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ ԹՅՈՒՆՆԵՐ

ԲԻՈԵԹԻԿԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ԴՎԿԹՅԱՆ

Միանգամայն ակներև է, որ XXI դարը լինելու է ճգնաժամային մարդկության հետագա գոյատևման համար և համապատասխանաբար հագեցված փիլիսոփայական նոր հիմնահարցերով և բարոյական դիմաբախումներով: Այսօր շատ են խոսում փիլիսոփայության «աստեղային ժամի» մասին, քանի որ եկել են մարդու կողմից սեփական ինքնության, նրա կյանքի իմաստի, աշխարհում իր տեղի և զարգացման հեռանկարների առավել խոր ըմբռնման գիտակցման ժամանակները¹: Մարդը սկսում է խորապես գիտակցել բարու և չարի, հիմնազրկության (աքստրոդի) և բանականության, կեցության և ոչկեցության, մահվան և անմահության միջև վճռական ընտրություն կատարելու անհրաժեշտությունը: Համաշխարհային պատմության ժամանակակից շրջանը պահանջում է գիտության և բարոյականության, ազատության և պատասխանատվության, մշակույթի և քաղաքակրթության փոխկապակցվածության հայեցակարգային նոր ըմբռնում, որը մարդկության կողմից կարող է դրվել իր զարգացման գլոբալ ռազմավարության հիմքում՝ ապահովելու ոչ միայն պարզապես գոյատևումը, այլև մարդկային ցեղի իսկական անմահությունը²:

Ժամանակակից դարաշրջանի գլխավոր առանձնահատկությունն այն է, որ գլոբալ մասշտաբով ճգնաժամային երևույթները և մարդու կենսատեխնոլոգիական ներխուժումը «կյանք»՝ առավել հրատապ և պահանջարկված են դարձրել ավանդական, առերևույթ «տաղտկալի» ակադեմիական-փիլիսոփայական հիմնախնդիրները:

Մարդկային էության բնույթի, նրա կյանքի իմաստի և էության, մարդ-

¹ **Микешина Л.А.** Фундаментальный поворот в понимании структуры научного знания. – В сб. Философия, наука, цивилизация. М.: Эдиториал, УРСС, 1999, сс. 120-131.

² **Даллмар Ф.** Глобальная этика: преодоление дихотомии “универсализм”, “партикуляризм”. – Вопросы философии, 2003, № 3, сс. 13-19.

կային արժանապատվության և էքզիստենցիալիստական իրավունքին առնչվող հարցերը քաղաքակրթության գոյատևման համար դառնում են արմատական: Ըստ էության, որպեսզի հասկանանք մարդու և մարդկային քաղաքակրթության պատմական հեռանկարները, դեպի տիեզերք լայնածավալ ընդարձակման հնարավորությունները, անհրաժեշտ է իմանալ, թե ինչպիսին է մարդու իսկական բնույթը, նրա բարոյահոգևոր ներուժը, գիտենալ, թե մարդը «խո՞րթ» է այդ աշխարհին, թե՞ գոյաբանորեն անսահմանորեն արմատավորված է նրա մեջ³:

Փիլիսոփայությունը՝ որպես աշխարհի հոգևոր յուրացման ոլորտ, առաջնահերթության իրավունք ունի ժամանակակից աշխարհում տեղի ունեցող հեղափոխական փոփոխությունների իմաստի և նշանակության գնահատման առումով: Փիլիսոփայությունն աշխարհում մարդու տեղի և դերի ռացիոնալ գիտակցման բարձրագույն ձևն է: Նա «բաց» է՝ գիտության բոլոր ճյուղերի և հասարակության ողջ հոգևոր մշակույթի հետ երկխոսելու համար: Դա արժեքների վերարժևորման իրավունք է ընձեռում փիլիսոփայությանը:

Այստեղից էլ արտակարգ մեծ է փիլիսոփայության պատասխանատվությունը դարաշրջանի իմաստավորման, մտածողության նոր տիպին համարժեք ձևի, քաղաքակրթության նոր տիպի կամ մոդելի մշակման խնդրում: Դրա լուծումը մեծապես կախված է մեր դարաշրջանի ինտելեկտուալ մթնոլորտից, որը որոշվում է փիլիսոփայական գաղափարներով և դրանց միջև պայքարով, գիտության և հասարակության փոխհարաբերությունների տիպով, ինչպես նաև ժամանակակից գիտության վիճակով և առարկայական տիրույթով:

Բիոէթիկայի փիլիսոփայական, աշխարհայացքային հիմնախնդիրների առանձնահատկությունն այն է, որ նրանք չունեն դոգմատիկ, անառարկելի բնույթ և այդ իմաստով չունեն բոլոր ժամանակների համար միանշանակորեն հայտնի լուծումներ: Խորքային փիլիսոփայական-էքզիստենցիալ և աշխարհայացքային արմատներ ունեցող բիոէթիկայի՝ որպես մարդկային մշակույթի առանձնահատուկ ոլորտի իմաստը նրա տրամախոսական, երկխոսական բնույթի մեջ է: Վերջինս պահանջում է անձի ակտիվ հոգևոր դիրքորոշում, որի հենակետն արդեն տեսանելի է «գիտելիքը և առաքինությունը անխզելի են» սոկրատեսյան կանխադրույթի մեջ⁴: Սկզբնապես բիոէթիկան կազմավորվել է

³ Яковлев В.А., Суркова Л.В. Философия жизни на пороге XXI века: новые мысли. – Вестник Московского университета. Сер.7. Философия, 2000, № 6, сс. 101-119.

⁴ Сократ, Платон, Аристотель, Сенека // М., 1995, сс. 67-70.

որպես գիտության էթիկայի բաժին, այսինքն՝ գիտական իմացության սոցիալ-բարոյագիտական և հումանիստական հիմնախնդիրների ամբողջություն, սակայն որոշ ժամանակ անց, ինտեգրվելով փիլիսոփայությանը, գիտության գործառույթից վերաճվել է հետազոտությունների ինքնուրույն բնագավառի:

Հետազոտելով փիլիսոփայության և բիոէթիկայի փոխադարձ կապը՝ չի կարելի չհիշատակել փիլիսոփայության էության, փիլիսոփայական ուսումնասիրությունների աշխարհայացքային նշանակությանն առնչվող հիմնահարցերը⁵:

Փիլիսոփայության գլխավոր առաքելություններից մեկը մարդու, նրա կենսագործունեության վերաբերյալ գիտելիքների համակարգումն է: Այդ տեսակետից բիոէթիկան հանդես է գալիս որպես մարդու մասին գիտելիքների համակարգման առանձնահատուկ եղանակ՝ շարունակելով փիլիսոփայության և բժշկության ավանդույթները, միաժամանակ տարբերվելով դասական մետաֆիզիկայից նրանով, որ այն գործում է քաղաքակրթության համապարփակ ճգնաժամի, կենսաբժշկական նոր տեխնոլոգիաների պայմաններում:

Այս ամենը փիլիսոփայությունից պահանջում է հայեցակարգային և աշխարհայացքային որոշակիություն, որը բխում է մեր ժամանակների մարտահրավերներից: Աշխարհայացքային և հայեցակարգային առումներով բիոէթիկան պրակտիկ փիլիսոփայության նոր եղանակ է, իսկ կենսաբժշկական տեխնոլոգիաների ազդեցիվ ներխուժման պայմաններում՝ կյանքի և մարդկային արժանապատվության նոր փիլիսոփայություն⁶:

⁵ Антропологическая проблематика в западной философии. М.: Изд-во МГУ, 1991, сс. 70-80.

Кутырев В.А. Апология человеческого (предпосылки и контуры консервативного философствования) / В. А. Кутырев // Вопросы философии, 2003, № 1, сс. 63-75.

Баруллин В.С. Социально-философская антропология / В. С. Баруллин. М.: ФАИР-ПРЕСС, 1994, 532 с.

Кутырев В.А. Философский образ нашего времени (безжизненные миры постчеловечества) / В. А. Кутырев. Смоленск: Б. и., 2006, 302 с.

Гуревич П.С. Феномен деантропологизации человека // Вопросы философии, 2009, №3, сс. 19-31.

Жукова Е.А. Динамика взаимосвязи фундаментальной науки и общества (биоэтический аспект нанотехнологий) / Е.А. Жукова // Бюллетень сибирской медицины. Том 5, № 5, 2006, сс. 82-87.

⁶ **Марков Б.В., Солонин Ю.Н., Шилков Ю.М.** Жизнь как предмет философских размышлений. – Социально-политический журнал, 1996, № 4, сс. 105-121.

Բիոէթիկան գիտելիքների համակարգման առանձնահատուկ եղանակ է, ինչպես նաև էթիկական-իրավական տարածքում մարդկային կենսագործունեության առանձնահատուկ եղանակ, որի միջոցով բժշկության կողմից յուրացվում են հեղափոխական կենսատեխնոլոգիաները:

Մասնագիտական գրականության մեջ բիոէթիկայի մեկնաբանության հարցերում նկատվում է երկու միտում: Մի կողմից, գոյություն ունի տվյալ հասկացության ծավալի նեղացման միտում. բիոէթիկան հանգեցվում է նեղ ըմբռնված մասնագիտական բժշկական էթիկային⁷:

Իսկ ընդլայնողական մեկնաբանության տրամաբանությամբ բիոէթիկան ըմբռնվում է ոչ թե պարզապես որպես կյանքի էթիկա, որն ընկած է բժշկական էթիկայի հիմքում, այլ որպես կյանքի պրակտիկ փիլիսոփայություն⁸: Մենք պաշտպանում ենք վերջին հայեցակարգային տեսակետը:

Բիոէթիկան բնավ չի հավակնում լինել ապագայի յուրօրինակ կրոն, ինչպես որ ժամանակին եվգենիկան, սակայն նույնիսկ եթե այդպիսին դառնա, կտարբերվի ավանդական կրոններից նրանով, որ կզբաղվի ոչ թե հոգու փրկությամբ, ինչը կրոնի նպատակն է, այլ կյանքի՝ փրկությամբ և պաշտպանությամբ: Բիոէթիկայի նպատակն է կյանքի ապաքինում-բժշկումը և պահպանումը, նրա ոգու վսեմացումը:

Փիլիսոփայության աշխարհայացքային իմաստը և բիոէթիկայի գերխնդիրը սկզբունքորեն համընկնում են: Էթիկան միշտ դիտարկվել է որպես պրակտիկ փիլիսոփայություն, որպես մարդու գործունեության բարոյական գնահատման չափանիշ և բարոյական ընտրության հիմնավորում:

Ժամանակակից պայմաններում պրակտիկ փիլիսոփայությունը հզոր ազդակ է ստացել՝ նոր ձևով, այսինքն՝ բիոէթիկայի տեսքով զարգանալու համար: Բիոէթիկան ոչ միայն գիտական գիտելիքների որոշակի համակարգ կամ կազմավորվող սոցիալական ինստիտուտ է, այլև մշակույթի նոր տարր, նոր աշխարհայացք: Եթե անտեսվում են բիոէթիկայի արժեքային-աշխարհա-

⁷ **Коновалов В.В.** Кризис медицины на рубеже XX-XXI веков и пути его преодоления / В. В. Коновалов // Человек, 1996, № 1, сс. 106-119.

Апресян Р. Г. Понятие общественной морали (опыт концептуализации) / Р. Г. Апресян // Вопросы философии, 2006, № 5, сс. 3-17.

⁸ **Энгельгардт Х. Т.** Почему не существует глобальной биоэтики? / Х. Т. Энгельгардт // Человек, 2008, № 1, сс. 74-82.

Коновалова Л.В. Прикладная этика (по материалам западной литературы). Выпуск 1. Биоэтика и экоэтика / В. Коновалова, М.: ИФРАН, 1998, 216 с.

յացքային բաղադրիչները, որոնք կոչված են բացահայտելու բժշկական գործունեության բարոյական իմաստը կենսատեխնոլոգիական հեղափոխության պայմաններում, ապա դա կարող է հանգեցնել բժշկության, կենսաբանության, կենսաֆիզիկայի և կենսաքիմիայի ընդհանուր աշխարհայացքային հիմքերի կազմավորման: Ամբողջությամբ վերցրած, բիոէթիկայի արժեքային-աշխարհայացքային բաղադրիչը ժամանակակից քաղաքակրթության կենսաբժշկական, էկոլոգիական մշակույթի կարևոր չափանիշներից է⁹:

Հարկ է նկատել, որ մարդու վերաբերյալ փիլիսոփայական նոր հայեցակարգը հեռանկարում կարող է դառնալ բիոէթիկայի միջառարկայական հիմնախնդիրների համալիր լուծման տեսական կարևոր աղբյուր: Այդ իսկ պատճառով ինքը՝ բիոէթիկան, էապես կախված է գիտափիլիսոփայական աշխարհայացքից, նրա ճանաչողական և արժեքային հիմքերից:

Այսպիսով, ըմբռնման հաստատման ճանապարհին կան իմացաբանական խոչընդոտներ, որոնցից է տեխնոկրատիզմը: Գիտական շրջանակներում տեխնոկրատական մտածողության տիրապետությունը կյանքի է կոչում սցիենտիստական պատկերացումներ՝ մարդու մանիպուլացման, նրա վրա ձեռնաձուլական ներգործությունների անսահման հնարավորությունների մասին՝ սոցիալական պայմանների կամ կենսաբանական բնույթի փոփոխման միջոցով:

Գիտության պատմության փորձը ցույց է տալիս, որ սցիենտիստորեն կողմնորոշված սահմանափակ աշխարհայացքն անխուսափելիորեն կյանքի է կոչում իսկական գիտական փիլիսոփայական մտածողությանն անհարիր պատկերացումներ՝ «եվգենիզմի ուրվականների», «գերմարդկային»՝ նախապես տրված հատկանիշներով մարդ ստեղծելու գաղափարի տեսքով¹⁰: Քաղաքակրթության զարգացման ժամանակակից կենսատեխնոլոգիական փուլն

⁹ Биоэтика: принципы, правила, проблемы. М.: Эдиториал УРСС, 1998, с. 225.

Тульчинский Г.И. Постчеловечность в разнообразии культур. Глобализация, биоэтика и цивилизационные разломы все еще только начинается / Г. И. Тульчинский // Бюллетень сибирской медицины. Том 5, № 5, 2006, сс. 123-136.

¹⁰ **Огурцов А.П.** Этика жизни или биоэтика: аксиологические альтернативы. – Вопросы философии, 1994, № 3, сс. 49-61.

Апресян Р.Г. Идея морали и базовые нормативно-этические программы / Р. Г. Апресян. М.: ИФРАН, 1995, 353 с.

Бартко А.Н. Биомедицинская этика: теория, принципы и проблемы. Ч. 2. Принципы и основные проблемы биомедицинской этики / А.Н. Бартко, Е.П. Михайловска-Карлова. М.: ММСИ, 1999, 225 с.

առաջադրում է գիտական լուրջ հիմնախնդիրներ, որոնք ունեն կարևորագույն մեթոդաբանական և արժեքային-աշխարհայացքային նշանակություն: Բիոէթիկայի կենսիմաստային հիմնախնդիրները չեն կարող ծագել սպեկուլյատիվ փիլիսոփայության կամ սցենարիզմի ընդերքում: Նրանք, սովորաբար, հարուցվում են ժամանակակից բնագիտության՝ կենսաբանության, գենային ինժեներիայի, կենսաբժշկության «ճնշման» շնորհիվ: Դա ժամանակակից փիլիսոփայությանը, մարդկային բանականությանը նետված յուրօրինակ «մարտահրավեր» է, առավել ևս, որ աշխարհայացքային հարցերը հնարավոր չէ լուծել մասնավոր գիտական գիտելիքների, առանձին կրոնների կամ բժշկության շրջանակներում¹¹:

Բիոէթիկայի զարգացման կարևորագույն ուղղությունը կապված է ժամանակակից քաղաքակրթության գլոբալ խնդրի՝ հասարակական զարգացման նոր հարացույցի, բիոէթիկական մտածողության նոր տիպի ստեղծման հետ, որը կփոխի պատկերացումները, իրականության և փիլիսոփայական իմաստության միջև կամուրջներ կզցի, կկարողանա արևմտյան պրագմատիզմը հաշտեցնել բարձրագույն հոգևոր արժեքների, փիլիսոփայությունը՝ կյանքի հետ:

Այսպիսով, կյանքի մեծագույն հրաշքի ճանաչումը, կյանքի տիեզերական մասշտաբի և նրա համար պատասխանատվության իմաստավորումը, կյանքի ընդհանուր ռազմավարության մեջ խորամուխ լինելը, խորհրդածող մարդկային անհատից պահանջում են վիթխարի ինտելեկտուալ հանձնառություն ոչ միայն կյանքի պաշտպանության սոցիալական նոր ձևերի որոնումներում: Պահանջում է առանձնապես կյանքի հանդեպ սրտահոյզ երկյուղածության, ակնածության վերաբերմունք /Ա. Շվեյցեր/, ինչն իր առավել համարժեք արտահայտությունն է գտնում բիոէթիկայի աշխարհայացքային բովանդակության մեջ:

Բիոէթիկայի փիլիսոփայական վերլուծությունն ունի սոցիալ-էթիկական և իրավաբանական կարևոր նշանակություն գիտության էթիկայի հիմնախնդիր-

¹¹ **Тищенко П.Д.** Новейшие биомедицинские технологии: Философско-антропологический анализ. Анализ идей либеральной евгеники Ю. Хабермасом. / П.Д. Тищенко // Вызов познанию: стратегии развития науки в современном мире. М.: Наука, 2004, сс. 309-332.

Хабермас Ю. Будущее человеческой природы / Ю. Хабермас. Пер. с нем. М.: Издательство «Весь Мир», 2002, 144 с.

Thornton T. Judgement and the role of the metaphysics of values in medical ethics / T. Thornton // Journal of Medical Ethics. 2006. - V. 32. - P. 365370. - Режим доступа: <http://jme.bmj.com/cgi/content/full/32/6/365> (дата обращения: 14.08.2007)

ների վերլուծության համար և պահանջում է կանոնավոր անցկացնել բիոէթիկական մշտադիտարկում (մոնիթորինգ)¹²: Այն թույլ կտա բացահայտել ինչպես գիտական հանրույթի, այնպես էլ սոցիումի համար ընդունելի էթիկական նորմերը՝ կենսաբժշկական այնպիսի մանիպուլյացիաներ իրականացնելիս, ինչպիսին է միջամտությունը մարդու գենոմի մեջ և այդ հիմքի վրա կենսաբժշկական օրենսգրքերի մշակումը՝ իրավաբանական նորմատիվների տեսքով:

Բիոէթիկայի սոցիալ-էթիկական, փիլիսոփայական-աշխարհայացքային հիմնախնդիրների հետազա մշակումը դառնում է ոչ միայն տեսականորեն հրատապ, այլև գործնականորեն խիստ կարևոր և նշանակալի՝ մարդու մասին ժամանակակից գիտությունների զարգացման համար: Այստեղ մենք, նախքան բիոէթիկայի որոշակի հիմնախնդիրների վերլուծությանն անցնելը, նպատակահարմար ենք գտնում հստակեցնել բիոէթիկայի արժեքանական հիմքերը:

Բիոէթիկայի սոցիալ-արժեքանական գործառույթը

Բիոէթիկան, նպաստելով հասարակական գիտակցության մեջ կյանքի արժեքանության ձևավորմանը, ազդակում է ժամանակակից գիտության մեջ և առողջապահության ոլորտում հումանիզացման գործընթացներին¹³: Ժամանակակից գիտության ու առողջապահության ոլորտներում հումանիզացման գործընթացն ուղղված է որոշակի խնդիրների լուծմանը:

Նախ՝ բնագիտական և սոցիալ-հումանիտար գիտելիքների միջև խզման հաղթահարմանը և գիտության ու բարոյականության միջև հավասարակշռության հաստատման ուղիների որոնումներին:

Երկրորդ՝ բժշկության ներքին կառուցվածքում արժեքային տեղաշարժերի բացասական հետևանքների վերացմանը, որոնք հասարակության մեջ բարդ ու հակասական փոխակերպումների արդյունք են:

¹² Яковлев В.А., Суркова Л.В. Философия жизни на пороге XXI века: новые мысли. – Вестник Московского университета. Сер.7. Философия, 2000, № 6, сс. 101-119.

¹³ Тищенко П.Д. Угроза множественности и идея гуманитарной экспертизы. – В сб.: Биоэтика и гуманитарная экспертиза. Вып.2, М.: ИФРАН, 2008, сс. 102-128.

Гусейнов А.А. Размышления о прикладной этике / А.А. Гусейнов // Режим доступа: <http://www.ethicscenter.ru/ed/kaunas/gus.html> (дата обращения: 20.08.2009).

Кастельс Мануэль. Информационная эпоха: Экономика, общество и культура / Мануэль Кастельс; Пер. с англ. под науч. ред. О.И. Шкаратана. М.: Гос. ун-т., Высш. шк. экономики, 2000, 606 с.

Երրորդ՝ կենսաբժշկության մեջ նոր տեխնոլոգիաների հարուցած իրողությունների վերլուծության և գնահատման նոր չափանիշների մշակմանը, ժամանակակից գիտության արժեքային հրամայականների և իրավական վարքականոնների հստակեցմանը:

Չորրորդ՝ կենսաբժշկական գիտությունների և առողջապահության բարոյական հիմնախնդիրների՝ նեղ կորպորատիվ ոլորտից հասարակական լայն քննարկումների դաշտ տեղափոխմանը:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից գիտական գիտելիքի և առողջապահության հումանիզացման գործընթացի իրականացման եղանակներն ունեն որոշակի առարկայական ձև և բովանդակություն: Նախ՝ բիոէթիկան հրատապություն է հաղորդում մարդու կյանքի և առողջության նկատմամբ՝ դեռ վաղնջական ժամանակներում ձևավորված արժեքային վերաբերմունքին: Այն արտացոլվել է անտիկ մշակույթի գրավոր հուշարձանների, Հիպոկրատի աշխատությունների մեջ, որոնք լրջորեն ազդել են Եվրոպայում և Հայաստանում բժշկական էթիկայի ավանդույթների ձևավորման վրա:

Երկրորդ՝ իր հիմնախնդիրների լուծման համար բիոէթիկան այսօր լայնորեն հենվում է իրավապաշտպան շարժման փորձի վրա, որը ծագել է որպես մարդու հանդեպ անմարդկային վերաբերմունքի, այդ թվում՝ փորձարարական նպատակներով մարդու օգտագործման դեմ ուղղված հումանիստական ադիմադրության արտահայտություն¹⁴:

Երրորդ՝ բիոէթիկան նպաստում է բժշկության սոցիալական գործառույթների ամրապնդմանը և կատարելագործմանը, որը կապված է այն ըմբռնման հետ, որ առողջությունը մի երևույթ է, որը, բացի բժշկականից, ներառում է նաև գիտական, սոցիալական և մշակութային բաղադրիչներ:

Չորրորդ՝ ուշադրությունը կենտրոնացնելով մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր ջրի, օդի և հողի աղտոտման, բնապահպանա-

¹⁴ Мишаткина Т.В. Три круга этики. – Человек, 2006, № 5, сс. 89-98.

Нейсбит Д. Высокая технология, глубокая гуманность: Технологии и наши поиски смысла / Джон Нейсбит при участии Наны Нейсбит и Дугласа Филиппса; пер. с англ. А.Н. Анваера. М.: АСТ: Траюиткнига, 2005. 381 с.

Тульчинский Г.И. Постчеловечность в разнообразии культур. Глобализация, биоэтика и цивилизационные разломы все еще только начинается / Г. И. Тульчинский // Бюллетень сибирской медицины. Том 5, № 5, 2006, сс. 123-136.

Хабермас Ю. Модерн незавершенный проект / Ю. Хабермас // Вопросы философии, 1992, № 4, сс. 40-52.

կան հավասարակշռության խախտման գործընթացներով հարուցված սպառնալիքների վրա՝ բիոէթիկան նպաստում է հասարակական գիտակցության բնապահպանականացման գաղափարների արդիականացմանը:

Հինգերորդ՝ բիոէթիկան, հենվելով մարդակենտրոն դիրքորոշումների և փաստարկների վրա, որոնք թերագնահատվում էին դասական բնագիտության կողմից, սակայն պահանջարկված են դարձել հետդասական գիտության համար, նպաստում է գիտության և փիլիսոփայության, առհասարակ փիլիսոփայության յուրօրինակ մարդաբանականացմանը:

Վեցերորդ՝ լիովին համապատասխանելով ժամանակակից գիտական իմացության միջառարկայական ռազմավարության պահանջներին՝ բիոէթիկան ինտեգրում է բնագիտական և սոցիալ-հումանիտար գիտելիքների, հիմնադրույթների ու սկզբունքների այն եզրերը, որոնք կարող են օգտակար լինել կյանքի, առողջության և բարեկեցության պաշտպանության համար:

Ժամանակակից Հայաստանում բիոէթիկայի արժեքանական ներուժը խիստ պահանջարկված է, քանի որ կապված է բժշկական էթիկայի հիմնական նորմերի և սկզբունքների աղճատման-խաթարման դրսևորումների հաղթահարման, ժամանակակից Հայաստանում մարդու կյանքի արժեքանական կարգավիճակը վերականգնելու անհրաժեշտության հետ:

Հայաստանում արժեքային կողմնորոշիչների անորոշությունը, բժիշկ-հիվանդ հարաբերություններում պատերնալիստական դիրքորոշումների տիրապետումը, հայրենական առողջապահության մեջ ճգնաժամային իրավիճակի խորացումը, բժշկության առևտրայնացումը նախադրյալներ են ստեղծել առողջապահության ոլորտում տարատեսակ չարաշահումների և խախտումների համար:

Վերլուծելով իրավիճակները, որոնք կապված են հիվանդի իրավունքների և արժանապատվության պաշտպանության, առողջապահության մեջ իրազեկված համաձայնության և արդարության սկզբունքների հետևողական իրագործման անհրաժեշտության հետ, բիոէթիկան բացահայտում է հիմնահարցերի հետազոտման և իմաստավորման նոր եզրեր: Դրանք փիլիսոփայության մեջ ունեն հիմնարար արժեքների կարգավիճակ:

Խոսքը անձի արժանապատվության հիմնավորման, ազատության և պատասխանատվության հարաբերակցության, արդարության և զթասրտության սկզբունքների արդիականացման մասին է: Այդ հիմնախնդիրները որոշիչ նշանակություն ունեն բիոէթիկայի մեջ, քանի որ կապված են բժշկության

գլխավոր՝ «հիվանդի բարօրությունը բարձրագույն օրենք է» էթիկական պատգամի հետ (*Salus aegroti suprema lex*)¹⁵:

Մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը՝ որպես բիոէթիկական հիմնահարց, քննարկվել և քննարկվում է միջազգային մակարդակներում (Առողջապահության համաշխարհային կազմակերպության 1975 թ. որոշումը, 1986 թ. Եվրախորհրդի համաձայնագիրը, բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին հռչակագիրը 2005 և այլն)¹⁶:

Հայկական իրականության պայմաններում մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության փիլիսոփայական իմաստավորումը պահանջում է լուծել հետևյալ խնդիրները:

Նախ՝ բժշկի և հիվանդի փոխհարաբերությունների մոդելի ընտրությունը, որն առավել կհամապատասխանի ժամանակակից հայկական իրականության պայմաններին: Երկրորդ՝ գաղտնիության սկզբունքի պահպանումը բժիշկ-հիվանդ հարաբերություններում: Երրորդ՝ բժշկական օգնության որակի միջազգային ստանդարտներին հայրենական առողջապահության անհամապատասխանության պատճառների բացահայտումը: Չորրորդ՝ «բարիք» հասկացության մեկնաբանության առանձնահատկությունները՝ «օգուտ բերելով՝ վնաս մի՛ պատճառիր» բժշկական սկզբունքի ենթատեքստում և տալ հիվանդության նկատմամբ ֆիզիոլոգիական միակողմանի մոտեցման քննադատու-

¹⁵ Гиппократ. Избранные книги. М., 1994, сс. 87-88.

¹⁶ Փորձարարական և գիտական այլ նպատակներով օգտագործվող ողնաշարավոր կենդանիների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1986) <http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/123.htm>

Կենսաբժշկության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիա: Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիա (1997) <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/html/164/htm66>

Հելսինկյան հռչակագիր: «Հանձնարարականներ բժիշկների համար մարդու՝ որպես հետազոտության օբյեկտի մասնակցությամբ անցկացվող կենսաբժշկական հետազոտությունների վերաբերյալ» (1964)<http://www.wma.net/en/30publications/10policies/b348>

Մարդու իրավունքների և բիոէթիկայի համընդհանուր հռչակագիր (2005) <http://www.unesco.org/new/en/social-and-human-sciences/themes/bioethics/bioethics-and-human-rights>

Մարդու գենետիկական տվյալների մասին միջազգային հռչակագիր (2003)<http://www.unesco.org/new/en/social-and-human-sciences/themes/bioethics/human-genetic-data>

Մարդու գենոմի և մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1997)<http://www.unesco.org/new/en/social-and-human-sciences/themes/bioethics/human-genome-and-human-rights>

թյունը: Հինգերորդ՝ իրագործել հայկական իրականության մեջ առողջության պահպանման իրավունքը՝ որպես մարդու համընդհանուր և անօտարելի իրավունք:

Բիոէթիկայի ենթատեքստում ազատության հիմնախնդիրն առավել տեսանելի արտահայտվում է նրանում, թե որքանով է հիվանդը ինքնուրույն՝ կյանքի և իր առողջության համար կարևոր որոշումների ընդունման հարցերում:

Ազատության ժամանակակից հայեցակարգերը նշանակալիորեն տարբերվում են նրանցից, որոնք բնութագրական էին գիտության և փիլիսոփայության զարգացման դասական փուլի համար: XX դարի երկրորդ կեսից ձևավորվում են ազատության այն հայեցակարգերը, որոնք միավորում են սոցիալ-հումանիտար, այդ թվում՝ կրոնական և բնագիտական գիտելիքները:

Արևմուտքի բարգավաճ, հարուստ երկրների համար անընդունելի է համընդհանրական պատերալիզմը՝ սեփական կյանքը և առողջությունը պահպանելու գործում ինքնուրույն և նախաձեռնողական վարքից խուսափող՝ պասիվ հարմարվողականության հոգեբանությունը, որն այնքան բնորոշ է հետխորհրդային հասարակություններին, այդ թվում՝ Հայաստանին:

Որո՞նք են դրա հետևանքները: Նախ՝ այն թուլացնում է մարդկանց և սոցիալական խմբերի պատասխանատվությունը և ակտիվությունը, որոնք օժտված են կյանքի և առողջության պահպանման որոշակի ռեսուրսներով կամ ձգտում են դրան: Բիոէթիկական սկզբունքների հետևողական իրականացումը, հայ հասարակության մեջ բիոէթիկական արժեքների հաստատումը թույլ կտան ավելի արդյունավետ լուծել հայ ժողովրդի պահպանման և ազգի կյանքի ու առողջության նոր որակի ապահովման խնդիրները: Երկրորդ՝ բժշկական պատերալիզմը թուլացնում է առողջապահության համակարգի արդիականացման ներուժը, նրա դինամիկան՝ սոցիալական խնամառության տրամադրությունների աճի շնորհիվ: Դա քայքայում է հասարակության բարոյական հյուսվածքները, հիմնախախտում սոցիոմշակութային խթանների ողջ համակարգը: Երրորդ՝ բժշկական պատերալիզմի քաղաքական-գաղափարախոսական ուղեգիծը հակասում է հայ ժողովրդի պահպանման ռազմավարական նպատակին, քանզի նրա հիմնարար արժեքներն էականորեն տարբերվում են առաջադիմության ճանապարհը բացող համամարդկային գաղափարներից:

Ներկայումս փաստորեն ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ հայ հասարակության ֆիզիկական, սոցիալական և բարոյական առողջացումը չի կարող տեղի ունենալ ո՛չ առողջապահության մասին խորհրդային պատկերացումների, ո՛չ էլ ներկա «շուկայական իրավունքի», կամ որ նույնն է, բժշկության

առևտրայնացման-շուկայականացման կիրարկումով: Ցավոք, մեզանում շուկայի մեծամուլիկ ջատագովներին չսթափեցրին Արևմուտքի հեղինակավոր գործիչների, այդ թվում՝ Ֆրանսիայի նախկին վարչապետ Լ. ժոսպենի խոսքերը. «Այդ՝ շուկայական տնտեսությանը, ո՛չ շուկայական հասարակությանը»¹⁷:

Բիոէթիկայի մեջ ազատության, մարդու իրավունքների և արժանապատվության հիմնախնդիրն արտահայտված է, նախևառաջ, «իրազեկված համաձայնություն» հասկացության մեջ, որն իրավական քաղաքացիություն է ստացել Հայաստանում՝ «Քաղաքացիների առողջության պահպանման մասին Հայաստանի օրենսդրության հիմունքների» ընդունման պահից¹⁸:

Տվյալ հասկացության վերլուծությունն անհրաժեշտաբար պահանջում է նախևառաջ անդրադառնալ հայտնի երկրներում և անհատն ինքնուրույն ընտրության իրավունք ունի, սակայն արդյո՞ք մարդասիրական կլինի թոյլ տալ կատարել սեփական ընտրությունը հոգուտ այն բանի, ինչը մարդու կամ սոցիալական միջավայրի համար վնասակար է:

Հայաստանում աստիճանաբար ձևավորվում են իրազեկված համաձայնության մոդելի տարրերը՝ ի հակադրություն դասական պատերնալիզմի, որի ավանդույթները դեռևս խիստ ամուր են հայ հասարակության մեջ: Իրազեկված համաձայնության վերլուծությունն անհրաժեշտաբար ենթադրում է ազատության և պատասխանատվության հարաբերակցության սոցիալ-փիլիսոփայական հիմնախնդրի համակողմանի քննարկում, որը հայ հասարակության մեջ ավանդաբար լուծվել է սոցիալ-պատերնալիստական ոգով: Այդ իրավիճակի հաղթահարումը Հայաստանում բիոէթիկայի կայացման, առողջապահության համակարգի արդիականացման անհրաժեշտ նախադրյալն է: Բժիշկների պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացումը բիոէթիկայի կայացման, գործառնության և զարգացման կարևոր չափանիշներից մեկն է:

Բժշկական պրոֆեսիոնալիզմը ոչ միայն մասնագիտական իրավասությունն է՝ կապված պատասխանատու որոշումների ընդունման հետ, որոնք վերաբերում են հիվանդի իրավունքներին ու արժանապատվությանը, այլև բժշկական կուլտուրայի բարձր մակարդակը, բարոյական այնպիսի որակների,

¹⁷ Հղումն ըստ՝ **Абалкин Л.Н.** Смена тысячелетий и социальные альтернативы. – Вопросы экономики, 2000, № 12, с. 33.

¹⁸ ՀՀ քրեական օրենսգիրքը բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին (ընդունված ԱԺ-ի կողմից 04.03.1991թ. Հ.Օ-42, բաց. 25.10.10):

ինչպիսիք են արդարությունը, գթասրտությունը հասարակությանը փոխանցելու ունակությունը¹⁹:

Արդարությունն ունի մեկնաբանության երկու տարբերակ՝ որպես ըստ պատշաճի հատուցում և որպես գթասրտության իրավունքի մեջ հավասարություն: Առաջին մեկնաբանությունը բնութագրական է իրավական ոլորտի համար, իսկ երկրորդն իրականացվել է հիվանդներին օգնություն ցույց տալու եվրոպական մոդելի մեջ, որը Հայաստանը փորձում է փոխառել: Բժշկության մեջ արդարության սկզբունքը ենթադրում է առողջության պահպանման գործում բոլոր քաղաքացիների հավասարություն և սոցիալական պաշտպանության բարձր մակարդակ:

Ներկայումս Հայաստանում բժշկության առևտրայնացման, շուկայականացման ընդհանուր ֆոնի վրա առողջապահության վիճակը ոչ միայն չի բարելավվել, այլև ավելի վատթարացել է: Դրան կարող է հակադրվել սոցիալապես կողմնորոշված առողջապահությունը, որի համար որոշիչ նշանակություն ունի արդարության սկզբունքը՝ որպես գթասիրության իրավունքի մեջ հավասարություն:

«Արդարություն բոլորի համար» գաղափարն արտացոլվել է առողջապահությանը, բիոէթիկային և մարդու իրավունքներին առնչվող միջազգային բոլոր փաստաթղթերում: Գթասիրությունը (սերը և կարեկցության զգացումը) հիմնական հիպոկրատյան սկզբունքն է «*primum non nocere*» («նախևառաջ, մի՛ վնասիր») հիմքը, որին բիոէթիկայի մեջ հավելվում են նախազգուշության և «լավ հաշվարկված ռիսկի» սկզբունքները: Դրանց էությունն այն է, որ օրգանիզմի վրա բժշկական միջամտության «ազդեցիվությունը» արդարացվում է միայն նրանով, որքանով բուժման արդյունքները կգերազանցեն նրա հետևանքների հետ կապված հնարավոր վնասները²⁰:

¹⁹ Այդ մասին տե՛ս **Кэмпбелл А.** Медицинская этика: Пер. с англ.: Учеб. пос. / А. Кэмпбелл, Г. Джилетт, Г. Джонс. Под ред. Ю. М. Лопухина, Б. Г. Юдина. М.: ГЭ ОТ АР-МЕД, 2004, 400 с.

Петров Ю.В. Философия человека / Ю. В. Петров. Томск: Изд-во научно-технической литературы, 2002, 103 с.

²⁰ **Тищенко П.Д.** Угроза множественности и идея гуманитарной экспертизы / П.Д. Тищенко // Биоэтика и гуманитарная экспертиза. Вып. 2. М.: ИФРАН, 2008, сс. 102-128.

Макинтайр А. После добродетели: Исследования теории морали / А. Макинтайр. Пер. с англ. В. В. Целищева. М.: Академический Проект; Екатеринбург: Деловая книга, 2000, 384 с.

Ժամանակակից բժշկության մեջ գթասիրության սկզբունքի իրականացումը կապված է նաև «փրկարար ստի» հայեցակարգի և ճշմարտության («Ճիշտ տեղեկացվածության») կանոնի միջև ընտրության հիմնախնդրի հետ: Հարցի լուծումը, թե որն է դրանցից ավելի գթասիրական, կարող է վճռվել՝ միայն ելնելով իրավիճակից, հաշվի առնելով որոշակի հանգամանքները, հիվանդի հուզական վիճակը, նրա սոցիալական բնութագրերը²¹:

Կարևորվում է և այն հարցը, թե որքանով է հետխորհրդային հասարակությունը պատրաստ գթասիրություն ցուցաբերելու բնակչության այսպես կոչված «խոցելի» խավերի նկատմամբ:

Այսպիսով, բիոէթիկայի նշանակությունը ժամանակակից հայ հասարակության մեջ արտահայտվում է նրանում, որ այն նպաստում է կյանքի արժեքանության, կամ որ նույնն է, հիմնարար կենսական արժեքների սանդղակի ձևավորմանը հասարակական և անհատական գիտակցության մեջ: Բացի այդ, ազդակում է նաև ժամանակակից գիտության և առողջապահության ոլորտի հումանիզացման գործընթացներին:

Դրանց սոցիալ-արժեքանական ուղղվածությունն իր արտահայտությունն է գտնում բիոէթիկայի հիմնարար սկզբունքների՝ մարդկային կյանքի արժեքի բացարձակացման սկզբունքի և մարդու առողջության՝ որպես առանձնահատուկ նշանակալի սոցիալական արժեքի ճանաչման, անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի, արդարության, գթասիրության, առաքինության և հարանման արժեքների մեջ:

Այլ խոսքով, մենք գործ ունենք ոչ թե սոսկ բարոյագիտության անդեմ և ամորֆ մի նոր ոլորտի, ոչ թե պարզապես տրամաբանական որոշ կառույցների, այլ բիոէթիկայի որոշակի առարկայական տիրույթի հետ, որին պետք է մոտենալ տեսական-մեթոդաբանական և արժեքանական դիրքերից:

Բիոէթիկայի առարկան, հիմնական կատեգորիաները և հիմնարար սկզբունքները՝ որպես գիտական սոցիալական գիտելիքի ձևեր, ինչպես արդեն վերը նշել ենք, ունեն սոցիալ-արժեքանական էություն: Վերջինս բնութագրվում է բիոէթիկայի բովանդակության մեջ՝ սոցիալապես և մշակույթով պայմանավորված արժեքներով, որոնք հասարակության մեջ ձևավորում են մարդու

Полисистемное исследование индивидуальности человека / Под ред. Б. А. Вяткина. М.: ПЭР СЭ, 2005, 384 с.

²¹ Դավթյան Ա.Շ., Բիոէթիկայի ներածություն, մենագրություն, Երևան, 2012, 329 էջ:

կյանքի և առողջության նկատմամբ վերաբերմունքի տիպը²²:

Հայաստանում բիոէթիկայի կայացումն այն տեսքով, որով այն ծագել և զարգանում է ԱՄՆ-ում և Եվրոպայում, խիստ կասկածելի է: Անհրաժեշտ է մեզանում որոշել բիոէթիկայի լիիրավ կայացման և զարգացման ուղիները՝ հենվելով առողջապահության ոլորտում սեփական մշակութային ավանդույթների և արժեքների վրա:

Հայաստանում բիոէթիկայի կայացումն անհնար է առանց միասնական ազգային բարոյականության և ժողովրդավարության համադրության, առանց միասնական բիոէթիկական մշակույթի: Միասնական ոչ միայն իր համընդհանրական արժեքային հիմքերով, այլև դրանց գործառնության որոշակի նորմերով և մեխանիզմներով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության է առնվում բիոէթիկական հիմնախնդիրների աքսիոլոգիտական ասպեկտը: Հիմնավորվում է բիոէթիկական հիմնախնդիրների (մարդու օրգանների և հյուսվածքների տրանսպլանտացիա, գենային ինժեներիա և այլն) ուսումնասիրության համակարգային մոնիթորինգի անցկացման գաղափարը: Տրվում է մարդու արժանապատվության, իրավունքների և ազատության փիլիսոփայական հիմնավորումը: Ձևակերպվում են բիոէթիկական հիմնախնդիրների հետագա ուսումնասիրության հարցերը:

Բանալի բաներ – մարդու ազատությունը, արժանապատվությունն ու իրավունքները, մոնիթորինգ, հումանիզացիա, ուսումնասիրության աքսիոլոգիտական ասպեկտը, իրազեկված համաձայնություն:

ОСОБЕННОСТИ МИРОВОЗЗРЕНИЯ БИОЭТИКИ

СУСАННА ДАВТЯН

В статье рассматривается аксиологический аспект биоэтических проблем. Обосновывается идея проведения систематического мониторинга исследований биоэтических проблем (манипуляции с геном человека, трансплантации органов и тканей человека, генная инженерия и пр.). Дается фило-

²² Биоэтика в современной культуре. – Культурологический альманах. Сборник статей. – М.: Прометей, 2005, сс. 186-191; **Моисеев В.И.** Философские проблемы биологии и медицины: нормативное и дескриптивное. – Вестник Российского философского общества, М., 2011, № 4, с. 55.

софское обоснование достоинства, прав и свобод человека. Формулируются задачи дальнейшего исследования биоэтических проблем.

Ключевые слова – свобода, достоинство и права человека, мониторинг, гуманизация, аксиологический аспект исследования, информированное согласие.

AXIOLOGICAL ASPECT OF THE BIOETHICAL PROBLEMS

SUSANNA DAVTYAN

In the given article the axiological aspect of the bioethical problems are discussed. The bioethical problems' (such as interfering into the human genom, transplantation of the organs and tissues and so on) investigations systematical monitoring encountering idea is being settled down with the ethical legal norms elaboration intention. The philosophical explanation of the human rights, freedom and dignity is brought in this work. The further investigation of bioethical problems' tasks are being formulated as well.

Key words – human rights, freedom and dignity, humanization, axiological aspect of investigation, informed consent.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԻԳԴԻՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՄԵՂԵԴԻՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ (Ստ. Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ժողովածուի երգերի դիտարկումների հիման վրա)

ՆՈՒՆԵ ԱԹԱՆԱՍՅԱՆ

Հայ ժողովրդական երգերի ծայնագրված ժողովածուներում հաճախ հանդիպում ենք երգի գրանցման վայրի մասին տեղեկությունների. այդ նշումները հիմնականում ներկայացնում են երգի հայրենիքը: Մի դեպքում գրանցված է երգի կատարողների հայրենիքը, մյուս դեպքում նշված են երգի ակունքները, եթե կատարողը (ինՖորմանտը) բանահավաքին հստակ տեղեկություններ է տվել տվյալ երգի տարածաշրջանի մասին:

XIX դարի երկրորդ կեսին բուռն մեկնարկ ստացավ հայ ժողովրդական երգի, բանահյուսության հավաքման, ժողովածուներ և երգարաններ կազմելու, հրատարակության և ուսումնասիրման գործընթացը:

XX դարի սկզբին դեռևս հնարավոր էր լիարժեք պատկերացում կազմել պատմական Հայաստանի տարբեր շրջաններում և գավառներում ստեղծված ժողովրդական երգերի մասին: Երգասացներից շատերը՝ 1915թ. Մեծ եղեռնից փրկված, նոր էին լքել հայրենի բնակավայրերը և իրենց հիշողության մեջ դեռևս թարմ էին պահում հայրենիքի երգն ու բանը: Դա հիմնական պատճառներից մեկն է, որ հավաքչական աշխատանքը մեծ կարևորություն և արդյունավետություն ուներ հենց այդ տարիներին, քանի որ հայ երգը սփռված էր տարբեր հայաբնակ վայրերում ու ներկայանում էր առավել անաղարտ տեսքով, դեռևս չէր կորցրել կապը բնօրրանի հետ: XIX և XXդդ. սահմանագծին ազգային ինքնագիտակցության կարևորագույն մաս էին կազմում ժողովրդական ստեղծագործության ճանաչումը, գնահատումն ու հավաքագրումը: Հայ մշակույթի բազմաթիվ երախտավորներ իրենց կյանքը նվիրեցին մեր ազգի հոգևոր արժեքները փրկելու գործին: Ֆիզիկական բնաջնջում ապրած ազգի հոգևոր վերածնունդը դարձավ հայ մտավորականի հավատամքը: Այդ երախ-

տավորներից նշենք Արշակ Բրուսյանին, Սահակ Ամատունուն, Կոմիտասին, Սպ. Մելիքյանին և Ստեփան Դեմուրյանին: Այս երախտավորների գործունեության շնորհիվ այսօր մենք հստակ պատկերացում ունենք այդ ժամանակաշրջանում տիրող հայաբնակ տարածաշրջանների ժողովրդական ստեղծագործության մասին, հստակ տեղեկություններ ունենք հայ գեղջուկի կենցաղում տիրող երգ ու պարի, ծեսերի, ավանդույթների մասին: Երաժշտական բանահյուսությունը ներկայացնող նյութը զետեղված է մի շարք ձայնագրված ժողովածուներում: Առանձնացնելով դրանցից մեր կարծիքով առավել արժեքավորները և ուսումնասիրելով այդ երգարանները՝ բացահայտեցինք մի շարք առանձնահատկություններ, որոնց շարքում այսօր կանգ կառնենք տարածաշրջանները ներկայացնող երգերի դիտարկումներին:

2013 թ. լույս տեսավ Ստ. Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ժողովածուն, որը մեկ հարյուրամյակ մնացել էր անտիպ, ուստի նույնպես ներկայացնում է XX դարի սկզբի երաժշտական բանահյուսությունը: Քանի որ այստեղ զետեղված երգերը ժամանակային առումով համապատասխանում են Կոմիտասի, Սպ. Մելիքյանի, Ա. Բրուսյանի, Հ. Հարությունյանի ժողովածուներում գրառված նմուշներին, փորձեցինք համեմատական վերլուծական աշխատանք ներկայացնել՝ այս դեպքում որոնելով միևնույն տարածաշրջանները ներկայացնող երգերը և, համեմատելով դրանք, պատկերացում կազմել այս կամ այն տարածաշրջանին բնորոշ մի շարք առանձնահատկությունների մասին: Ներկա հոդվածում այս ծավալուն ոլորտը ներկայացրել ենք միայն Իգդիրի ժողովրդական երգերի դիտարկումներով: Դիտարկման նյութի ընտրությունը պայմանավորված է այս տարածաշրջանի բավականին սակավ ուսումնասիրված լինելով: Կոմիտասի ժողովածուներում նույնպես առկա է մոտ 30 երգ, որոնք ներկայացնում են Իգդիր տարածաշրջանը, ուստի մեր դիտարկումները որոշեցինք սկսել Դեմուրյանի ժողովածուից՝ նպատակ ունենալով անդրադառնալու նաև կոմիտասյան նմուշներին և համալրելու մեր ուսումնասիրությունն այս տարածաշրջանի բանավոր մշակույթի շուրջ:

Ստեփան Դեմուրյանի ժողովածուում տեղ գտած 100 ժողովրդական երգից 51-ի ծագման վայրը նշել է ինքը՝ Դեմուրյանը, սակայն այդ նշումներից դժվար է ենթադրել՝ նա երգերը ձայնագրել է օրինակ՝ Վանու՞մ, թե՞ մի գաղթական վանեցուց, որը բնակություն է հաստատել Անդրկովկասում: Կասկածից վեր է, որ երգերի կատարողները ժողովրդական երգարվեստի իսկական կրողներ են եղել: Դրա վառ վկայությունն են ժողովածուում զետեղված ժողովրդական երգերի երաժշտական լեզուն և բովանդակությունը: Երգերում

հանդիպող թուրքերեն, պարսկերեն և քրդերեն բառերը նույնպես հիմնավորում են այն համոզմունքը, որ երգերը գրառված են ժողովրդական բանահյուսության կրողներից, որոնց երգացանկն արտացոլում է իր ժամանակի և սոցիալ-քաղաքական պայմանների ազդեցության ներքո ձևավորված գեղջկական երաժշտական կենցաղի պատկերը:

Հրատարակված ժողովածուի մեր կազմած «Ժողովրդական երգերի տարածքային, ժանրային և ձայնակարգային դասակարգում» տախտակը հեշտացնում է ժողովրդական երգերի «անձնագրային» տվյալների բացահայտումը: Այս տախտակից դուրս ենք բերել այն նմուշները, որոնք ներկայացնում են առավել քիչ ուսումնասիրված տարածաշրջանների ժողովրդական բանահյուսությունը: Այդ շարքում դիտարկել ենք Դեմուրյանի ժողովածուում տեղ գտած Իգդիրի ժողովրդական երգերը:

Իգդիրում կամ իգդիրեցուց գրառված երգերի նմուշները չորսն են՝ N 14, 34, 55 և 65:

N 14 «Հայկո ջան» երգը քնարական ժանրի նմուշ է, ձայնակարգը՝ իոնական տրիխորդ: Երգն ընթանում է տերցիայի սահմաններում, սակայն հարուստ դիժմական պատկեր կրող մեղեդին զարդուրդուն եղանակավորում է երգի բանաստեղծական տեքստը: Դեմուրյանի ժողովածուում ներկայացված է երգի միայն մեկ տունը: Հավանաբար, ինչպես այլ քնարական ժանրի նմուշներ, այս երգի բովանդակությունը կարող էր շարունակական լինել. այս խնդիրը կփորձենք լուծել երգի այլ տարբերակների բովանդակային համեմատության միջոցով:

Ստ. Դեմուրյան, «Յայ ժողովրդական երգեր և նվագներ», №14 «Յայկո», էջ 20:

Լու- սի - նը ցո - լում եր, աստ-դե - թու

հե - տը, Յայ-կոն կը - ղիվ կա -

- ներ թա - թե - թու հե - տը,

յար, յար, յա - թո ջան, յար:

Ա. Բրուտյանի «Ռամկական մրմունջներ» ժողովածուի N 11 «Մանդր, մանդր ման արի» երգի վերնագրի կողքին նշված է նաև «Հայկո ջան», ինչի շնորհիվ էլ այս երգն ընդգրկել ենք ծանոթագրություններում՝ որպես դեմուրյանական նմուշի տարբերակ:

Ա. Բրուտյանի գրառած տարբերակը պարերգ է, և «Հայկո ջան» բառերը կազմում են երգի կրկնակը:

Ա. Բրուտյան, «Ռամկական մրմունջներ», №116 «Մանդր, մանդր ման արի», էջ 125:



Ման- դըր ման- դըր ման ա- րի, հայ-կո ջան բար-ձը դը- նեմ յան ա- րի, հայ-կո ջան:

Երգն ունի էոլական ձայնակարգ, կվարտային օժանդակ հենակետ, ցայտուն, պարերգերին բնորոշ բառ, մեղեդային և մետրաոժիմական մի շարք առանձնահատկություններ: Երգի խաղիկը

Մանդր, մանդր ման արի,

Բարձը դնեմ յան արի:

հաճախ հանդիպող, ժողովրդականություն վայելող թափառական խաղիկներից է: Սպ. Մելիքյանի կազմած «Շիրակի երգեր» ժողովածուում N 60 և N 61 «Հայկո ջան» ժողովրդական երգերը ներկայացնում են պարերգի երկու տարբերակ: Ի դեպ, N 60 «Հայկո ջան» երգը նույնպես պարերգ է և ընթանում է կվինտային օժանդակ հենակետ ունեցող էոլական ձայնակարգում: Այս նմուշն իր մետրաոժիմական և մեղեդիական տեսակով նախորդ՝ բրուտյանական նմուշի մեղեդիական տարբերակն է:

Ա. Բրուտյանի ստեղծագործական և բանահավաքչական գործունեությունը ծավալվել է հիմնականում Շիրակի տարածաշրջանում, և փաստորեն Սպ. Մելիքյանի «Շիրակ» ժողովածուում զետեղված «Հայկո» պարերգն ըստ էության ներկայացնում է միևնույն տարածաշրջանում կենցաղավարող երգի տարբերակը: Մեր դիտարկումները և եզրակացությունները հիմնավորում է «Շիրակ»-ում զետեղված N 61 «Հայկո» երգի երկրորդ տարբերակը:

Այս նմուշը, ինչպես նաև «Շիրակում» զետեղված նախորդ տարբերակը, գրառված է միևնույն՝ 6/8 չափում, մեղեդին ունի այդ երգին բնորոշ միևնույն կվարտային թռիչքը, հնչում է էոլական ձայնակարգում, ունի կվարտային օժանդակ հենակետ:

Սպ. Մելիքյան, «Շիրակի երգեր», №61 «Հայկո ջան», էջ 24:

Գը- նա, ման ա - թի ա- թի, Հայ- կո ջան, Հայ- կո ջան ա - նուշ ջան,
 իր- կը - նե- ըը տուն ա- թի, ա - զիզ ջան, ա - նուշ ջան գյու- լա, գյու- լա,
 գյու- լա, գյու- լա ա յա - ըըս, պեր - վի գյու- լա, բաւ- բը- կի բու- լա ա եա - ըըս:

Բրուտյանական տարբերակը գրառված է 2/4 չափում, սակայն մեղեդու մեծ մասը նոտագրված է տրիոլներով, ինչը շեշտում է մեղեդու ձգտումը դեպի եռաչափ ուղիղական պատկեր:

Սպ. Մելիքյանի N 60 «Հայկո» երգը և բրուտյանական նմուշը, անշուշտ, միևնույն պարերգի տարբերակներ են: Այստեղ երեք տան խաղիկներից երկրորդը միշտ կրկնում է բրուտյանական «մանդր, մանդր ման արի...» տարբերակը:

Սպ. Մելիքյանի և Գարեգին Գարդաշյանի «Վանա երգեր» ազգագրական ժողովածուի երկրորդ հատորում N74 «Հայկո ջան» պարերգը միևնույն թափառող խաղիկներով («մանդրը մանդրը ման արի...»), սակայն այլ մեղեդային կառուցվածքով ու ձայնակարգով տարբերակ է:

Ման - ըրը ման- ըրը ման ա - թի, յա - ըր ջան,
 ի - թի- կու- նը շուտ ա - թի Հայ - կո ջան, Հայ - կո ջան:

Այստեղ մեղեդու հիմքում ընկած է հիպոդորիական-էոլական հեպտախորդը՝ կվինտային օժանդակ հենակետով: Այս երգը, Վանի տարածաշրջանի ծնունդ լինելով, առանձնանում է նախորդ՝ Շիրակը ներկայացնող «Հայկո» պարերգից: Վանա տարբերակի մեղեդին զարգանում է ալիքաձև,

սահուն, առանց թռիչքների և հարուստ է այս տարածաշրջանին բնորոշ ձայնաստիճանների շրջագարդումներով:

«Հայկո» երգի տարբերակումների դիտարկումները բացահայտեցին Շիրակի դաշտավայրի տարածաշրջանին հատուկ պարերգի մի տեսակ, որը տեղաշարժվելով այլ, հարակից տարածաշրջանի ժողովրդական կենցաղ, ձեռք է բերում նոր առանձնահատկություններ: Դեմոլոյանի գրառած նմուշը, սակայն, առանձնանում է բոլոր վերոհիշյալ տարբերակներից: Մեր կատարած համեմատական ուսումնասիրությունները բացահայտեցին «Հայկո» պարերգի տեսակներ, սակայն Իգդիրում ձայնագրված քնարական նմուշը բոլորովին այլ նկարագիր ունի. երգի և՛ մեղեդին, և՛ տեքստի մեղեդավորումը, և՛ տեքստի բովանդակությունը ներկայացնում են բոլորովին այլ ժանր՝ իր ուրույն լեզվամտածողությամբ և գեղարվեստական այլ որակով:

Այս տարածաշրջանին բնորոշ երաժշտական մտածողության մասին թեկուզ և ընդհանուր պատկերացում կազմելու համար անդրադառնանք Դեմոլոյանի ժողովածուի N34 «Սիրունն խալն ինչ կանե» երգին:

Սի-րու- նըն խալն ինչ կա - նե, Սիս- տակ ձին ևալն. ինչ կա -

- նե լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե, լե:

Այս պարերգը հնչում է կվարտային հիմքով էոլական ձայնակարգում: Երգի մեղեդային տրամաբանությունը բնորոշում են վերջնաձայնի տերցիային և սեկունդային շրջագարդումները. հատկապես ուշագրավ է վերևի մեդիանտայի դերը: Երգի յուրաքանչյուր ֆրազ ավարտվում է մեդիանտայի անցումով դեպի վերջնաձայն: Բացի այդ, մեղեդու ֆրազների ներքին զարգացումն ընթանում է տերցիաների վարընթաց շարժման տեսքով՝ օժանդակ հենակետից անցնելով դեպի վերջնաձայնը:

N14 «Հայկո ջան» երգին նույնպես բնորոշ են տերցիային քայլերից կառուցված մեղեդու զարգացման տեսակը և վերջնաձայնի տերցիային (մեդիանտայով) շրջագարդումը:

N34 «Սիրունն խալն ինչ կանե» երգի տարբերակներ չգտանք մեր կողմից դիտարկվող ժողովրդական երգերի ժողովածուներում: Հաշվի առնելով այն փաստը, որ դեմոլոյանական «Հայկո ջան» երգն իր տեսակով նույնպես

տարբերակ կամ նմանատիպ նմուշ չունի և օժտված է գեղեցիկ երգայնությամբ ու բովանդակությամբ, կարելի է ենթադրել, որ Իգդիրի տարածաշրջանն ունի մեղեդային մտածողության յուրահատուկ մթնոլորտ:

Հաջորդը Իգդիրում գրառված երգերից N 55 «Յաման, ամի» երգն է:



Երգի տեքստում շատ են թուրքերեն բառերը. հետևյալ բառակապակցությունները՝ *յաման ամի, քյաֆուր ամի, յուրդ ու յավետ* և այլն, հանդիպում ենք նաև այլ ժողովրդական երգերում¹:

Ինչպես գիտենք, օտարալեզու ժողովրդական երգը սովորական երևույթ էր XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ իրականության մեջ: Դարեր շարունակ հայ ժողովուրդն ապրել է թուրքական, քրդական, պարսկական միջավայրում: Կիսելով այդ ժողովուրդների հետ կենցաղային խնդիրները՝ հայերը զերծ չեն մնացել նաև օտարալեզու բառերի ու խաղիկների ներթափանցումներից իրենց բառապաշարի և երգերի մեջ:

Դեմուրյանի ժողովածուում տեղ գտած ժողովրդական երգերում նույնպես շատ են օտարալեզու բառերը, քանի որ ներկայացված նյութը վերոնշյալ ժամանակաշրջանի բանահյուսությանն է վերաբերում: Ուստի երգերի բովանդակությունը հասկանալի դարձնելու նպատակով կազմել ենք օտարալեզու և բարբառային բառերի բացատրական բառարան, ինչպես և ընդունված է ժողովրդական երգերի ժամանակակից հրապարակումներում: Երգի տեքստը, բովանդակությունը կարևոր դեր են խաղում ժողովրդական երգի ընկալման, տարածման, գնահատման ու վերլուծության գործում: Խոսքի շնորհիվ հասկանում ենք նաև երգի հուզական դաշտը, բարբառի շնորհիվ ենթադրում ենք երգի ծագման տարածաշրջանը, որոշում ենք ժանրը և այլն: Հետևաբար, բանաստեղծական տեքստն առաջնային տեղ ունի երգի մասին ամբողջական պատկերացում կազմելիս:

«Յաման, ամի» երգի մեղեդին և տեքստը ենթադրում են քնարական, ափսոսանքով լի տրամադրություն: Դեմուրյանի ժողովածուում տեղ գտած

¹ Ամի – քեռի,
քյաֆուր - անաստված, անհավատ,
յուրդ ու յավետ – տուն ու տեղ (փխբ.):

երգերը բերված են հիմնականում առանց տեմպի նշումների, ինչը բարդացնում է երգի կատարման և բնույթի սահմանման հարցը, քանի որ երգի կատարման արագությունը որոշում է մեղեդու ընթացքը, ստեղծում որոշակի կերպարային ոլորտ: Այս երգի դեպքում ենթադրում ենք «Չափավոր» տեմպ, որը մեղեդին դարձնում է ծորուն և անշտապ՝ ներկայացնելով տեքստում տեղ գտած ողբերգականությունը:

«Յաման ամի» երգի բազմաթիվ տարբերակներ հանդիպեցին Կոմիտասի ազգագրական ժողովածուներում (հ. IX - N 92, հ. XI - N 36, 37, 38, հ. XIII - N 42, 53, 63, 190, 191, հ. XIV - N 209):

Կոմիտասի ժողովածուի IX հատորի ծանոթագրություններում այս մասին Աթայանը գրում է, որ գրառված բազմաթիվ տարբերակները «...վերջին հաշվով շատ չեն զանազանվում միմյանցից, տարբեր են առանձին ելևէջներով և խաղերով»²: Միայն այս հատորում բերված նմուշը հարուստ է տեքստային շարունակական բովանդակությամբ: «Յաման ամի» երգը պատմողական բնույթ ունի, այստեղ «առաջին դեմքով պատմվում է ոմն արմուղկվեցի (Տանծուտ գյուղից) հաջոյի ողբերգական մահվան մասին»³:

Համեմատելով կոմիտասյան նմուշները դեմոլոյանական տարբերակի հետ՝ նկատեցինք հստակ դրսևորվող ընդհանրություններ, որոնք բնորոշ են «Յաման ամի» երգի բոլոր տարբերակներին:

Դեմոլոյանական տարբերակին բնորոշ կվարտային թռիչքը և կվարտային օժանդակ հենակետը բնորոշ են նաև կոմիտասյան գրառումներից շատերին:

IX հատորում բերված «Յաման ամի» երգը հարուստ է ոչ միայն բանաստեղծական տեքստով. երգի մեղեդին զարդուլորուն բնույթ և հարուստ ռիթմական պատկեր ունի:

Այս նմուշը դեմոլոյանական տարբերակին նման է ձայնակարգով (էլուական), օժանդակ հենակետով (կվարտային), մեղեդու զարգացման տրամաբանությամբ և ռիթմական պատկերով:

Այս երգի մեղեդուն ևս բնորոշ է Իգդիրի շրջանին հատուկ տերցիային «մեդիանտային» ոլորտը: Երկրորդ, երրորդ և չորրորդ տակտերում մեղեդին վարընթաց շարժումով զարգանում է տերցիային քայլերի և շրջազարդումների տեսքով: Սեկվենցիոն վարընթաց շարժումն ավելի ակնհայտ և «հիշելի» է

² Կոմիտաս, IX հ., էջ 192:

³ Նույն տեղում:

դարձնում այդ տերցիային ելևէջները: Այս նմանությունն Իզդիրի շրջանի երգերն ընդհանրացնող ամենացայտուն մեղեդիական ցուցանիշն է:

Երգի մատուցման գործում կարևոր է նաև կատարող-ինֆորմանտի դերը: Հաճախ կատարողի անձնական տվյալները, օժտվածության աստիճանը և մի շարք անհատական առանձնահատկություններ անխուսափելիորեն ազդում են երգի փոխանցման ու պահպանման գործընթացի վրա: Ցավոք, Դեմուրյանը չի նշել գրառված երգերի մասին ոչ մի հավելյալ տեղեկություն, մասնավորապես երգասացների անունները, ինչը կօգներ ավելի մանրամասն հասկանալ և վերլուծել նյութը:

N66 «Ջաղացի դուռը չիման» երգը նույնպես գրառվել է Իզդիրում (կամ իզդիրեցուց), պարերգի դասական նմուշ է, շարադրված է էոլական ձայնակարգում, ունի կվարտային օժանդակ հենակետ:

Ս. Դեմուրյան, «Յայ ժողովրդական երգեր և նվագներ», №66 «Ջաղացի դուռը չիման», էջ 44:

Ջա-ղա-ցի դու-ռը չի-ման, վայ. լո. լո, չը-կա ախ-պո - ըր ի-ման ջան, մա-րա-լո:

Երգի վերնագիրն իրականում պարերգի խաղիկի սկզբնատողն է, այն ինչ-ինչ փոփոխություններով հանդիպում է բազմաթիվ պարերգերում: «Ջաղացի դուռը չիման»⁴ վերնագրով տարբերակ գտանք Հ. Հարությունյանի «Մանյակ» ժողովածուում (N22 «Ջաղացի դուռը չիման», էջ 21):

Հ. Հարությունյան, «Մանյակ», №22 «Ջաղացի դուռը չիման», էջ 21:

Ջա - դա - ցի դու - ըր չի - ման, նեյ - նիմ, նեյ - նիմ, նեյ - նիմ յար: աղ - բո - ըր չը - կա ի - ման նեյ - նիմ, նեյ - նիմ, նեյ - նիմ յար մի բե - րան չա - սավ յա - ման, նեյ - նիմ յար, նեյ - նիմ յար, նեյ - նիմ յար, յար:

Երգի մեղեդին և կրկնակը հիշեցնում են Դեմուրյանի ժողովածուում

⁴ Չիման – կանաչ, դալար, մարգագետին:

գետեղված մեկ այլ պարերգ՝ «Երևան բաղ եմ արել» (N65, էջ 43): «Մանյակի» տարբերակը բաղկացած է երկու մասից, որտեղ շեղում է տեղի ունենում, և փոխվում են երգի մեղեդին, ձայնակարգը, օժանդակ հենակետը: Նույն պատկերը (քիչ փոփոխված) տեսնում ենք դեմուրյանական տարբերակում:

Ս. Դեմուրյան, «Հայ ժողովրդական երգեր և նվագներ», №65 «Երևան բաղ եմ արել», էջ 43:

Այստեղ առաջին նախադասությունը (չորս տակտը) և «Մանյակի» «Ջաղացի դուռը չիման» երգի առաջին չորս տակտերը նման են իրար մեղեդիական մտածողության տրամաբանությամբ. չնայած նրան, որ առաջին՝ դեմուրյանական պարերգի մեղեդին ավելի պարզ է, իսկ «Մանյակի» նմուշն աչքի է ընկնում ավելի զարդուլորուն մեղեդիով: Ամեն դեպքում երկուսի հիմքում ընկած է միևնույն մեղեդիական կորիզը: Նույն պատկերը տեսնում ենք այդ երկու նմուշների երկրորդ մասում ևս, որտեղ նմանությունն ավելի ակնհայտ է դառնում (Դեմուրյանի նմուշում տե՛ս 5-րդ տակտից, «Մանյակի» տարբերակում՝ 9-րդ տակտից):

Այս շարքում դիտարկենք Կոմիտասի XII հատորում գետեղված N309 «Ջաղացըս մանի-մանի» երգը:

Կոմիտաս, հ. 12, №309 «Ջաղացըս մանի մանի», էջ 138:

Ինչպես տեսնում ենք, Կոմիտասյան նմուշը նույնպես վերը դիտարկված տարբերակների երգատիպի տեսակն է. երգերը նման են ոչ միայն ձայնակարգով, մեղեդու կառուցի տրամաբանությամբ, այլև տեքստի բովանդակությամբ, միևնույն կրկնակի բացականչություններով: Նույնիսկ թափառող խա-

ղիկների բովանդակությունը կրկնում կամ հիշեցնում է երգի դիտարկվող տարբերակները:

Շ. Հարությունյանի գրառած նմուշում՝ «Ջաղացի դուռը չիման».

Ջաղացի դուռը չիման

Նեյ-նիմ, նեյ-նիմ, նեյ-նիմ յար,

Աղբորը չկար իման

Նեյ-նիմ, նեյ-նիմ, նեյ-նիմ յար,

Քրոջը քաշին տարան

Նեյ-նիմ, նեյ-նիմ, նեյ-նիմ յար,

Մի բերան չասավ յաման

Նեյ-նիմ, նեյ-նիմ, նեյ-նիմ յար:

Կոմիտասի գրառած նմուշում՝ «Ջաղացը մանի-մանի».

Ջաղացը մանի-մանի

Յար նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,

Չկար աղբորը իման,

Յար նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,

Քրոջը քաշին տարան,

Յար նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,

Մի բերան չասաց յաման:

Նեյ-նիմ յար, նեյ-նիմ յար,

Յար նա նա նայ,

Սաթո ջան, յարո ջան,

Յար նա նա նայ,

Սաթո ջան, նազլու յար:

Դեմոյրյանի գրառած նմուշում՝ «Ջաղացի դուռը չիման».

Ջաղացի դուռը չիման,

Վայ լո, լո,

Չկա ախպորը իման

Ջան մա-րա-լո:

Ինչպես նկատեցինք, երեք տարբերակներին բնորոշ է միևնույն խաղիկի բովանդակությունը, կրկնվում են նաև կոմիտասյան և Հարությունյանի գրառած նմուշների կրկնակները՝ «նեյ-նիմ»: Դեմոյրյանական տարբերակն իր ծավալով համեմատաբար փոքր է մյուս երկու նմուշներից, թեպետ օժտված է

գեղեցիկ մեղեդայնությամբ, հարուստ ռիթմիկ պատկերով: Այս երգում, ինչպես նաև Իգդիրում Դեմուրյանի գրառած այլ ժողովրդական երգերում, մեղեդու զարգացման տրամաբանության մեջ կրկին առկա են տեղիցիային թռիչքները, և վերջնաձայնը նորից ընդգծվում և շրջազարդվում է վերին մեղիանտայի օգնությամբ:

Այսպիսով, Դեմուրյանի ժողովածուում տեղ գտած Իգդիր տարածաշրջանի չորս երգերից երեքը գրեթե անտարբերակ, յուրատեսակ նմուշներ են, իսկ վերջինը, լինելով տարածված պարերգի տարբերակ, միևնույնն է, առանձնանում է իր ինքնատիպությամբ, մեղեդու յուրօրինակ կառուցվածքով, մեղիանտայի յուրատեսակ կիրառմամբ:

Ներկայացված դիտարկումներն ուրվագծում են մեղեդու կառուցվածքային, լադային, ռիթմական մի շարք յուրահատկություններ, որոնք բնորոշ են վերոնշյալ տարածաշրջանի երգերին, որոնք հանդիպում են Ստ. Դեմուրյանի ժողովածուում:

Այնուամենայնիվ, այս աշխատանքը շարունակելի է. միայն այլ բանահավաքների ժողովածուների հետագա նման դիտարկումները հնարավորություն կտան ավելի ծանրակշիռ, հիմնավորված եզրահանգումներ կատարելու:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հեղինակը դիտարկում է Իգդիրի հայ ժողովրդական երաժշտական բանահյուսություն պարունակող ձայնագրված մի շարք ժողովածուներում զետեղված, տարածաշրջանը բնութագրող երաժշտական նյութը՝ առանձնացնելով դրանցից առավել արժեքավորները և ուսումնասիրելով դրանց մի շարք առանձնահատկությունները: Վերլուծությունները կատարվել են Ստ. Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ժողովածուում զետեղված նյութի հիման վրա, որը դիտարկվել ու համեմատվել է Կոմիտասի, Ա. Բրուտյանի, Սպ. Մելիքյանի, Հ. Հարությունյանի ժողովրդական երգերի ժողովածուներում զետեղված նմանատիպ երգային միավորների հետ: Դիտարկումների նպատակն է բացահայտել այդ տարածաշրջանի՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբին բնորոշ բանավոր երգաստեղծության առանձնահատկությունները:

Բանալի բաներ – Ստ. Դեմուրյան, Կոմիտաս, Ա. Բրուտյան, Սպ. Մելիքյան, ժողովածու, ժողովրդական երգեր, տարածաշրջան, Իգդիր:

**НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ НАРОДНЫХ МЕЛОДИЙ,
ПРЕДСТАВЛЯЮЩИХ УСТНОЕ ПЕСЕННОЕ ТВОРЧЕСТВО
ИГДЫРСКОГО РЕГИОНА**

НУНЕ АТАНАСЯН

Статья посвящена музыкальному анализу армянских народных мелодий, встречающихся в музыкально-этнографических сборниках Комитаса, А. Брутяна, Сп. Меликяна и Ст. Демурияна и представляющих песенное наследие Игдырского региона. Сделана попытка выявления некоторых интонационных, ритмических особенностей, свойственных песням именно этого региона. Этот сравнительный анализ позволяет выявить типовые варианты архетипов народных песен, которые популярны в народе и, передаваясь из уст в уста, подвергались ряду мелодических, ритмических, ладоинтонационных изменений, характеризующих песнетворчество именно этого региона. Такой анализ и сравнение позволяют также определить ряд процессов, которые характеризуют особенности народного музыкального мышления, бытующего в конце 19-го и в начале 20-го веков.

Ключевые слова – Ст. Демуриян, Комитас, А. Брутян, Сп. Меликян, А. Арутюнян, сборник, народные песни, регион, Игдыр.

FOLK MELODIES OF THE IGDİR REGION.

NUNE ATANASYAN

Nune Atanasyan in this article reviews the Armenian folk music pieces found in certain ethnomusicological anthologies representing the ethnic music of the Igdır region. She has selected from these the most valuable and studied some of their characteristic features. Her studies are founded on pieces of folksongs found in St. Demurian's "Armenian Folk Songs & Music" anthology. These have been reviewed and compared with similar songs from the anthologies of folk songs compiled by Komitas, A. Brutyan, Sp. Melikyan and A. Harutyunyan. The objective of the study is to reveal the characteristic features of the oral folksongs of the region of the end of the XIXth and the beginning of the XXth centuries.

Key words – St. Demurian, Komitas, A. Brutyan, Sp. Melikyan, A. Harutyunyan, anthology, folk songs, region, Igdır.

ԱՐՍԵՆ ՇԱՔԱՆՅԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ ՓԱՐԻՉԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԱՐԱ ՀԱԿՈՐՅԱՆ

Արսեն Շաքանյանը հայ ծովանկարչության նշանավոր դեմքերից մեկն է: Եղել է «Փարիզի ծովային նկարիչների» և «Գունավոր փորագրության» ընկերությունների հիմնադիրներից, պարգևատրվել «Պատվո լեգեոն» շքանշանով:

Ծնվել է 1864 թվականին Արևմտյան Հայաստանի Կարին (Էրզրում) գավառի Սունինց գյուղում: Նախնական կրթությունն ստացել է տեղի Արծնյան վարժարանում, ապա մեկնում է Վենետիկ՝ ուսանելու Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում: Ավարտելով ուսումը՝ վերադառնում է հայրենի Կարին: Այդ ընթացքում Շաքանյանը Թեոդոսիայում հյուրընկալվում է ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկուն և, որպես գեղանկարիչ, ստանում Մեծ ծովանկարչի օրինությունը: Ընդհանրապես Այվազովսկու հետ հանդիպումը վճռորոշ նշանակություն է ունեցել՝ Շաքանյանի մասնագիտական ուղին վերջնականապես որոշելու համար: Ահա և ուսումը շարունակելու համար Շաքանյանը մեկնում է Փարիզ: Հանձնելով համապատասխան քննություններ՝ ընդունվում է Փարիզի գեղարվեստի ազգային բարձրագույն դպրոց՝ դասառություն վերցնելով Գյուստավ Մորոյի արվեստանոցում: Այնուհետև, ավելի առաջադիմական սկզբունքների դավանելու նկատառումով Շաքանյանը դուրս է գալիս գեղարվեստի դպրոցից և տեղափոխվում Ժյուլիանի ակադեմիա՝ ուսանելով ֆրանսիացի երևելի մանկավարժ-նկարիչներ Ժան Պոլ Լորանի և Բենժամեն Կոնստանի դասարաններում:

Շաքանյանը եղել է բեղմնավոր նկարիչ: Ինչպես ցույց են տալիս փաստագրական նյութերը, բացի փարիզյան սալոններից և խմբակային ցուցահանդեսներին մասնակցելուց, արվեստագետը զրեթե ամեն տարի կազմակերպել է իր աշխատանքների անհատական ցուցադրությունները: Դրանցում փարիզյան արվեստասեր հասարակայնությունն ըմբռնել է արվեստագետի գեղանկարչական և գրաֆիկական ստեղծագործությունների հաճույքը: Նկարչի կազմակերպած ցուցահանդեսներն իրենց արձագանքներն են գտել ֆրանսիական մամուլում¹: Շաքանյանը փորագրանկարչության մեծ վարպետ էր: Նրա

¹ Տե՛ս **Galerie Georges Petit**, “La Chronique des Arts et de la Curiosité”, Paris, 25 novembre 1899, N 36: Paul-Louis Hervier, “La Presse”, 21 mars 1905, N 4178: Julien Leclerco, Arsène Alexandre, Otto et Morot, “Le Figaro”, 8 mai 1902, N128: Tableux et Pastels par Arsène Chabanian, “Le Gaulois”, 14 novembre 1906, N 10623...

օֆորտով կատարված մի շարք գործեր, ինչպես նշում է ֆրանսիական մամուլը, իրենց բարձր վարպետությամբ գերազանցել են նույնիսկ ժամանակի ճանաչված նկարիչների ստեղծագործությունները:

Արսեն Շաբանյանն աստիճանաբար համաեվրոպական ճանաչում է ձեռք բերում: Դեռևս կենդանության օրոք նրա «Լիալուսին» կտավը գնվել է Ռուսաստանի կայսրուհու կողմից և ցուցադրվել կայսերական արքունիքի թանգարանում: Նկարներ են գնվում նաև Բեռլինի պոլիտեխնիկական ինստիտուտ-թանգարանի, Մյունխենի, Ֆիլադելֆիայի, Վաշինգտոնի, Նյու Յորքի, Բուենոս Այրեսի, Լոնդոնի, Վենետիկի, Փարիզի, Տոկիոյի, Բրազիլիայի Պերնանբուս, Ալեքսանդրիայի Պինակոտեկ թանգարանի ու քաղաքապետարանի, Սիդնեյի Գեղեցիկ արվեստների և մի շարք այլ քաղաքների մեծ ու փոքր թանգարանների համար:

Մեզ համար սակայն նորույթ էր Շաբանյանի՝ որմնանկարչական արվեստով զբաղվելը:

Այդ նկատառումով հետաքրքրական փաստի ենք հանդիպում Հայաստանի ազգային պատկերասրահի արխիվային բաժնում պահվող նկարիչ Եղիշե Թադևոսյանին ուղղված երաժշտագետ-մանկավարժ Մարգարիտ Բաբայանի՝ 1904թ. նամակում²: Նամակագիրը գրում է. «Վերջերս մերոնք մտել էին հայոց նոր կառուցված եկեղեցին. (Փարիզում – Ա. Հ.) այնտեղ միայն երկու նկար կա՝ Շապանեանի վրձնին պատկանյալ, երկուսն էլ marin-ներ են (ծովանկարներ – Ա. Հ.). մեկը Նոյան տապանը, իսկ մյուսը մի նավ, որի մեջտեղը կանգնած է Քրիստոսը...»³:

2015թ. Փարիզում եղած ժամանակ մենք այցելեցինք 1904թ. կառուցված Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի⁴: Այստեղ էլ տեսանք վերը նշված որմնանկարները: Սրանք այսօր Շաբանյանից մեզ հայտնի առաջին որմնանկարչական աշխատանքներն են, ըստ էության ավելի շատ կատարված հայկական մատենական նկարչության ոճապատկերային եղանակով:

Առաջինում պատկերված է Արարատ լեռան գագաթին հանգրվանած Նոյան տապանը: Իհարկե, պատկերում բիբլիական Արարատն ամբողջությամբ պայմանական ձևերի մեջ է և քիչ է նմանվում իրական լեռան գծապատկերին⁵: Այստեղ լեռը դեռևս ամբողջությամբ շրջապատված է ջրհեղեղից

² Մարգարիտ Բաբայանը (1874-1968), երաժշտագետ ու մանկավարժ լինելուց բացի, նաև երգչուհի էր ու դաշնակահարուհի:

³ ՀԱՊ, արխիվային բաժին, ինվ. N 331:

⁴ Տաճարը կառուցվել է հայ գործարար ու բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի միջոցներով:

⁵ Չենք կարծում, որ Շաբանյանը տեսած չլիներ Արարատ լեռան տեսքը: Իհարկե, նա Հայաստանում չի եղել, սակայն հանդիպած կլիներ Հովհաննես Այվազովսկու Արարատ-

գոյացած ջրերով: Ինչ-որ չափով պարզունակ կատարված այս ստեղծագործությունը հավաքվում է կիսաօվալաձև տեսք ունեցող հայկական մանրանկարչական զարդանախշերի գոտիով, որտեղ բուսական և երկրաչափական զարդանոտիվների միջև երևում են թեմայի հետ անմիջականորեն կապվող աղանիները: Նրանք իրենց կտուցները մոտեցրել են խաղողի ողկույզներին (դա էլ քրիստոնեական սիմվոլիկա է՝ աստվածաշնչյան գաղափարների տարածման նկատառումով):



«Նոյան տապանը Արարատ լեռան գագաթին»

ներին, կամ թեկուզ Վենետիկում՝ Մխիթարյանների մոտ հրատարակված «Բազմավեպ» և «Գեղունի» հանդեսներում բազմիցս վերատպված Արարատ լեռան տեսարաններին: Չմոռանանք, որ Արարատին նվիրված բազմաթիվ նկարների վարպետ Գևորգ Բաշինջաղյանին Շաբանյանը ծանոթ էր դեռ 1900թ.¹ Փարիզում կազմակերպված համաշխարհային ցուցահանդեսի օրերից, որտեղ ռուսական բաժնում ցուցադրվել են նաև Այվազովսկու և Բաշինջաղյանի նկարները: Արսեն Շաբանյանն իհարկե ծանոթ կլիներ Բաշինջաղյանի ռեալիստական գործերին:

Երկրորդ աշխատանքը նորկտակարանյան թեմաներից է: Հավանաբար այստեղ ներկայացվում է «Քրիստոսը հանդարտեցնում է ծովի ալեկոծությունը» հայտնի պատմությունը: Նախորդի նման կրկնվող կիսաօվալ զարդագոտու ներսում տեսնում ենք նավակի մեջ նստած Հիսուս Քրիստոսին: «Եւ քամի մեծ փոթորիկ էր լինում, եւ ալիքները թափում էր նաւի մէջ, մինչեւ որ համարեա արդէն լցվում էր: Եվ Ինքը նաւի ետի կողմումը բարձի վերայ քնած էր. եւ նորան զարթնեցնում են եւ ասում նորան. Վարդապետ, հոգո՛ չէ՞ որ կորչում ենք: Եւ նա զարթնելով քամիին սաստեց եւ ասաց ծովին. լռի՛ր, պապանձու՛իր. եւ քամին դադարեց, եւ մեծ խաղաղութիւն եղաւ»⁶: Պատկերում ալեկոծ ծովն է, իսկ նավակում չեն երևում առաքյալները. Քրիստոսի խաղաղ հոգեվիճակը խորհրդանշում է կտակարանյան թեմայի ողջ բովանդակությունը:



«Քրիստոսը հանդարտեցնում է ծովի ալեկոծությունը»

Այսպես ուրեմն, հայ տաղանդավոր ծովանկարիչն առիթի բերումով կատարել է նաև որմնանկար, որոնք երկու դեպքում էլ թեմայի առումով առնչվում

⁶ Նոր Կտակարան, Մարկոս 4. 37, 38, 39:

են ծովային տեսարանների հետ: Գուցե դա է եղել Շաբանյանին հրավիրելու պատճառը: Այնուամենայնիվ, երկու տեսարաններում էլ Շաբանյանը սիրով է անցել գործի, թեև ավելի շատ ուղղորդվել է ավանդական ազգային մանրանկարչության ու հաստոցային ոճի սովորույթներով:

Եթե «Տապանի» դեպքում կոմպոզիցիոն պարզունակ լուծումը կոչված էր ավելի շատ աստվածաշնչյան տեղեկատվություն հաղորդելու, ապա երկրորդ դեպքում նկատելի է որմնանկարչությանը ոչ հատուկ ավելի հաստոցային սկզբունքների կիրառումը: Զգացվում է փոթորկի ուժեղանալը, որը տարուբերում է ծովի թափանցիկ ալիքները և նույնիսկ Քրիստոսի թիկնոցի փեշերը:

Փաստորեն կերպարվեստի տարբեր ժանրերում իրեն հիանալիորեն դրսևորած Արսեն Շաբանյանն ի հայտ է գալիս նաև որմնանկարչության ոլորտում, որոնք թեպետ չեն հասնում նկարչի հաստոցային և փորագրանկարչական աշխատանքների փայլուն կատարումներին, սակայն դրանցում վկայում են արվեստագետի՝ եվրոպական միջավայրում լայն ճանաչում ունենալու և տեխնիկայի տարբեր միջոցներով աշխատելու կարողության մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Նյութը վերաբերում է հայ ծովանկարչության երևելի դեմքերից մեկի՝ Արսեն Շաբանյանի որմնանկարչական աշխատանքներին: Հայաստանի ազգային պատկերասրահի արխիվային բաժնում գտնվող Մարգարիտա Բաբայանի՝ 1904թ. գրած նամակից տեղեկանում ենք, որ Արսեն Շաբանյանը Փարիզի նոր կառուցված հայոց Սուրբ Հովհաննես Մկրտիչ տաճարում երկու տեսարան է նկարել, երկուսն էլ ծովային թեմաներով: 2015 թվականին հոգվածի հեղինակը, մեկնելով Փարիզ, տեսել և լուսանկարել է Շաբանյանի վրձնած աստվածաշնչյան այդ երկու տեսարանները, որոնք անհայտ էին մնացել արվեստասեր լայն հասարակայնությանը: Հոդվածում ներկայացվում են դրանք համապատասխան մեկնաբանումով:

Բանալի բաներ – ծովանկարչություն, փորագրություն, օֆորտ, որմնանկար, գծապատկեր, հաստոցային, գեղանկարչական, գրաֆիկական, սիմվոլիկա, մանրանկարչություն, սալոն:

НОВАЯВЛЕННЫЕ РАБОТЫ АРСЕНА ШАБАНЯНА В ЦЕРКВИ СВЯТОГО ОВАНЕСА МКРТЫЧА В ПАРИЖЕ

ԱՐԱ ԱԿՕՅԱՆ

Статья посвящена фрескам одного из самых известных армянских маринистов Арсена Шабаняна. Из письма Маргариты Бабаян 1904 года, хранящегося в архиве Национальной картинной галереи Армении, нам стало известно о том, что в армянской церкви Св. Иоанна Крестителя в Париже Арсену Шабаняну принадлежат два пейзажных вида на морские темы. В 2015 году мы побывали в Париже и запечатлели эти работы, которые ранее оставались неизвестными для широкой публики. В статье работы представлены с соответствующими комментариями.

Ключевые слова - марина, резьба, офорт, фреска, рисунок, станковый, живописный, графика, символика, миниатюра, салон.

ARSEN SHABANIAN'S NEWLY DISCOVERED FRESCOS IN JOHN THE BAPTIST IN PARIS

ԱՐԱ ԿԱԿՕԿՅԱՆ

This paper refers to the frescos by one of the distinguished figures of Armenian maritime painters – Arsen Shabanian. A letter written by Margarita Babayan in 1904 and archived at the National Gallery of Armenia evidences that Arsen Chabanian has painted two frescos both depicting maritime scenes in the newly built Armenian Church of John the Baptist in Paris. In 2015, Ara Hakobyan, the author of the article visited Paris and took pictures of Chabanian's 2 biblical-scene frescoes. These were yet unknown to people interested in arts. These frescos with respective comments are presented in the article.

Key words – maritime painting, carving, etching, fresco, figure painting, panel painting, artistic, graphic, symbolism, miniature, salon.

АСПЕКТЫ ТРАДИЦИОНАЛИЗМА И ПОНИМАНИЕ УСТОЙЧИВЫХ МОДЕЛЕЙ АРХИТЕКТУРЫ В ДУБАЕ

ЯШАР ХОСЕЙНЗАДЕ (ИРАН)

I. Введение

Конвергенция и настройка принципа архитектуры прошлого Дубая с принципами устойчивого дизайна-это не случайность, а стабильность, продолжение и поддержание понятия великих идей о прошлом архитектуры, наводит на мысль, что такие мысли в прошлом архитектуры Дубая. Если явление из-за исторической трансформации конкретно может быть метаморфизмом, новый феномен согласованности, единства, дисциплины и авторитета, чтобы получить новый заказ. Западные импортные продукты и методы, в основном фасада, богато украшенный внешний вид и заказ на гламурные обусловлен, в основном, диктуют комфорт и благосостояние человечества, хотя, быть может, новый имидж с другими средствами, чтобы вызвать это явление, но это не то, что должно идти от сердца, исторически должно измениться. Принципы прошлого устойчивы в наше время технического и перехода к принципам устойчивого проектирования на основе проблемы-экологии. Устойчивость также имеет культурные и экологические вопросы. Следовательно, хотя технология общего языка, расстояние связи между различными регионами становилось короче. И стал международным языком, но это не главная причина для возникновения устойчивости. Традиционализм в архитектуре Дубае, очень важно знать в истории и развитии города. Веря в принципы устойчивой архитектуры в Дубае, мы можем разумно адаптироваться к новым концепциям и стабильности экологии. Для выявления и достижения практических и устойчивых моделей знания коренных народов в сфере новой надежды на лечение.

II. Традиционализм в мировой архитектуре и ее жизнеспособных соглашениях как тенденция в современной архитектуре.

1. Традиционализм в современной архитектуре

В настоящее время современная мировая архитектура обращает все больше внимания на такую тенденцию как "районирование", главным образом из-за его наведения при принятии во внимание местных условий и не только в

пределах границ отдельной страны, но в пределах границ довольно широкой зоны с подобными условиями климата. Вышеупомянутая тенденция делает значительное влияние на фундамент архитектурного изображения современных зданий и их комплексных соединений, эта тенденция непосредственно связана с проблемами климата и проблемами архитектуры в странах с высокими ежегодными температурами и требует полного и детализированного исследования лучших и прогрессивных традиций, и намеки состава национальной архитектуры должны быть мудро комбинированы с современным научным подходом к раствору усложненных архитектурных проблем с уважением высокого художественного создания частей, выбора и применения новых и традиционных строительных материалов, современных методов индустриальной конструкции, устанавливая весь цепкий контроль над естественным местным жителем и условиями климата, хотя принимая во внимание новую социальную, экономическую и техническую основу [1].

Привлекательным к основе естественной архитектуры будет логическими слушаниями принятия во внимание особенностей национальной архитектуры. Экспонирование эфирного масла органической архитектуры рассматривается в самой рациональной корреспонденции архитектурных форм к социальным процессам как живые организмы, растения и животные, казалось, были большинством пригодных систем для своей среды в ходе создания формы и жизненного процесса. Хотя конструкции, созданные целеустремленно для удовлетворения определенной потребности человека, среди них защита от плохой погоды и социально-бытовых условий, подвергнуты энтропии. Растворы, предпринятые архитекторами, зависят от многочисленных факторов и иногда более или менее справедливо выбираются, но часто они двойственны и иногда *they turn*, чтобы быть ошибочны [2-3].

Это естественно, что факторы, которые являются активными в пределах народной архитектуры, подобны факторам естественного развития: строгий интервал времени, ища лучший эффект меньшим количеством организационных средств, совместно использует лучшие растворы. Наша современная культура, которая является результатом контакта человечества с природой всюду в истории, основана на прошлом знании и опыте [4].

В настоящее время устойчивое развитие сконцентрировано из-за изменения климата и разрушения природы человеком, а с другой стороны, "Грин" или "экологическая" архитектура - непреклонная тенденция устой-

чивого городского развития [5]. Климатические условия назрели, и задача в том, как справиться с определенными для области проблемами при использовании инструментальных средств, изобретении и методов, соответствующих их потребностям во взаимодействии с региональным климатом [6]. Устойчивость архитектуры состоит в том, чтобы предусмотреть главные потребности человечества, чтобы улучшить стандарт жизни, лучше сохранить и обслужить экосистемы и естественные энергетические ресурсы и, наконец, достигнуть более безопасного будущего [7].

2. Устойчивость архитектуры

Устойчивость архитектуры зависит от устойчивости окружающей среды, которая является окружающей средой для человеческого занятия, работы и поддержки жизни, которой непрерывно даны хлеб насущный или питание. Устойчивость иногда неправильно понимается как воздержание от принятия меры и проживания пассивно, чтобы избегать использования доступных ограниченных ресурсов. Институт Рокки Мунтэйна определяет устойчивость как удовлетворение потребностей настоящего, не ставя под угрозу способность будущих поколений удовлетворить их собственную потребность. Это определение подвергает сомнению право на проживание для настоящих и будущих поколений. Это также намекает на воздействие безответственного быстрого развития, исчерпывающее использование ресурсов и загрязнение окружающей среды, осуществленное предыдущими поколениями после промышленной революции, которая воздействовала на живую окружающую среду нашего нынешнего поколения. Крик об устойчивости во всех наших аспектах проживания законный. Устойчивость удовлетворяет потребности нынешних поколений, не ограничивая способность будущих поколений удовлетворить их собственные потребности [8].

3. Аспекты устойчивости

3.1. Экология, планирование и проектирование

Первый аспект устойчивости связан с окружающей средой. Это имеет дело с естественной и искусственной средой. Жизнеспособный подход к окружающей среде рассматривает и естественную и искусственную среду как важные части контекста, в котором мы живем. Окружающая среда требует внимания и осторожной манипуляции особенно после нашей реализации ее хрупкости и деструктивных характеров вмешательства. Искусственная среда –

это, что мы строим среди окружающей среды и должны, прежде всего, коснуться ее.

3.2. Психологический, социальный и культурный аспекты

Устойчивость обнаруживает соединения между естественными и человеческими сообществами, между природой и культурой. Устойчивость несколько не в регрессе примитивных условий жизни. Она в понимании нашей ситуации и развитии как сообщества способами, которые равноправны и которые имеют смысл экологически и экономно. Этот аспект устойчивости рассматривает психологические, социальные и культурные аспекты человеческого существования как важной и свойственной части, чтобы создать жизнеспособную окружающую среду [9].

3.3. Экономика и ресурсы

Управление ресурсами во многих частях мира - ситуация с сигналом тревоги. Во многих частях мира экономические ресурсы ориентированы на существующие потребности и желания без большого внимания к будущим поколениям. Мы исчерпаем ресурсы в некоторый момент, если продолжим эти безответственные методы. Устойчивость - ответственное и сознательное управление доступными ресурсами, чтобы обеспечить существование нашего будущего поколения [10].

III. Сравнительный анализ народной и современной архитектуры в Дубае

Деликатный характер климата жизнеспособного дизайна, также как и понимание региональных экологических и материальных проблем, требует нового взгляда на проблему. Климат и центрируемые местоположением проблемы, которые формируют центр традиционного народного типа, могут произвести новую жизнеспособную народную типологию, которая признает экологически базируемые региональные проблемы. Следующее исследование сравнивает аспекты устойчивости в народной и современной архитектуре в Объединенных Арабских Эмиратах. Вывод из этого исследования - надо учиться у народной архитектуры. Кроме того, наша существующая практика, которая основана на принципах современной архитектуры, становится атрофированной и требует пересмотров, чтобы удовлетворить потребности для жизнеспособного будущего.

1. Народная и современная архитектура в Дубае

Архитектура в Дубае была под влиянием быстрых и решительных экономических, социальных и культурных изменений, которые имели место в районе Персидского залива в течение второй половины 20-го столетия. Открытие нефти в коммерческих количествах вызвало мгновенный рост национального дохода. Крупные проекты и события были запущены, чтобы модернизировать уровень жизни граждан.

1.1. Народная архитектура в Дубае

Народные поселения перед открытием нефти были малыми и примитивными. Они обычно располагались близко к пересечениям торговых маршрутов или стратегических прибрежных зон. Абу-Даби был небольшой деревней, где обосновались прибрежные племена. Аль-Аин был деревней, богатой водой и пальмами. Из-за местоположения на входе изгибающегося ручья (Khoor) Дубай приобрел важное положение и смог основать выдающийся торговый центр с Индией для жемчуга и товаров. Другие небольшие деревни были расположены на маршрутах торговли или около значительных прибрежных зон. Цитадели и форты были построены в оборонных целях. Они были большими в размере и с толстыми стенами, сделанными из камня с округленными или квадратными оборонными башнями в каждом углу (рис. 1 и 2).

Они предоставили территории беженцам во время племенных войн. Мечети были скромные, намного меньше, чем форты, и определили местонахождение близких зданий и хранилищ. Они были обычно прямоугольными по форме. Жилые районы стояли обособленно, позволяя различным племенным кланам группироваться вместе. Общественные места были доступны среди каждого узла. Было несколько типов народных зданий в регионе. Традиционная палатка была домом и укрытием для бедуинов в течение зимнего сезона. Ее несли на верблюдах во время путешествия. Сделанный из шкуры животных и волос, такой дом легко складывался, разворачивался и перемещался. Палатка была разделена на две части: одна для мужчин и другая для женщин. Другая палатка использовалась для того, чтобы готовить и хранить продукты. Палатки были устроены вокруг пастбища или оазиса, формирующего круг или квадрат. В течение зимнего сезона племя распространялось по области везде, где были еда и вода. В течение летнего сезона бедуины имели обыкновение жить в укрытиях в Аль Ариш, которые были сделаны из листьев пальмы. Аль Ариш

состоял из двух частей: 1) главная область, используемая для собраний и отдыха, 2) небольшая площадь, используемая для того, чтобы готовить кормить животных. Бедуины считали Аль Ариш вторым домом после палатки. Постоянные здания были сделаны из коралловых камней и покрыты листьями пальм (рис. 3). Зимние здания были построены около прибрежных зон, в то время как дачи были, главным образом, вокруг хранилищ. В течение летнего сезона были вынуждены оставить свои прибрежные поселения из-за высокой температуры и влажности. Они имели обыкновение ехать к оазису в пустыне, где они собрали дань, которая была их главным урожаем, запасенным в течение зимнего сезона. В течение зимнего сезона они имели обыкновение возвращаться обратно и возобновлять нормальные действия - путешествия, ловлю рыбы, торговлю и добычу жемчуга. Частная жизнь была важным фактором в расположении народных зданий. Мужская приемная была отделена от другой семьи частными покоем с прямым доступом снаружи. Внутренний двор был важной особенностью дома, он занимал половину традиционного дома (рис. 4) [9].

1.2. Современная архитектура в Дубае

После открытия нефти и экономического процветания возникла насущная необходимость построить новые здания, чтобы удовлетворить новые требования людей. Отделы планирования были установлены, чтобы работать над планированием городов и деревень.

Муниципалитеты и отделы общественных работ сосредотачивались на том, чтобы строить общественные здания и жилые комплексы. Зависимость от автомобилей и других средств транспортировки заставила города быстро расширяться. Это нерегулируемое расширение трансформировало главные города в территории с пригородами и изменило традиционный образ жизни. Правительство создало несколько проектов общественного жилищного строительства в различных частях страны. Здания были построены и вручены гражданам после завершения. Дизайн этих зданий не был подходящим для культурных ценностей и потребностей жителей, особенно бедуинов, которые были вынуждены обосноваться в этих проектах. Владельцы должны были сделать неофициальные дополнения и изменения зданий, чтобы удовлетворить свои потребности. Семидесятые и восьмидесятые годы 20-го века засвидетельствовали использование импортированных архитектурных типов, систем конструкций и строительных материалов. Архитекторы из других

арабских стран были приглашены проектировать здания. Архитекторы из стран Запада также играли большую роль в проектировании и строительстве новых зданий. Использование железобетона, новых строительных материалов, кондиционирования и современных технологий доминировало в практике архитектуры. Новая тенденция появилась в девяностых годах с целью оживить наследуемые архитектурные признаки прошлого, чтобы подвергнуть развитию идентичность и архитектурный тип. Многие из зданий, которые были построены в семидесятые годы, были замещены новыми зданиями, использующими архитектурные функции, которые, как предполагают, были более связаны с местными традициями [11] (рис. 5 и 6).

ЗАКЛЮЧЕНИЕ

1. Главные индикаторы архитектуры города были сосредоточены на себе. Башни ветра, минареты и купола самого отличительного визуального аспекта Дубая. С определенными особенностями физических габаритов и проектов и использования. От логики экономической, политической, социальной и культурной зависимости, и что это явление в состоянии информативный опыт для систематических методов и планов предоставить каждому сообществу духовное мировоззрение. Обеспечивает архитектуру Дубая и здания, включая места и городские пространства, подобные арабу, оценивает. Соответствует культурным значениям каждой области, местной идентичности, добавления, охвата, удобочитаемости, учитывая фон традиционных окрестностей.

2. Дубай извлечен и сравним с изделиями экологической психологии: пространственные отношения, комфорт, безопасность, факторы окружающей среды, пейзаж, территория, безопасность, удовлетворение и лояльность к месту спокойствия и воспоминания, Чтобы рекомендовать пространствам национализации правильных стратегий встретить физические, психологические и общественные потребности человека, платят. Определенная для текстуры архитектура и конструкция в Дубае самый ясный пример специальных архитектурных решений в условиях теплого и влажного климата.

Ссылки:

- [1] .Salama, A. Skill-based/knowledge-based architectural pedagogies: An argument for creating humane environments. Proceedings of 7th International Conference of the IAHH-International Association of Humane Habitat-Enlightening Learning Environments, International Association of Humane Habitat-IAHH, Compact Disc, Mumbai, India. (2005).
- [2] .El-shorbagy, A.-m. M. the architecture of Hassan Fathy: between western and non-western perspectives, university of Canterbury. 2001
- [3]. Sharma, S. LINKING GEOGRAPHY WITH ECOLOGY: A CASE STUDY FROM INDIA. BOOK OF PROCEEDINGS. (2012).
- [4]. Harris, M. J. Real-time cloud simulation and rendering, University of North Carolina at Chapel Hill. (2003).
- [5] Dana, L. P. "Creating entrepreneurs in India." Journal of Small Business Management. (2000). 38(1): 86.
- [6] Daniel Koch, et al. "The Effects of the New Development Projects on the Urban Macro form of Dubai a Syntactic Evaluation." (2009).
- [7] .Davidson, C. M. "Dubai: The Vulnerability of Success. (Spring 2010), pp. 370-373"
- [8] Wines, J. (1996). New Wave Organic Architecture Benedikt Taschen Publishers.
- [9] .Yasser Mahgoub, "Sustainable Architecture in the United Arab Emirates, CAA-IIA International Conference on Urbanization, (1977).pp.1-27
- [10] Meyer, R. T. (1995). "Passive Venus Active Solar Design: Opposing strategies in support of new sustainable vernacular." architronic.
- [11] Fathy, H. "Natural energy and vernacular architecture; principles and examples with the reference to Hot Arid climates, published for the united nation university by the university of Chicago press Chicago and London." (1986).

РЕЗЮМЕ

Дубай один из самых старых городов в арабской истории. Он отражает необыкновенные идеи Ислама во всех аспектах и имеет определенные значения в архитектуре и градостроительстве ясно, ощутимо и понятно. В данной работе представлен новый подход к аспектам традиционализма и понимания устойчивых моделей в архитектуре Дубая. Мы требуем долгосрочного видения того, как реализовать стратегии устойчивого дизайна и добиться немедленной реализации нашей физической работоспособности, чтобы гарантировать, что наша мечта сбудется.

Ключевые слова – Дубай, архитектура.

**ՏՐԱԴԻՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ ԵՎ ԿԱՅՈՒՆ
ՄՈԴԵԼՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՈՒԲԱՅԻ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

ՅԱՇԱՐ ՀՈՍՍԵԻՆԶԱԴԵ (ԻՐԱՆ)

Արաբական էմիրությունների պատմության մեջ Դուբայը հնագույն քաղաքներից մեկն է և բոլոր ասպեկտներում արտահայտում է իսլամի գաղափարները և ունի առանձնահատուկ նշանակություն, որ նրա ներդրումը ճարտարապետության և քաղաքաշինության մեջ հստակ նկատելի է և հասկանալի: Այս հոդվածի մեջ ներկայացված է նոր մոտեցում տրադիցիոնալիզմի ասպեկտներին և կայուն մոդելների հասացությանը լանդշաֆտային և քաղաքաշինական Դուբայում: Մեր ֆիզիկական կատարման անհապաղ իրականացումը ապահովելու համար մենք կարիք ունենք երկարաժամկետ տեսլականի, թե ինչպես իրականացնել կայուն նախագծի ռազմավարություններ, որպեսզի մեր երազանքները իրականանան:

Բանալի բառեր – Դուբայ, ճարտարապետություն:

**TRADITIONALISM AND STABLE MODELS IN THE
ARCHITECTURE OF DUBAI**

YASHAR HUSEINZADEH (IRAN)

Dubai, one of the oldest cities in the United Arab Emirates reflects the ideas of Islam in all its aspects and this is especially obvious and understandable when one perceives its architecture and city building strategies. This paper besides presenting the distinctive features of the architecture, ecology and philosophy of Dubai, it offers a new approach to the aspects of traditionalism and and to the understanding of a stable modal of its landscape and architecture. To ensure the realization of tangible performance we need a long-term vision to how implement sustainable design strategies to secure the fulfillment of our dream.

Key words – Dubai, architecture.



Рисунок 1 и 2: Дубай Крик в 1950 году Author: Noor Ali
источник: www.scorempire.com/dubai-photos-now/#.3ytB0m1CAGo



Рисунок 3: Дом Arish, Сухие пальмовые листья, дальмовые стволы и веревка




Рисунок 4: Типы народного жилища



Рисунок 5: Представление нового центра города Дубая после завершения: символ экономической мощи



Рисунок 6: Башня Халифа, высочайш по центру города Дубай ночью.

ԿՈՄՊՈԶԻՑԻՈՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՍԱԹԵՆԻԿ ՄԵԼԻՔՅԱՆ

*Առանց երևակայության հմտությունն
անհմտություն է, ինչպես հմտությունը
շրջանցել կամեցող երևակայությունը
խենթություն է:*

Շառլ Բոդլեր¹

Կերպարվեստում կոմպոզիցիան ստեղծագործության գաղափարական և սյուժետաթեմատիկ հիմքի որոշակի մշակումն է՝ տարածության մեջ առարկաների ու մարմինների տեղադրումով, ծավալների, լույսի ու ստվերի, գունաբծերի և այլ հարաբերակցության հաստատումով:

Կոմպոզիցիոն կառուցվածքները կարող են լինել տարբեր տիպերի. **պարփակված**¹ ներգծված որոշակի ձևի մեջ և ենթարկված նրան, կամ **բաց**՝ ենթադրելով մտովի շարունակությունը տարածության մեջ կամ հարթության վրա: Կոմպոզիցիայի **պարփակված** տիպերը գերակշռում են, օրինակ՝ Վերածննդի արվեստում, **դինամիկ** և **բաց** հորինվածքները՝ Բարոկկոյի շրջանում:

Կոմպոզիցիոն հորինվածքների տարբեր տիպերը բացահայտենք օրինակների օգնությամբ: Անդրադառնանք Լեոնարդո դա Վինչիի (1452-1519) և Պիտեր Պաուլ Ռուբենսի (1577-1640)՝ հակադիր սկզբունքներով վրձնած աշխատանքների կոմպոզիցիոն կառուցվածքներին:

Իտալացի վարպետի կոմպոզիցիաների հավասարակշռված կառուցվածքներում զգացվում է ներքին օրինաչափություն, համակարգվածություն: Օրինակ՝ «Խորհրդավոր ընթրիք» որմնանկարում Լեոնարդոն սեղանը տեղավորում է պատերին զուգահեռ՝ հավաստելով դրա հարթությունը, իսկ կողպատերի հեռանկարային կրճատումը կարծես շարունակում է սեղանատան իրական տարածությունը: Կոմպոզիցիան ինքնամիտի է և մեկուսացած:

Ֆլամանդական գեղանկարի հիմնադիր Ռուբենսի ստեղծագործություններում խարխվում են Վերածննդի դասական կոմպոզիցիայի հիմունքները և

¹ **Շառլ Բոդլեր**, կազմեց, ֆրանս. թարգմանեց Հ. Բախչինյանը, Երևան, «Սարգիս Խաչենց», 1999, էջ 14:

փոխարինվում բարոկկոյին հատուկ բարդ ու դինամիկ կառուցվածքներով: Հորինվածքը կառուցվում է անհամաչափորեն՝ ըստ անկյունագծի, էլիպսի կամ պարոյրի, այն հագեցած է գունաձավալային հակադրություններով, անհանգիստ ռիթմով: Դիտարկենք մեկ աշխատանք Ռուբենսի հարուստ ժառանգությունից: Ֆլամանդացի վարպետի «Լևկիայի աղջիկների առևանգումը» կտավի բաց կոմպոզիցիոն կառուցվածքը հիշեցնում է բարդ զարդանախշ, որտեղ մարդկանց ու ձիերի մուլեգին շարժումները ստեղծում են գծային և գունային պոռթկուն ռիթմեր:

Հորինվածքի պատկերի ամենատարածված ձևաչափերն են **ուղղանկյունը**, **քառակուսին**, **շրջանն ու օվալը**: Ինչպես հորինվածքի, այնպես էլ նրա տարրերի ձևերը կարող են ունենալ մեծ հուզական ազդեցություն: Միապաղաղության, հանգստի, խստության, հստակության, վեհության կամ քառսի զգացողությունը կարող են ստեղծել անկանոն, առանց հստակ սահմանների կամ հստակ սահմաններով ուղիղ և սուր անկյուններով բազմանկյունները, շրջանները կամ բազմաթիվ այլ ձևեր: Քառակուսին՝ որպես երկրաչափական մարմին, Հին աշխարհի և Վերածննդի շրջանի գիտնականների ուշադրության կենտրոնում էր. Լեոնարդո դա Վինչիի՝ քառակուսու և շրջանի մեջ ներգծված հայտնի ֆիգուրը, որը խորհրդանշում է մարդու հոգևոր և նյութական էությունները, հայտնի է նաև որպես առաջին դարի ճարտարապետ Վիտրովիի հորինվածք: Գերմանացի Դյուրերը, իտալացի Պաչոլլին և ֆրանսացի Թորին զբաղվում էին տառերի ներդաշնակ գծագրմամբ ու ելնում քառակուսու մեջ ներգծված դրանց ձևաչափերից²:

Կոմպոզիցիոն կառուցվածքներում կարևոր են նաև հորինվածքի բաղկացուցիչ մասերի հատկանիշները:

Ստեղծագործության տարրերի դասավորությունը՝ հիմնված հեղինակի մտահղացման վրա, կազմում է որոշակի հորինվածք-կոմպոզիցիա: Ձևերի խիստ ֆորմալ հարաբերակցությունը նույնպես ենթարկվում է որոշակի կանոնների և ունի իր հատկանիշները՝ **համաստորադասություն, միասնություն ու ամբողջականություն, հավասարակշռություն**:

Հորինվածքի բարդ համակարգը բաղկացած է կարևոր և երկրորդական, կենտրոնական և ծայրամասային տարրերից: Նույնիսկ զարդաքանդակավոր հորինվածքներում հնարավոր է առանձնացնել կարևորն ու նրան ուղեկցող ենթակա մոտիվները:

² Арнхейм Р. Искусство и визуальное восприятие, М., Прогресс, 1974, с. 57.

Համաստրադասությունը հորինվածքում ենթադրում է հիմնական՝ գերիշխող գաղափարի առկայությունը: Այս դեպքում կոմպոզիցիայի երկրորդական տարրերը, ենթարկվելով գլխավորին, շեշտում են այն: Երկրորդական տարրերն ուղղորդում են հայացքը դեպի պատկերի գագաթնակետը՝ իրենց հերթին ստորադասելով միմյանց:

Օրինակ՝ Նախավերածննդի վարպետ Ջոտտո դի Բոնդոնեի (1266-1337) «Ողբ առ Քրիստոսի» որմնանկարում վեհությունն ու դրամատիզմը շեշտված են գաղափարական կենտրոնի առանձնացման միջոցով: Բնանկարում լեռան լանջը ծավալված է այնպես, որ կարևորվեն գլխավոր գործող անձինք՝ մահացած Քրիստոսն ու ողբացող Մարիամը, որոնց ստորադասում են բոլոր ներկաների խոնարհված դեմքերը:

Կոմպոզիցիոն կառուցվածքներում **միասնությունն ու ամբողջականությունը** ենթադրում են հակադրությունների (գույների, շարժումների, տոների, իրավիճակների և այլն), աջ և ձախ մասերի **հավասարակշռություն**, որը նպաստում է հորինվածքի կարգավորմանը:

Հորինվածքի կառուցման հիմնական գեղարվեստական միջոցներն են՝ *ռիթմը, համաչափությունը, մասշտաբը, սիմետրիան և ասիմետրիան, դինամիկան և ստատիկան, նյութությունը, նյութանյութը և կոնտրաստը, հակադրությունը, դրմինանյութը*:

Ռիթմը բնության ներհատուկ համընդհանուր հատկությունն է: Այն առկա է իրականության բազմաթիվ երևույթներում: Կյանքն այս կամ այն կերպ կապված է ռիթմի հետ՝ տիեզերքը, մոլորակների պտույտը, տարվա եղանակները, ցերեկվա և գիշերվա հաջորդականությունը, բույսերի աճը, կենդանիների մոտ՝ սրտի աշխատանքը: Ռիթմ ասելով հասկանում ենք որևէ տարրի կրկնվող դասավորություն՝ որոշակի հերթականությամբ: Ռիթմը միշտ ենթադրում է շարժում:

Գեղանկարչության և քանդակագործության մեջ, գրաֆիկայում և կիրառական արվեստում ռիթմը կոմպոզիցիայի կառուցման առավել կարևոր արտահայտչամիջոցն է: Ռիթմի միջոցով է կառուցվում ոչ միայն պատկերը, այլ նաև հաճախ նրանով է պայմանավորվում հուզական ներգործության ուժը:

Տարբեր զգացողությունների ռիթմիկ հաջորդականությունն առաջացնում է դրական հոյզեր: «Միապաղաղությունը ձանձրացնում է», - արձա-

նագրել է մեծանուն ռուս նյարդաֆիզիոլոգ Իվան Պետրովիչ Պավլովը (1849-1936)³:

Համաչափությունը ձևի տարրերի չափային հարաբերությունն է, որը ողջ հորինվածքի կառուցման հիմքն է: Գոյություն ունեն համաչափության մի քանի տեսակներ, որոնցից հիմնականներն են՝ **թվաբանականը** ($a=b=c$) և **երկրաչափականը** ($a:b=c$, որտեղ a -ն, b -ն և c -ն տարրերի գծային չափսերն են): Համաչափությունների տարատեսակներից մեկը այսպես կոչված **«ոսկե հատման»** հարաբերությունն է, որը միաժամանակ կազմված է և՛ թվաբանական, և՛ երկրաչափական համաչափություններից, իսկ հորինվածքի հաջորդական տարրերի հարաբերությունը միշտ միևնույն հաստատուն մեծությունն է, որը հավասար է $0,618(a=b:c=0,618)$ -ի:

Համաչափություններն ունեն գեղարվեստական մեծ նշանակություն: Նրանով է պայմանավորված ձևի բաղադրիչ մասերի ներդաշնակությունը: «Ոսկե հատման» հարաբերությունը հայտնի էր դեռևս Հին աշխարհում, սակայն այն գործածության մեջ դրեց Լեոնարդո դա Վինչին: «Բնության օրինաչափությունները նկարիչը վերածում է համաչափ ձևերի, իսկ գիտնականը՝ թվերի», - եզրակացրել է հանճարեղ Լեոնարդոն⁴:

Հնգաթև աստղի, հունական Ակրոպոլիսի, Ֆիդիասի արձանների, հունական սափորների, եգիպտական բուրգերի, ուրարտական տաճարների կառուցման հիմքում ոսկե հատման օրենքն է: Այս համաչափության օգնությամբ կառուցված «Արքիմեդի պարույրը» հաճախ անվանում են «զարգացման կոր», կամ «կյանքի պարույր»:

Մասշտաբը քանակական հարաբերություն է ամբողջի և դրա մասերի միջև: Մասշտաբայնությունը չափերի համապատասխանությունն է ընդունված չափանիշին՝ մարդուն: Օրինակ՝ գոթական հսկայական սրածայր տաճարներում, ելնելով կրոնական պատկերացումներից, մարդն իրեն զգում էր տիեզերքի աննշան մասնիկ: Կերպարվեստն ավելի ու ավելի էր հեռանում անտիկ արվեստին բնորոշ ռեալիզմից ու ձեռք բերում վերացական և խորհրդանշական բնույթ: Աստիճանաբար տաճարների քանդակազարդը դառնում է այնքան առատ ու նուրբ, որ հսկայական կառույցը թվում է քարեղեն ժանյակ:

Սկսած Վերածննդի շրջանից՝ մշակույթը վերջնականապես կորցնում է պաշտամունքային, սրբազնական բնույթը և դառնում մարդու ստեղծագոր-

³ Григорян Е. А., Основы композиции в прикладной графике, Ер., Гитутюн, 1986, с. 18.

⁴ Леонардо да Винчи, Избранные произведения, Т-1, М.-Л., Академия, 1935, с. 215.

ծական ազատ գործունեության արդյունք: Վերածննդի հումանիզմի գաղափարներն արտահայտվեցին նաև ճարտարապետության, նոր կառույցների պարզ ու ներդաշնակ նկարագրի մեջ, դրանց ձևերի դասական լեզվում, մարդու հետ հարաբերակցված համամասնություններում և մասշտաբներում:

Սիմետրիան և ասիմետրիան հորինվածքի կազմակերպման երկու հակադիր միջոցներն են: «Սիմետրիա» բառը հունարենից թարգմանված նշանակում է համաչափություն կամ զուգաչափություն: Հնուց ի վեր, ինչպես և համաչափությունը, սիմետրիան մեծարվել է որպես ներդաշնակության և գեղեցկության անհրաժեշտ պայման: Երկրի ձգողականության - գրավիտացիայի օրենքով են պայմանավորված բուսական և կենդանական աշխարհի սիմետրիկ հորինվածքները, հորիզոնականի, ուղղահայացի և անկյունագծի դերը արվեստի կոմպոզիցիոն կառուցվածքներում: Սիմետրիան ապահովում է հորինվածքի հավասարակշռությունը:

Գոյություն ունեն սիմետրիայի տարբեր տեսակներ: **Առանցքային սիմետրիան** առաջանում է՝ պտտելով տարրը առանցքի շուրջը: **Հայելային սիմետրիան** հիմնված է առարկայի երկու մասերի՝ մեկը մյուսի նկատմամբ ունեցած հավասարության վրա, կարծես նրանցից մեկն արտացոլվում է հայելու մեջ: Այն սիմետրիան, որն առաջանում է՝ պտտելով տարրը կենտրոնի նկատմամբ, կոչվում է **կենտրոնական սիմետրիա**: **Կրկնվող (տեղաշարժման) սիմետրիայի** դեպքում տարրը նույնությամբ, առանց պտտվելու կամ անկյունը փոխելու կրկնվում է, կարծես նրան կրկնապատկում, բազմապատկում են ու նույնությամբ տեղադրում կողք կողքի: **Շրջադարձային սիմետրիան** նշանակում է կրկնակի հայելային սիմետրիա: Առավել դինամիկ է համարվում **պրուփակային սիմետրիան**, որտեղ տարրերը կրկնվում են պտուտակաձև հետագծով: Սիմետրիայի խախտումն առաջացնում է անհանգստության զգացողություն:

Ձևի արտահայտչականությունը շեշտելու համար օգտագործում են այնպիսի գորեղ միջոց, ինչպիսին է **ասիմետրիան**:

Սիմետրիկ և ասիմետրիկ կառուցվածքները տարբեր կերպ են ընկալվում. առաջինները՝ արագ և միանգամից, երկրորդները՝ աստիճանաբար:

Սիմետրիայի հիմքում նույնության գաղափարն է: Այն ենթադրում է բաղկացուցիչ տարրերի նմանություն և միմյանց հավասարակշռելու հնարավորություն: Առավելագույն սիմետրիան բնորոշ է գնդին, քանի որ նրա կենտրոնում հատվում են անսահման քանակությամբ առանցքներ և հարթու-

թյուններ: Խիստ սիմետրիկ են միայն անկենդան բնության տարրերը՝ բյուրեղները (փաթիլ) և միներալները (հանքանյութը):

Դինամիկան շարժման տեսողական ընկալումն է: Դինամիկայի սկզբունքով կատարված հորինվածքներն առավել ցայտուն են հաղորդում ողջ ստեղծագործության տրամադրությունը, հեղինակի զգացողությունները: Դինամիկ հորինվածքներում տարրերը հիմնականում տեղադրում են հարթության անկյունագծերով կամ թեք, ինչը սաստկացնում է շարժման տպավորությունը:

Դինամիկ ձևն ունի միակողմանի ուղղվածություն՝ անկյունագծային, շրջանաձև, ճառագայթաձև, ալիքվող՝ S-աձև: Երբ հորինվածքում դինամիկան վառ արտահայտված է, այն կարող է դառնալ գլխավոր թելադրող գործոն: Դինամիկայի սկզբունքով կառուցված հորինվածքն ինքնաբերաբար ունենում է ասիմետրիկ լուծում:

Ի տարբերություն դինամիկայի՝ **ստատիկան** խորհրդանշում է հավասարակշռություն և կայունություն: Հորինվածքներում այն կիրառվում է հանգըստություն և ներդաշնակություն հաղորդելու նպատակով:

Այստեղ տեղին է անդրադառնալ նույն խնդրի շուրջ արված Վ. Ֆավորսկու ուսումնասիրություններին, որտեղ քննարկվել են Հին աշխարհի վարպետների մոտեցումները. «Հին եգիպտացիները մարդուն պատկերում են տարբեր կետերից, ասես քանդակում են մեկ հարթության վրա: Արդյունքում ընդհանուրը կազմվում է տարբերաժամանակային հատվածներից, - գրում է արվեստագետը և շարունակում, - հունական եզրագարդը (ֆրիզը), Պոմպեյի գեղանկարը կամ Վերածննդի որոշ վարպետների նկարները կառուցված են հորիզոնական ուղղվածությամբ՝ ստեղծելով ֆրիզի նմանակ, որտեղ ամբողջ շարժումը կազմվում է մի քանի տեսողական կետերոններով: Օրինակ՝ Գիրլանդայոն մարդուն պատկերում է ոչ թե տեսողական կետից, այլ տեսողական հարթության ներքո»⁵:

Նույնությունը, կոնտրաստը (հակադրությունը) և նյուանսը հորինվածքի տարատեսակներն են և միևնույն ժամանակ՝ միջոցները, որոնց օգնությամբ լուծվում են տարաբնույթ կոմպոզիցիոն խնդիրները: Այդ արտահայտչամիջոցները կարելի է անվանել քանակատրակական, քանի որ դրանք արտահայտում են քանակական փոփոխությունների կատարման և նոր որակի անցման գործընթացը:

Նույնությունը հորինվածքի տարրերի հատկությունների լիարժեք նմա-

⁵ Фаворский В., О художнике, о творчестве, о книге, М., Молодая гвардия, 1966, с. 114.

նության սկզբունքն է: Ժամանակի շարունակականությունը, դրա դիթմի միապաղաղ ընթացքը պատկերավորելու նպատակով նկարիչները ստեղծել են կոմպոզիցիոն շարքեր, որտեղ միևնույն մոտիվը ծավալվել է աննշան փոփոխություններով:

XIX դարի ճապոնացի հանրաճանաչ նկարիչ, փորագրանկարի վարպետ Կացուսիկա Խոկուսայի (1760-1849) «Կամուրջներ», «Ֆուձի լեռան 36 պատկերները» գունավոր փայտափորագրության տեխնիկայով արված բնանկարների ցիկլերում հիացմունք են առաջացնում, թե ինչպես միևնույն՝ կայուն և անսասան Ֆուձի լեռան դիմացի հատվածում աստիճանաբար նկարից նկար փոփոխվում է մոտիվը՝ կախված լուսավորությունից, շրջապատի առարկաների տարբեր դասավորվածությունից և այլն:

Կոնպրասպը արտահայտվում է կոմպոզիցիայի տարրերի հատկությունների միջև եղած կտրուկ տարբերություններով, դրանց բնութագրերի հակադրմամբ՝ մեծ-փոքր, ծանր-թեթև, դինամիկ-ստատիկ և այլն: Կոնտրաստի օգնությամբ հնարավոր է շեշտել ստեղծագործության որևէ հատված, աշխուժացնել անհրաժեշտ տարրը, կատարել շեշտադրումներ: Կոնտրաստների համարձակ կիրառումը հորինվածքում վկայում է հեղինակի մասնագիտական հմտության մասին:

Նյուանսը հորինվածքի հատկությունների չնչին տարբերությունն է: Եթե սիմետրիան նմանությունն է, կոնտրաստը՝ հակադրությունը, ապա նյուանսը և՛ նմանություն է, և՛ տարբերություն: Նյուանսն ու կոնտրաստը միմյանց լրացնում են. կոնտրաստը շեշտում է նյուանսի մեղմությունը, իսկ նյուանսը մեղմում է հակադրության կոպտությունը:

XVII դարի իսպանացի նկարիչ Դիեգո Վելասկեզը (1599-1660) վալյորային գեղանկարչության առաջին վարպետներից է: Նրա կտավները փայլատակում են միևնույն գույնի բազմաթիվ նրբերանգ-նյուանսներով: Պայծառտաք, սառը-խուլ, մուգ և բաց երանգները գրեթե միշտ լուսավորված են և կազմում են զուսպ ու նրբին ներդաշնակություն:

Դոմինանսը հորինվածքներում կատարում է իմաստային կենտրոնի դեր, որի առկայությամբ է պայմանավորվում ողջ ստեղծագործության ընկալումը:

Հորինվածքի կենտրոնի կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հարթության տեսողական ընկալման առանձնահատկությունները: Սովորաբար դոմինանտը կառուցվում է հարթության, այսինքն՝ պատկերային դաշտի ակտիվ հատվածում՝ կենտրոնական մասում:

Օրինակ՝ հայկական մանրանկարչության գլուխգործոց Հաղպատի ավետարանի վերլուծության մեջ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Մաթևոսյանը գրել է. «Մուտք երուսաղեմ» թեմայի մեկնաբանման մեջ ծաղկող Մարգարեն կիրառել է հորինվածքի կայուն տիպը, որտեղ կոմպոզիցիոն հիմնական առանցքներն ուղիղ անկյան տակ փոխհատվում են ստեղծագործության երկրաչափական կենտրոնում: Մանրանկարի դոմինանտ է ընտրված Քրիստոսի օրհնող աջը, որը պատկերված է նրա մարմնի համամասնություններից ավելի մեծ»⁶: Հորինվածքի կենտրոնի տեղաշարժը նկարին հաղորդում է լարվածություն և արտահայտչականություն:

Հորինվածքը պատկերավորելու ճանապարհին յուրաքանչյուր վարպետ ընտրում է իրեն ավելի հոգեհարազատ եղանակը: Տարբեր են նաև կոմպոզիցիա կազմելու մեխանիզմները: Սակայն արվեստում պատկերները ծնվում են հորինվածքի ձևի կարգավորման միջոցով: Գեղեցիկը ենթադրում է ամբողջականություն, տարրերի ներդաշնակություն և հստակություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արվեստում պատկերները ծնվում են հորինվածքի ձևի կարգավորման միջոցով: Դրա համար անհրաժեշտ են տեսական գիտելիքներ կոմպոզիցիաների տիպերի, դրանց բաղկացուցիչ մասերի հատկանիշների ու նաև հորինվածքների կառուցման հիմնական գեղարվեստական միջոցների վերաբերյալ:

Քանալի բառեր – կոմպոզիցիա, պարփակված, բաց, համաստորադասություն, միասնություն, ամբողջականություն, հավասարակշռություն, ռիթմ, համաչափություն, մասշտաբ, սիմետրիա, ասիմետրիա, դինամիկա, ստատիկա, նույնություն, նյուանս, կոնտրաստ, դոմինանտ:

ОСОБЕННОСТИ КОМПОЗИЦИОННЫХ ПОСТРОЕНИЙ

САТЕНИК МЕЛИКЯН

В изобразительном искусстве произведение рождается благодаря правильному построению замысла. Это, в свою очередь, предполагает знания в

⁶ Մաթևոսյան Կ., Հաղպատի ավետարան, Երևան, «Նաիրի», 2012, էջ 20:

области композиционных построений, их типов и особенностей, которые необходимы для грамотного воплощения идеи.

Ключевые слова – композиция, открытая, замкнутая, взаимоподчинение, общность, целостность, равновесие, ритм, соотношение, масштаб, симметрия, асимметрия, динамика, статика, схожесть, нюанс, контраст, доминанта.

THE CHARACTERISTICS OF COMPOSITIONAL FORMS

SATENIK MELIKYAN

In art, images are produced by organizing and distributing the form of a concept. Theoretical knowledge of the types of composition, properties of the elements or ingredients in the work as well as the basic principles of organization or principles of art are of necessity to realize the composition.

Key words – composition, close composition, open composition, subordination, interdependence, unity, integrity, equilibrium, rhythm, uniformity, scale, symmetry, asymmetry, dynamics, statics, sameness, nuance, contrast, dominant.

**ՀՆԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՆԸ ԵՎ ՀԻՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ.
ԱՐԻՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐ
(ՊԱՏՄԱՄՇՆԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)**

ՄԱՋԻԴ ՅԱԶԴԱՆՓԱՆԱՀ (ԻՐԱՆ)

Գրավոր աղբյուրների սակավությունը դժվարացնում է հնադարյան Իրանի և Հին Պարսկաստանի պատմության անաչառ, բազմակողմանի խոր ուսումնասիրությունը, որն անհամեմատ ավելի հեշտ է Հին Եգիպտոսի, Միջագետքի կամ առավել ևս Հին Հունաստանի և Հին Հռոմի պատմությանն անդրադառնալիս: Եվ միանգամայն իրավացի էր վերջերս կյանքից հեռացած ամերիկացի խոշոր իրանագետ, Հարվարդի համալսարանի պատվավոր պրոֆեսոր Ռիչարդ Ֆրայը, երբ գրում էր. «Որքան էլ դա պարադոքսալ թվա, սակայն Հին Պարսկաստանի պատմությանը վերաբերող աղբյուրների պակասությունը նաև հարաբերական առավելություն ունի, որովհետև Իրանի հեռավոր անցյալի մասին ցանկացած, թեկուզ և չնչին, տեղեկություն ձեռք է բերում առավել մեծ նշանակություն, քան, օրինակի համար, գրավոր աղբյուրներով շատ ավելի հարուստ ու լավ լուսաբանված հին Եգիպտական, անտիկ հունական և հռոմեական պատմության հետ կապված, դրան առնչվող նյութական մշակույթի որևէ նորահայտ առարկա, արձանագրություն կամ առանձին բառ»¹:

Իրանի պատմագրությունը գալիս է դարերի խորքից, բայց միայն հին սեպագիր արձանագրությունների վերծանության շնորհիվ, որը շուրջ երկու հարյուրամյակ պահանջեց, հնարավոր դարձավ մոտիկից ծանոթանալ պարսիկների վաղեմի պատմությանն ու հինավուրց մշակույթին: Իր դերը կատարեց նաև 1771 թվականին Փարիզում «Ավեստայի»՝ զրադաշտական կրոնի սրբազան, դեռ Աքեմենյանների դարաշրջանում աստիճանաբար ձևավորված և վերջնական տեսքի բերված ձեռագիր ժողովածուի ֆրանսերեն թարգմանության հրատարակումը: Ինչպես հայտնի է, «Ավեստայի» սկզբնական տեքստը մոտ երկու միլիոն տող էր պարունակում և բաժանված էր հազար երկու հարյուր գլուխների: Տողերը գրված էին չխամրող ոսկե ներկով, կովերի

¹ Տե՛ս **Frye Richard**. The History of Ancient Iran. München, C. H. Beck, Vesladsbuchhandlung, 1984, p. 13.

կաշվից պատրաստված և հատուկ մշակված 12000 մեծադիր մագաղաթների վրա: Անգին ձեռագրերը պահվում էին պարսից արքաների մայրաքաղաք Պերսեպոլիսի զրադաշտական գլխավոր տաճարում: Սակայն պարտության մատնելով Աքեմենյան վերջին թագավոր Դարեհ Երրորդին և թալանելով Պերսեպոլիսը՝ Ալեքսանդր Մակեդոնացին հրամայեց ավերել, հողին հավասարեցնել կրակապաշտների գլխավոր սրբավայրը, այրել ձեռագիր «Ավեստան» և քանոն տալ դրա մոխիրը: Երբ հարյուրամյակներ անց՝ մ. թ. III դարում՝ արդեն Սասանյանների ժամանակ, զրադաշտական քրմերն ու մոզերը որոշեցին հիշողությամբ վերականգնել սրբազան տեքստը, դա նրանց հաջողվեց միայն անդառնալի կորստյան գնով: Նոր «Ավեստան» քառակի կարճ էր բնօրինակից, իսկ հին տողերից շատերն աղավաղված էին:

«Ավեստայի» էջերում Իրանը կոչվել է «Aryan» կամ «Aryanshahr», որ նշանակում է արիների կամ արիացիների երկիր, պետություն: Հետագայում պահլավերենի վերածվելով՝ ավեստական «Aryan» բառը փոխակերպվել, դարձել է «Eran»: Հենց այդ բառից է ծագել «Իրան» բառը, որը միջնադարում գրեթե մոռացության էր տրվել:

«Ավեստայի» քսաներորդ ենթագլխի՝ «Վանդիդադի» («Օրենք դևերի դեմ») համաձայն՝ Իրանն Ահուրամազդայի ստեղծած 16 երկրներից առաջին և լավագույն երկիրն էր: Իրանական հին առասպելներում հիմնական, կարևոր դեպքերի ու իրադարձությունների մեծ մասը տեղի է ունենում հենց Իրանում: Զրադաշտականների սրբազան գրքերից մեկում՝ «Բոնդահեշում» («Հիմքերի արարում») ասված է. երբ գերագույն աստված Ահուրամազդայի պայծառատես մարգարեն՝ Զրադաշտը, կրոնական իր ուսմունքն ստեղծեց, նա Իրանում կատարեց երկրպագության և օրհնության առաջին ծեսը: Ըստ «Ավեստայի»՝ Իրանն աշխարհի ամենասրբազան, աստվածային վայրն է:

Իրանում գտնվել են բազմաթիվ կոթողներ, որոնք հազարամյակների պատմություն ունեն: Քաշանի ու Դամեղանի բլուրներից մինչև Մարլիկ և Հասանլու, Քավիրի անապատներից մինչև Զագրոսի լեռները սփռված են Իրանի փառահեղ անցյալի վկաները:

Զրադաշտական երկրի մի հատվածն էլ Քերմանշահի մարզն էր, որը ներկայումս գտնվում է Իրանի արևմուտքում, հյուսիսից հարում է Քուրդիստանի նահանգին, արևելքից՝ Համադանի, հարավ-արևելքից՝ Լուրիստանի, հարավից՝ Իլամի մարզերին, իսկ արևմուտքից սահմանակից է հարևան Իրաքին: Քերմանշահն ունի 14 քաղաք: Մարզային համանուն կենտրոնից բացի, դրանք են Արևմտյան Իսլամաբադը, Փավեն, Սալաս Բաբաջանին, Զավան-

րուղը, Դալահուն, Ռավանսարը, Սարփուլ-Չահաբը, Սանդեր Քալիային, Սահենն, Ղասրե Շիրինը, Քանգավարը, Արևմտյան Գիլանը և Հերսինը:

Այն վայրը, որ այսօր Քերմանշահ է կոչվում, իր բնական պայմանների, գետառատ բերրի հողերի, աշխարհագրական դիրքի և էլամի ու Միջագետքի այլ երկրների հետ հարևան լինելու պատճառով հնուց ի վեր քաղաքակրթության օրրաններից է եղել, ինչու և մշտապես հայտնվել է ժամանակի հզոր պետությունների ուշադրության կենտրոնում: Հեռավոր անցյալում Քերմանշահում բանուկ մի երթուղի կար, որն Իրանի բարձրավանդակը միացրել է Միջագետքի հովտին, իսկ մարերի ժամանակ միմյանց է կապել Բաբելոնն ու Հեկթաթան հին մայրաքաղաքը: Սելևկյանների օրոք այս ճանապարհը «հարյուրադարպաս քաղաք» Դամեղանը, իսկ պարթևների ժամանակ՝ մայրաքաղաք դարձած Կոնսիփոնը (Տիզբոն) միացրել է Քերմանշահին և այժմ Բաղդադն է միացնում Թեհրանին: Հնագետներից շատերն այս ճանապարհն անվանել են «Ասիայի դարպաս»²:

Քերմանշահում եղած քաղաքների ստեղծման, դրանց տեղաբաշխման գործում, անցանելի բանուկ ճանապարհներից, կլիմայական բարենպաստ պայմաններից, հասարակական-քաղաքական ու տնտեսական հանգամանքներից բացի, նշանակալից դեր է խաղացել նաև ջրային աղբյուրների առկայությունը: Քերմանշահ, Արևմտյան Իսլամաբադ, Սարփուլ-Չահաբ, Սահեն և Ղասրե Շիրին քաղաքները կառուցվել են գետերի ափերին և գտնվել Մետաքսի ճանապարհին:

Երբ արիները մուտք գործեցին Իրան, նրանք բաժանվեցին տարբեր տոհմերի, տարբեր ցեղերի ու ցեղախմբերի, որոնցից յուրաքանչյուրը երկրի մի մասը գրավեց: Հնադարյան այդ էթնոսներից պատմական հերթականությամբ կարելի է առանձնացնել մարերին, փարսիներին ու պարթևներին:

Սակայն մինչև այդ՝ մեր թվարկությունից երեք, նույնիսկ չորս հազարամյակ առաջ, Իրանի բարձրավանդակում էլամացիներ, կասիտներ և լուլուբեներ կոչվող ցեղեր էին ապրում, որոնք հիմնականում բնակեցնում էին Միջագետքի արևելյան կողմերը, Չագրոսի լեռներն ու լեռնահովիտները, և որոնց մասին որոշ տեղեկություններ են հաղորդում մերձավորարևելյան հին թագավորություններից, մասնավորապես Շումերից մեզ հասած վավերագրերը:

Մարերից առաջ Չագրոսում ապրած ցեղախմբերից ամենամեծաթիվն էլամացիներն էին, որոնք մ.թ.ա. III հազարամյակում իջան լեռներից, գրա-

² Տե՛ս **Herzfeld Ernest**. Am Tor von Asian, Berlin, Universität zu Berlin, 1920, S. 53:

վեցին Ջագրոսի հովտում, Կերքա գետափին հնում կառուցված Շոշ (Շուշուն, Շուշեն) քաղաքը, որտեղ էլ հետագայում ստեղծեցին էլամ կամ էլամ կոչված երկիրը: Հյուսիսում էլամացիների հարևաններն էին այստեղ մ. թ. ա. II հազարամյակից բնակություն հաստատած և նույն հազարամյակի կեսերին Բաբելոնը նվաճած, հմուտ հեծյալների համբավ ունեցող կասիտների ցեղախմբերը, որոնց էլամացիներն անվանել են «կասի» կամ «կաշու»: Յուրացնելով Բաբելոնի մշակույթը՝ վերջիններս մի քանի հարյուր տարի իշխել են Հարավային Միջագետքում³: Լուրիստանում ու Հերսինում այս ցեղախմբին պատկանող մի շարք կոթողներ են պահպանվել:

Ինչ վերաբերում է Հյուսիսային Ջագրոսում բնակվող լուլուբեներին, ապա լեզվաբան-արևելագետներն առավել հավանական են համարում, որ նրանք խոսում էին խուրիների (խուրիներ, հուրիներ) լեզվով⁴: Մեր թվարկությունից առաջ՝ մոտավորապես 1200 թվականին, էլամի արքային հաջողվեց հաղթել լուլուբեներին: Աքքադի թագավոր Նարամսինն իր թողած սեպագիր արձանագրություններից մեկում առաջին անգամ, թեև հպանցիկ, հիշատակել է նաև լուլուբեներին: Արձանագրությունից պարզվում է, որ նա նույնպես պատերազմել է լուլուբեների հետ ու հաղթել նրանց: Բայց Նարամսինի մահից հետո լուլուբեներն իրենք են հարձակվել Աքքադի վրա և վերջինիս ծանր պարտության մատնել: Հետագայում ևս Աքքադի թագավորները չեն կարողացել դիմադրել այդ ցեղախմբին⁵:

Ասորական աղբյուրները վկայում են, որ լուլուբեների պետությունը կազմավորվել է մ.թ.ա. II հազարամյակում: Սարփուլ-Ջահաբի արձանագրության մեջ Անոբանինին իրեն լուլուբեների արքա է կոչում. «Անոբանինին՝ լուլուբեների արքան, իր պատկերը քանդակեց Բադիր (Փաթիր) լեռան վրա»⁶: Նույն արձանագրության մեջ խոսվում է նաև մեկ այլ պետության մասին, որ խուրիներն ու արքադացիները նվաճել էին լուլուբեների զինված ուժերի

³ Տե՛ս **Սայբս Փերսի**, Իրանի պատմությունը, թարգմանիչ՝ Մոհամմադ Թադի Փախրեդայի, Թեհրան, «Դոնյայե քեթաբ» հրատարակչություն, 1987, էջ 102:

⁴ Տե՛ս **Дьяконов Игорь**. История Мидии от древнейших времен до конца IV века до н. э. М.-Л., Издательство АН СССР, 1956, с. 228:

⁵ Տե՛ս **Բեհմանեշ Ահմադ**, Կենտրոնական Ասիայի հին ժողովուրդների պատմությունը, Թեհրան, Թեհրանի համալսարանի հրատարակչություն, 1995, էջ 54:

⁶ Տե՛ս **Gropp Gerd**. Die parthische Inschrift von Sarppol-e-Zahab, Berlin, Universität zu Berlin, Veröffentlichung, 1986, S. 194:

օժանդակությամբ⁷: Հավանաբար, Բադիր լեռն ու նրա շրջակայքն ընկած են եղել լուլուբենների գրաված նոր տարածքների սահմանի վրա, և հենց այստեղ են նրանք ջախջախել թշնամուն: Պատմական տվյալ իրադարձությունը շատ կարևոր էր արքայի համար, քանի որ իր արձանագրության մեջ նա անիծում է նրանց, ովքեր կփորձեն ջնջել կամ եղծել քարակուփ այդ գիրը. «Ով ոչնչացնի իմ արձանագրությունը, թող Ինանուփ, Բելի, Բելիթի, Իշտարի, Սինի և Շամաշի անեծքն ու նզովքը հասնեն նրա սերունդներին, և թող նրանք կործանվեն»⁸: Լեռնաբնակ լուլուբենների ստեղծած անկախ պետությունը բավականին ընդարձակ և կենսունակ երկիր էր, բայց այն կարճատև պատմություն ունեցավ՝ մ.թ.ա. IX դարից հետո լուլուբենների մասին այլևս տեղեկություններ չունենք:

Մեր թվարկությունից առաջ՝ II հազարամյակի կեսերին՝ մոտավորապես 1500 թվականին, Իրանի լեռնաշխարհ են խուժում Կենտրոնական Ասիայից եկած քոչվոր ցեղերը: Դրանք Միջագետքի սեմական լեզուներից տարբերվող՝ հնդիրանական նախաբարբառներով խոսող արիները կամ արիացիներն էին, որոնց մի մասը բնակություն հաստատեց ու նստակյաց դարձավ Իրանական բարձրավանդակի արևմտյան հատվածում, որտեղ շուտով հիմնեց Միտաննի կոչված պետությունը, իսկ մյուս մասը՝ հարավային հատվածում, որտեղ բնակվում էին կասիտները: Սակայն արիների հիմնական զանգվածը շրջանցեց Իրանը, կտրուկ դեպի հարավ շրջվեց, անցավ Հինդուկուշն ու Հյուսիսային Հնդկաստան մտավ:

Մեր թվարկությունից առաջ՝ 1-ին հազարամյակի սկզբին, նույն ճանապարհով Իրան ներխուժեց եկվոր արիների երկրորդ, ըստ որում շատ ավելի մեծաթիվ ու հզոր ալիքը, որը բաղկացած էր իրանալեզու տարբեր ցեղերից: Բայց եթե դրանցից շատերը՝ սողդերը, սկյութները, սակերը, բակտրիացիները, պարթևները և այլք, պահպանեցին իրենց քոչվորական ապրելակերպը կամ հեռացան Իրանական լեռնաշխարհից, ապա առավել խոշոր ու համախմբված ցեղերից երկուսը՝ մարերը և փարսիները, հաստատվեցին Ջագրոսի լեռնահովիտներում, խառնվեցին տեղացի ժողովուրդների հետ՝ յուրացնելով ոչ միայն նրանց կենցաղային սովորույթները, այլև մշակութային ավանդույթներն ու կրոնական համոզմունքները⁹: Մարերը բնակություն հաստատե-

⁷ Տե՛ս **Ռաշիդ Յասեմի Ղոլամհոսեյն**, Քերմանշահն ու նրա հնագույն քաղաքակրթությունը, Թեհրան, «Էբեն սինա» հրատարակչություն, 1968, էջ 263:

⁸ Տե՛ս **Gropp Gerd**. Die parthische Inschrift von Sarpool-e-Zahab, S. 195:

⁹ Տե՛ս **Գիրշման Ռոման**, Իրանի արվեստը մարերի և Աքեմենյանների ժամանակաշրջանում, թարգմանիչ՝ Իսա Բեհնամ, Թեհրան, «Նաշրե քեթաբ» հրատարակչություն,

ցին Հեկեթանի մերձակայքում, որտեղ մ. թ. ա. VII դարի սկզբին հիմնեցին իրենց անկախ պետությունը, իսկ փարսիները՝ Էլամի դաշտավայրերում և Պարսից ծոցին հարող Լեռնային շրջանում, որը հետագայում կոչվեց Փարս:

Աքեմենյանների արձանագրություններում մարերի երկիրը Մարաստան էր կոչվում, իսկ հույն պատմիչներն այն Միդիա էին անվանում: Ասորական սեպագրերում մարերի մասին առաջին անգամ հիշատակվում է մ. թ. ա. 836 թվականին՝ Սայմանասար Երրորդի գահակալության ժամանակ¹⁰: Թե երբ են մարերը մուտք գործել Իրան, ստույգ հայտնի չէ, սակայն, ամենայն հավանականությամբ, նրանք Իրան են անցել մ. թ. ա. IX դարում: Մարերն իրանական լեզուներով խոսող արիների միակ ցեղախումբն էր, որ Աքեմենյաններից առաջ թագավորություն ստեղծեց: Մարերի երկիրը՝ Մարաստանը, իր մեջ էր առնում Իրանի կենտրոնական և արևմտյան հատվածները և Էլամից ու Փարսից մինչև Ջագրոսի լեռները հասնում: Մարերի պետության ստեղծումն ու հզորացումը, չնայած երկրի կարճատև գոյությանը, պատմական կարևոր իրադարձություն էր, քանի որ առաջին անգամ լինելով՝ գտնվեց մի ժողովուրդ, որը կարողացավ խաթարել Արևմտյան Ասիայում սեմական ժողովուրդների տիրապետությունն ու հաստատել արիների իշխանությունը:

Մարերի պատմության վաղ շրջանների մասին շատ տեղեկություններ չկան, բացառությամբ նրա, որ մինչև մ. թ. ա. 550 թվականը երկրում իշխում էր տեղական հզոր մի հարստություն: Մարերի թագավորներից Հերոդոտոսը հիշատակում է չորսին՝ Դեյոկա (Դայաուքու), Փրաորտ (Փրավարտիշ), Քիաքսար (Խվախշար) և Ասթիագ (Իշթուվեգու)¹¹: Ինչ վերաբերում է մարերի պետության հիմնադրմանը, ապա այդ մասին ևս տեղեկանում ենք Հերոդոտոսի «Պատմությունից», համաձայն որի մարական արքայական տան հիմնադիր Դեյոկայի հետնորդի՝ Փրաորտի օրոք մարերն իրենց ենթարկեցին փարսիներին, իսկ Քիաքսարը մ. թ. ա. 612 թվականին հիմնովին ավերեց Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Մարաստանը դաշնության պայմանագիր կնքեց Նորբաբելոնյան թագավորության զորեղ արքա Նաբուգոդոնոսոր Երրորդի հետ, որին Քիաքսարը կնության է տալիս իր դստերը: Մարերի ու բաբելոնացիների միացյալ ուժերը շուտով գրավում են ողջ Ասորեստանն ու

1961, էջ 311:

¹⁰ Տե՛ս **Հուվեր Քելման**, Իրանն ու իրանական քաղաքակրթությունը, թարգմանիչ՝ Հասան Անուշե, Թեհրան, «Ամիր քաբիր» հրատարակչություն, 1999, էջ 33:

¹¹ Տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն, գիրք Ա, թարգմանիչ՝ Հադի Հեդայաթ, Թեհրան, Թեհրանի համալսարանի հրատարակչություն, 2004, էջ 95:

Հյուսիսային Միջագետքը՝ դառնալով Մերձավոր Արևելքի խոշորագույն տերությունը¹²: Քիաքսարի մահվանից հետո Մարաստանում իշխանության ղեկի մոտ կանգնեց նրա որդին՝ Ասթիագը (մ. թ. ա. 585-550 թթ.)՝ մարերի վերջին թագավորը:

Այն ուժը, որ պիտի կործաներ մարական անկախ պետականությունը, կյանք առավ մարերի տիրապետության տակ գտնվող հարավարևելյան կողմերում՝ Փարս կոչված վայրում: Ասորական արձանագրություններում փարսիները, ինչպես և մարերը, առաջին անգամ հիշատակվել են մ. թ. ա. IX դարում: Մարերի նման նրանք նույնպես տրոհված էին տարբեր տոհմերի, որոնցից մեկն էլ Աքեմենյանների փառահեղ հարստությունը կյանքի կոչած Փասարգադյան տոհմն էր:

Մեր թվարկությունից առաջ՝ 550 թվականին, Կյուրոսը՝ փարսիների բանակի արժանավոր հրամանատարն ու զորավարը, պատերազմ հայտարարեց Մարաստանին ու երկարատև, իրար հաջորդած ևս մի քանի պատերազմներից հետո գրավեց մարերի մայրաքաղաք Հեկեթանը: Երբ Կյուրոսին հաջողվեց հաղթել մարական թագավորներին, երկրի ընդարձակման խնդիր չառաջացավ, որովհետև մարերն ու փարսիները ցեղակիցներ էին: Պարտված մարերի և հաղթանակած Աքեմենյանների միջև մեծ տարբերություններ կամ սուր հակասություններ գոյություն չունեին: Պատահական չէ, որ մի քանի տարի տևած պատերազմից հետո, Փասարգադի ճակատամարտի ժամանակ դավաճանության շնորհիվ գերի վերցնելով քաջ Ասթիագին, վերջինիս մինչ այդ պարտված Կյուրոսը նրան ոչ թե ստորացրեց, այլ պատվավոր տեղ ու դիրք տվեց իր կայսրության մեջ:

Կյուրոս Երկրորդ Մեծը (մ. թ. ա. 550-529 թթ.) դառնում է Հին Արևելքի առավել հզոր, նաև բազմացեղ կայսրություններից մեկի՝ Էգեյան ծովից մինչև Ինդոս գետը, Հայաստանից մինչև Նուբիա տարածված Աքեմենյան թագավորության հիմնադիրը, որի մասին դեռ իր կենդանության օրոք զանազան լեգենդներ են հյուսվել: Այսպես, շատերը հավատացած էին, որ Հռոմի առասպելական հիմնադիրների՝ Ռեմի և Ռոմուլի նման Կյուրոսին ևս կերակրել ու կաթ է տվել մի գթասիրտ գայլ, և որ Սարգոն Առաջինի պես նա ևս խնամվել ու դաստիարակվել է մի ինչ-որ աղքատ հովվի կողմից: Կյուրոսն այն անհատներից էր, ով կարծես աշխարհ էր եկել՝ աշխարհին տիրանալու համար, ով իսկապես մեծ արքային վայել պերճություն ու հզորություն ուներ: Տարբեր

¹² Նույն տեղում, էջ 95-101:

երկրների վրա արշավելիս նա երբեք կոտորած ու արյունահեղություն չէր անում, հրամայում էր իր զինվորներին, որ մարդկանց նկատմամբ սիրալիր լինեն: Նա անթերի ու կատարյալ մարդ էր, որ կրոնական մոլեռանդություն չուներ, բոլոր կրոններն ու վարդապետությունները հարգում էր: Նա վերականգնեց Երուսաղեմը և հրեաներին բաբելոնյան գերությունից հայրենիք վերադառնալու հնարավորություն տվեց: Ուզում էր, որ իր տիրապետության տակ գտնվող երկրներում մարդկանց մեջ հավասարություն հաստատվի: Այդ մասին է վկայում թեկուզ Բաբելոնում Կյուրոսի հրապարակած նշանավոր ճառը, որի սեպագիր տեքստը, բարեբախտաբար, պահպանվել է:

Կյուրոսն Իրանի բարձրավանդակի հյուսիսարևելյան շրջաններում Ամուդարյայի ափերին ապրող սկյութական քոչվոր ցեղախմբերի, մասնավորապես մասագետների դեմ բազմաթիվ դաժան և արյունահեղ կռիվներ ունեցավ, որոնցից մեկի ժամանակ վիրավորվեց ու մ. թ. ա. 529-ին վախճանվեց: Ինչպես գրված է Հերոդոտոսի «Պատմության» առաջին գրքի 211 հատվածում. «պարսկական զորքի մեծ մասն ընկավ ռազմի դաշտում, իսկ ինքը՝ Կյուրոսը, սպանվեց»¹³: Հերոդոտոսը փոքր-ինչ հեզնական տոնով վերապատմում է մասագետների տարածած այն առասպելը, համաձայն որի նրանց թագուհին՝ Տոմիրիսը, հրամայել է գլխատել Կյուրոսի դին և արյամբ լի կաշվե պարկի մեջ սուգելով վերջինիս գլուխը՝ բացականչել. «Թեպետ ես ողջ մնացի ու մեծ հաղթանակ տարա, սակայն դա ինձ չի ուրախացնում: Քեզ հետ պատերազմ երբեք չեմ փնտրել, դու ինքդ եկար և խարդավանքով սպանեցիր որդուս: Արյուն էիր ուզում՝ դե հիմա հագեցիր սեփական արյամբ»¹⁴:

Կամբյուսես Երկրորդը (մ. թ. ա. 529-522 թթ.) Կյուրոս Մեծի ավագ որդին էր ու թագաժառանգը: Նրանից բացի, Կյուրոսը Բարդիա (Հերոդոտոսի մոտ և հունական այլ աղբյուրներում՝ Սմերդիս) անունով մի որդի էլ ուներ, որի սպանության վերաբերյալ Հերոդոտոսի «Պատմության» և Բեհիսթունի վիմագրության մեջ տարբերություններ կան: Նկատի ունենալով, որ Բեհիսթունի արձանագրությունը պաշտոնական վկայագիր է և Աքեմենյան արքաներից մնացած առավել հավաստի աղբյուր, հենվում ենք Դարեհ Մեծի գրության վրա, որտեղ կարդում ենք. «Այս Կամբյուսեսը Բարդիա անունով մի եղբայր ուներ, այն ժամանակ Կամբյուսեսն իր եղբորն սպանեց: Ժողովուրդը չգիտեր, որ Բարդիան սպանվել է, Կամբյուսեսը գնաց Եգիպտոս: Դրանից հետո մար-

¹³ Նույն տեղում, էջ 158:

¹⁴ Նույն տեղում, էջ 159:

դիկ ապստամբեցին, ու թե՛ երկրում, թե՛ Փարսում, Միդիայում և այլ երկրներում սուտը շատացավ... Այդ ժամանակ մի մոգ՝ Գաումատա անունով, Փասարգադում ապստամբեց: Նա, ժողովրդին խաբելով, ասում էր. «Ես Կյուրոսի որդին, Կամբյուսեսի եղբայրը՝ Բարդիան եմ, ուստի բոլորն ապստամբեցին և, Կամբյուսեսից հեռանալով, Գաումատայի կողմնակիցները դարձան (թե՛ փարսիները, թե՛ մարերը և թե՛ մյուս ժողովուրդները): Նա թագավորությունն իր ձեռքն առավ ու հետո Կամբյուսեսին սպանեց... Ոչ ոք չկար, որ թագավորությունը Գաումատայի ձեռքից խլեր: Ժողովուրդը նրանից շատ էր վախենում: Նա մահապատժի էր ենթարկում բոլոր նրանց, ովքեր ճանաչում էին իսկական Բարդիային, որպեսզի ոչ ոք ճշմարտությունը չիմանա: Ոչ ոք ուժ, կամք ու կարողություն չունեի, որ Գաումատա մոգի դեմ խոսեր, մինչև որ ես վրա չհասա: Այն ժամանակ ես Ահուրամազդային աղաչեցի և նրա օգնությունը հայցեցի: Ահուրամազդան ինձ սատարեց, ու ես իմ մարդկանց հետ Գաումատա մոգին և նրա հետևորդներին սպանեցի: Թագավորությունը նրանից առա և Ահուրամազդայի օրհնությամբ թագավոր դարձա: Ահուրամազդան թագավորությունն ինձ վստահեց»¹⁵:

Մեր թվարկությունից առաջ՝ 522 թվականին, Դարեհը, որն ընդամենը 28 տարեկան էր, երկրի գերագույն յոթ ազնվացեղ ավագների որոշմամբ նստեց Իրանի գահին, և Կյուրոսի ստեղծած կայսրության պետական կառուցվածքը նրա հսկայական և բազմակողմանի տաղանդի շնորհիվ ամրապնդվեց ու բարենորոգվեց, իսկ տնտեսությունն ինտենսիվացավ և աննախադեպ բարձր մակարդակի հասավ: Դարեհի հրամանով տերության ողջ տարածքում շինարարական ակտիվ աշխատանքներ էին կատարվում, երկրի տարբեր շրջաններն իրար հետ կապող մայրուղիներ ու ճանապարհներ կառուցվում:

Բեհիսթունի արձանագրության առաջին տողերում Դարեհն ինքն իրեն այսպես է ներկայացնում. «Ես, Դարեհ Մեծ արքաս, արքաների արքան, Փարսի արքան, այլ երկրների արքան, Վշտասպի որդին և Աքեմենյան Արշամի թոռն եմ»¹⁶: Ապա շարունակում է. «Մենք Աքեմենյան ենք կոչվում, որովհետև վաղուց ի վեր ազնվազարմ ենք և բազմաթիվ արքաների սերմից ենք սերում»¹⁷:

¹⁵ Տե՛ս **Հինթա Վալթեր**, Դարեհն ու իրանցիները, թարգմանիչ՝ Փարվիզ Ռաջաբի, Թեհրան, «Մահի» հրատարակչություն, 2007, էջ 13-14:

¹⁶ Նույն տեղում, էջ 12:

¹⁷ Նույն տեղում:

Մեր թվարկությունից առաջ՝ 486 թվականին, Դարեհը մահացավ: Աքեմենյան արքաների իշխանությունը շարունակվեց մինչև Դարեհ Երրորդը (մ. թ. ա. 335-330 թթ.), որի կարճատև գահակալությունը նշանավորվեց դեռ տակավին երիտասարդ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ վարած անհաջող կռիվներով: Դրանցից առաջինը տեղի ունեցավ մ. թ. ա. 334 թվականին, երբ Ալեքսանդրը, գլխավորելով հունա-մակեդոնական միացյալ զորքերը, անցավ Հելլեսպոնտոսով և Գրանիկի ափին ջախջախեց պարսկական բանակը: Մեկ տարի անց՝ մ. թ. ա. 333 թվականի նոյեմբերին, Կիլիկիայի առափնյա ճանապարհով դեպի Ասորիք շարժվելիս Իսս քաղաքի մոտ Մակեդոնացին կրկին պարտության մատնեց Դարեհ Երրորդին՝ գերի վերցնելով նրա ընտանիքը: Ինքը՝ Դարեհը, մնացած զորքով նահանջեց դեպի Եփրատ գետ: Վերջապես, մ. թ. ա. 331 թվականին Դարեհ արքան Ալեքսանդրի դեմ դուրս եկավ Նինվեից ոչ հեռու՝ ժամանակակից Իրաքի Էրբիլ քաղաքի մերձակայքում գտնվող Գավգամելայի հարթավայրում և նորից պարտություն կրեց: Այնուհետև հունա-մակեդոնական զորքերը դեպի հարավ շարժվեցին, առանց դիմադրության գրավեցին Շոշն ու Բաբելոնը, ապա հեշտությամբ նվաճեցին Պարսկաստանի մայրաքաղաք Պերսեպոլիսը: Հետապնդելով Դարեհին՝ Ալեքսանդրը հասավ Բակտրիա, որտեղ և սպանեց իր ռիսերիմ թշնամուն՝ վերջ դնելով Աքեմենյան աշխարհակալ հարստությանն ու ինքն իրեն Իրանի թագաժառանգ և «Ասիայի տիրակալ» հռչակելով:

Անցավ յոթ տարի, և մ. թ. ա. 323 թվականին տեղաճարակ տենդից Բաբելոնում վախճանվեց նաև ինքը՝ 33-ամյա Ալեքսանդր Մակեդոնացին: Նրա զինակիցների ու ընտանիքի միջև ժառանգության շուրջ կռիվ սկսվեց, որը տասնհինգ տարվա պատերազմի վերածվեց (հայտնի է որպես «դիադոքոսների պատերազմ»), և որին զոհ գնացին Ալեքսանդրի անմիջական ժառանգորդները՝ երկու որդիները, մայրն ու կանայք: Նրա գրաված տարածքներն ու երկրները բաժանվեցին զորավարների միջև, այդպես էլ չիրականացավ մակեդոնական կամ իրանա-մակեդոնական մեծ, միացյալ կայսրություն ստեղծելու նրա երազանքը:

Դիադոքոսների պատերազմի արդյունքում Մակեդոնացու զինակիցներից մեկին՝ Սելևկոսին, հաջողվեց գրավել Արևմտյան Ասիայի մեծագույն մասը, որից հետո նա Սելևկյանների հարստության առաջնորդն ու Սելևկյան-

ների պետության հիմնադիրը ճանաչվեց՝ արժանանալով «Փիլոսոփիայի»՝ «Նվաճողի» տիտղոսին¹⁸:

Սելևկյանները որդեգրել էին Ալեքսանդր Մակեդոնացու՝ Միջերկրական ծովից մինչև Ինդոս գետն ընկած լայնարձակ տարածքի վրա տարբեր ցեղերի ու մշակույթների ոչ միայն մերձեցման, այլև միաձուլման գաղափարը: Ինչպես հայտնի է, Մակեդոնացու իրանական արշավանքների ժամանակ նրան ուղեկցում էր աշխարհագրագետներից, պատմաբաններից և գրագիրներից բաղկացած մի մեծ ջրախումբ, որը ոչ միայն ծանոթանում էր ճանապարհին հանդիպող ժողովուրդների մշակույթին, այլև օրեցօր գրի էր առնում, արձանագրում տեսածն ու լսածը: Նույն ոճով էին գործում նաև Սելևկյան առաջին թագավորները, որոնց իշխանության օրոք արագորեն զարգացող և կառուցապատվող քաղաքներում աստիճանաբար աճում էր խառն ամուսնություններից ծնված հելլենացած պարսիկների և պարսկացած հույների թիվը:

Դեռ Ալեքսանդրի կենդանության օրոք հունարենը պարտադիր տարածում ստացավ Իրանում: Նրա հետ այստեղ եկած ուսուցիչների հսկողությամբ այդ լեզվին տիրապետեցին ազնվական ընտանիքներին պատկանող ավելի քան 30000 պարսիկ պատանիներ ու երիտասարդներ: Որպես պաշտոնական լեզու՝ հունարենը շարունակում էին գործածել նաև Սելևկյանների իշխանության շրջանում, և միայն պարթևների ժամանակներից այն փոխարինվեց միջին պարսկերենով կամ պահլավերենով, որի հիմքում ընկած էր արմատապես վերամշակված և կատարելագործված հին պարսկերենը:

Քաղաքական-հասարակական և տնտեսական նույն գործոններն ու հանգամանքները, որոնք աստիճանաբար թուլացրին Աքեմենյան թագավորությունը, Սելևկյանների ժամանակներում ևս բացասական դեր կատարեցին: Առաջին հերթին դրանք այլ պետությունների հետ մշտական կռիվներն էին: Չնայած բոլոր ջանքերին՝ Սելևկյանները չկարողացան դիմադրել հանրապետական Հռոմին, որն անդառնալի ծանր հարվածներ հասցրեց նրանց պետությանը:

Մեր թվարկությունից առաջ՝ 250 թվականից ի վեր, սկիզբ է առնում պարթևների տիրապետության շրջանը: Կենտրոնական Ասիայում բնակվող պարթևական իրանալեզու ցեղերն անկախանում են Սելևկյաններից ու ստեղծում սեփական թագավորությունը, որի գահին է նստում Արշակ Առաջինը (մ.

¹⁸ Տե՛ս **Գիրքնան Ռոման**, Իրանը սկզբից մինչև իսլամի հաստատումը, թարգմանիչ՝ Մահմուդ Բեհփուրզի, Թեհրան, «Ջամի» հրատարակչություն, 2002, էջ 212:

թ. ա. 250—247 թթ.): Հենց նրա անունով էլ պարթևների տերության ապագա բոլոր արքաներն իրենց անվանել են Արշակունիներ, իսկ պարթևական թագավորությունը պատմության մեջ է մտել նաև որպես Արշակունյաց թագավորություն:

Սելևկյանների և պարթևների միջև ռազմական հակամարտությունը տևում է շուրջ հարյուր տարի՝ մինչև մ. թ. ա. 141 թվականը, երբ պարթևների արքա Միհրդատ Առաջինը (մ. թ. ա. 174-136 թթ.) նվաճում է Սելևկյանների մայրաքաղաքը՝ Տիգրիսի ափին փռված Սելևկիան, դրա դիմացի ափին հիմնադրում Կոտեսիփոնը՝ Արշակունյաց թագավորության նոր մայրաքաղաքը, և այդպիսով սեփական իշխանությունը տարածում Իրանական լեռնաշխարհի մեծ մասի վրա: Միհրդատ Երկրորդը (մ. թ. ա. 123-88 թթ.) է՛լ ավելի ընդարձակեց պետության տարածքը և, ընդունելով «արքայից արքա» պատվավոր տիտղոսը, դարձավ Միջագետքից մինչև Հնդկաստան ընկած տարածքի տերը: Սելևկյանները շարունակում էին կառավարել Ասորիքում և Փյունիկիայում, մինչև որ հայոց արքա Տիգրան Երկրորդ Մեծը նվաճեց այդ երկրներն ու վերջ տվեց Սելևկյանների պետությանը:

Պարթևներն իրենց Աքեմենյանների տերության ուղիղ ժառանգներն էին համարում, և նրանց համեմատաբար աղքատ մշակույթը դեռ ինչ-որ չափով զարգանում էր Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների իշխանության օրոք Իրան ներմուծված հելլենիստական մշակույթի ազդեցության տակ: Ինչպես և Սելևկյանների ժամանակ, երկրի քաղաքական ու մշակութային կենտրոնները, այդ թվում նաև մայրաքաղաք Կոտեսիփոնը, Իրանի բարձրավանդակից դեպի արևմուտք էին տեղափոխվել, ուստի և այսօրվա Իրանում պարթևական թագավորության շրջանից մեզ հասած ու այդ շրջանի մասին որոշակի տեղեկություններ տվող քիչ հուշարձաններ և հուշակոթողներ կան:

Արշակունյաց հարստության արքաները երկար են մնում Իրանի գահին՝ այն կորցնելով միայն մեր թվարկության III դարում, երբ ազնվատոհմ պարթևների միջև կատաղի մրցակցություն է սկսվում իշխանության համար, ինչը թշնամիներին երկրի վրա հարձակվելու առիթ է տալիս: Ավագանու անդամների մի մասը սատարում է Արտաշիր Առաջին Պապականին (227—241 թթ.), որը Փարսի իշխաններից էր և Զրադաշտի մոլեռանդ պաշտպանը: Արտաշիրի հայրը՝ Պապակը, Փարսի և Սպահանի տիրակալ, ծագումով պարթև Արտավանից պահանջում է, որ վերջինս իր որդուն պաշտոնապես թագա-

ժառանգ ճանաչի, բայց Արտավանն այդ պահանջը մերժում է¹⁹: Ավագանու օժանդակությամբ 224 թվականի ապրիլի 28-ին Արտաշիր Պապականը Հորմոզգանի հարթավայրում պարտության է մատնում Արտավանին և սպանում նրան: Մահապատժի են ենթարկվում նաև պարթևական տոհմի բոլոր տղամարդիկ, բացառությամբ Արտավանի երկու զավակների, որոնց հաջողվում է Հնդկաստան փախչել, և նրա դստեր, որի հետ Արտաշիրն ամուսնանում է: Այսպիսով, ավարտվում է Իրանում պարթևների տիրապետության պատմական փուլը, և բացվում է նոր՝ Սասանյանների հարստության դարաշրջանը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հնադարյան Իրանի և Հին Պարսկաստանի, այդ թվում նաև Քերմանշահի պատմությանն ու մշակույթին նվիրված այս համառոտ ակնարկն ընդգրկում է արիական ցեղախմբերի ներխուժումից մինչև Սասանյանների դարաշրջանն ընկած ժամանակահատվածը: Շեշտը դրված է հասարակական-քաղաքական, կրոնական և մշակութային կարևոր իրադարձությունների վրա, որոնք շրջադարձային բախտորոշ նշանակություն ունեցան ոչ միայն երկրի պատմական ու մշակութային կյանքի հետագա զարգացման, այլև ազգային ուրույն նկարագրի ձևավորման համար:

Բանալի բաներ – հնադարյան Իրան, Հին Պարսկաստան, Քերմանշահ, արիացիներ, «Ավեստա», Հրադաշտ, զրադաշտականություն, Աքեմենյաններ, Սելևկյաններ, պարթևներ:

ДРЕВНИЙ ИРАН И ДРЕВНЯЯ ПЕРСИЯ ОТ АРИЙЦЕВ ДО САСАНИДОВ (КРАТКИЙ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫЙ ОБЗОР)

МАДЖИД ЯЗДАНПАНАХ (ИРАН)

Краткий обзор, посвященный истории и культуре Древнего Ирана и Древней Персии, в том числе Керманшаха, включает период времени от вторжения арийских племен до эры Сасанидов. Акцент поставлен на важных общественно-политических, религиозных и культурных событиях, которые имели поворотное и судьбоносное значение не только для дальнейшего

¹⁹ Տե՛ս **Ֆրայ Րիչարդ**. Наследие Ирана, Москва, Издательство "Восточная литература", 2002, с. 247:

развития исторической и культурной жизни страны, но и для формирования национального самосознания.

Ключевые слова – Древний Иран, Древняя Персия, Керманшах, арийцы, "Авеста", Заратустра, зороастризм, Ахеменидский, селевкиды, парфяне.

**ANCIENT PERSIA AND OLD IRAN.
FROM THE ARYANS UNTIL THE SASSANIDS
(BRIEF HISTORICAL OVERVIEW)**

MAJID YAZDANPANAH (IRAN)

This article, encompassing the history and culture of Ancient Persia, old Iran, as well as Kermanshah, considers the period starting with the invasion of the Aryan tribes until the Sassanian era. Emphasis is placed on the important social, political, religious and cultural events that were of crucial importance not only for the further development of the country's history and cultur, but also for the formation of a unique ethnic identity.

Key words – old Iran, ancient Persia, Kermanshah, Aryans, "Avesta", Zarathustra, Zoroastrianism, achaemenides, Seleucids, Parthians.

ԽԱՉԱՏՈՒՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆԿԱՐԻՉ

ՆԱՐԵ ՆԱԴԱՐՅԱՆ

Մամուլում, հանդեսներում և կատալոգներում հիմնականում անդրադարձ է կատարվում անվանի քանդակագործ, Հայաստանի Հանրապետության ժողովրդական նկարիչ Խաչատուր Իսկանդարյանի (1923-2015) քանդակներին, որոնք, հիրավի, հայ նորագույն շրջանի կերպարվեստում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում, բայց արվեստագետը զբաղվել է նաև գեղանկարչությամբ, գրաֆիկայով՝ ստեղծելով Հայաստանի, Մերձբայթիկայի, Հնդկաստանի, Ճապոնիայի բնությունը պատկերող մի շարք բնանկարներ: Այդ աշխատանքներն իրենց կատարման սկզբունքով և գույներով հիմնականում իմպրեսիոնիստական բնույթ են կրում. նրա ստեղծած բնանկարները հատկանշվում են գույնի իմպրեսիոնիստական նուրբ ընկալումներով, անմիջական վերարտադրությամբ, վրձնահետքերի թրթռուն խաղով...

Իսկանդարյանը, ինչպես իմպրեսիոնիստները, նախընտրել է նկարել բնությունից ստացած թարմ ու անմիջական տպավորության ներքո: Դա են վկայում նրա խոսքերը. «Երբ նախկինում ինքնաթիռով սավառնում էիր հայոց բնաշխարհի վրայով, ամեն քայլափոխի հանդիպում էիր նկարչի, ով փորձում էր յուրովի կտավի հարթությանը փոխանցել ներաշխարհում կուտակված հոգեկոթորդ: Իսկ այսօր, ցավալի է փաստը. շատ նկարիչներ, տնից անգամ դուրս չգալով, ստեղծագործում են և հանրությանը ներկայացնում իրենց շինծու աշխատանքները: Դա ճիշտ չէ. կարևորը շփումն է բնության հետ»¹: Իր լավագույն աշխատանքներում Իսկանդարյանը ֆրանսիացի իմպրեսիոնիստների, հատկապես Կլոդ Մոնեի պես կարողացել է բնանկարներին հաղորդել արևի ջերմ ճառագայթների փայլը, օդի թարմ հոսանքը, իսկ Կամիլ Կորոյի պես կարողացել է նկարները լցնել անձնական տրամադրությամբ (ի դեպ, Կորոն «տրամադրության բնապատկերի» հիմնադիրներից է): Իր բնանկարներով Խաչատուր Իսկանդարյանն իմպրեսիոնիզմի ուղղության մեջ նոր երանգավո-

¹ Տե՛ս **Գիլգիջյան Ն.**, Գունագեղ, քարակոփ նրբերանգ/ «Ավանգարդ», Երևան, 2003, 12-18 նոյեմբերի, էջ 5:

րում է բերել: Նրա գրեթե բոլոր բնանկարներում առկա են տների, շինությունների պատկերներ, որոնք լուծված են դեկորատիվ գունազեղությամբ: Աշխատանքներին հատուկ են արտահայտիչ գույների կիրառումը, կատարողական ազատ եղանակը, հեռացումը գծային ճշգրտությունից, գունաձածկույթի հստակ մշակումը:

Ահա դրանցից մի քանիսը՝ «Երևանյան թաղամաս» (1962), «Երևանյան հուշեր» (1965), «Կրամու փողոց» (Ռիգա, 1966), «Երևանյան հուշեր. Լալայանց փողոց» (Առաջին Սաղովայան, 1966), «Փողոց Գուրգուֆում» (1969), «Ձմեռը մեր բակում» (1975) աշխատանքները, աչքի են ընկնում գունալուսային անցումներով, բայց և պարզորոշ գծագրված կառուցումով: Նա չի փորձել ճարտարապետի նման բացահայտել շենքերի այս կամ այն երկրաչափական կառուցվածքը: Իր այդ գործելակերպով նա մոտենում է իմպրեսիոնիստներին: Բնանկարներում առկա են լայն պլաններով լուծված մի շարք տների պատկերներ, որտեղ հեղինակը դիտողին է ներկայացնում հարազատ երկրի կոլորիտը: Իսկանդարյանն այս կտավներում օդով հագեցած, գույներով հարուստ մթնոլորտ է ստեղծել:

Բնությունից ստացած թարմ ու անմիջական տպավորությամբ է կատարված «Ծաղկածորում» (1974) աշխատանքը: Ի տարբերություն վերը թվարկված նկարների՝ «Ծաղկածորում» բնանկարն աչքի է ընկնում տոնային առավել նրբին անցումներով՝ կանաչավուն, կապույտ, կարմիր երանգները թափանցվում են ճերմակ և արծաթափայլ շաղաթաթախով: Նկարում առկա են նաև վերևից դիտված մարդկային կերպարներ, որոնք անհատականացված չեն: Այստեղ հարկ է նշել, որ նկարչի բնանկարներում հաճախ բացակայում են մարդկային ֆիգուրները, իսկ եղած դեպքում էլ նա չի որոշակիացրել, անհատականացրել այդ կերպարները, մանրամասն չի պատկերել դեմքը: Նկարը իր գույներով մեզ հիշեցնում է Կլոդ Մոնեի որոշ բնանկարներ: Սակայն պետք է նշել, որ Իսկանդարյանը, ի տարբերություն ֆրանսիացի վարպետի, խուսափել է բնանկարներում մարդկային կերպարներն ամբողջական ներկայացնելուց և չի անհատականացրել դրանք:

Իսկանդարյանի գեղանկարչական աշխատանքները շատ բարձր է գնահատել ճապոնացի անվանի նկարչուհի Տոսի Մարուկին. «Թեև Դուք կարճատև եք եղել Ճապոնիայում, բայց շատ բան եք նկատել, դա հրաշալի է: Տոկիո, Օսակա, Կիոտո, Նագոյա այդ վայրերի ոգին այնքան հարազատ, այն-

քան լավ է ներկայացված, որ տպավորություն է ստեղծվում, թե ինքը ես գտնվում այստեղ: Գույները հրաշալի են, դրանք հնչել են և յուրօրինակ»²:

Ասվածի լավագույն օրինակներից է «Կիտո. Ոսկե տաճար» (1965) աշխատանքը: Նկարի մակերեսը ծանրաբեռնված չէ ներկաշերտերով, գունային նրբերանգներով: Այստեղ գծային-երկրաչափական նպատակամետ լուծումը համադրվում է ճապոնական նկարչության ոճավորված տարրերի ստեղծաբանական ձևերով: Աշխատանքն իր կոմպոզիցիոն և պլաստիկական կառուցվածքով ասես ամբողջական է դարձնում ճապոնական ճարտարապետության առավել բնորոշ, ցայտուն գծերը:

Յուղաներկով, տեմպերայով, ջրաներկով, տուշով, կավճաներկով, խառը տեխնիկայով արված նրա բնանկարները և քաղաքային բնանկարները նպատակ չեն ունեցել պաշտպանելու դիտողին իրենց մեծությամբ ու կատարման արտասովոր եղանակով: Նա նախընտրել է փոքր չափսի նկարներ, որոնք, չնայած այդ հանգամանքին, գրավել են դիտողին իրենց հուզական ուժով, ստիպել վերջինիս խորհել, հիանալ՝ արթնացնելով զանազան տրամադրություններ: Նշենք, որ եթե, օրինակ, Մարտիրոս Սարյանն իր հայաստանյան բնապատկերներում հիմնականում ներկայացնում է խստաշունչ վեհությամբ լի լեռները, ապա Իսկանդարյանը նախապատվությունը տալիս է հայրենի բնության գողտրիկ, կամերային անկյունները պատկերելուն: Դիտելով արվեստագետի նկարները՝ անվանի գրականագետ, թատերագետ Ռուբեն Զարյանը գրել է. «Խաչատուր Իսկանդարյանի վրձինը կարողանում է բնության մեջ գտնել այն անկյունը, որը կարծես մարդկանց համար աննկատ է, թաքնված: Միգուցե հենց այդ պատճառով է, որ մարդկանց համար այդ բնության անկյունները դիտարժան չեն, իսկ նկարչի վրձինը կարողանում է ներկայացնել իր երկրի յուրահատուկ գեղեցկությունը: Իսկանդարյանը սիրում է փնտրել և գտնել բնության և մարդու մեջ այն գեղեցկությունը, որը թաքնված է և բացահայտվում է նկարի միջոցով»³:

Ահա դրանցից մեկը՝ «Այդ-լիճը» (1965) կտավը, որն աչքի է ընկնում գունային թրթռուն խաղով և անպաճույճ գեղեցկությամբ: Այստեղ նկարի հնչելու գունաձավալներն իրենց կենսառոջ ուժով ներգործում են դիտողի վրա՝ առաջացնելով հանգստաբեր անխռով, համերաշխ տրամադրություն: Արվեստագետը շեշտել է մարդու (նկարում առկա են ծառերի ճյուղերի արանքից

² Փիլյոյան Ա., Խաչատուր Իսկանդարյան, Կատալոգ, Երևան, 2010, էջ 11:

³ Зарян Р., Хачатур Искандарян / «Дружба народов», Москва, 1983, № 12, с. 3.

երևացող տներ) և բնության անխզելի կապը:

«Լուսազդանշան Հրազդանում» (1965) աշխատանքում նա ևս դիմել է իմպրեսիոնիզմի եղանակին՝ ներկայացնելով ծառերի ճյուղերի արանքից ընկնող արևի ճառագայթների փայլը: Նկարն աչքի է ընկնում ճերմակի, գորշ երկնագույնի, կարմիրի, դեղինի, նարնջագույնի համադրությամբ, անվարժ թվացող գծանկարով, արտահայտիչ մոդելավորման գունալուսային ինքնահատուկ լուծումով, լուսազդանշանորդի ու ծառերի ուղղահայաց դիրքով:

Իր բնանկարներում Իսկանդարյանը դրոշմել է բնաշխարհի գեղեցկությունները՝ Ծաղկածորի գողտրիկ անկյունները, Քաղսի, Ողջաբերդի գյուղերը, երևանյան թաղամասերը, Շոպրոն, Ցյուրիխ, Հակոնե, Կոտո, Տոկիո, Լուգանո, Դամասկոս քաղաքների ճարտարապետական շինությունները և նեղիկ փողոցները: Նա ներկայացրել է թարմաշունչ ձմեռներ, լուսաշող առավոտներ ու զով երեկոներ: 1969-ին Մոսկվայում կազմակերպված ջրաներկ աշխատանքների ցուցահանդեսում Իսկանդարյանը ներկայացրել է «Հին Տալինը», «Բաբերի փողոցը», «Տալին. Հին քաղաքը» գործերը, որոնք հետագայում ցուցադրվել են նաև Լենինգրադում, Երևանում, Խարկովում, Կիևում, Թբիլիսիում⁴: Իսկ 1983-1984թթ. ցուցադրվել է Հունգարիայում, գրաֆիկական աշխատանքներով՝ Գերմանիայում, Ավստրիայում: Իսկանդարյանը բոլորովին այլ խնդիր է դրել «Անծրև Բուդապեշտում» (1982) աշխատանքում: Այստեղ նա հակադրվել է իմպրեսիոնիզմին. նկարում առկա է ոչ թե իրականության անմիջական պատկերումը, այլ նկարչի այսպես կոչված «ինքնարտահայտումը», մի մոտեցում, որը XX դարին է պատկանում: Հավանաբար, աշխատանքը պատկերված է պատուհանի ապակուց, քանի որ Բուդապեշտի շենքերի պատկերումն է երևում ապակու վրայի ջրի կաթիլների արտացոլանքում: Այստեղ ակամայից հիշում ենք Խոսե Օրտեգա-ի Գաստեթի մեկ այլ առիթով ասված հետևյալ խոսքերը. «Պատկերացնենք, որ պատուհանից նայում ենք պարտեզին, քանի որ մեր առարկան պարտեզն է, հայացքը թափանցում է ապակու միջով՝ չտեսնելով նրան: Բայց ջանք գործադրելով՝ մենք կարող ենք շեղվել պարտեզից և նայել ապակուն: Պարտեզը վերանում է տեսադաշտից, և նրանից մնում են միայն գունավոր բծերը, որոնք, թվում է, քաշված են ապակու վրա: Ասել է թե տեսնել պարտեզն ու տեսնել պատուհանի ապակին երկու անհամատեղելի գործողություններ են. նրանք բացառում են միմյանց և տես-

⁴ Տե՛ս Փիլոսյան Ա., Խաչատուր Իսկանդարյան, էջ 11:

ղական տարբեր հարմարություններ են պահանջում»⁵: Այս նկարը ժանրաթեմատիկ բովանդակությամբ նման է վերը նկարագրված իմպրեսիոնիստական նկարներին, սակայն տարբեր է կատարողական եղանակով, գեղարվեստական լեզվով ու ոճով:

Իսկանդարյանը խուսափում է պատկերել հայ նկարիչների կողմից նկարված խորհրդանշական, արդեն բազմիցս պատկերված տեսարաններ ու հանրահայտ ճարտարապետական կառույցներ («Արարատ», «Սևան», «Հոփսիսիմեի վանք» ևն): Բացառություն է կազմում «Էջմիածին. Մայր տաճարը» (1963) նկարը: Ստեղծագործությունը, որն ունի միջին չափսեր, մոնումենտալ տպավորություն է թողնում: Պատկերի ստորին հատվածից սկիզբ առնելով՝ ճանապարհը եզրափակվում է Էջմիածնի Մայր տաճարի պատկերով: Այս աշխատանքին և «Խոսող ծառեր» (1971) նկարին բնորոշ է գծային լարված, էքսպրեսիվ ոճը: Խառը տեխնիկայով կատարված երկու նկարներում էլ գերիշխում են խուլ մանուշակագույն և սև գույները՝ ստեղծելով հոգեբանական լարված ու մռայլ մթնոլորտ: Վերոնշյալ աշխատանքները վկայում են, որ Իսկանդարյանն իր բնանկարներում կիրառում է ոչ միայն իմպրեսիոնիզմի գեղարվեստական ավանդույթները, այլև էքսպրեսիոնիզմի ձևամտածողությունը, որոնք յուրովի համադրվել են նկարչի աշխատանքներում: Նկարներն արվեստագետի դրամատիկ լարված մտորումների յուրակերպ արտացոլումներն են:

Նրա գրաֆիկական աշխատանքները մեծ մասամբ ճամփորդական ճեպանկարներ են՝ կատարված ճապոնիայում, Հնդկաստանում, Շվեյցարիայում, Սիրիայում, Ուզբեկստանում, Մերձբալթյան հանրապետություններում: Իսկանդարյանն իր նկարները հիմնականում ստվարաթղթի վրա էր պատկերում, քանի որ ճամփորդության ժամանակ հարմար էր տանել-բերելը⁶: Արագ կատարված այս ճամփորդական էյուդոները նոր որոնումների ու պրպտումների ասպարեզ են բացել նկարչի առաջ: Իսկանդարյանի վրա հատկապես հետաքրքիր տպավորություն են թողել ծովային երկրներն իրենց նավահանգիստներով և երկնաքերներով («Իոկոհամայի նավահանգիստը», 1965, «Տոկիո. Առևտրի կենտրոն», 1965, «Ջանգերը. Յյուրիխ», 1971 ևն): Նա միջոցներ է փնտրել՝ իր զարմանքն ու հիացմունքը որքան հնարավոր է ընդ-

⁵ Օրտեգա-ի **Գասեթ Խ.**, Մշակույթի փիլիսոփայություն, Երևան, 1993, էջ 136:

⁶ Տե՛ս **Սամվելյան Կ.**, Չմարող խանդավառությամբ/ «Եթեր», Երևան, 2003, 29 հոկտեմբեր:

գծված արտահայտելու համար. նկարները կառուցել է դիպվածաբար՝ ընտրելով անսպասելի դիտակետեր ու կոմպոզիցիոն կտրուկ հատումներ:

Գեղանկարչության ոլորտում Իսկանդարյանի ստեղծագործական հաջողությունները հիմնականում կապված էին բնությունից ստացած թարմ և անմիջական տպավորություններն արտացոլող նկարների հետ: Նկարչական զանգվածի թեթևություն, թրթռուն օդայնություն և գույնի լուսապատկերային մաքրություն. ահա Խաչատուր Իսկանդարյանի մի շարք բնանկարներին բնորոշ այն հատկությունները, որոնք այդ աշխատանքները դարձնում են դիտարժան: Իսկանդարյանի նկարների բովանդակությունն ընկալվում է հեշտ ու անմիջական, որովհետև նրա յուրաքանչյուր աշխատանքի հիմքում ընկած է գեղարվեստական պարզ ու որոշակի գաղափար, որը և կանխորոշում է նրա կտավների պլաստիկ կառուցվածքը և վերջին հաշվով նրա արվեստի գեղարվեստական լեզուն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Քանդակագործ Խաչատուր Իսկանդարյանը զբաղվել է նաև գեղանկարչությամբ, գրաֆիկայով: Այստեղ նրան հետաքրքրել է բացառապես բնանկարային ժանրը: Յուղաներկով, տեմպերայով, ջրաներկով, տուշով, կավճաներկով, խառը տեխնիկայով արված նրա բնանկարները և քաղաքային բնանկարները պատկերում են Հայաստանի, Մերձբալթիկայի, Հնդկաստանի, Ճապոնիայի բնությունը, աչքի են ընկնում ազատ ու համարձակ կատարմամբ: Իսկանդարյանը վերարտադրել է այդ վայրերի ինքնատիպությունը:

Քանակի բաներ – գեղանկարչություն, գրաֆիկա, բնանկարային ժանր, ինքնատիպ:

ХАЧАТУР ИСКАНДАРЯН КАК ХУДОЖНИК

НАРЕ НАДАРЯН

В живописи и графике Х. Искандаряна преобладает пейзажный жанр. Поездки по Армении, Прибалтике, Индии, Японии и другим местам отразились в городских пейзажах, выполненных маслом, темперой, акварелью, тушью, пастелью, комбинированной техникой. В ряде пейзажей Искандарян достигает смелого и свободного исполнения, способствующего правдивой, впечатляющей передаче своеобразия местности и настроений.

Ключевые слова – живопись, графика, пейзажный жанр, своеобразие.

KHACHATUR ISKANDARYAN AS A PAINTER

NARE NADARYAN

Khachatur Iskandaryan, the sculptor occupied himself as well with painting, especially graphics. He was in the main interested in painting landscapes. His landscapes and urban landscapes depict in free and bold style the nature of Armenia, the Baltics, India, Japan and are executed in oil, tempera, watercolor, colored ink, pastel and other mixed techniques. Iskandaryan has reproduced the uniqueness of these locations.

Key words - painting, graphics, the landscape genre, originality.

«ՇԱՀՆԱՄԵԻ» ԵՐԱԺՇՏԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԶՈՒՐԻՆԱՆԱՅՈՒՄ

ԱՄՂԱՐ ԶԱՆԱԲԻ (ԻՐԱՆ)

Փոփոխիայե Վալի անունը կրող զուրխանայի (պարսկական ավանդական պետական պալատ) ճակատային հատվածում վերջինիս ստեղծման տարեթվին և անվանման հիշատակմանը հաջորդում են Հակիմ Ֆիրդուսիի հետևյալ չափածո տողերը. «Մարդն իր հզորությամբ է ճշմարտացի: Թուլությունը ծնում է կամակորոություն ու պարտություն»: Այս տողերը միշտ էլ զարդարել են զուրխանան, հնչել մուրշիդների և ըմբիշների բերանից: «Շահնամեի» բանաստեղծությունները, որոնք ասերգվում էին զուրխանաներում կիրառվող երաժշտական գործիքների ուղեկցությամբ, կանոնավորված ռիթմիկ հարվածներով, «Շահնամեի» երաժշտության հանրաճանաչությունն ապահովող կարևոր դրսևորումներից են: «Շահնամեն» պարսկերենի և պարսից գրականության անբաժանելի մասն է, մասնավորապես իրանյան հանրային մշակույթի ասպարեզում, իսկ «Շահնամեն» և զուրխանան կապակցող տարրը հենց իրանյան մշակույթն է: Այս երկուսը համարվում են վերջինիս ակնառու դրսևորումները: Այս առումով էլ ներկա հոդվածում ուսումնասիրվում է երաժշտության դերը «Շահնամեում»:

Հին Իրանում, դպրոցներից ու մզկիթներից բացի, որպես իրանցի երեխաների մարմնի ու հոգու զարգացումը խթանող օրրան, երևան եկան կրթական և սոցիալական հաստատություններ: Սկզբում դրանք, հին կրոնական կրթության պահանջներին համապատասխան (Յասնա, «Զրադաշտ», կետ 19), կոչվեցին «վարժեշխանեհ» (սպորտի պալատ), այսինքն՝ երեխաներին տարբեր սպորտաձևերում մարզելու վայր: Այս հաստատության նպատակն էր երեխաներին արիություն ու բարեպաշտություն սովորեցնելը, որպեսզի նրանք կարողանային դիմագրավել սոցիալ-կենսական տարաբնույթ դժվարություններին (Էնսաֆիուր, 2007):

Հետագայում սպորտի ու մշակույթի այս վայրն արմատավորվեց Իրանի ավանդական կենցաղում և խթան հանդիսացավ մշակութային ու գրական բազմաթիվ դրսևորումների համար:

Ֆիրդուսու վերոբերյալ տողերը ցույց են տալիս, որ «Շահնամեն» համակցված է պատմության և սպորտի ծագման ու առաջնայնության գաղափարի հետ, քանի որ «Շահնամեն» շեշտադրում է սպորտի ուսուցումը և հիշատակում առաջնությունը շահելու սովորությունը: «Շահնամեում» Ռոստամի և Էսֆանդիարի կռվի ավարտին Բահմանը, որն Էսֆանդիարի որդին է, Ռոստամի ջանքերի շնորհիվ տարվում է խաղահրապարակ և Ռոստամի կողմից քաջալերանքի արժանանում: Բահմանը սովորում է կռվելու և զվարճանալու տեխնիկան, այդ թվում՝ ձի հեծնելու հմտությունը, որսորդությունը, պոլո խաղալն ու ճակատամարտին բնորոշ հատկանիշները. այս ամենը նա սովորում է «Շահնամեի» մեծագույն ուսուցիչներից մեկից՝ Ռոստամից.

Բահմանը մնաց Ջաբուլիստանում՝ վայելելով

Որսատեղին ու գինին վարդաստանում,

Մինչ Ռոստամը սովորեցնում էր իր այդ թշնամուն

Ձիավարել, մեկ շնչով խմել ու արքայի դերը կատարել.

Քիչ անց Շահը հավաստիացավ ու նկատեց վարքագիծը նրա

Խնջույքում, մարտադաշտում և որսատեղում:

Պետք է նշել, որ Ֆիրդուսիի նշանակալից վերաբերմունքն ու բարձր գնահատանքը հաղթողների հանդեպ նկատելի է «Շահնամեում», որը և նպաստել է վերջինիս հիմնավորմանը զուրխանայի ժողովրդի շրջանում: Ամբողջ «Շահնամեի» ընթացքում հանդիպում ենք առաջնակարգ մարտիկների՝ Ռոստամի, Ջոհրաբի, Էսֆանդիարի, Գիվի, Սիավոշի, Արաշի ու Գուդարգի արվեստի և մարդկային արժանիքների նկարագրին: Նրանք հիշատակվում են որպես օրինակելի անձինք և առաջնակարգ մարտիկներ: Այդ հերոսները գոտեմարտի, աղեղնածգության, մարտնչելու և ձիավարելու, ինչպես նաև մարդկային ազնվության ու հայրենասիրության խորհրդանիշներն են:

Ֆիրդուսիի հղած սոցիալական ուղերձները, որոնք հստակ հնչում են նրա բանաստեղծություններում, շատերի համար կենսական հարացույց են, այնպես որ վերջիններիս ռիթմիկ ընթերցումը զուրխանաներում խոր ազդեցություն էր թողնում ըմբշամարտիկների և հասարակության վրա: Առաջնության մարտիկներին առավել գրավող բանաստեղծություններն ընթերցվում էին երթերի ժամանակ, շներին կռվեցնելու պահին և մասնավորապես զուրխանայի ասպարեզում ընթացող գոտեմարտերի ժամանակ և ացքի էին ընկնում իրենց էպիկական շնչով:

Ռոստամին վերաբերող մի տեսարանում Ֆիրդուսին գրում է.

Նրանք գոտեմարտի բռնվեցին՝

Ամուր բռնելով միմյանց գոտկատեղերի կաշեփոկերից,
Ռոստամը տխրեց և ձեռքը պարզեց
Ու ճանկեց այդ կոպիտ ընձառյուծի գլուխն ու պարանոցը.
Երիտասարդ քաջի մեջքը ճկվեց,
Նրա ուժը չբավարարեց.
Առյուծի նման նրան գետնին հարվածեց,
Ռոստամը հասկացավ, որ չի պարտվի նրանից:



Պատկեր 1. Ռոստամի և Ջոհրաբի գոտեմարտի պատկերն ըստ «Շահնամեի»

Ֆիրդուսին իր բանաստեղծություններում կիրառում է «գոտեմարտ» եզրույթը. Բիջանի և Հումանի կռիվը պատկերելիս նա այս երկուսի միջև ըն-

թացող մարտի նկարագրությունից հետո անդրադառնում է երկու մարտիկների գոտեմարտին.

Նրանք նորից ոտքի ելան, թեև ուժասպառ էին եղել,

Նրանք սկսեցին կռվել ու գոտեմարտի բռնվել,

Նրանք օգտագործեցին իրենց ամբողջ ուժն ու կարողությունը.

Նրանց կռվից երկինքը դողաց,

Բիջանը ձեռքը հանց վագր բարձրացրեց,

Նրան ոտքից գլուխ ծուղակը գցեց.

Նա բռնեց նրա պարանոցից ու աջ ոտքից

Հետո դեպի հետ կքեց երիտասարդ Հյունին:

«Շահնամեի» այս հատվածը, որը սովորաբար պատմվում է զուրխանայում, վերաբերում է նաև բանաստեղծություն և մեկտողանոց չափածո գրելու արվեստի ուսուցմանը՝ հավերժական արժեքների ընդգծումով: Այս մեկտողանոց չափածոները հայտնի են հասարակ ժողովրդի շրջանում որպես իմաստուն խորհուրդներ պարունակող ասացվածքներ.

Ների՛ր ու բավարարվի՛ր քո ունեցածով:

Մի՛ հպարտացիր ունեցվածքով, անցողիկ հարստությամբ ու դիրքով (հպարտության ու գոռոզության մասին) (Նաֆիսի, 2010):

Չուրխանայում բանաստեղծություններն ընթերցվում էին իրադրության և պայմանների համաձայն, որը կոչվում է Մոնասեբ խանի (պատշաճ ընթերցում): Փաստացի Մոնասեբ խանին բնորոշ էր Մուրշիդների արվեստին, որը շատ արդյունավետ էր՝ պատշաճ մթնոլորտ ստեղծելու համար թե՛ գոտեմարտողների, թե՛ առաջավոր մարտիկների և թե՛ հանդիսատեսների համար: Ինչպես արդեն նշվել է, զուրխանայում տիրող գոտեմարտի ու առաջնության մթնոլորտում ամենաէպիկական բանաստեղծություններն ընթերցվում էին Մուրշիդի զարկերի ներքո՝ արագ ու հուզամնայից ուրիշով և երկարածգված տոնայնությամբ ու արտահայտիչ ձայնով: Քանի որ բանաստեղծությունների ընթերցման եղանակներն անխզելիորեն կապված են միմյանց, ապա զարկերի ներքո բանաստեղծությունների ընթերցման ձևին ավելի մանրամասն կանդրադառնանք զուրխանայում *Սարնավազիի* (բանաստեղծություն, որն ընթերցվում է Մուրշիդի նախնական վարժանքից կամ *Չարխից* առաջ) երաժշտական մասի առումով: Դա այն պահն է, երբ Մուրշիդը սովորաբար կարդում է քնարական բանաստեղծություն, մեծ մասամբ Հաֆիզի կամ Մուլավիի երկերից՝ ցածր տոնայնությամբ և բարձր զարկերի ներքո (Նաջաֆի Թեհրանի, 1991):

Երբ գոտեմարտիկները լողասալիկները դնում են իրենց առջև և նստում են գլուխները կախ կամ գլուխներն ու պարանոցն առաջ պարզած, Մուրշիդը թմբուկի ցածր ձայնի և հաճելի զարկերի ներքո կերկրուն ու երկարաձգված ձայնով կարդում է *Սարնավազին*, որպեսզի մարտիկները պատրաստվեն սպորտաձևը ցուցադրելուն:

Ջուրխանայում միստիկ ու քնարական բանաստեղծություններից զատ սովորաբար բարձր ու մեղմ ձայնով և հաճելի տոնայնությամբ ընթերցվում էին կրոնական բնույթի բանաստեղծություններ, որոնք գովաբանում էին Մեծն Աստծուն, Մոհամմադ մարգարեին և Ալլիին: Մեծ մասամբ Մուրշիդներն ընթերցում էին քնարերգությունից, քառատող և երկտող բանաստեղծություններից մտապահած հատվածներ, որոնք վերագրվում էին Պոուրիա-է-Վալիին, իսկ զվարճանքների ժամանակ՝ Սարնավազիից (Borji, 1994):

Նման կրոնական, խորհրդապաշտական և խրատական բանաստեղծություններն ընթերցվում էին էպիկական շնչով և արագ ռիթմով՝ առաջնակարգ մարտիկներին քաջալերելու համար, երբ նրանք սպորտով կամ գոտեմարտով էին զբաղվում:

Ռիթմն ու երաժշտությունը մարդու հոգու և ոգու վրա ազդող հզոր գործոններ են, որոնք նաև բուժիչ ազդեցություն ունեն (Հանդբաֆ, 2004): Մեր հետազոտությունը երևակում է երաժշտության և մարմնի շարժումների միջև առկա կապը: Ջուրխանայում հնչող երաժշտության մեջ, երաժշտական գործիքներից բացի, բավական կարևոր դեր է խաղում ձայնը: Հետևաբար երկուսն էլ (մեղեդին և ձայնը) պետք է միասին դիտարկվեն: Ջուրխանաներին բնորոշ այս երաժշտակատարողական ավանդույթն արդյունք է իրանյան ավանդական հավատալիքների և «Շահնամեի» էպիկական բանաստեղծությունների համակցման, որոնց ծիսական ու կրոնական էությունն ընդգծվում է երաժշտական արվեստի միջոցներով /Լ. Երնջակյան, 1996/:

Ջուրխանայում մուրշիդն իր հաճելի ձայնով և թոմբակ զարկելով կատարում է տարբեր մեղեդիներ, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է սպորտային հատուկ շարժումներին, ընթերցում է էպիկական բանաստեղծություններ, մեծ մասամբ՝ «Շահնամեից»: Նա իր ձայնն ու զարկերը հավասարակշռում է մարմնամարզիկների շարժումների հետ: Անցյալում մուրշիդին անվանում էին «գարբգիր»։ Կարելի է ասել, որ թոմբակը հիմնական երաժշտական գործիքն է զուրխանայում: Ի դեպ, Քաջարի դարաշրջանից սկսած, զուրխանայում, բացի թոմբակից, որպես մշտական երաժշտական գործիքներ կիրառվում էին նաև փողային նվագարանները: Ուշագրավ է, որ դրանք նվագում

էր ոչ թե մուրշիդը, այլ մեկ ուրիշը, որը կանգնում էր նրա կողքին ու հարվածային գործիքին նվազակցում էր փողային գործիքներով (Նաջաֆի Թեհրանի, 1991):

Ջուրխանայի երաժշտությունն ունի չորս հիմնական տարր.

1. Մուրշիդ
2. Ջուրխանայի զարբ
3. Ջուրխանայի զանգ
4. Ընթերցվող բանաստեղծություններ:

Ջարբը կամ թոմբակը Իրանում հայտնի դառնալուց շատ առաջ էլ ուներ իր սեփական պատմությունը: Պատերազմի ժամանակ զինվորներին քաջալերելու նպատակով օգտագործվում էր հարվածային գործիք /թմբուկ/, որի մասին Ֆիրդուսին էլ բազմիցս հիշատակում է «Շահնամեում»: Ավելի ուշ նույն թմբուկը դարձավ մարզիկներին խթանող գործիք: Տարբեր դարաշրջաններում զարբերը պատրաստվում էին պղնձից, ալյումինից, երկաթից և կավից (Բորջի, 1994):



Պատկեր 2. Թմբուկ

Ջուրխանան իրանցիներին բնորոշ յուրահատուկ սոցիալական կառույց

է, որն ունի շատ հին ծագում և պատմություն իրանյան մշակույթի և հասարակության մեջ: «Շահնամեն» իր հերթին շատ կարևոր դեր էր խաղում զուրխանայում, քանի որ այն իրանյան քաղաքակրթության ու մշակույթի հայելին էր, ինչպես նաև ուներ ազգային և բարոյագիտական բովանդակություն:

«Շահնամեի» բանաստեղծությունների երաժշտական հնչողությունը, խոսքի իմաստային ելևէջումն ու մետրոռիթմիկ ճկունությունը, ինչպես նաև որոշակի երաժշտական տարրերի ու գործիքների հիշատակումն այս երկին անանցելի մշակութային լիցքեր են հաղորդել: Դրանց կիրառումն Իրանի սոցիալ-մշակութային կյանքի կարևոր օղակներում, այդ թվում և զուրխանաներում, այսօր էլ արդիական է ոգու և մարմնի ներդաշնակ միասնությունը պահպանելու առումով:

Հավելենք նաև, որ, ըստ հասարակական դիրքի ու զանազան հանգամանքների, «Շահնամեի» էպիկական բանաստեղծություններին զուգահեռ Հաֆեզի, Ռումիի և Փոռոբիայե Վալիին վերագրվող կրոնական և միստիկ այլ բանաստեղծություններ ևս ընթերցվում էին զուրխանայում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում են զուրխանայի երաժշտության ծագումն ու երաժշտական այն գործիքները, որոնք սկզբնապես կիրառվել են: Հետազոտությունից բխում է, որ թմբուկը հիմնական գործիքն էր, որն օգտագործվում էր զուրխանայում: Զուրխանայի երաժշտակատարողական ավանդույթը՝ հիմնված Շահնամեի տեքստերի վրա, Իրանի մշակութային արժեքների պահպանման գործուն միջոցներից է:

Բանալի բաներ - երաժշտություն, Շահնամե, զուրխանա, զարբ:

Գրականության ցանկ

1. **Borji, M.** (1994). Zurkhaneh Zarb Notes. Tehran, Nehaja Physical Education. 14, 17.
2. **Ensafpour, Q.** (2007). History and Culture of Zurkhaneh and Zurkhaneh-Goer Social Groups. Tehran, Akhtaran Publications. 16-17, 187, 184.
3. **Kazemeini, K.** (1964). The role of Athletics and Ayyari Movement. Iran Melli Bank Press. 303, 304, 323.
4. **Nafisi, S.** (2010). Chivalry Customs. Tehran, Tasavvof.

5. **Najafi Tehrani, F.** (1991). Athletic Rhythms (Zurkhaneh beat rhythms). Tehran, Part Publications. 186, 187.
6. **Rajabi, B.** (2007). Tonbak and a View on Rhythm from Different Aspects. Tehran, Soroud Publications.
7. **Sabetzadeh, M.** (2003). Ferdowsi and Music in Shahnameh. Literature and Philosophy Year Book, No.75 & 76.
8. **Zandbaf, H.** (2004). Rhythm in Music, Tehran, Rozaneh Publications. 65.
9. **Л. Ернджакян**, О бытовании иранских эпических мотивов в Армении и музыкальной традиции исполнения “Шахнаме”, Традиции и современность, Вопросы армянской музыки, книга 2, Ереван, 1996, стр. 68-77

ТРАДИЦИОННОЕ МУЗЫКАЛЬНОЕ ИСПОЛНЕНИЕ “ШАХНАМЕ” В ЗУРХАНЕ

АСКАР ДЖАНАБИ

В статье обсуждается зарождение музыки в Зурхане и те музыкальные инструменты, которые там изначально использовались. Исследование показывает, что дхол является главным инструментом воспроизведения в Зурхане. Традиция исполнения в Зурхане основана на текстах “Шахнаме”, все это является одним из активных способов защиты иранских культурных ценностей.

Ключевые слова – музыка, “Шахнаме”, Зурхана, зарп (разновидность дхола).

THE MUSIC PERFORMING TRADITION OF “SHAHNAMEH” IN ZURKHAN

ASGHAR JANABI

Asghar Janabi in this article considers the origin of zurkhan music and those musical instruments that have been utilized from the very beginning of times. The investigation shows that the drum is the main instrument used in zurkhan. The tradition of music performance based on the texts of Shahnameh is one of the operative means of protecting Iranian cultural values.

Key words – music, Shahnameh, zurkhan, zarb (a type of drum).

ԲԱԿԻ ՎԵՐԱՀԱՆՐԱՅՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

1997 թ. նկարահանված «Մեր բակը»¹ առաջին ֆիլմում կա մի տեսարան, որտեղ X մասնավոր կազմակերպությունը (ֆիրմա) կասկածելի մի փաստաթուղթ (որոշում) ներկայացնելով, փորձում է գրասենյակ (օֆիս) հիմնել Երևանի հայտնի բակերից մեկում և հանդիպում է բակի բնակիչների դիմադրությանը: Սա հետխորհրդային շրջանում հանրային ու մասնավոր շահերի բախման առաջին դրվագներից մեկն է, որն իր արտացոլումն է գտել լիամետրաժ երաժշտական կատակերգությունում: Չնայած հայտնի ֆիլմում վեճը լուծվում է բակի բնակիչների հաղթանակով, իրականում 1990-ական և հաջորդող թվականներին հիմնական հաղթանակողը մասնավոր ոլորտն է: Շատ բակեր պարզապես վերածվեցին ավտոմեքենաների բացօթյա կայանատեղիների, բազմաբնակարան շենքեր՝ ավտոմեքենաներով և հետիոտն ներս ու դուրս անելու համար նեղլիկ փողոցներ և մայթեր ներառող տարածության: Բակի համար անհրաժեշտ ենթակառուցվածքների վերացումը հանգեցրեց միջանձնային տարբեր մակարդակներում բնակիչների հաղորդակցության համատեքստերի և հաճախականության նվազմանը²:

Բնակության վայրի պարբերական փոփոխությունները, նոր շենքում և թաղամասում ինտեգրվելու խնդիրները, բնակելի շենքը և բակը իբրև բնակության ոչ մշտական տարածքներ դիտելը՝ նվազեցնում էր շահագրգռվածությունը ընդհանուր օգտագործման տարածքի ճակատագրով հետաքրքրված լինելու տեսանկյունից: Խորհրդային ժամանակներից ժառանգված մտայնությամբ՝ բակի հանրությունն իրեն դիտում էր սոսկ իբրև բակային տարածքի սպառող³: Բակային տարածքի ձևակերպումը, տնօրինման և տիրապետման իրավունքը վերագրվում էին պետական մարմիններին:

Ուշագրավ է, որ «Մեր բակը» ֆիլմի հիշատակված դրվագում բակի բնակիչների հաղթանակը պայմանավորված է բակի բնակիչ հանդիսացող մեկ

¹ Տե՛ս 1:36-1:40 րոպեներ: Մեր բակը ֆիլմ <https://www.youtube.com/watch?v=Wl42op04vvY>, 12.05.2015:

² Հովհաննիսյան Ռ., Հարցազրույցների տետր, Երևան, 2013-2014:

³ Նույն տեղում:

այլ պետական պաշտոնյայի սպառնալից միջամտությամբ: Այսինքն, հաղթանակում է ոչ թե բակի հանրությունը, այլ՝ պետությունը: Սա նույնպես հետխորհրդային անցումային շրջանը բնորոշող գործողություն է, որում արտոցովում է հանրային տարածքի տնօրինման հարցում պետական մոտեցման վճռորոշ լինելը: Խորհրդային ժամանակահատվածում բակի հանրությունն ուներ կրավորական դիրք, քանի որ բակի ենթակառուցվածքները, տարածքի օգտագործման որոշակի պայմանները նախագծվում, ձևակերպվում էին պետության կողմից: Հայտնի ֆիլմում հանրային տարածքի մի մասի (օֆիս հիմնելու և ավտոտնակ կառուցելու համար) տնօրինմանը հավակնող մասնավոր կազմակերպությունը (Ֆիրման) նույնպես ներկայանում է պետական դիրքից, քանի որ բակում հաստատվելու թույլատվություն ստացել է պետական պաշտոնյայից, որն ավելի ցածր կարգավիճակ ունի, քան ոմն Նաջարյանը, ով բակում վաղուց բնակվող մեկ այլ պետական պաշտոնյայի «քիպն ա»⁴:

Դառնալով 1990-ական թթ. բազմաբնակարան շենքերի բակային տարածքների՝ մասնավոր ոլորտի կողմից «տնօրինելու» հանգամանքներին, պետք է փաստել, որ այն իրականացվում էր ոչ թե իրավական հիմքերի վրա, այլ՝ պետական և տեղական մակարդակի տարբեր պաշտոնյաների հովանավորչությամբ և ապօրինի գործողություններով: Բավական էր, ինչպես հայտնի ֆիլմում, հայտնվեր մի մասնավոր կազմակերպություն՝ պետական պաշտոնյայի որոշումը ձեռքին, և բակի հանրությունը տեղի էր տալիս: Նշված ընկալումներն այնքան խորը արմատներ ունեին, որ նույնիսկ բակային տարածքների ինքնակառավարման մակարդակը բարձրացնելու և պետության միջամտությունը թուլացնելու նպատակով 2000-ական թթ. սկզբներին ընդունված մի շարք օրենքներ⁵ (Համատիրությունների մասին, Բազմաբնակարան շենքի կառավարման մասին) ու որոշումներ տևականորեն չեն կիրառվում: Սակայն բնակիչների ընկալումներում նորաստեղծ համատիրությունները սոսկ հարկ ու տուրք հավաքող մարմիններ են և հաճախ նույնացվում են նախկին ԲՇՏ-ների⁶ հետ:

⁴ Տե՛ս 1:36-1:40 րոպեներ: Մեր բակը ֆիլմ <https://www.youtube.com/watch?v=Wl42op04vY>, 12.05.2015:

⁵ Տե՛ս ՀՀ օրենքը Համատիրության մասին, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1306&lang=arm>, 12.05.2015: ՀՀ օրենքը բազմաբնակարան շենքի կառավարման մասին, <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1307&lang=arm>, 12.05.2015:

⁶ ԲՇՏ-բնակչահագործման տեղամաս:

Բակի և հանրային այլ տարածքների տնօրինման վերաբերյալ պահպանվող խորհրդային ընկալումները որոշակի օբյեկտիվ հիմքեր ունեն, որոնք կապվում են առաջին հերթին դրանց նշանային գործառույթի հետ: Նշանային հարթությունում պետականը և հանրայինը նույնական էին: Համաձայն խորհրդային գաղափարախոսության՝ պետականը կոլեկտիվն ու հանրայինն էր, և պետական քաղաքականությունն իրականացվում էր հանրության անունից, չնայած դրա անդամները «ազատված էին» որոշումներ կայացնելու մասնակցությունից: Հանրային տարածքի այդ տարբերակը բնորոշելու համար, գերմանացի սոցիալական փիլիսոփա Յ. Հաբերմասի առաջարկած ավանդական մոդելներից մեկը⁷ վերաձևակերպելով, կարելի է ասել, որ հանրայինը ռեպրեզենտացվում էր պետության կողմից:

Բակի պարագայում պետականն իբրև հանրային ռեպրեզենտացնելու այդքան հեշտ ու միանշանակ չէր, քանի որ այն փակ և սահմանափակ թվով քաղաքացիների խմբի (տվյալ շենքի բնակիչների) համար նախատեսված տարածք է: Մյուս կողմից, այն հանրային օգտագործման տարածք է և խորհրդային բնորոշ տերմինաբանությամբ՝ այդ հանրությունը բակում ապրող մարդկանց կոլեկտիվն է: Բակի այս երկակի կարգավիճակն է պատճառը, որ ուսումնասիրողները դժվարանում են այն իբրև հանրային տարածք համարելու հարցում⁸: Հետպատերազմյան շրջանում (երկրորդ համաշխարհային պատերազմից հետո) իշխանության վարած քաղաքականությունը միտում է ունեցել վերացնելու բակերի ներփակվածությունը և դրանք վերածելու հանրային տարածքների:

Նախապատերազմյան շրջանի բազմաբնակարան շենքերի բակերն իրենց արտաքին տեսքով և գործառույթներով շատ չէին տարբերվում գյուղական բնակավայրերին բնորոշ ազգակցական բակերից⁹: Թերևս, ամենակնառու տարբերությունը ծավալների մեջ էր: Բազմաբնակարան շենքերի բա-

⁷ Յ. Հաբերմասի դիտարկման համաձայն՝ նախամոդեռն շրջանում իբրև տարածքի ռեպրեզենտացնող հանդես է գալիս միապետը կամ ֆեոդալը: Տե՛ս **Habermas J.** The Structural Transformation of the Public Sphere. Cambridge, Mass: MIT press. 1989.

⁸ Տե՛ս, օրինակ՝ **Пиир А.** Благоустройство и «образцовый быт» ленинградских дворов: диалог властей и жильцов. _ Антропологический форум № 15, сс. 236-267. **Желнина А.** Публичное пространство в социологии города. Проблемы публичного пространства в Петербурге http://les-urbanistes.blogspot.com/2009/03/blog-post_02.html, 12.05.2015:

⁹ Տե՛ս, օրինակ՝ **Նահապետյան Ռ.**, Հայոց ազգակցական համակարգը (XIX դ. երկրորդ կես -XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, 2012, էջ 86-92:

կերը ցանկապատ տարածքներ էին, ունեին դարպաս, որոշները փակվում էին՝ սահմանափակելով բակում չքնակվող մարդկանց մուտքը: Բակերի հիմնական գործառույթը տնտեսական էր, այնտեղ էին պահեստավորում վառելիքայուղ, կառուցում խորդանոցները և այլն¹⁰: Ետպատերազմյան շրջանում, հանցավոր երևույթները վերացնելու և հանրային տարածքների վերահսկելիությունը հեշտացնելու նպատակով, խորհրդային իշխանությունները սկսում են փոխակերպել բազմաբնակարան շենքերի բակերը¹¹: Բակերում ստեղծվում են խաղալու ու հանգստի պայմաններ, աստիճանաբար վերացնելով ցանկապատերն ու դարպասները, հեռացվում են տնտեսական շինությունները: Բակն է՛լ ավելի հանրային դարձնելուն ուղղված քաղաքականությունը հետագայում արտահայտվեց ամբողջական թաղամասերի («կվարտալ») և դրանց ներքին տարածքների կառուցապատման ծրագրերում, ինչի արդյունքում մի քանի բազմաբնակարան շենքերի համար նախագծվեցին ընդհանուր և բավականին ընդարձակ բակեր: Այդ բակերը շատ հատկանիշներով կրկնում էին հանրային քաղաքային տարածքը՝ կենտրոնում տեղադրված հրապարակ, ճեմնողիները երիզող կանաչ գոտիներ, կարուսելներ, որոնք, փաստորեն քաղաքային այգիների ճարտարապետական նմանակումն էին¹²: Այսինքն, բակը ինտեգրվում էր ընդհանուր քաղաքային տարածությանը¹³:

Այսպիսով, խորհրդային տարիներին բակերը հանրայնացվում են, նպատակ ունենալով մասնավորների կամ բնակչության մի փոքր խմբի տնտեսական շահերին ծառայող տարածքը վերածելու հանրայինի, այնտեղ նաև նախապատվելի վարքի մոդելներ ձևավորելով:

«Մեր բակը» ֆիլմում ակներև են բակի՝ հանրային տարածքի վերածման աղոտ նախադրյալներ: Ֆիլմում առկա է թեկուզ և վատ փաստարկված քննադատության և երկխոսության փորձ: Երևանյան իրականության մեջ, սակայն, դրա գործնական իրացման առաջին լուրջ գործողությանը հանդիպում ենք ֆիլմի նկարահանումից միայն տասը տարի անց՝ 2007 թ. և Երևանյան մեկ այլ բակում: Այն գտնվում է Մաշտոցի 39/12, Թումանյան 1 և 2 բազմա-

¹⁰ Տես օրինակ՝ **Пиир А.** Благоустройство и «образцовый быт» ленинградских дворов: диалог властей и жильцов, сс. 236-267.

¹¹ Նույն տեղում:

¹² Որոշ բակերում տեղադրվում էին նաև բեմ և նստարաններ, որոնք ստեղծվում էին քաղաքային այգիների՝ համերգային ու պարահանդեսային տարածքների նմանությամբ:

¹³ **Пиир А.** Благоустройство и «образцовый быт» ленинградских дворов: диалог властей и жильцов, сс. 236-267.

բնակարան շենքերի միջև՝ Մաշտոցի պողոտայի ու Մոսկովյան փողոցների անկյունային մասում: «Այս բակային տարածքը Երևանի այն հազվագույտ տեղերից էր, որտեղ որևէ շինարարություն չէր կատարվել, որը կանաչապատ էր, ծառերը չէին հատվել ու որոշ չափով բնակիչները խնամում էին բակը: 2007 թ. Հայաստանի էլեկտրական ցանցեր (ՀԷՑ) ռուսական մասնավոր ընկերությունը որոշեց այս բակում կառուցել էլեկտրաէներգիայի բաշխիչ ենթակայան: Այն կառուցվելու էր բակի կենտրոնում, զբաղեցնելու էր շուրջ 100 քմ տարածք, իսկ անվտանգության գոտին ավելի քան 400 քմ էր լինելու: Արդյունքում բակը դադարելու էր լինել կանաչապատ հանրային տարածք: Ենթակայան կառուցելու համար հողահատկացման թույլտվությունը ՀԷՑ-ը ստացել էր դեռևս 2004 թ. Երևանի քաղաքապետարանից: Որոշման համար հիմք էր հանդիսացել ՀԷՑ-ի և ՀՀ Կառավարության միջև ստորագրված ներդրումային պայմանագիրը, որով ընկերությունը պարտավորություն էր ստանձնել վերազինելու բոլոր ենթակայանները, դրանք հանելու բազմաբնակարան շենքերից և տեղադրելու շենքերից դուրս: 2007 թ. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը թույլատրել էր ՀԷՑ-ին իր հերթական ներդրումային տարում այս երեք շենքերի համար ենթակայան կառուցելու ու վերազինելու: Այս ամենի մասին շենքի բնակիչներն իմացան այն ժամանակ, երբ շինարարական ընկերությունը սկսեց բակում կատարել առաջին չափումները: Բնակիչների մի փոքր խումբ փորձեց հասկանալ, թե ինչ է կատարվում, աջակցության համար դիմեց ՄԻԺԻ ոչ կառավարական կազմակերպությանը»¹⁴: Բնակիչներին հատկապես վրդովեցրել էր այն հանգամանքը, որ իրենք չեն մասնակցել իրենց բակի մասին կայացված որոշմանը: Սա ինքնավարություն ձեռք բերելու առումով հույժ կարևոր անդրադարձ (ռեֆլեքսիա) էր: Նրանք նամակներով դիմում են տեղական և համապետական իշխանություններին, դրանցում քննադատում նման քաղաքականությունը: Սակայն Հանրային ոլորտի մասին հաբերմայան մոդելի երրորդ՝ երկխոսությանը վերաբերող պայմանը մնում էր թերի ու չիրացված, նամակները մնում էին անպատասխան: Իշխանությունները տեղի չստալով, փորձեցին սկսել շինարարական աշխատանքները, իսկ բնակիչները անցան դիմադրության ծայրահեղ գործողությունների, խանգարելով շինարարներին: Մասնավոր կազմակերպությունը նույնիսկ դիմեց ոստիկանության օգնությանը, բայց բնակիչները համառորեն շարունակեցին պայքարը և հասան

¹⁴ Տե՛ս Վերլուծական. Երևանում բակային հանրային տարածքի պաշտպանություն, <http://organize-now.am/am/2012/11/12/3484/>, 12.05.2015:

նրան, որ շինարարները և տեխնիկան հեռացան բակից: «Մի քանի օր անց Երևանի քաղաքապետն արձագանքեց, փոխեց հողահատկացման որոշումը, արգելեց բակում որևէ տեսակի շինարարություն, իսկ ենթակայանի հարցը լուծվեց հարակից հին ենթակայանի վերազինման ու վերակառուցման միջոցով»¹⁵:

Վերջին 7-8 տարիներին միտում է նկատվում նաև բակային տարածքները իբրև քաղաքացիների և իշխանությունների երկխոսության հարթակ օգտագործելու, և փորձը ցույց է տալիս, որ այդ երկխոսության նախաձեռման մեջ ավելի ակտիվ են իշխանությունները. սովորաբար նրանք են գնում դեպի բակային հանրությունը¹⁶: Մի կողմից, նման փորձերը բնորոշ են ՏԻՄ և քաղաքական մարմինների ընտրություններին նախորդող շրջաններին¹⁷, մյուս կողմից, վերջին տարիներին ՏԻՄ-երը կարծես տոտալ բարեկարգման ծրագրեր են իրականացնում Երևանյան բակերում: Հատկանշական է, որ հանձին բակի՝ հանրային տարածքի վերահանրայնացման բոլոր փորձերը իրականացվում են Երևան քաղաքում և հատկապես քաղաքի կենտրոնական հատվածներում:

Բակի պահպանման համար իրենց երկխոսության ժամանակ բնակիչները փաստարկում են ոչ թե մասնավոր տարածքները, այլ կանաչ գոտիների, խաղահրապարակների ու հաղորդակցության համար անհրաժեշտ տարածքների կարևորությունը, նոր իրավիճակում բնակիչները փորձում են այդ փաստարկները վերածնակերպել ու ներկայացնել իրենց անունից և իրացնել իրենց դիրքորոշումը: Այսինքն, նրանք բակային տարածքի պարզ սպառողից վերածվում են այն ձևակերպողի:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հետխորհրդային ժամանակահատվածում Երևանյան բազմաբնակարան շենքերի մի շարք բակերում նկատվում են միտումներ ինքնավարության մակարդակի բարձրացման, քննադատականության աճի և իշխանությունների ու մասնավոր ոլորտի հետ երկխոսության հարթակ ձևավորելու ուղղությամբ,

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Այդ առումով ուշագրավ է 2006 թ. նկարահանված Մեր բակը-3-ի դրվագը, որտեղ բնակիչները մերժում են պատգամավորական թեկնածուին՝ իրենց բակում բարեգործություն անել: Տե՛ս 44-47 րոպեներ. Մեր Բակը -3, <https://www.youtube.com/watch?v=QOWpSwYhTLY>, 12.05.2015:

¹⁷ Քաղաքական որոշ ծրագրերում վերջին տարիներին կարևորվում են բակերի կառավարման ու ինքնավարության խնդիրները:

ինչը թույլ է տալիս կարծելու, որ մենք գործ ունենք բակի, իբրև հանրային տարածքի՝ հանրային ոլորտի վերածվելու գործընթացի հետ:

Բանալի բառեր – բակ, բազմաբնակարան շենք, հանրային տարածք, հանրային ոլորտ, ինքնավարություն, քննադատականություն, երկխոսություն:

ТЕНДЕНЦИИ ОБОБЩЕСТВЛЕНИЯ ДВОРА В ГОРОДЕ ЕРЕВАНЕ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

ЛЕВОН МАРГАРЯН

В постсоветское время в некоторых дворах многоквартирных зданий города Еревана наблюдается тенденция повышения уровня самобытности и критичности, а также создается плацдарм для диалога между властями и частным сектором, что позволяет сказать, что мы имеем дело с процессом, когда общественное пространство превращается в общественную сферу.

Ключевые слова – двор, многоквартирные дома, публичная сфера, суверенность, критичность, диалог.

TENDENCIES OF REPUBLICIZING THE OUTDOORS IN MODERN PERIOD YEREVAN

LEVON MARGARYAN

In several outdoors neighborhoods of multi-apartment buildings in post-soviet Yerevan may be recorded tendencies towards more autonomy and criticism impaired with formation of spaces of dialogue between the authorities and the private, which all lead to conclusions about transformation of the outdoors from a public space to a social sphere.

Key words – outdoors, multi-apartment buildings, public sphere, sovereignty, criticality, dialogue.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԹԱՆԵՍՅԱՆ Աշխեն, ԽՈՋՈՅԱՆ Յուլյա – Իոսիֆ Բրոդսկու էսսեների անգլիական ցիկլը պոետների և պոեզիայի մասին	3
ԲԵԳԱՐՅԱՆ Ժաննա – Հայկ Խաչատրյանի «Գրիգոր Մագիստրոսի վերջին թուղթը» պատմավեպը	14

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԴԱԴՅԱՆ Մարիանա – Անձի հատկանիշ ցույց տվող դարձվածային միավորների ոճական և արտահայտչական միջոցները հայերենում, ռուսերենում և անգլերենում	24
ԲԱԽԶԻՆՅԱՆ Դոնարա – Մկրտիչ Սարգսյանի արձակի լեզվի շարահյուսական առանձնահատկությունները	33
ԳԵՎՈՐԳՅԱՆ Շուշանիկ – Հրամայական եղանակի կիրառությունը	42
ՄԵՍՐՈՊՅԱՆ Արթուր – Կրկնությունը՝ որպես նույնաբանության գործաբանական ներուժը ձևավորող նախապայման	48
ՄԻՐՈՒՄՅԱՆ Լիլի – Օտարաբանությունները Սիլվա Կապուտիկյանի հուշագրություններում	57
ՄՈՎՍԻՅԱՆ Անաիդա – Իրակությունների թարգմանության մի քանի հարցեր	67
ՄՈՒՐԱԴՅԱՆ Գայանե, ԹՈՒՄԱՆՅԱՆ Հասմիկ – Ռեյ Բրեդբերիի «451 աստիճան ըստ ֆարենհայթի» վեպի որոշ լեզվաոճական առանձնահատկությունների մասին	74
ՍԱՖԱՐՅԱՆ Տաթևիկ – Տեքստը որպես շարահյուսական միավոր	82

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈԲՅԱՆ Վաղարշակ – Օսմանյան կայսրության և Թուրքիայի մոտեցումները Բուլղարիայի թուրքալեզու փոքրամասնության հիմնահարցերի նկատմամբ 1878-1944 թթ.	94
ՂԱՀՐԻՅԱՆ Մուշեղ – Քրդական գործոնի առանձնահատկություններն Իրաքում	112
ՊԵՏՐՈՍՅԱՆ Նելլի – «Հաճախապատում ճառքի» կառուցվածքն ու ժանրային բնույթը	118

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԽԱԶԱՏՐՅԱՆ Գագիկ – Հայաստանի Հանրապետության հոգևոր – մշակութային անվտանգության ապահովման առանձին խնդիրների մասին	124
--	-----

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՂԱՁԱՆՉՅԱՆ Լիլիթ – Անձի իրավական դրության հիմնական տեսակների առանձնահատկությունները	136
ՎԱՐԴԱՆՅԱՆ Լուսինե – Տրանսհումանիզմի գաղափարախոսության որոշ դիսկեր	147

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼՈՔՅԱՆ Արսեն – Հանրային ծառայողների հուզական կայունության առանձնահատկությունների հետազոտության արդյունքների վերլուծությունը	156
ԽԱՉԻԲԱՐՅԱՆ Սոսե – Ավագաթերապիայի զարգացման միտումները Հայաստանում	163
ՇԱՀԻՆՅԱՆ Հասմիկ – Սննդային վարքի շեղումների առաջացման դրդապատճառների վերլուծությունը դասական հոգեբանների անձի տեսությունների համատեքստում	170
ՎԱՐԴԱՆՅԱՆ Սեդա – Միջին տարիքի անձի մասնագիտական կարգավիճակի անկման հոգեբանական առանձնահատկությունները	177

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

ԴԱՎԹՅԱՆ Սուսաննա – Բիոէթիկայի աշխարհայացքային առանձնահատկությունները	188
---	-----

ԱՐՎԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԹԱՆԱՅԱՆ Նունե – Իզոլի տարածաշրջանի երաժշտական բանահյուսությունը բնորոշող մեղեդիների մի շարք առանձնահատկությունների շուրջ (Ստ. Դեմուրյանի «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ժողովածուի երգերի դիտարկումների հիման վրա)	204
ՀԱԿՈՔՅԱՆ Արա – Արսեն Շաբանյանի նորահայտ որմնանկարները Փարիզի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցում	217
ՀՈՍՍԵԻՆՋԱԴԵ Յաշար – Տրադիցիոնալիզմի ասպեկտները և կայուն մոդելների հասկացությունը Դուբայի ճարտարապետության մեջ	223
ՄԵԼԻՔՅԱՆ Սաթենիկ – Կոմպոզիցիոն կառուցվածքների առանձնահատկությունները	233
ՅԱԶԴԱՆՓԱՆԱՀ Մաջիդ – Հնադարյան Իրանը և հին Պարսկաստանը. արիներից մինչև Սասանյաններ (պատմամշակութային համառոտ ակնարկ)	242
ՆԱԴԱՐՅԱՆ Նարե – Խաչատուր Իսկանդարյանը որպես նկարիչ	256
ԶԱՆԱԲԻ Ասդար – «Շահնամեի» երաժշտակատարողական ավանդույթը Ջուրխանայում	263
ՄԱՐԳԱՐՅԱՆ Լևոն – Բակի վերահանրայնացման միտումները Երևանում արդի փուլում	271

СОДЕРЖАНИЕ

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

АТАНЕСЯН Ашхен, ХОДЖОЯН Юлия – Английский цикл эссе Иосифа Бродского о поэтах и поэзии	3
БЕГЛАРЯН Жанна – Исторический роман Айка Хачатряна «Последнее письмо Григора Магистроса»	14

ЯЗЫКОЗНАНИЕ

БАДАДЯН Мариана – Экспрессивно-стилистические свойства фразеологизмов, характеризующих качества человека в армянском, русском и английском языках	24
БАХЧИНЯН Донара – Синтаксические особенности языка прозы Мкртыча Саркисяна	33
ГЕВОРКЯН Шушаник – Применение повелительного наклонения	42
МЕСРОПЯН Артур – О роли итеративности в образовании прагматического потенциала тавтологий	48
МИРУМЯН Лили – Варваризмы в мемуарах Сильвы Капутикян	57
МОВСИСЯН Анаида – Некоторые вопросы перевода реалий	67
МУРАДЯН Гаяне, ТУМАНЯН Асмик – О некоторых лингвостилистических особенностях романа Рэя Брэдбери “451 градус по Фаренгейту”	74
САФАРЯН Татевик – Текст как синтаксическая единица	82

ИСТОРИОГРАФИЯ

АКОПЯН Вагаршак – Подходы Османской империи и Турции к проблемам тюркоязычных меньшинств в Болгарии в 1878-1944гг.	94
ГАГРИЯН Мушер – Особенности курдского фактора в Ираке	112
ПЕТРОСЯН Нелли – Структура и характер жанра "Многovesщательных речей"	118

ПОЛИТОЛОГИЯ

ХАЧАТРЯН Гагик – Об отдельных задачах обеспечения духовно-культурной безопасности Республики Армения	124
---	-----

ЮРИСПРУДЕНЦИЯ

КАЗАНЧЯН Лилит – Особенности основных видов правового статуса личности	136
ВАРДАНЯН Лусине – Некоторые риски идеологии трансгуманизма	147

ПСИХОЛОГИЯ

ЛОКЯН Арсен – Анализ результатов исследования особенностей эмоциональной стабильности государственных служащих	156
---	-----

ХАЧИБАБЯН Сосэ – Тенденции развития песочной терапии в Армении	163
ШАГИНЯН Асмик – Анализ причин возникновения нарушений пищевого поведения в контексте теорий личности психологов классиков	170
ВАРДАНЯН Седа – Психологические особенности падения профессионального статуса личности среднего возраста	177
ФИЛОСОФИЯ	
ДАВТЯН Сусанна – Особенности мировоззрения биоэтики	188
ИСКУССТВОЗНАНИЕ И АРХИТЕКТУРА	
АТАНАСЯН Нуне – Некоторые особенности народных мелодий, представляющих устное песенное творчество игдырского региона	204
АКОПЯН Ара – Новоявленные работы Арсена Шабаняна в церкви Святого Ованеса Мкртыча в Париже	217
ХОССЕЙНЗАДЕ Яшар – Аспекты традиционализма и понимание устойчивых моделей архитектуры в Дубае	223
МЕЛИКЯН Сатеник – Особенности композиционных построений	233
ЯЗДАНПАНАХ Маджид – Древний Иран и Древняя Персия от арийцев до сасанидов (краткий историко-культурный обзор)	242
НАДАРЯН Наре – Хачатур Искандарян как художник	256
ДЖАНАБИ Аскар – Традиционное музыкальное исполнение «Шахнаме» в Зурхане	263
МАРГАРЯН Левон –Тенденции обобществления двора в городе Ереване на современном этапе	271

ԿԱՆԹԵՂ
Գիտական հոդվածներ
КАНТЕХ
Научные труды
KANTEGH
Articles

Խմբագիր՝ Ազատուհի Սահակյան
Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Սիրարփի Կոչումջյան
Շապիկի ձևավորումը՝ Վարդան Գաբրիելյանի
Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Խմբագրության հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող. 24/4,
հեռ. 58-18-51, հեռապատճեն՝ 58-11-09

Адрес редакции: Ереван 0019, пр. Маршала Баграмяна 24/4,
тел. 58-18-51, факс 58-11-09

Address: 24/4 Marshal Baghramian av., Yerevan 0019, Armenia,
tel. 58-18-51, fax 58-11-09

Էլ. փոստ՝ instart@sci.am
Эл. почта: instart@sci.am
E-mail: instart@sci.am

Պաշտոնական կայքէջը՝ <http://Kantegh.am>
Официальный сайт: <http://Kantegh.am>
<http://Kantegh.am>



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում
Ֆորմատ՝ 60x84 ¹/₁₆, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 130:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մայլան 45 (տպարան)
Հեռ. (374 1) 54.49.82, (374 10) 54 62 60, 54 49 82, 62.38.63 (տպարան)
Էլ. Փոստ՝ info@asoghik.am